ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Հայաստանի Փրկությամբ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

ԱՄԵՐԻԿՅԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռուսական ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նվիրում եմ պապիս՝
Ղորբայազետցի Մկրտիչ Արշակի Այվազյանի
պայծառ հիշատակին

Savoir pour prévoir
(Ճանաչի՛ր, որպեսզի կանխատեսե՛ս)

Օգյուստ Կոնտ (1798–1857)

АРМЕН АЙВАЗЯН

ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ АРМЕНИИ В АМЕРИКАНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

(КРИТИЧЕСКИЙ ОБЗОР)

Armen Aivazian

The History of Armenia as Presented in American Historiography

(A Critical Survey)

YEREVAN - 1998

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(ՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ - 1998

ԴՏՀ 941 (479. 25) + 970/980
ԳՄԴ 63. 3 (2Հ) + 63. 3 (7 ԱՄՆ)
Ա 551

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Երևանի Պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Այվազյան, Ա.

Ա 551 **Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ.** – Եր.: «Արտագերս» հրատ., 1998. 258 էջ:

Մենագրությունը վերլուծում է Հայաստանի պատմության լուսաբանումները՝ ժամանակակից ամերիկյան պատմագրության մեջ: Հեղինակը հատուկ ուշադրություն է դվիրել աշխարհաքաղաքականության, Սառը պատերազմի և թուրքական քարոզչության՝ ամերիկյան հայագիտության վրա ունեցած ազդեցություններին:

Նախատեսված է պատմաբանների, արևելագետների, միջազգայնագետների, ինչպես նաև՝ ընթերցող լայն շրջանների համար:

Ա $\frac{0503020913}{0038(01)98}$ 98 ԳՄԴ 63. 3 (2Հ)+63. 3 (7ԱՄՆ)

© Ա. Այվազյան, 98 թ.
© «Արտագերս» հրատարակչություն, 98 թ.

Շնորհակալություն՝

ակադեմիկոսներ՝ Մկրտիչ Ներսիսյանին, Լենդրուշ Խուրշուդյանին, պատմական գիտությունների դոկտոր՝ Բաբկեն Հարությունյանին, պատմական գիտությունների թեկնածուներ՝ Գևորգ Տեր-Վարդանյանին, Պավել Զոբանյանին և Մերուժան Կարապետյանին, բանասիրական գիտությունների թեկնածու՝ Սուրեն Սահակյանին՝ գրքի նախնական՝ ձեռագիր տարբերակում ճշտումներ և օգտակար դիտողություններ անելու համար:

Աշխատությունը գրվել է անձնական նախաձեռնությամբ ու առանց որևէ ֆինանսական աջակցության:

Երկու խոսք

Տարբեր առիթներով, ավելի քան 13 ամիս աշխատել եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Երիտասարդ քաղաքական գործիչների ամերիկյան խորհուրդ կազմակերպության (American Council of Young Political Leaders) *հրավերով՝ 1992 թ. մասնակցել եմ ԱՄՆ նախագահական ընտրությունները լուսաբանող չատ հետաքրքիր երկշաբաթյա մի ծրագրի: 1995 թ., կարնեգի հիմնադրամի՝ Միջազգային Անվտանգության ուսումնասիրություններ ծրագրի տրամադրած շնորհով և* IREX *կազմակերպության միջոցով, չորս ամիս աշխատել եմ Սիրակուզի համալսարանի՝ Հակամարտությունների վերլուծության և կարգավորման բաժանմունքում* (Program on the Analysis and Resolution of Conflicts)*: 1997 թ. սեպտեմբերից մինչև 1998 թ. հունիս, որպես Ֆուլբրայթի անվան ավագ գիտնական, աշխատել եմ Ստանֆորդի համալսարանի՝ Ռուսական և Արևելաեվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում: Երախտապարտ եմ այն բոլոր կազմակերպություններին և անձանց, որոնք ինձ հնարավորություն են ընձեռել գործուղվելու և աշխատելու միջազգային հարաբերությունների, հակամարտաբանության (կոնֆլիկտոլոգիայի) և ռազմավարագիտության ամերիկյան առաջատար կենտրոններում (գործուղումներս հայագիտության հետ որևէ կապ չեն ունեցել): Որտեղ էլ եղել եմ՝ հանդիպել եմ համակրելի մարդկանց ու իրենց գործը հրաշալի իմացող մասնագետների: Ունեմ բազմաթիվ ամերիկացի ընկերներ, որոնց հարգում և սիրում եմ: Հետևաբար՝ քննադատական սուր ուղղվածություն ունեցող այս աշխատության մեջ չարժե փնտրել հակաամերիկյան պարզունակ մոտիվներ: Այդպիսիք*

չկան: Գիրքը գրվել է գիտությունն ու ճշմարտությունը պաշտպանելու և հաստատելու անկեղծ մղումով:

Սույն հետազոտությունը մեզ բերել է այն հաստատ համոզման, որ ամերիկյան ու առհասարակ միջազգային հայագիտության խնդիրն ու ապագան ամենից առավել կախված է հայաստանյան հայագիտության մակարդակից և վտանգված ապագայից...

14 Սեպտեմբերի, 1998
Երևան

1. Ներածություն

Հայոց պատմությունը իբրև ռազմավարական պաշար

Յուրաքանչյուր պետության և ազգի հաջող կենսագործունեությունը պայմանավորված է համազգային կենսական շահերի միասնական ընկալմամբ, ապա՝ նաև այդ շահերի շուրջ ձևավորված հասարակական համախմբվածությամբ: Պատմության ընթացքում ազգի կուտակած ընդհանուր հոգևոր ժառանգության յուրացումը թերևս գլխավոր նախադրյալն է՝ հասարակական առողջ համախմբվածության հասնելու համար:

Հայոց պատմությունը Հայաստանի ռազմավարական անձեռնմխելի պաշարն է: *Այն պարունակում է կայուն պետություն և հասարակություն կերտելու զարմանալի ամուր հիմք, որ է՝ հայկական չորսհազարամյա քաղաքակրթությունը և նրա արդյունք հանդիսացող հայոց գորեղ, ընդգծված յուրօրինակ ինքնությունը: Ըստ արժանվույն գնահատվելու և «ինտենսիվ շահագործման» ենթարկվելու դեպքում, ազգային քաղաքակրթությունն ու ինքնությունը իսկապես ավելին արժեն, քան նավթը, գազը, ոսկին, ապառնան ենթակա այլ հանքանյութերը, քանզի վերջիններս կարող են որևէ պետության անվտանգ և հաջող զարգացումն ապահովել ընդամենը ժամանակավորապես՝ միայն պատմական վաղանցուկ ժամանակահատվածի մեջ: Մինչդեռ ազգային քաղաքակրթության և ինքնության տրամադրած հոգևոր հարստությունները անսպառ են:*

Այժմյան զարգացող պետությունների մեծամասնությունը (ներառյալ բնական հարուստ պաշարներ ունեցողները) հոգե-

վոր-մշակութային այդչափ վիթխարի ռեսուրսներ և ազգային հստակ ինքնություն չունենալով, հաճախ են կանգնում հասարակական-պետական վտանգավոր ճգնաժամերի առջև: Մենք էս, սակայն, նույն ճակատագրին կարժանանանք, ազգային-պետական բարդ խնդիրների ճիշտ լուծումները գտնելու գործում կխարխափենք, եթե տեր չկանգնենք մեր անցյալին և նրա հոգևոր հարստություններին, չարժեվորենք նրանց կարևորությունը Հայաստանի ազգային անվտանգության համար: Հետևաբար, հայոց պատմության գիտական ուսումնասիրությունը, ինչպես նաև մեր և օտարերկրյա հանրության այդ ուսումնասիրության արդյունքների մատչելի մատուցումը ո՛չ թե զուտ ակադեմիական ձեռնարկ է, այլ՝ հայոց նորահաստատ պետականության կայացմանը նպաստող անհրաժեշտ և արդյունավետ միջոց: Աճող հայ սերնդի հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակությունն ապահովող, ազգը միավորող ու համախմբող միակ ճանապարհն անցնում է մեր արմատների խորը և ճշմարիտ ճանաչման միջով:

Արդարև, Հայաստանի հզորացումը չցանկացող հայտնի և անհայտ ուժերն առայժմ, մեզնից առաջ անցնելով, ավելին են անում. խորապես գնահատելով հայոց պատմության ռազմավարական նշանակությունն ու ներուժը, վաղուց ի վեր իրականացնում են այն մաս-մաս կողոպտելու և ոչնչացնելու ծրագրված քաղաքականություն: Խոսքս վերաբերում է միջազգային գիտական շրջանակներում արդեն տասնամյակներ ի վեր շարունակվող՝ հայոց պատմության հիմնահարցերի խեղաթյուրմանն ուղղված կազմակերպված գործողություններին: Հայ հասարակությունը ծանոթ է թուրքական և ադրբեջանական «հայագետների» հակագիտական գործունեությանը, որին, խորհրդային իրականության ընձեռած հնարավորությունների շրջանակում, խորհրդահայ գիտնականները 1960-1980-ական թթ. հուժկու հակահարված հասցրեցին: Սակայն, տարբեր պատճառներով, որոնք քննության կառնվեն ստորև, դեռևս լուրջ գնահատական չի տրվել Արևմուտքի, հատկապես՝ ԱՄՆ-ի հայագիտական կենտրոններում ծավալվող նույնօրի-

նակ գործունեությանը: Հայաստանի ազգային (ներքին՝ քաղաքացիական ու արտաքին՝ միջազգային) անվտանգության տեսանկյունից դիտելով, արևմտյան կեղծ-հայագիտությունն իր հետևանքներով առավել վնասաբեր է և վտանգավոր, քան՝ թուրք-ադրբեջանական պատմագիտական կեղծարարությունը, քանզի այն Հայաստանի շահերի դեմ ուղղված միջազգային մասշտաբով տարվող քարոզի բուն հիմքն է և նույն այդ քարոզի բաղկացուցիչ մասը:

Թուրքամետությունը արևմտյան ակադեմիական շրջանակներում

Արևմտյան մտավորական և ակադեմիական շրջանակներում թուրքամետությունը ձևավորվել է բավական վաղ՝ 19-րդ դարի սկզբներին, երբ Մերձավոր և Միջին Արևելքում առաջին անգամ ուժգնորեն բախվեցին անգլիական և ռուսական կայսրությունների շահերը: Թուրքամետ տրամադրությունների առաջացման հիմնական աղբյուր հանդիսացող՝ Անգլիա-Ռուսաստան, այնուհետև նրան փոխարինելու նպատակով՝ ԱՄՆ/Արևմուտք - ԽՍՀՄ/Արևելք աշխարհաքաղաքական մրցակցությունը շատ երկար տևեց, ընդմիջվելով միայն Առաջին և, նրա վախ չափով՝ Երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին: Այս ընդմիջումները, սակայն, կարճատև էին և, ցավոք, չէին կարող փոխել Արևմուտքի պետական-քաղաքական շրջանակների ու նրանց սպասարկող մտավորականների և ակադեմիական շրջանակների թուրքամետ դիրքորոշումները[1]: Իսկ Սառը պատերազմի տարիներին (1945-1990 թթ.) թուրքամետությունն Արևմուտքում արձանագրեց մի իսկական հաղ-

---

1 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայի նկատմամբ անգլիական պետական և մտավորական շրջանակների տրամադրությունների փայլուն վերլուծությունը տե՛ս **Christopher J. Walker**, "*Greenmantle*'s Absent Armenians: A Study of Anglo-Ottoman Attitudes," *Armenian Review*, Winter 1992, Vol. 45, #4/180, pp. 1-38.

թարշավ: Սա մի ժամանակաշրջան էր, երբ աշխարհառազմավարական հակամարտությունը երկու գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ու նրանց գլխավորած միջպետական ռազմաքաղաքական խմբակցությունների՝ Վարշավյան պայմանագրի և Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի (ՆԱՏՕ) կազմակերպությունների միջև ընթանում էր մոլորակի գրեթե բոլոր անկյուններում: Այս հակամարտության էությունը լավագույնս բնորոշվում է խաղերի տեսությունից քաղաքագիտության ոլորտ թափանցած այսպես կոչված zero-sum game-ի հասկացությամբ՝ երբ երկու կողմերից մեկի որևէ շահումը անպատճառ նշանակում է մյուս կողմի կորուստ և հակառակը: Հետևաբար, միանգամայն բնական է, որ ԽՍՀՄ բաղկացուցիչ մաս կազմող Հայաստանի, ինչպես նաև աշխարհասփյուռ հայության, պատմաիրավաքաղաքական ճգտումները և աղգային-տարածքային պահանջները, սպառնալով ՆԱՏՕ-ի առանցքային անդամներից մեկի՝ Թուրքիայի միջազգային վարկին և անգամ տարածքային ամբողջականությանը, այն էլ ի հաշիվ կոմունիստական ճամբարի հզորացման, բացահայտորեն հակասում էին Արևմուտքի ռազմավարական շահերին: Ահա թե այս մասին ինչ է գրում արևմտյան եզակի անաչառ պատմաբաններից մեկը՝ Քրիստոֆեր Ուոքերը.

> Սառը պատերազմը որոշ չափով օրինականացրեց հայերի դեմ եղած նախապաշարմունքը արևմտյան ակադեմիական և նույնիսկ դիվանագիտական շրջանակներում (այդ ժամանակ մտածելակերպն այն էր, որ Թուրքիային պետք է սատարել՝ ինչ գնով էլ որ լինի): Ու հակառակ այն բանի, որ Սառը պատերազմն ավարտվել է, բազմաթիվ արևմտյան գիտնականներ և էքս-դիվանագետներ դրսևորում են «բրնժնևականություն»՝ հայերի տեսակետը հասկանալու իրենց անկարողության կամ չկամության մեջ, կամ գոնե այդ տեսակետի վավերագրային հիմքին լրջորեն ծանոթանալու գործում: Նրանք շարունակում են գրեթե անքննադատորեն ապակցել թուրքական պաշտոնական վերսիային: Արդյունքում՝ ակադեմիական հանդեսներում Հայոց նոր պատմության մասին հայտնվող ու գիտականության հավակնող

նյութերից շատերը՝ իրականում parti pris *(իմա՝ կանխորոշված -- Ա. Ա.), խտրական և ոչ-արժանահավատ են*[2]*:*

Միանգամայն ճիշտ բնութագիր ու իրադրությանը տրված պատմատեսական գնահատական, այնուհանդերձ հարկ է ավելացնել, որ.

1. Ռուսաստանի հետ Արևմուտքի աշխարհաքաղաքական հակամարտությունը չընդհատվեց նաև ԽՍՀՄ փլուզումից հետո. իզուր չէ, որ ամերիկացի քաղաքական ազդեցիկ մեկնաբաններից շատերը բացահայտ հայտարարում են, որ «Սառը պատերազմի ավարտը նույնպես ավարտվել է» և որ պետք է նպատակասլաց կերպով շարունակել նվաճված դիրքերի ընդլայնումն ու ամրապնդումը[3]*: Դեպի Արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնումը նկավ հաստատելու, որ Արևմուտքում գերիշխողը հե՛նց այս տեսակետն է: 1990-ականների երկրորդ կեսին, աշխարհաքաղաքական անողոք իրողությունների բերումով՝ Հայաստանը դարձյալ հայտնվել է Ռուսաստանի հետ միևնույն՝ դեռևս հստակ բնորոշում և սահմաններ չունեցող ճամբարում, իսկ Թուրքիան շարունակում է հանդես գալ Արևմուտքի դաշնակցի դերում, ընդսմին՝ հավակնելով դառնալու ռեգիոնալ գերուժ (այս խնդիրներին հանգամանորեն անդրադարձել ենք մեկ այլ աշխատության մեջ*[4]*: Այս ամենին գումարվել է նաև այն, որ Ադրբեջանը ջանք չի խնայում դառնալու Այսրկովկասում և Միջին Ասիայում Արևմուտքի հանգուցային դաշնակիցը:*

---

2 **Christopher J. Walker**, ed., *Armenia and Karabakh: The Struggle for Unity*. Foreword by Gérard Chaliand (London: Minority Rights Publications, 1991), p. 3.

3 Տե՛ս, օրինակ, **John J. Maresca**, *The End of the Cold War is Also Over* (Stanford University: Center for International Security and Arms Control, April 1995), pp. 1-23. Андрей Ревунов, "Стратегия: Американцы намереваются усилить свое влияние на южных рубежах России", - Независимое военное обозрение (Москва), No. 42, 6-12 ноября, 1998.

4 Տե՛ս **Արմեն Այվազյան**, «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը» մենագրության մեջ. Երևան, "Հայաստան", "Հայինֆո", 1998:

Հետևաբար, Սառը պատերազմի տարիներին կարծր ուրվագիծ որդեգրած արևմտյան «հայագիտական» դպրոցն իր դիրքերը վերանայելու որևէ դրդապատճառ չունի:

2. Արևմտյան «հայագիտությունը» իր ճեռքն է բարձրացրել ոչ միայն հայոց նոր պատմության վրա, ինչպես կարծում են ուրքերը, նաև՝ շատերը մեզանում, այլև, ինչպես ստորև ցույց կտանք, աղճատում է նաև հայոց հին և միջնադարյան քաղաքական ու մշակութային պատմության ողջ համակարգը: Սա միանգամայն օրինաչափ զարգացում է, քանզի պատմությունը միասնական՝ «օրգանապես» շաղկապված պատճառա-հետևանքային երևույթ է. անհնար է գիտականորեն ուսումնասիրել պատմության այս կամ այն ժամանակաշրջանը՝ նրա նախորդ և հաջորդ շրջաններից կտրված, իրարդրությունների տարժամանակյա մեկուսացումներով: Պատմության «համոզիչ» կեղծարարությունը նույնպես պահանջում է հնարավոր չափով համապարփակ ընդգրկում:

Արևմտյան «հայագիտության» սխալ գնահատման պատճառները

Որո՞նք էին, ուրեմն, այն պատճառները, որ հայաստանցի հայագետներին խանգարեցին ժամանակին նշմարել և հակազդել Արևմուտքում հայոց պատմությունը խեղաթյուրելու աճող միտումներին: Նշենք նրանցից մի քանիսը.

ա) արևմտյան հայագիտության նկատմամբ ձևավորված անքննադատ վերաբերմունքը.

Հայաստանյան նորագույն պատմագիտությունը հիմնադրել են 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին Եվրոպայում ու Ռուսաստանում ուսում ստացած հայ մասնագետները: Հայոց պատմության հարցերի քննության մեջ կիրառելով եվրոպական պատմագիտության, լեզվաբանության, այլ հասարակական գիտությունների՝ իրենց սովորած արդի մեթոդաբանությունը, նրանք հասկանալի, բայց և միաժամանակ չափա-

զանցված ակնածանքով էին վերաբերվում իրենց ուսուցիչներին և եվրոպական արևելագիտությանն առհասարակ: Այս անքննադատ վերաբերմունքն էլ դումարվելով հայերի մեջ օտար տիրապետության շրջանում խորը արմատներ գցած ազգային թերարժեքության բարդույթին, հետագայում փոխանցվեց հայագետների նոր սերունդներին.

բ) խորհրդահայ պատմագիտական դպրոցը, որ մեծ առաջընթաց ապրեց հատկապես 1940-ականներից մինչև 1990-ական թթ., չուներ եվրոպական լեզուներին ազատորեն տիրապետող բավարար թվով մասնագետներ.

գ) խորհրդային հասարակագիտության, ներառյալ՝ պատմագիտության, մեկուսացվածությունը Արևմուտքից և արևմտյան գիտական աշխարհից.

դ) ազգայնականության մեջ չմեղադրվելու բնական վախը՝ 1937 թ. տեսած մեր ավագ սերնդի մեջ.

ե) եվրոպական լեզուներին տիրապետող մեր մասնագետների (մասնավորապես՝ միջնադարագետների) մեծ մասի թույլ պատրաստվածությունը ինչպես միջազգային քաղաքական, այնպես էլ առհասարակ քաղաքական ու քաղաքագիտական հարցերում: Ավանդաբար, մեզանում այդպես էլ անհարկի անտեսվել են fաղաfագիտական ուղղվածություն ունեցող պատմագիտությունը և պատմատեսությունը:

Խորհրդային պայմաններում Արևմուտքում առկա ազատությունները խիստ ռոմանտիկացված էին ընկալվում: Բացառությամբ բացահայտորեն հայատյաց արևմտյան հեղինակների, հայ իրականության մեջ՝ և՛ Հայաստանում, և՛ սփյուռքում մեծարվում էին Հայաստանին ու հայերին վերաբերող գրեթե բոլոր հրապարակումները ու նրանց հեղինակները (մանավանդ՝ հայերենին գրավոր կամ բանավոր տիրապետողները), առանց նրանց հեղինակած բուն նյութի մեջ խորամուխ լինելու:

Թվում է, թե խորհրդային կոմկուսի նման մի վերադաս չունեցող՝ ազատ հասարակությունում ապրող գիտնականները, զուտ ակադեմիականից բացի, որևէ այլ շահ չունեն և իրենց

տեսակետները պետք է արտահայտեն՝ առաջնորդվելով միմիայն գիտականության, ճշմարտացիության և պատմական արդարության գաղափարներով: Իրականությունն այն է, որ ինչքան միջոցներ ԽՍՀՄ-ն էր ծախսում միջազգային ասպարեզում «ադիտացիայի և պրոպագանդայի» վրա, քարոզչական նույն պատերազմում նույնքան կամ գուցե ավելին (ու ավելի արդյունավետորեն) էր ծախսում Թուրքիայի դաշնակից-թիկունք Արևմուտքը.

զ) արևմտյան հանճնակատարների շարքերում կանգնած՝ ծնունդով հայ մի քանի հեղինակ ևս խորապես ապակողմնորոշում և շփոթության են մատնում հայաստանյան մտավորականությանը, քանզի դժվար է հավատալ, որ նրանք գիտակցաբար, երբեմն էլ՝ «հարմարվողաբար» ծառայել ու ծառայում են ամենևի՛ն ոչ հայագիտությանը և ո՛չ հայ ազգի շահերին.

է) վերջապես, արևմտյան «հայագիտությունը» իր առջև դրված խնդիրներն իրականացնում է ո՛չ թուրք-ադրբեջանական գունհիկ կոպտությամբ, այլ շատ ավելի նուրբ, արտաքնապես՝ գիտական ընդգծվածությամբ և ակադեմիական շղարշով: Այս կարգի կեղծարարությունը հարաբերականորեն դժվար նշմարելի է ու, հետևապես՝ առավել վտանգավոր:

Հարկ է նշել նաև, որ վերոբերյալ գործոններից յուրաքանչյուրը (անգամ առանձին վերցրած) միանգամայն բավարար էր, որ Հայաստանցի այս կամ այն մասնագետը կաշկանդվեր պատշաճ կողմնորոշվելու կամ շփոթվեր արևմտյան «հայագիտության» սարքած Գորդյան հանգույցում:

Կարևոր մի նկատառում ևս. խոսելով արևմտյան կեղծ-հայագիտական դպրոցի մասին, միշտ նկատի ունենք Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի ակադեմիական իշխող միջավայրը, ասել է թե՝ այն խումբը, ում ձեռքում են (կամ ոչ-վաղ անցյալում եղել են) հայագիտական հիմնական ամբիոնները, հրատարակությունները ու պաշտոնները, հականե-հանվանե՝ Ռոբերթ Թոմսոն (այժմ՝ Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան հայագիտության ամբիոնի վարիչ,

մինչ այդ՝ 1969-1992 թթ. եղել է Հարվարդի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչը), Նինա Գարսոյան (1965 թվականից հայագիտական ղեկավար պաշտոններ է զբաղեցրել Կոլումբիայի համալսարանում, մասնավորապես՝ եղել է Գևորգ Ավետիսյանի անվան Հայկական պատմության և քաղաքակրթության ամբիոնի առաջին վարիչը, 1993-ից անցել է թոշակի[5], Ռոնալդ Սյունի (Միչիգանի համալսարանում մեկ տասնամյակից ավելի եղել է Ալեք Մանուկյանի անվան Հայոց նոր պատմության ամբիոնի ղեկավար, 1995-ից՝ Զիկագոյի համալսարանի Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր է), Ջեյմս Ռասսել (Թոմսոնին փոխարինել է Հարվարդի հայագիտական ամբիոնի ղեկավարի պաշտոնում), Պիթըր Քաուէի (այժմ՝ Հրավիրյալ դասախոս Լոս Անջելեսի UCLA համալսարանի Նարեկացու անվան ամբիոնում), Լևոն Ավդոյան (ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի Կովկասի բաժնի պատասխանատու), Ջորջ Բուռնուտյան (այժմ դասավանդում է Նյու Յորքի Այոնայի քոլեջում, Հայոց Բարեգործական Ընդհանուր Միության խորհրդական), Ռոբերթ Հյուսն (այժմ դասավանդում է Նյու Ջերսիի Ռովան քոլեջում, զբաղվում է Հայաստանի պատմական աշխարհագրությամբ և քարտեզագրությամբ[6] և նրանց ճեռքի տակ աշխատող այլ մասնագետներ: Սրանցից զատ, Արևմուտքում, ներառյալ՝ ԱՄՆ-ում, գործել և գործում են նաև գիտնականներ, որոնց աշխատությունները իրոք գիտական են և պայմանավորված չեն ոչ-ակադեմիական ինչ-ինչ պատվերներով: Թվենք նրանցից մի քանիսին ևս. Լուիզ Նալբանդյան (†1974 թ.)[7], ամերիկուհի սոցիոլոգ Մարի Քիլբորն Մաթոսյան[8],

---

5 Նինա Գարսոյանի կենսագրական մանրամասնությունները տե՛ս *From Byzantium to Iran: Armenian Studies in Honour of Nina G. Garsoian* (Atlanta, Georgia: Scholars Press, 1997), pp. XIII-XV.

6 Համառոտ կենսագրականը տե՛ս **R. Hewsen**, *Russian-Armenian Relations, 1700-1828* (Cambridge, Mass.: Society for Armenian Studies, 1984), p. [I], Preface.

7 Հատկապես հաջողված է նրա հետևյալ աշխատությունը՝ **Louise Nalbandian**, *The Armenian Revolutionary Movement: The Development*

Վահագն Տատրյան (այժմ Գուգենհայմ հիմնադրամի պատվերով աշխատում է ցեղասպանության ուսումնասիրության իր մշակած ծավալուն ծրագրի վրա), Լևոն Զորբաջյան (Մասաչուսեթսի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր), Ռուբեն Ադալյան (1990-ական թթ. քաղաքագիտություն է դասախոսել Վաշինգտոնում գտնվող Ջոն Հոպկինզի անվան համալսարանում, Անի հայագիտական հաստատության տնօրեն), Ինա Բաղդիյանց[9] (այժմ՝ Թաֆթս համալսարանի Ջաուաքյանի անվան Հայագիտական նորաբաց ամբիոնի վարիչ), Դեյվիդ Մ. Լանգ (†1990 թ.) և Քրիստոֆեր Ուոքեր (լոնդոնաբնակ պատմաբաններ) և ուրիշներ: Սակայն, այս գիտնականների մի մասը, նաև գրեթե ողջ սփյուռքահայ համայնքը, հայոց պատմության հին և միջնադարյան շրջանի աղբյուրներին իրենց անծանոթության պատճառով, առայժմ լիակատար վստահություն է չնորհել արևմտյան հայագիտության կեղծ-դպրոցի ներկայացուցիչներին ու նրանց հրապարակումներին:

* * *

Սույն ուսումնասիրության խնդիրների մեջ չի մտնում ամերիկյան հայագիտության ամբողջական և համապարփակ հետազոտումը: Մեր նպատակն է ընդամենը՝ քննել հայոց պատմության առանցքային, սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի լուսաբանումները ամերիկյան պատմագրության մեջ:

---

of Armenian Political Parties Through the Nineteenth Century (Berkeley: University of California Press, 1963).

8 Տե՛ս **Mary Kilbourne Matossian**, *The Impact of Soviet Policies in Armenia* (Leiden, Netherlands: E. J. Brill, 1962). Այս խիստ արժեքավոր աշխատությունը հայերեն թարգմանելու և հրատարակելու կարիքը կասկածից վեր է:

9 Մանոթ ենք Կոլումբիայի համալսարանում վերջինիս պաշտպանած դոկտորական ավարտաճառին՝ **Ina Baghdiantz**, *The Armenian Merchants of New Julfa: Some Aspects of Their International Trade in the Late Seventeenth century*. Ph. D. dissertation (Unpublished Dissertation Columbia University, 1993).

Ուսումնասիրության առաջին մասում քննում ենք 1993 թ. լույս տեսած մի գիրք, որի հեղինակը փորձում է վերջնականապես «օրինականացնել» վերջին տասնամյակների ամերիկյան «հայագիտության» ծանրակշիռ խեղաթյուրումները: ԱՄՆ-ում այդ գիրքը գնահատել են որպես «հետխորհրդային հայ պատմագրության առաջին հիմնարար աշխատությունը»[10] ու անմիջապես դրել ամենալայն շրջանառության մեջ: Իսկապես, ինչպես ստորև կտեսնենք, այդ գրքում տեղ գտած դրույթները լավագույնս արտահայտում են ամերիկյան «հայագիտության» հակագիտական և խիստ քաղաքականացված դիրքն ու էությունը:

Երկրորդ մասում, համառոտաբար, ուրվագծում ենք ամերիկյան «հայագիտության»՝ վերջին երեք տասնամյակում արձանագրած «նվաճումները» և դրանց զարգացման արդի միտումները:

---

10 **Robert H. Hewsen**, "Review of Ronald Grigor Suny's *Looking toward Ararat: Armenia in Modern History*. Bloomington: Indiana University Press, 1993," *American Historical Review* October, 1994, p. 1357.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ամերիկյան «հայագիտության» գլուխգործոցը կամ կեղծ գիտական դպրոցի օրինաչափ զարգացումները (Ռ. Գ. Սյունիի «Հայացք դեպի Արարատ: Հայաստանը նոր պատմության մեջ» գիրքը)

1. Նախաբան

*1993 թ. Բլումինգտոն քաղաքում գտնվող Ինդիանայի Համալսարանի տպագրատունը լույս ընծայեց Ռոնալդ Գրիգոր Սյունիի «Հայացք դեպի Արարատ. Հայաստանը նոր պատմության մեջ» գիրքը (*Ronald Grigor Suny, *Looking toward Ararat: Armenia in Modern History.* Bloomington: Indiana University Press, 1993. Pp. XI, 289*): Հեղինակի անունը մեծ հարգ ունի թե՛ ամերիկյան ակադեմիական շրջանակներում, թե՛ ամերիկահայ համայնքում: ԱՄՆ-ում նա ունի նախկին ԽՍՀՄ ազգերի խնդիրների, այդ թվում՝ Այսրկովկասի նոր և նորագույն պատմության հարցերի առաջատար մասնագետներից մեկ լինելու համարում: Ահա թե իր գործընկերոջ արժանիքներին ինչպիսի փառաբանական գնահատական է տվել Ստանֆորդի Համալսարանի Ռուսական և արևելաեվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Նորման Նայմարքը. «Սյունին մեթոդաբանության հարցերում իր մասնագիտական հմտությունը համատեղում է ռուսական և խորհրդային պատմության մասին հիմնավոր գիտելիքների և առանձին ոչ-ռուս ազգերի, հատկապես՝ վրացիների և հայերի, պատմության*

և պատմագրության իր հանրաճանաչ ճեռնհասության հետ»[11]:

Այս դիֆերամբի հավաստիությունը դեռևս կպարզենք, իսկ առայժմ՝ մի փոքր Ռ. Գ. Սյունիի մասին. 1995-ից Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր է ամերիկյան ամենահեղինակավոր համալսարաններից մեկում՝ Չիկագոյի Համալսարանում: Մինչ այդ, առաջինը լինելով, Միչիգանի Համալսարանում մեկ տասնամյակից ավելի նա զբաղեցնում էր Ալեք Մանուկյանի նվիրատվությամբ հիմնադրված ու նրա անունը կրող՝ Հայոց արդի պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը: Հայանպաստությանը կոչված այս պաշտոնավարության ընթացքում էլ Սյունին արտադրել է իր «գլուխգործոցը», որը, ինչպես կտեսնենք, ամերիկյան հայագիտության «նվաճումների» թանձրույթն է:

2. Սյունիի բուն նպատակը

«Հայացք դեպի Արարատ»ի Առաջաբանում Սյունին մատնանշում է իր ստեղծագործության բուն նպատակը, այն է՝ «կազմալուծել» (decompose) հայ

> քաղաքական ազգայնականների քաղաքական գաղափարախոսության հիմքը, ըստ որի հայերի շարունակական գոյությունը որպես պատմական ժողովուրդ, նրանց առաջացումը Հայկական լեռնաշխարհում նրանց գինում է ինքնորոշման և պետականության իրավունքով ու նաև պատմականորեն վավերացված պահանջատիրությամբ այն տարածքների նկատմամբ, որ կազմում են Հայաստանը[12]:

Ըստ Սյունիի, հայերի այս կարծիքը ոչ այլ ինչ է, քան՝ միայն «հավատալիքների հավաքածու» (the collection of

---

11 **Ronald Grigor Suny**, *The Revenge of the Past: Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union* (Stanford, CA: Stanford University Press, 1993), p. XII.

12 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, pp. 4-5.

beliefs): *Ահավասիկ նրա գրած հաջորդ նախադասությունը (որն, ի դեպ, նաև ցույց է տալիս, որ Սյունին ինքն էլ հրաշալի գիտակցել է իր բռնած հայատյաց ճանապարհը և չտապել է կանխել իր հնարավոր քննադատներին).*

> *Քանի որ հայկական պատմության այս ըմբռնումն այդքան մեծ քաղաքական դեր ունի հայերի համար..., ապա այն կասկածի ենթարկելու, այդպիսի ընթերցումը կազմող հավատալիքների հավաքածուն կազմալուծելու որևէ փորձ պետք է կատարվի զգուշությամբ և նրբանկատորեն՝ լիովին գիտակցելով, որ նմանօրինակ որևէ ուսումնասիրություն կարող է նկատվել իբրև հարձակում [հայ] ազգի ոգու դեմ իսկ:*
>
> [Because this view of Armenian history plays such an important political role for Armenians..., any attempt to dispute it, to decompose the collection of beliefs that make up this reading, must be done with care and sensitivity, with full awareness that such an investigation may be perceived as an attack on the very soul of the nation.][13]

Թեև, Սյունիի վերը շարադրած նպատակն ինքնին բավարար է նրա երկը հակագիտական համարելու համար, սակայն, կարևոր է պարզելը, թե ի՞նչ հիմնական դրույթների վրա է նա կառուցել իր տեսությունը: Ուստի, հեղինակին չնորհակալություն հայտնելով իր գլխավոր՝ կանխորոշված (գուցե եւ՝ իրեն հանձարարված) նպատակն այդաստիճան անկեղծորեն խոստովանելու համար, անցնենք նրա երկասիրության քննությանը:

3. Հայոց հին և միջնադարյան պատմության հարցեր

Սյունիի օգտագործած աղբյուրները շատ հաճախ պարզապես հղված չեն, սա նրա գրքի մեթոդաբանական ամենաբնորոշ և ո՛չ-պատահական թերություններից մեկն է: Ճիշտ

---

13 Նույն տեղում, էջ 5:

այս հակագիտական եղանակով էլ հնդինակը «պարզել» է հայերի ծագումնաբանությունը.

> *Նախահայերը գաղթել են արևելյան Անատոլիա՝ Հայկական լեռնաշխարհ, մ.թ.ա. 6-րդ դարի կեսերին:*
>
> [the proto-Armenians migrated into eastern Anatolia, the Armenian Plateau, in the mid-sixth century B. C.] [14]

Այս կարճ նախադասության մեջ կա միանգամից երկու կոպիտ սխալ.

1) Արևելյան Անատոլիայի նույնացումը Հայկական լեռնաշխարհի հետ սխալ է և՛ պատմական, և՛ աշխարհագրական տեսակետներից: Մինչև վերջին տասնամյակները Անատոլիա աշխահագրական եզրը եղել է Փոքր Ասիա թերակղզու հոմանիշ: Սակայն, 1920-ական թթ. ի վեր, սկզբում միայն Թուրքիայում, ապա՝ նաև Արևմուտքում, Անատոլիան ու նոր թխած արևելյան Անատոլիա եզրը սկսեցին դիտավորությամբ գործածել՝ մատնանշելու համար Թուրքիայի Հանրապետության արևելյան ամբողջ տարածքը՝ ներառյալ Արևմտյան Հայաստանը և Քրդստանը[15]*: Սակայն, անգամ այդպիսի սխալ և աշխարհագրորեն խեղաթյուրված «Անատոլիա»-ն կիրառողները դեռևս այն չէին նույնացրել ամբողջ Հայկական լեռնաշխարհի հետ, որ իր մեջ ներառում է նաև Արևելյան (Պարսկական/Ռուսական/Խորհրդային/անկախ) Հայաստանը: Իսկ որ Սյունին Արևելահայաստանն էլ է մտցնում Անատոլիայի տարածքի մեջ շատ պարզ երևում է նաև Ղարաբաղի աշխարհագրության նրա հետևյալ նկարագրությունից. «Ղարաբաղը՝ լեռնային մի շրջան է՝ արևելյան Անատոլիայով ձգվող մեծ Հայկական լեռնաշխարհի ամենաարևելյան ծայրին...» (A mountainous region at the easternmost edge of the great*

---

14 Նույն տեղում, p. 7.

15 Տե՛ս, օրինակ, *Հայկական սովետական հանրագիտարան.* հ. 1 (Երևան, 1974), էջ 373. Համմտ. *Encyclopédie de l'Islam.* Nouvelle édition. Tome I. (Leyde-Paris: E. J. Brill, 1960), p. 475; *Encyclopedia Britannica,* - Vol. 2 (Chicago-London-Toronto, 1961), p. 536:

Armenian mountain-plateau stretching through eastern Anatolia)[16]: *Նկատենք, որ ամերիկյան ուրիշ «հայագետներ» էլ են սկսել ամբողջ Հայկական լեռնաշխարհը համարել Անատոլիայի բաղկացուցիչ մաս: Այսպես, խոսելով հին ժամանակների մասին, Նինա Գարսոյանը ևս, իմիջիայլոց, Հայկական լեռնաշխարհը մոցնում է Անատոլիայի մեջ, գրելով. «Անատոլիայում ու, մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավիճակը...»* ("The political situation prevailing in Anatolia and particularly on the Armenian highlands...")[17]:

Ինչևիցե, ստորև մենք դեռ մանրամասն կանդրադառնանք Սյունիի կողմից Անատոլիա եզրի օգտագործման ետնախորքային ելևեջներին, իսկ այժմ վերադառնանք հայերի ծագումնաբանության հարցերին:

2) Սյունին չի ասում, թե նախահայերը որտեղից են Հայկական լեռնաշխարհ «գաղթել»: Այդուհանդերձ, վստահորեն կարող ենք եզրակացնել, որ նա նկատի ունի վաղուց հնացած այն տեսությունը, ըստ որի նախահայեր համարվող փուռգիացիները մ.թ.ա. 6-րդ դարում ներխուժել և գրավել են պատմական Հայաստանի տարածքը: Ժամանակակից հայագիտությունը, սակայն, վաղուց է նշել Ուրարտական պետության գոյության շրջանում (9-6-րդ դդ. մ.թ.ա.) և այդ պետության գոյությունից առաջ Հայկական էթնիկ տարրի կայուն ներկայությունը Հայկական լեռնաշխարհում[18]: *Գիտականորեն լիո-*

---

16 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 193.

17 **Richard Hovannisian**, ed., *The Armenian People from Ancient to Modern times*, Vols. 1-2, (New York, St. Martin's Press, 1997), p. 37.

18 Տե՛ս, օրինակ, Г. А. Капанцян, Хайаса -- колыбель армян. Этногенез армян и их начальная история. Ереван, 1947. Գ. Բ. Ջահուկյան. *Հայոց պատմություն. Ճախագրային շրջան:* Երևան, 1987: Նույնի՝ "Հայկական շերտը ուրարտական դիցարանում", "О соотношении хайасского и армянского языков", "Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին" -- *Պատմա-բանասիրական հանդես*, 1986, No. 1, 1988, No. 1, 2, 1992, No. 1. Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգս-

վին հիմնավոր այս տեսակետն ընդունվել է օտարերկրացի առանձին մասնագետների կողմից և արձանագրվել անգլերեն մասնագիտական գրականության մեջ[19]*: Սակայն, Սյունին կատարյալ լռության է մատնում ինչպես այս հայտնի տեսակետի գոյությունը, այնպես էլ հնդեվրոպացիների նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհում և նրա հարակից շրջաններում տեղադրող վերջին կապիտալ ուսումնասիրությունները*[20]*: Ավելին՝ հնդեվրոպացիների նախահայրենիքի մասին գիտական բանավեճն իսկ հիշատակության չի արժանացել: Այսպիսով, դրա հիշատակումը նա կամ աննպատակահարմար է դիտել (չէ՞ որ կվտանգվեր հայերի եկվորության թուրքանպաստ տեսությունը) կամ, գուցե, պարզապես անտեղյա՞կ է դրան:*

Խոսելով հայ ժողովրդի կազմավորման մասին, Սյունին անում է հետևյալ հայտարարությունները.

յան. *Ուրարտու-Հայաստան:* Երևան, ԳԱ, 1988: Ս. Հմայակյան. *Վանի թագավորության պետական կրոնը*: Երևան, 1990:

19 Տե՛ս, օրինակ, **R. D. Wilkinson**, *Introduction to the History of Pre-Christian Armenia* (Cambridge, Mass.: Society for Armenian Studies, 1983), pp. 3-6, 72, notes 8 and 9; **Edward Gulbekian**, "Why did Herodotus Think the Armenians Were Phrygian Colonists?" *Armenian Review* 44 (3-175) (Autum 1991), pp. 65-70.

20 Տե՛ս Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. Предисл. Р. О. Якобсона, в 2-ух томах. Тбилиси, 1984. Այս աշխատությունը բազմիցս գրախոսվել է եվրոպական լեզուներով ու նաև լույս տեսել անգլերեն: Տե՛ս նաև **L. Luca Cavalli-Sforza, Paolo Menozzi, Alberto Piazza**, *The History and Geography of Human Genes* (Princeton University Press, 1996), pp. 264-265; **Colin Renfrew**, *Archeology and Language: the Puzzle of Indo-European Origins* (London: Jonathan Cape, 1987); **Colin Renfrew**, "The Origins of Indo-European Languages," *Sci. Am.* 261(4), pp. 106-114 (1989). **A. B. Dolgopolski**, "The Indo-European homeland and lexical contacts of Proto-Indo-European with other languages," *Mediterr. Lang. Rev.* (Harassowitz) 3:7-31. **Merrit Ruhlen**, *The Origin of Language: Tracing the Evolution of the Mother Tongue* (Toronto: John Wiley & Sons, Inc., 1994), pp. 186-188.

«Ընդհուպ մինչև մեծ թագավոր Տիգրանի (մ.թ.ա. 95-55) – դահակալումը, հայերը նախնական (!) սոցիալական և լեզվական կազմավորման ընթացքի մեջ էին: Նախահայերը դարձան ճանաչելի խումբ իրենց սեփական իրանական տիպի (!) ցեղային (!) կառուցվածքով և փոխառված (!) հեթանոսությամբ» (շեշտադրումներն իմն են՝ Ա. Ա.):

[Up to the reign of the great king Tigran (95-55 B.C.), Armenians were in the process of original social and linguistic formation. The Proto-Armenians became an identifiable group with their own Iranian-style tribal structure and borrowed paganism.][21]

Նախ՝ պարզ չէ, թե ինչպե՞ս կարող էին, ըստ Սյունիի, ընդամենը չորս հարյուր հիսուն տարի առաջ արևմուտքից Հայաստան խուժած նախահայերը, արդեն մ.թ.ա. 1-ին դարում այդքան արագորեն կազմավորվել իրանական տիպի ցեղային կառույցների մեջ (եթե, իհարկե, սրանով նա նախահայերի իրանից գալու մասին բոլորովին անհեթեթ նոր մի տեսություն չի առաջադրում): Երկրորդ. այնուամենայնիվ, որո՞նք էին մ.թ.ա. 1-ին դարում նախահայկականից հայկական կարգավիճակի անցած ցեղերը, ի՞նչ էին նրանց անվանումները, ե՞րբ վերացավ այդ ցեղային կառուցվածքը: Այս հարցերին Սյունին չի անդրադարձել: Իրականում, արդի հայագիտությունը չի ճանաչում այդպիսի ցեղեր, իսկ հայ ժողովրդի կազմավորումն էլ ավարտված է համարում ամենաուշը մ.թ.ա. 6-5-րդ դարերում: Միրելի պրոֆեսորս մի հարց ևս թողել է անպատասխան՝ արդյո՞ք իր նշած «նախահայերը» սեփական հեթանոսության որևէ տարր չունեին (կամ գուցե աթեի՞ստ էին), թե նրանք իրրոք, ինչպես ինքն է ասում, միայն փոխառել էին «իրանական և հունական աստվածություններըը», դրանց հիման վրա ստեղծելով իրենց «ազգային (sic! – Ա. Ա.)...հեթանոսական կրոնը», որին էլ զարմանալիորեն «մոլի նվիրվածություն էին ցուցաբե-

---

21 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 7.

րում»[22]: Այնինչ, նախահայկական և բուն հայկական հեթանոսական կրոնի մասին գոյություն ունի մասնագիտական գրականություն, որն ամբողջովին զանց է առնված[23]:

Վերջապես, չափազանց հետաքրքրական կլիներ, եթե Սյունին իսկապես պարզաբաններ, թե ասելով, որ հայերը «ճանաչելի խումբ» դարձան միայն մ.թ.ա. առաջին դարում, ապա «հայ» կոչելով ու՞մ նկատի ուներին, օրինակ, Հնքաթեոս Միլեթացին (մ.թ.ա. 550 թ.), Դարեհ թագավորի Բեհիսթունյան արձանագրությունը (մ.թ.ա. 520 թ.), ապա նաև Հերոդոտոսը և Քսենոփոնը (մ.թ.ա. 5-րդ դ.). սրանք վկայություններ են, որ ինքը Սյունին հիշում է[24]:

Այսքանով չբավարարվելով՝ Սյունին հայերի՝ իբրև ժողովրդի կազմավորումն դնում է ավելի ուշ ժամանակահատվածի մեջ, բոլորովին անպատեհ հայտարարելով, թե մ.թ. 4-րդ դարի սկզբի դրությամբ հայերն արդեն «կազմել էին եզակի, ճանաչելի էթնիկ-կրոնային համայնք»[25]: Այսպիսով, այս տեղաժամանակային քմահաճ խաթարումներից ու չիլա-չփոթից հայոց պատմության անտեղյակ անգլախոս անպատրաստ ընթերցողը մակաբերում է միայն այն, որ հայ ժողովրդի կազմավորումն ավարտվել է մ.թ.ա. առաջին դարից մինչև մ. թ. 4-րդ դարն ընկած ժամանակահատվածում, որն արդեն իսկ սխալ է և ոչ մի փաստով չի հիմնավորվում:

4. Հայոց գենետիկան

Հատուկ ուշադրության է արժանի Սյունիի ձգտումը՝ հայերին ամեն կերպ ետ պահել իրենց արմատները մինչև մեր թվարկության նախորդած դարերը հասցնելու մտքից: Մ.թ.ա.

---

22 Նույն տեղում, p. 8.

23 Տե՛ս ծնթ. 18:

24 Նույն տեղում, p. 7. հմմտ. **Ronald Grigor Suny**, *The Revenge of the Past: op. cit.*, p. 175, note 72.

25 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 8.

6-5-րդ դարերում ապրած «նախահայերի» մասին պարբերությունից անմիջապես հետո նա գրում է.

> *...գուցե (!) կան գենետիկ կապեր այդ հին ժողովրդի և այսօր Խորհրդային Հայաստանում*[26] *ապրող ոմանց (!) միջև, սակայն ապրած լինելով Արևելք-Արևմուտք միգրացիաների, ներխուժումների, զավթումների և դաժան բնաջնջումների անկայուն տարածաշրջանում, արդի հայերն ավելի շատ էթնիկ միախառնումների արդյունք են, քան Ուրարտուի կենսաբանական մաքրարյուն ժառանգներ (շեշտադրումներն իմն են՝ Ա. Ա.):*
>
> [Perhaps, there are genetic connections between this ancient people and some today living in Soviet Armenia, but having lived in a region of volatile East-West migrations, invasions, conquests, and brutal exterminations, modern Armenians are more the product of ethnic intermingling, than they are the pure biologic heirs of Urartu.][27]

Ուրարտուն հանկարծ ամենավերջում հիշատակելով՝ Սյունին փորձել է խոհեմաբար իր համար նահանջի տեղ թողնել, սակայն ամբողջ կոնտեքստն ստեղծում է ընթերցողի այն միանշանակ տպավորությունը, թե հայերը որոշակի գենետիկ միատարրության են հասել ավելի ուշ ժամանակներում, քիչ է մնում ասի՝ Խորհրդային Հայաստանի օրոք. չէ՞ որ Հայկական լեռնաշխարհում Սյունիի հիշատակած միգրացիաները, ներխուժումները, զավթումներն ու դաժան բնաջնջումները կրկնվել են ընդհուպ մինչև մեր դարի 20-ական թթ.:

Իրականում՝ հայոց գենետիկ միատարրությունը եղել է հայերի ազգախմբող, ազգատարանջատող և ազգապահպան որոչիչ գործոններից մեկը, կարելի է ասել՝ հայոց ինքնության հիմնաքարերից մեկը: Ըստ Encyclopedia Britannica-*ի. «հա-*

---

26 Հանրահայտ է, 1993 թ. Խորհրդային Հայաստան այլևս չկար, ուրեմն՝ մեր «հայագետը» զլացել է անգամ իր գիրքը, ավելի ճիշտ՝ միտքը, ըստ պատշաճի սրբագրելուց:

27 Նույն տեղում, p. 7.

յերն ունեն շատ բնորոշ և միատեսակ դիմագծեր: Նրանք բարձրահասակ են ու թուխ, նրանց աչքերը մեծ են, քիթը՝ երկար, բավական բարակ, ուղիղ կամ թեթևակիորեն արծվային, հաճախ ծայրին թեքված: Նրանք չափազանց կարճագլուխ են՝ հայկական տիպիկ գլուխը կարճ է, այն ուղղաձգորեն բարձրանում է վզից վերև, այնպես որ գանգն ընդունում է կոնուսաձև տեսք...»:[28] Այս նկարագիրն է պատճառը, որ հային կարելի է դյուրությամբ ճանաչել օտար և հեռավոր երկրներում:

Հետաքրքիր է, որ ճիշտ այսպիսի դեմքեր են պատկերված մ.թ.ա. 1-ին դարի հայոց թագավորների, հատկապես՝ Տիգրան մեծի, Արտավազդ Բ-ի, Տիգրան Գ-ի պատկերները կրող դրամների վրա[29]: Հայաստանի տարածքում պեղված՝ մ.թ.ա. երկրորդ և առաջին հազարամյակներով թվագրվող գանգերի ձևը, ինչպես նաև նրանց՝ գիտական ամենաարդիական եղանակներով կատարված դիմային վերակառուցումները, բացահայտում են հին և արդի հայ սերունդների գենետիկ խիստ միանմանությունը[30]: Օրինակ, ըստ մասնագետների՝ «վաղ երկաթե դարի դամբարաններից ստացված գանգերը, որ պեղվել են Նորադուզում, բոլորովին չեն տարբերվում ժամանակակից հայերից. օժտված են խիստ դուրս ցցված քթոսկրերով, քթարմատի բարձրության մեծ ցուցանիշներով, ուժեղ պրոֆիլավորված դիմային կմախքով»[31]: Մի այլ ուսումնասիրություն, որ կատարվել է այլ կարգի մեծաթիվ տվյալների հետազոտության հիման վրա, եկել է նույնատիպ եզրակացության.

Частота распределения генов системы АВО и Rhesus (D) у армян, проживающих в Нагорном Карабахе, Армении, Грузии, Франции, установлен-

---

28 Vol. 2 (Chicago-London-Toronto, 1961), pp. 380-381.

29 Լուսապատճեններն տե՛ս **Զարեհ Պտուկյան.** *Արտաշեսյան հարստության դրամները:* Վիեննա, 1969. **Խ. Ա. Մուշեղյան.** *Հայաստանի դրամական գանձերը.* Երևան, 1973:

30 Տե՛ս **Ռուբեն Հարությունյան և Նվարդ Քոչար.** *Ի՞նչ են պատմում մեր գեները.* Երևան, 1989, էջ 55, 61-62:

31 Նույն տեղում, էջ 55:

ная разными исследователями на весьма неоднородном количественном материале и в разные годы, почти одинакова. Для данной популяции характерна высокая частота встречаемости генов PA и d.[32]

Մարդաբանական-գենետիկ այսաստիճան նույնությունն ունի իր պատմական բացատրությունը, այն է՝ մինչդեռ հայերը դարեր շարունակ շատ մեծ թվով ձուլվել են այլազգիների մեջ, շատ հաճախ ենթարկվելով բռնի ուծացման, նրանք իրենց մեջ չեն ձուլել այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ մի այնպիսի զգալի թիվ, որ բավարար լիներ նշանակալի գենետիկ որակափոխություններ առաջացնելու համար: *Աշխարհագրական, պատմական, սոցիալական, դավանական որոշակի իրողությունների բերումով, հայերն ապրել են սոցիալ-կենսաբանական հայտնի երևույթի՝* փաստական էնդոգամիայի *արտակարգ երկարատև մի ժամանակահատված, այսինքն՝ հայերի մեջ խառն ամուսնությունները միշտ աննշան տոկոս են ունեցել (չհաշված արտերկրում ապրող հայերի հետ կատարվող ակկուլտուրացիայի և ասիմիլյացիայի բնականոն երևույթները): Նշենք հայոց էնդոգամիային նպաստած պատմական երեք հիմնական գործոն.*

ա) Հայաստանի էթնիկ միատարրությունը, որ պատմական փաստ էր արդեն մ.թ.ա. վերջին դարերում (հիշենք Ստրաբոնի հայտնի հաղորդումը Արտաշես Ա-ի օրոք Հայաստանի միալեզվության մասին)[33]*, և որը ձգվեց ընդհուպ մինչև մ.թ. 17*

---

32 В. М. Нерсисян, Р. З. Деланян, И. Б. Данелян, Н. Я. Бадунц, "Особенности распределения фенотипов и генов систем АВО и Rhesus у населения Нагорного Карабаха", Генетика (Российская академия наук) Том 30, 2, 1994 февраль, с. 274.

33 **Strabo**, *Geography*. Compiled and transl. by F. Lasserre (Paris, 1975), book XI, Chapters 14, 5 (Coll. G. Bude, vol. VIII, p. 123). Ստրաբոնի այս հաղորդման մանրամասն վերլուծությունը տե՛ս **Գագիկ Սարգսյան.** Ինքնորոշում և կողմնորոշում. Մեծ Հայքի վերելքի շրջան. - *Ինքնություն* [*Identitas*] , Ա, Երևան, «Կամար», 1995, էջ 91-93:

դարը: 17–18-րդ դարերում ևս պատմական Հայաստանի տարածքում հայերը կազմում էին զգալի մեծամասնություն.

բ) մ.թ. 13 դարի երկրորդ կեսից հետո Հայաստանի տարածքի մեծ մասում Հայոց ռազմաքաղաքական անկախ և հզոր իշխանության չգոյությունը նպաստում էր հայերի ձուլմանը տիրող ազգություններին մեջ և, միաժամանակ, անհնար էր դարձնում այլազգիների «հայացումը».

գ) մահմեդականների, կաթոլիկների, հույների, վրացիների, ասորիների հետ ամուսնանալը գործնականորեն անհնար էր, որովհետև պայմանավորված էր կրոնական արգելքներով և սեփական համայնքի հետ կապերը խզելու վտանգով: Հիշենք թեկուզ այդ առթիվ Հայոց կանոնագրքերում արձանագրված՝ «Վասն որ ընդ այլազգիս խառնակին խնամութենամբ» հատուկ հոդվածը, որ խիստ պատիժ էր նախատեսում և՛ այլազգիի հետ ամուսնացողի, և՛ նրա ծնողների համար[34]*:*

Այսպիսով, հայերը չարունակաբար պահպանել են գենետիկ միատարրության խիստ բարձր մակարդակ՝ իր ազգատարանջատիչ կարևոր հետևանքներով հանդերձ[35]*: Զափազանցություն չի լինի, եթե նշենք, որ հայ հորից և մորից ծնված այսօրվա հայը, գենետիկորեն անհամեմատ ավելի մոտ է մ.թ.ա. վերջին դարերում ապրող հայերին, քան, ասենք, այսօրվա ֆրանսիացիները կամ իսպանացիները (չխոսելով այլևս ամերիկացիների, ավստրալացիների, բրազիլացիների և այլ երիտասարդ ազգերի մասին)՝ մ.թ. 10-րդ դարում ապրած իրենց նախնիներին: Ինչպես ասացինք, մեր այս եզրակացությունը լիովին հաստատվում է հնագետների, գենետիկների, մարդաբանների, կենսաբանների և բժիշկների հայտնագործություններով*

---

34 Մխիթար Գոշ. *Գիրք դատաստանի:* Աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի. Երևան, ԳԱ հրատ., 1975, էջ 365: *Կանոնագիրք Հայոց*, Հ. Ա: Աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի. Երևան, ԳԱ հրատ., 1964, էջ 231:

35 Փաստական էնդոգամիայի սոցիալական հետևանքների մասին տե՛ս Ю. В. Бромлей, Очерки теории этноса. Москва, 1983, сс. 206-207.

և ուսումնասիրություններով[36]: Վերջում նշենք, որ Սյունիի՝ հայերի գենետիկային վերաբերող սխալ թեզի աղբյուրը, ամենայն հավանականությամբ, թուրք հայտնի կեղծարար հեղինակներից մեկն է՝ Քյամուրան Գյուրունը, որն ավելի պարզ է արտահայտվել. «Հին հայերը ընդհանուր ոչինչ չունեն մեր այսօրվա ճանաչած հայ համայնքի հետ»[37]: Սակայն, ինչպես տեսանք, Սյունիի և Գյուրունի պատկերացումները հայոց գենետիկայի մասին չատ հեռու են թե՛ պատմական իրականությունից, թե՛ մանրադիտական գրականության իմացությունից:

5. Ադրբեջանցիների և ղարաբաղցի հայերի ծագումնաբանության «խնդիրներ»

Սյունին, կանխամտածված և անհիմն կերպով ժխտելով հին և նոր հայ սերունդների գենետիկ շարունակականությունը, միաժամանակ չի վարանում հայտարարելու, որ կովկասյան ալբանացիները եղել են. ա) «հստակ էթնիկ-կրոնական խումբ» (distinct ethnoreligious group), և բ) որ նույն այդ ժողովուրդը, թեև թուրքախոս և շիա մահմեդական դարձած՝ «այսօրվա ադրբեջանցիների ուղղակի նախնին է» (the direct ancestors of present-day Azerbaijanis)[38]: Սա ասվել է հաշվի չառնելով պատմագիտական այն հաստատումը, որ Կովկասի ալբանացիների մերաէթնիկ[39] խումբը բաղկացած էր 26 ցեղից, որոնցից յուրաքանչյուրը, ըստ Ստրաբոնի, խոսում էր իր «լեզ-

---

36 Մանրամասնությունների և մատենագիտության համար, տե՛ս **Ռուբեն Հարությունյան** և **Նվարդ Քոչար**, *նշվ. աշխ.*, էջ 51-61, 75-86, 102-104, 132, 136-137:

37 Տե՛ս **Մանվել Ջուլալյան**, *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր)*. Երևան, 1995, էջ 46:

38 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 193.

39 Այս եզրի մասին մանրամասնորեն տե՛ս С. И. Брук, Н. Н. Чебоксаров. Метаэтнические общности. -- Расы и народы, Т. 6, Москва, 1976, сс. 15-41.

վով»[40]: Այս ցեղերը մեկ պետության՝ Աղվանքի թագավորության մեջ միավորված էին շուրջ հինգ դար՝ մ.թ.ա. 1-ին դարից մինչև մ.թ. 462 թ. (երբ Պարսկաստանը լուծարեց այն): Դրանից հետո այդ ցեղերը զոյատևել են անջատ-անջատ՝ բացառապես իրենց ցեղային անվանումների տակ, որոնց ուղղակի հետնորդներն են Դաղստանում և հյուսիսային Ադրբեջանում ապրող լեզգիախոս ժողովուրդները՝ լեզգիները, ուդիները, թաբասարանցիները, ցախուրները, ռութուլցիները, ագուլցիները, քրիզները, բուդուգները, խինալուգները[41]:

Կեղծ և չինծու է Սյունիի այն թեզը, թե կովկասյան ալբանացիներն այժմյան ադրբեջանցիների ուղղակի նախնիներն էին, քանզի ադրբեջանցիները՝ ա) եթե օգտագործենք ամերիկացի միջազգայնագետ Շիրին Հանթերի բնորոշումները՝ գենետիկորեն «իրանական և թյուրքական ժողովուրդների միախառնման» արդյունք են, բ) լեզվով՝ թյուրք են, գ) կրոնով՝ հիմնականում շիա մահմեդական են (աղվանները հայադավան քրիստոնյա էին), դ) մշակույթի տեսակետից, ինչպես ճիշտ նկատել է նույն Շիրին Հանթերը՝ «թուրք/իրանական խառը ժառանգության» տեր են[42]:

Իր բռնած թուրք-ադրբեջանական ուղեգիծը շարունակելով՝ Սյունին գրում է.

---

40 **Strabo**, *Geography*. Compiled and transl. by F. Lasserre (Paris, 1975), book XI, 4, 6.

41 Այդ ցեղերի էթնիկ պատմության և նրանցից շուրջ 20-ի անվանումների մասին տե՛ս А. А. Акопян, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987. Այս ֆունդամենտալ մենագրությունը ամփոփ կերպով ներկայացվել է նաև ֆրանսերեն, տե՛ս *Revue des Etudes Armeniens*, Vol. XXI (Paris, 1988-1989), pp. 485-495. հմմտ. նաև *Պատմա-բանասիրական հանդես*, 1987, No. 3, էջ 166-189, հատկապես, էջ 167-168, 172-175:

42 **Shireen T. Hunter**, "The Muslim Republics of the Former Soviet Union: Policy Challenges for the United States," *The Washington Quarterly*, Summer 1992, pp. 59-62.

...Հին և միջին դարերում Ղարաբաղը Կովկասյան Աղվանքի թագավորության մաս էր կազմում...ժամանակի ընթացքում ղարաբաղցի աղվաննները միախառնվեցին հայերի հետ: Աղվանական եկեղեցու Գանձասարում գտնվող կենտրոնական նստավայրը դարձավ Հայ եկեղեցու թեմերից մեկը:

[Karabakh had been in ancient and medieval times part of the kingdom of the Caucasian Albanians... in time the Karabakh Albanians merged with the Armenians. The central seat of the Albanian church at Gandzasar became one of the bishoprics of the Armenian church...][43]

Բարեբախտաբար, կարիք չունենք մանրամասնորեն հերքելու տխրահռչակ Զիա Բունիաթովից ու նրա աշակերտներից փոխառնված այս կեղծիքները, քանզի դրանք անվավեր են ճանաչվել 1960-1990-ականներին ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն և հայերեն լեզուներով լույս տեսած բազմաթիվ գիտական ուսումնասիրություններում[44]*: Այսուհանդերձ, աննենք սոսկ երկու կարևոր չեչտադրում.*

ա) Ղարաբաղում երբեք չեն եղել «ղարաբաղցի աղվաններ», որ հետո էլ՝ «ժամանակի ընթացքում միախառնվեին» հայերին, որովհետև աղվանական ցեղերը բնակվում էին Կուր գետի ձախափնյակում, իսկ Ղարաբաղը գտնվում է այդ գետի աջափնյակում, ափից էլ՝ բավական հեռու:

Այնուհետև. եթե և՛ ղարաբաղցի հայերի, և՛ ադրբեջանցիների երակներում հոսեր միևնույն աղվանական արյունը, ապա այս երկու խմբերի մեջ գենետիկ որոշակի մերձավորությունը և նմանություններն անխուսափելի կլինեին, մինչդեռ համապատասխան լուրջ և հազարավոր տվյալներով փաստարկված ուսումնասիրությունները ցույց են տվել ղարաբաղցի հա-

---

43 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 193.

44 Այս հարցի համառոտ տեսությունը և մատենագիտությունը տե՛ս, օրինակ, **Christopher J. Walker**, ed., *Armenia and Karabakh, op. cit.*, pp. 73-79, 138, note 19. տե՛ս նաև հոդվածների հետևյալ ժողովածուն՝ К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении. Сборник статей. Ереван, 1991.

յերի և ադրբեջանցիների միջև եղած վիթխարի գենետիկ հեռավորությունը[45]:

բ) 1216-1238 թթ. կառուցված Գանձասարի վանքը, որ 14-18 դարերում եղել է Ղարաբաղի հայոց հոգևոր և քաղաքական կենտրոնը, հայ ճարտարապետության ամենանշանակալից և միջազգայնորեն ճանաչված հուշարձաններից մեկն է[46]: Իսկ ահա իրեն գիտնական, այն էլ «Հայոց պատմության պրոֆեսոր»[47] հորջորջող Սյունին Գանձասարը համարում է «աղվանական եկեղեցի»:

Սյունին սրանով, փաստորեն, մեղսակից է դառնում պատմության նենգափոխման ադրբեջանցիների փորձերին. իսկ սա մի գործունեություն է, որ մեծապես պատասխանատու է հայ-ադրբեջանական ազգամիջյան լարվածության համար: Պետք է ասել նաև, որ ադրբեջանական պատմագրությունը չի սահմանափակվել միայն հայոց պատմության վերաքննությամբ, այն կեղծել է նաև Իրանի պատմությունը, դառնալով նաև հայագիտական ոլորտից դուրս աշխատող մասնագետների քննադատության առարկան[48]: Հնարավոր է արդյո՞ք, որ Սյունին

---

45 В. М. Нерсисян, Р. З. Деланян, И. Б. Данелян, Н. Я. Бадунц, "Особенности распределения фенотипов...", указ. соч., сс. 271--275.

46 Տե՛ս, օրինակ, А. Л. Якобсон, "Гандзасарский монастырь и хачкары: Факты и вымыслы", -- К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении, сс. 448-456. Գանձասարի վանքին վերաբերող ուսումնասիրությունների մատենագիտությունը տե՛ս *Gandzasar. Documents of Armenian Architecture (Documenti di Architettura Armena)*. Milano, Italia, 1987, pp. 22-25, իսկ Գանձասարի վանքի բոլոր արձանագրությունները, այդ թվում նրա հայ հիմնադիր-կառուցողներինը, զետեղված են հետևյալ գրքում՝ **Բագրատ Ուլուբաբյան**, *Գանձասար*: Երևան, «Հայաստան», 1981:

47 Նույն 1993 թ. լույս տեսած իր մյուս գրքում Սյունին հե՛նց այդպես էլ բնորոշված է, առանց իր կոչումի մեջ «արդի» բառի հիշատակության, տե՛ս **Ronald Grigor Suny**, *The Revenge of the Past, op. cit.*, p. XII և կազմը:

48 Տե՛ս **Էնայաթ Օլլա-Ռեզա**, *Ազարբայջան և Սոռաճ*. Թեհրան, 1982 (պարսկ.) (ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել Երևանում 1993

պարզապես անտեղյակ է ադրբեջանական պատմակեղծարարության հանրաճանաչ խնդրին և դրան վերաբերող ծավալուն մատենագիտությանը: Վստահորեն՝ ո՛չ. նա նախընտրել է ադրբեջանական կեղծիքը. թեև կարդացել և այլ առիթով իր ղրքում հղել է այդ հարցերին նվիրված՝ 1988 թ. Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակած առանցքային գրքույկը, ինչպես նաև՝ գիտական նույն տեսակետի՝ Ուոքերի խմբագրած անգլերեն տարբերակը[49]:

Ուշագրավ է նաև Սյունիի շարադրանքի ոճը. քաղաքականապես խիստ զգայուն այս խնդիրն արծարծելիս, նա որևէ աղբյուր չի հղում, ո՛չ էլ՝ դեպքերի հստակ ժամանակագրություն է տալիս: Օրինակ, Սյունիի հայտարարությունն առ այն, թե «հին և միջին դարերում Ղարաբաղը Կովկասյան Աղվանքի թագավորության մաս էր կազմում»՝ արևմտյան անտեղյակ ընթերցողի վրա թողնելու է այն տպավորությունը, թե հնուց մինչև 14–15-րդ դարերը Այսրկովկասում գոյություն է ունեցել մի անկախ Աղվանքի թագավորություն, որի կազմում էլ անընդմեջ եղել է Ղարաբաղը: 1978 թ. հրապարակված ու այնուհետև 1987 թ. վերատպված իր մի հոդվածում Սյունին գրել է, թե՝ «իններորդ և տասներորդ դարերում Արցախ/Ղարաբաղը Կովկասյան Աղվանքի թագավորության մասն էր» (during the ninth and tenth centuries, Artsakh/Karabakh was part of the Caucasian Albanian kingdom)[50]: Սակայն, ինչպես ասացինք՝ այդ թագավորությունը գոյատևել է մ.թ.ա. 1-ին դարից մինչև մ.թ. 462 թ., իսկ Արցախը (Ղարաբաղը) գտնվել է այդ թագավորության կազմում 451 թվից մինչև 462 թ.: Եթե ընդունենք, որ Սյունին այս ամենը չի իմացել 1978-1987 թթ., ապա Հայաստանի ԳԱ հրապարակած վերոհիշյալ գրքույքի

թ.): Տե՛ս նաև **Shireen T. Hunter**, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict* (Washington, D. C.: The Center for Strategic & International Studies, 1994), pp. 14-15, 190.

49 See **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 269 (note 1), 281.

50 **Ronald Grigor Suny**, "The Karabagh Problem: A Historical Perspective," *The Armenian Mirror-Spectator*, November 14, 1987, p. 8.

ընթերցումից հետո նա արդեն հրաշալի տեղյակ է եղել Աղվանքի խնդիրներին: Այսպիսով՝ Սյունին միանգամայն գիտակցաբար է գործածում լպրծուն ոճ. սա նրան պետք է իր իսկական՝ իր գրքում չհղված թուրքական և ադրբեջանական աղբյուրները քողարկելու համար:

6. Հայոց թագավորության միջազգային վարկը և սահմանները

Սյունին գրում է.

> *Իրենց (իմա՝ հայերի -- Ա. Ա.) անցյալում միայն մեկ անգամ է պատահել, որ Հայկական լեռնաշխարհն ամբողջությամբ միավորվել է մեկ հայ տիրապետողի իշխանության տակ:*
>
> [Only once in their past was the entire Armenian plateau unified under a single Armenian ruler...][51]

Թուրքական ծանոթ կեղծիքներից է[52]*: Հետաքրքիր է, որ Սյունին այդպես էլ չի ճշտում, թե ո՞վ էր այդ միակ հայ տիրապետողը և իր հայտարարությունը հաստատելու համար որևէ աղբյուր չի վկայակոչում: Բարեբախտաբար, նրա հավանական սկզբնաղբյուրը՝ վերոհիշյալ Քյամուրան Գյուրունը, ավելի պարզ է խոսում: Ըստ Գյուրունի՝ «Միակ ժամանակաշրջանը, երբ այս (իմա՝ հայ -- Ա. Ա.) ավատատերերը անկախություն էին վայելում, եղել է մ.թ.ա. 94-ից մինչև 66 թ.՝ Տիգրանի տիրապետության օրոք»*[53]*, և կամ՝ «Եթե մենք*

---

51 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 214.

52 Թուրքական պատմագրության այս թեզը մանրամասն ներկայացված է հետևյալ գրքում՝ **Մանվել Ջուլալյան**, *Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ*, ՀՀՎ. աշխ.: Համմտ. **Clive Foss**, "The Turkish View of Armenian History: A Vanishing Nation," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. by Richard G. Hovannisian (New York: St. Martins Press, 1992), p. 254.

53 Տե՛ս **Kamuran Gurun**, *The Armenian File: The Myth of Innocence Exposed* (London-Nicosia-Istanbul: Published jointly by K. Rustem & Bro. and Weidenfeld & Nicolson Ltd., 1985), p. 15.

թվագրենք [հայերի] անկախության ժամանակաշրջանը մ.թ.ա. 95 թվով, ապա կտեսնենք, որ այն տևել է ընդամենը 30 տարի: Դրանից հետո Հայաստանն այլ բան չէր, քան մի խաղաղինվոր հռոմեացիների և պարսիկների հակամարտությունների մեջ»[54]:

Այստեղ հարկ չկա մանրամասնել պատմական հայտնի փաստերը. բավարարվենք սոսկ հիշեցնելով, որ իրականում Հայաստանը հարյուրամյակներ շարունակ եղել է մերձավորարևելյան տարածաշրջանի հզոր և խոշորագույն պետություններից մեկը, իսկ հայոց Արտաշեսյանների և Արշակունիների օրոք Հայկական լեռնաշխարհը գրեթե լիովին ներառնված էր Հայաստանի՝ միջազգային մեծ կշիռ ունեցող պետականության մեջ[55]:

7. Հայաստանի ենթագիտությունը Անատոլիայով

Թուրք-ազրբեջանական պատմագրության հետ Սյունիի գրքի զուգորդումները կանոնավոր բնույթի են: Այսպես, Սյունին նախորդ մեջբերման մեջ Հայաստան եզրի փոխարեն գործածել է Հայկական լեռնաշխարհ աշխարհագրական եզրը: Արդյո՞ք սա պատահականություն է: Պարզվում է, որ՝ ո՛չ: Հայաստան եզրն այս գրքում հիշատակվում է անհամեմատ ավելի քիչ, քան՝ նրա փոխարեն, երբեմն զավեշտորեն անպատեհ տեղերում գործածվող, Անատոլիա-ն ու Արևելյան Անատոլիա-ն (տե՛ս էջ 55, 56, 67, 95, 98, 104, 111 և այլն): Հայաստան անվան այս նենգափոխումն առավել ցայտուն արտացոլվել է գրքի տեղանունների և անձնանունների Անվանացանկում՝ Index-*ում (էջ 283-289): Անվանացանկի Հայաստան հոդվածը ուղղակի պարպված է. այն ընթերցողին լոկ հղում է երեք այլ հոդվածների՝* Հայաստանի Հանրապետու-

---

54 Նույն տեղում, p. 10.

55 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս նույն աշխատության երկրորդ մասում, հատկապես էջ 138-140:

թյուն, Խորհրդայինն Հայաստան և Թուրքահայաստան: *Այսպիսով, Սյունիի Անվանացանկը հին և միջնադարյան Հայաստանի, Պարսկահայաստանի կամ Ռուսահայաստանի գոյությունն ուղղակի չի ճանաչում, թեև շարադրանքի մեջ ինչ-որ կերպ սողոսկել են «[հին] Հայաստանը» (էջ 7), «[միջնադարյան] Հայաստանը», «[արևմտյան] Հայաստանը» (էջ 18), «պատմական Հայաստանը» (էջ 19, 104) և այլն: Ավելին, ինչպես շարադրանքում, նույնպես և Անվանացանկում Թուրքիայում ապրած բոլոր հայերի համար, ավանդական՝* արևմտահայեր-*ի կամ* թուրքահայեր-*ի փոխարեն առաջարկվում է գործածել* անատոլիական հայեր *նորահնար հորջորջումը (մասնագետ պատմաբանի համար* անատոլիական հայեր-*ը կարող են լինել միայն նրանք, ովքեր ապրել կամ ապրում են պատմական Հայաստանից դուրս՝ Փոքր Ասիա թերակղզու տարածքում): Դատելով Սյունիի՝ Անատոլիա եզրի գործածման բացարձակ գերակշռությունից, որ, ի դեպ, Անվանացանկը թերացել է արտացոլելուց (Անատոլիան գործածված է շատ ավելի էջերում, քան նշել է Անվանացանկը), նույնպես և ողջ շարադրանքից, կարելի է զարմանալ, թե ինչու՞ է գիրքը վերնագրված Հայաստանը և ո՛չ թե՝* Արևելյան Անատոլիան նոր պատմության մեջ:

Թուրքական քարոզչությունն այս մոտեցումը բավական վաղուց էր ծրագրել: Նրա էությունը հստակ ձևակերպել է Թուրքիայի գաղտնի ծառայության նախկին գործակալ, հետագայում՝ թուրքական «հայագիտության» գաղափարախոսական առաջնորդ Էսաթ Ուրասը[56] *(ստորև մեջբերվող նախադասությունը թուրքերեն բնագրում ամբողջովին գրված է մեծատառերով).*

> *Ամենից կարևոր և անհրաժեշտ եմ համարում ընդգծել հետևյալը. Հայաստանը չի կարող լինել որևէ այլ բան, քան*

---

56 Տե՛ս **Vahakn N. Dadrian**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. (Providence & Oxford: Berghahn Books, 1995), p. 444.

աշխարհագրության վրա հիմնված հասարակ հիշողություն, տարածք՝ առանց քաղաքական սահմանների[57]*:*

Խոստովաննենք, որ Ուրասի համեմատությամբ՝ Սյունին առաջադեմ հեղինակ է. չէ՞ որ Ուրասի՝ «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը» հսկայածավալ հատորի Անվանացանկում Հայաստան անունը չկա[58]*:*

Մանվել Ջուլալյանը, վերլուծելով թուրք պատմաբանի վերջերս լույս տեսած աշխատությունը, արդարացիորեն նկատել է, որ «թուրք պատմագրության բոլոր ուղղությունների ներկայացուցիչների հայեցակետը այն է, [որ] հայերը իրենց ողջ պատմության ընթացքում ինքնուրույնությունից զուրկ, փոքրաթիվ մի համայնք են եղել, իսկ Հայաստան կոչեցյալ երկիրն էլ լոկ մի աշխարհագրական հասկացողություն է»[59]*: Իր վերոբերյալ արտահայտություններով Սյունին պարզապես կրկնում է թուրք պատմագրության հենց ա՛յս հայեցակետը: Ցավոք, Հայաստան անվան դեմ թուրքական քարոզչության արշավը և արևելյան Անատոլիա կեղծիքով նրա նենգափոխումը*[60] *գրեթե ամբողջովին հաղթանակել է Արևմուտքի ակադեմիական շրջանակներում ու նաև լրջորեն թափանցել*

---

57 Տե՛ս Ուրասի գրքի հետևյալ գրախոսականում՝ **Christopher J. Walker**, "THE ARMENIANS IN HISTORY AND THE ARMENIAN QUESTION. BY ESAT URAS. An English translation of the revised and expanded second edition. pp. XIV, 1048. Ankara. documentary Publications, 1988," *Journal of the Royal Asiatic Society* (1990) No. 1, p. 166. Այս գրախոսության հայերեն թարգմանությունս տե՛ս «Փյունիկ» պարբերականի 1991 թ. մարտի 31-ի համարում, էջ 9-10:

58 **Esat Uras**, *The Armenians In History And The Armenian Question*. An English translation of the revised and expanded second edition. pp. XIV, 1048. Ankara. documentary Publications, 1988, p. 1034.

59 Տե՛ս **Մանվել Ջուլալյան**, Էնվեր Կոնուկչու. Էրզրումը սելջուկներից մինչև Հանրապետությունը. Անկարա, 1992, 974 էջ (թուրք.). – *Պատմա-բանասիրական հանդես*, 1997, No. 1, էջ 267.

60 Մանրամասնությունները տե՛ս **Մանվել Ջուլալյան**. *Հայոց Պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ*. Նշվ. աշխ., էջ 28, 42, 60:

ռուսական պատմագրական և քաղաքագիտական գրականության մեջ (թեև ռուսներն ավելի հաճախ գործածում են Արևմտյան Հայաստան եզրը):

Ավելացնենք, որ պատմական Հայաստանի հիշատակումը «չեզոքացնող» թուրքական և թուրքամետ աշխատանքներին Սյունին վաղուց է լծվել: Այսպես, դեռևս 1983 թ. լույս տեսած՝ «Հայաստանը քսաներորդ դարում» անունով գրքույկում, նա արել է այսպիսի մի հայտարարություն. «Բացի Խորհրդային Հայաստանից չկա այլ Հայաստան, ու նաև չկա մի այլ հայ ազգ, բացի նրանից, ով երազում է Արարատի ստորոտում» (There is no Armenia but Soviet Armenia, and there is no Armenian nation but the one which dreams at the base of Ararat)[61]*: Ահա այսպես՝ բացի պատմական Հայաստանը «չեղյալ» հայտարարելուց, փորձ է արվում նաև թուլացնել Հայաստան-սփյուռք կապերը, միլիոնավոր սփյուռքահայերին զրկել իրենց հայ ազգի բաղկացուցիչ մասը զգալուց ու, հետևաբար՝ համապատասխանաբար գործելուց: Հետաքրքիր է, որ Սյունիի արած այս հայտարարությունը ժամանակին քննադատել էր սոցիոլոգ Մարի Քիլբորն Մաթոսյանը*[62]*, որ ազգությամբ ամերիկուհի է: Սակայն, ինչպես տեսնում ենք, քննադատությունը տեղ չի հասել:*

8. Հովսեփ Էմինի ճանապարհորդությունը Հայաստան և Սյունիի եզրակացությունները

Այժմ անդրադառնանք Հայացք դեպի Արարատ-*ի թերևս ամենաառանցքային հատվածին: Սյունին, խոսելով 14–18 դարերի հայոց պատմության մասին, արել է մի շարք ցնցող եզրակացություններ: Լսենք իրեն.*

---

61 **Ronald G. Suny**, *Armenia in the Twentieth Century* (Chico, CA: Scholars Press, 1983), p. 83.

62 Տե՛ս **Mary Kilbourne Matossian**-ի գրախոսությունը *Armenian Review*-ում, 1984, Հտ. 37, էջ 89–91:

Այսօր շատ հայերի համար դժվար է ընդունել այն դրույթը, որ հայերը ոչ միշտ (և ո՛չ մշտապես) են գիտակցել, որ եղել են յուրահատուկ և պատմականորեն նշանավոր ազգ, կազմել են եզակի մշակույթ ունեցող լեզվական և կրոնական նույն հարակցված համայնքի մի մասնիկը: Տանը, եկեղեցում և դպրոցում ստացած նրանց գիտելիքները միայն հաստատում և վերահաստատում են, թե նրանց ժառանգությունը հասնում է մինչև Տիգրան Մեծ, եթե ոչ մինչև Ուրարտու, հարկավ՝ մինչև Գրիգոր Լուսավորիչ («Հայաստանը առաջին քրիստոնյա երկիրն է եղել»), մինչև Սբ. Վարդան... Հե՛նց այս վաղեմի ժառանգությունն են ձգտում պահպանել արևմտյան հասարակության ապամշակութացնող և ասիմիլացնող հմայքներին գիտակից ու հայրենասեր սփյուռքահայերը: Սակայն երբ ավելի մոտից ենք քննում հայերի (sic -- ո՛չ Հայաստանի՝ Ա. Ա.) վաղ նորագույն պատմությունը (իմա՝ 16-18 դդ. -- Ա. Ա.), հայտնաբերում ենք, որ մինչև 19-րդ դարի վերածնունդը շատ հայեր, եթե ոչ նրանց մեծամասնությունը, բացի սաղմնայինից՝ կորցրել էին իրենց հայ լինելու մասին ամբողջ գիտակցությունը: Երբ հայերը մտնում էին իրենց երրորդ հազարամյակը, հայկական մշակույթից և գիտակցությունից մնացել էին գրեթե միայն լեզուն և կրոնը (սրանք էլ աղճատված վիճակում):

[The notion that Armenians were not always (and consistently) aware that they made up a distinct and historically distinguished nation, that they were part of a coherent linguistic and religious community with a unique culture, is difficult for many Armenians today to accept. Their very existence at home, in church, and in school has been the affirmation and reaffirmation of a legacy that stretches back at least to Tigran the Great, if not Urartu, certainly to Grigor Lusavorich ("Armenia was the first Christian nation"), to Saint Vardan.... It is precisely this age-old legacy that conscious and patriotic Armenians in the diaspora are dedicated to preserving in the face of the acculturationist and assimilationist attractions of Western society. Yet when one takes a closer look at the early modern history of Armenians, one finds that all but a rudimentary sense of

being Armenian had been lost for many (if not most) Armenians, particularly in Armenia proper, in the years before the nineteenth-century revival. Language and religion (and these in adulterated forms) were almost all that was left of Armenian culture and consciousness as Armenians entered their third millennium.][63]

Իր այս գրանդիոզ մտքերը Սյունին փորձում է հիմնավորել ընդամենը մի վկայությամբ, որ քաղել է հայ ազգային ազատագրական շարժման անզուգական գործիչ Հովսեփ Էմինի (1726–1809)՝ անգլերենով 1792 թ. Լոնդոնում հրատարակած երկից: Նախ՝ կարդանք Էմինի վկայության Սյունիի վերաշարադրանքը, ծանոթանանք այդ վերաշարադրանքի հիման վրա Սյունիի արած ևս մի քանի ցնցիչ «հայտնագործություններին», ապա աննենք մե՛ր եզրակացությունները, ընդամին՝ ընթերցելով Էմինի բուն հաղորդումը:

Այսպիսով, մեր պրոֆեսորը պատմում է (sic նշաններն իմն են, թարգմանում ենք աննշան կրճատումներով՝ Ա. Ա.).

> *Եկեք հիշենք պատմությունը՝ արկածախնդիր (sic) Հովսեփ Էմինի, որը 18–րդ դարի կեսերին ճանապարհվեց Անատոլիա (sic) և բախվեց Օսմանյան կայսրության ամենահետամնաց շրջաններում ապրող հայերին ու նրանց անցյալին: Էմինը՝ անգլիական Հնդկաստանում մեծացած մի հայ, իր կյանքի առաքելությունն էր դարձրել մահմեդական լծից հայերի (sic)[64] ազատագրությունը... 1759 թ. նա ճանապարհ ընկավ դեպի արևելյան Թուրքիա (sic)՝ դեպի «Բարձր Հայքի լեռները»... Երբ Էմինը հասավ առաջին պատահած հայկական գյուղը, գյուղացիները, որոնք ապշել էին հայերենով խոսող*

---

63 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 55.

64 Էմինը ձգտում էր հասնել ո՛չ թե սոսկ «հայերի ազատագրությանը», այլ Հայաստանի՛ ազատագրությանը: Ինչպես տեսնում ենք, Սյունին սկզբունքորեն խուսափում է Հայաստան բառն օգտագործելուց, որ այստեղ միակ ճիշտը կլիներ, քանզի հայերն ապրում էին մահմեդականների իշխանության տակ նաև Իրանում, Սիրիայում, Եգիպտոսում, Կ. Պոլսում և այլուր:

մի ձիավորի տեսնելուց՝ քիչ էր մնում նրան ծեծի ենթարկեին: Փրկվելու համար էմինն ստիպված եղավ ձևացնել, թե ինքը թուրք է, ինչպես և գյուղացիները սկզբից կարծել էին: Ավելի ուշ, դյուղապետի հետ անձնական հանդիպման ժամանակ, էմինը հարցնում է, թե ինչու՞ էին հայերը դեմ նրա՝ միայնակ ձիով շրջելուն, արդյո՞ք նրանք դեմ են, որ հայերը զինվոր լինեն կամ ազատ գործեն: Գյուղապետը պատասխանում է. «Տեր, մեր ազատությունը մյուս աշխարհում է, մեր թագավորը Հիսուս Քրիստոսն է»: Էմինը հարցնում է. «Ինչպե՞ս է այդպես պատահել, ո՞վ է ձեզ ասել»: Նրանք պատասխանում են. «Եկեղեցու սուրբ հայրերը, որոնք ապրում են, թե հայ ազգը ենթակա է եղել մահմեդականներին աշխարհի ստեղծման օրից և պետք է այդպես էլ մնա մինչև հարության օրը: Այլապես մենք կարող ենք մեր երկրից շատ արագ վռնդել օսմանցիներին»: Ապշելով պատմության այսպիսի նոր ընթերցումից, էմինը հանում է Մովսես Խորենացու իր օրինակը և խնդրում է քահանային որոշ հատվածներ կարդալ այնտեղից: Ահա այստեղ էին այն ապացույցները, որ հայերն անկախ են եղել օսմանցիների Անատոլիա (sic)[65] գալուց շատ ավելի վաղ[66]:

Այստեղ, կիսատ թողնելով էմինի պատմածը և նրան այլևս չհիշելով՝ Սյունին սարքել է հայոց 16–18 դարերի պատմության իր մտահաւուցումը.

Էմինի պատմած այս հատկանշական պատմությունը ցուցադրում է արևելյան Անատոլիայի (sic) հայ գյուղացիների գիտակցության անդնդախոր բացերը:

...Հայերի դրությունը բացահայտվում է երկու հետաքրքիր առումներով.

1. մուսուլմանական իշխանության արդյունավետությունը հայերի վրա (sic – ո՛չ Հայաստանի վրա՝ Ա. Ա.) բխում էր մասամբ հայերի համոզմունքից, որ իրենց ենթակայությու-

---

65 Սյունին դարձյալ խուսափում է Հայաստան ասելուց: Ըստ նրա, ստացվում է, որ Մովսես Խորենացին գրել է անկախ *Հայկական Անատոլիայի* մասին, որ անհեթեթություն է:

66 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 55-56.

նը որոշ չափով արդարացված էր, սահմանված էր Աստծո կողմից, և, որ ազատագրությունը լինելու է կամ երկնքում և կամ 666 տարի հետո (համաձայն հին դուշակության) (sic – Սյունիի շարադրանքից ընթերցողը երբեք չի կարող իմանալ, թե ի՞նչ դուշակության մասին է խոսքը, քանզի Սյունին կխաստ է թողնում Էմինի պատմած այս դրվագը՝ Ա. Ա.):

2. Հայերի կրավորականությունը... խրախուսվում էր հայերի մեջ եղած հեղինակություններին, հատկապես՝ հոգևորականների կողմից:

18-րդ դարի դրությամբ շատ հայեր գրեթե ոչինչ էին պահպանել իրենց ազգային մշակույթից, բացառությամբ լեզվից, որն էլ վերածված էր փոխադարձաբար անհասկանալի բարբառների և խառնված էր իշխող ազգությունից փոխառված բառապաշարի (??!! – Ա. Ա.) հետ: Նրանց կրոնը խառնված էր նախապաշարմունքի և հեթանոսական պրակտիկայից վերցված փոխառությունների հետ, իսկ նրանց եկեղեցին տխրահռչակորեն այլասերված էր... Հայոց պատմության մասին գիտելիքները բոլորովին ջնջված էին, բացառությամբ վանականների մի փոքրիկ խմբի, որն արտագրում ու վերարտագրում էր հին տեքստերը:

[Այսպիսով՝ հայերը գտնվում էին] սոցիալական հետամնացության, մշակութային ոչնչացվածության և քաղաքական անզորության վիճակում...

(This peculiar story told by Joseph Emin illustrates the abysmal lack of awareness of the Armenian peasants of eastern Anatolia....

These accounts reveal two interesting aspects of the Armenian condition:

1. Part of the effectiveness of Muslim rule over Armenians stemmed from Armenian conviction that this subjugation was in some sense justified, was ordained by God, and that liberation would come either in heaven or only after 666 years (according to ancient prophecy).

2. The passivity of the Armenians was... encouraged by the leading authorities among the Armenians, particularly the clerics.

By the eighteenth century many Armenians had very little left of their national culture, except for a language reduced to mutually incomprehensible dialects and mixed with vocabulary borrowed from the dominant nationality. Their religion was mixed with superstition and borrowings from pagan practice, and their church was notoriously corrupt....Knowledge of Armenian history had been effectively wiped out, except among a small group of monks who copied and recopied the ancient texts....

[Thus, the Armenians were in] social backwardness, cultural annihilation, and political impotency....)[67]

Ստորև մենք մանրամասն քննութեան կենթարկենք էմինի պատմածը, որպեսզի պարզենք, թե ի՞նչ հիմքեր ուներ Սյունին այսպիսի մտքեր արտահայտելու համար: Սակայն, նախ անդրադառնանք վերոբերյալ մեջբերումներում արծարծված մի քանի խնդրի, որոնք պարզ ցուցադրում են, թե Միշիգանի և Չիկագոյի համալսարանների այս պրոֆեսորը ինչքան է ծանոթ հայ մատենագրութեանը:

8.1. Հայոց մշակույթն ու մատենագրությունը 16-18 դարերում և հայոց պատմության մասին հայերի գիտելիքները

Ըստ Սյունիի՝ «Հայոց պատմութեան մասին [հայերի] գիտելիքները բոլորովին ջնջված էին, բացառութեամբ վանականների մի փոքրիկ խմբի, որը արտագրում ու վերարտագրում էր հին տեքստերը»: Ափսո՛ս, պրոֆեսորս չի հրապարակում այդ վանականների մասին երևի միայն իրեն հայտնի վիճակագրական տվյալները, որ մենք ևս իմանայինք, թե, օրինակ՝

---

67 Նույն տեղում, p. 56.

քանի՞ հոգուց էր բաղկացած այդ խումբը, ի՞նչ հին տեքստեր էր արտագրում և ի՞նչ հաճախականությամբ էր դրանք վերարտագրում:

Իրականում՝ 17-18-րդ դարերում հայ մտավորականները (ի դեպ, նաև աշխարհականները) ներգրավված չէին մեխանիկական «արտագրության և վերարտագրության մեջ», այլ, նույնիսկ թուրք-պարսկական բռնապետության անբարենպաստ պայմաններում, շարունակում էին արդյունավետորեն ստեղծագործել փիլիսոփայության և աստվածաբանության, պատմագրության և բանաստեղծության, քերականության և երաժշտության, ճարտարապետության և այլ բնագավառներում: Իրականությունն այն է, որ 17-18-րդ դարերում, մշակութային վճռորոշ երկու՝ կրթության և տպագրության բնագավառներում, հայերը բացահայտորեն առաջ էին անցել և՛ իշխող ազգություններից՝ պարսիկներից ու թուրքերից, և՛ տարածաշրջանի մյուս ժողովուրդներից:

8.1.1. Հայոց տպագրությունը

Այսպես, 1512 թ. մինչև 1759 թ., այսինքն՝ մինչև Էմինի Հայաստան ժամանելը, հայերը տպագրել էին 570 տարբեր գրքեր[68]*, որոնց ընդհանուր տպաքանակը հասնում էր տասնյակ հազարների՛: Այս գրքերի մի զգալի մասը պարունակում էր նյութեր հայոց պատմության մասին, իսկ ոմանք էլ հե՛նց միայն հայոց պատմություն էին: Դրանցից էր, օրինակ, Առաքել Դավրիժեցու (†1670) մեծածավալ Գիրք պատմութեանցը. այն ավարտի էր հասցվել Ս. Էջմիածնում 1662 թ. և տպագրվել էր Ամստերդամում 1669 թ., դառնալով հեղինակի կենդանության օրոք լույս տեսած հայ առաջին պատմագրական երկը*[69] *(ի դեպ, այս գիրքը լույս է տեսել նաև ֆրանսերեն և ռու-*

---

68 Տե՛ս Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալեան, *Հայ գիրքը 1512-1800 թթ.: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն:* Առաջաբանը՝ Ն. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988, էջ 1-441:

69 Տե՛ս Аракел Даврижеци, Книга историй. Перевод с армянского,

սերեն)[70]: 1638 թ. Նոր Ջուղայում հայերը հիմնադրեցին Իրանի և ամբողջ Միջին Արևելքի առաջին տպարանը, ընդ որում՝ եզակի սարքավորումները Եվրոպայից չէին մուծվել, այլ պատրաստվել էին տեղում՝ հայ վարպետների ձեռքով[71]:

Ըստ երևույթին, Սյունին սխալմամբ կարծում է նաև, թե Էմինի մոտ եղած Մովսես Խորենացու գիրքը մի ձեռագիր էր, մինչդեռ այն, ամենայն հավանականությամբ, եղել է տպագիր օրինակ. մինչև 1759 թ. Մովսես Խորենացու Հայոց Պատմությունը տպագրվել է վե՛ց անգամ՝ 1683-ին Մարսելում, 1695-ին Ամստերդամում, 1698-ին (տպագրության վայրը դիտավորյալ նշված չէ, սակայն, ամենայն հավանականությամբ՝ Կ. Պոլսում), 1735-ին Կ. Պոլսում (Մինաս Համդեցու համառոտ շարադրությամբ), 1736-ին Լոնդոնում, 1752-ին Վենետիկում[72]: Մեր համոզմամբ, Էմինի անձնական օրինակը եղել է այս տպագրություններից մեկը:

Շեշտենք, որ այդ դարաշրջանում, զուգահեռաբար, ողջ թափով և անընդհատ, գործում էր նաև հայ ձեռագրական ավանդույթը՝ հազարավոր այլ գրքերի արտադրության ավանդական միջոցը:

Հայոց նվաճումների արժեքն ավելի պարզ կպատկերացնենք, եթե նկատենք, թե մշակութային իրավիճակն ինչպիսին էր աշխարհագրական այս տարածքում իշխող ազգություններին՝ թուրքերի և պարսիկների մոտ: Այսպես՝ առաջին թուրքերեն գիրքը տպագրվել է 1729 թ., ընդ որում՝ այդ հրատարակությունը գլուխ բերելուն օգնել և որոշ սարքավորումներ էին

предисловие и комментарий Л. А. Ханларян. Москва, 1973, с. 18.

70 Տե՛ս ծնթ. 52 և **M. Brosset**, *Collection d'historiens arméniens. Livre d'histoire, composé par le vartabied Arakel de Tauriz*, t. 1, St. Pétersbourg, 1874, p. 267-608.

71 Տե՛ս **Լևոն Միքաելյան**, *Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը*. Նոր Ջուղա, 1972: Տե՛ս նաև **Ռաֆայել Իշխանյան**, *Հայ գրքի պատմություն*. Հ. 1, Երևան, 1977, էջ 351-379:

72 Տե՛ս **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալեան**. *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 88-90, 116-118, 126-129, 331, 338, 415-416:

տրամադրել Կ. Պոլսի Հայկական տպարանները, «որոնք այդ ժամանակ բավականաչափ մեծ փորձ էին կուտակել, [քանզի] Հայկական առաջին տպարանը Կ. Պոլսում հիմնադրվել էր տակավին 1565 թ.»[73]*:*

Պարսկերենով առաջին գիրքը լույս է տեսել 1826 թ.[74]*: Վրացերենով առաջին գիրքը տպագրվել է 1708 թ.*[75]*: Հետաքրքիր է, արդյո՞ք Հայտնի են պրոֆեսորիս ադրբեջաներենով, քրդերենով, ասորերենով և մեր տարածաշրջանում գործածական այլ լեզուներով լույս ընծայված հնատիպ գրքեր:*

8.1.2. Հայոց կրթությունը

Գրքի այլ էջերում Սյունին զարգացնում է 18-րդ դարի դրությամբ իբր գրանցված Հայերի «մշակութային ոչնչացվածության» (cultural annihilation)[76] *իր տեսակետը՝ հայտարարելով, մասնավորապես, թե «մինչև ռուսական անեքսիան կովկասյան հայերը դպրոցներ չեն ունեցել» (!!?? -- Ա. Ա.)*[77]*:*

Նախ նշենք, որ հազարավոր օրինակ գրքերի ձեռագիր արտադրությունը և տպագրությունը, որ, ի դեպ, այն ժամանակներում ավելի թանկ ձեռնարկ էր, քան նույնիսկ այժմ է, ինքնըստինքյան հաստատում է, որ Սյունին, կատարելապես անտեղյակ լինելով հայոց ստեղծած մշակութային-նյութական

---

73 Տե՛ս Ю. А. Петросян, Османская Империя: Могущество и гибель. Москва: Наука, 1990, сс. 144-145 (ի դեպ, 1748 թվին թուրքերենով տպագրությունը ընդհատվեց, վերսկսվելով միայն 18-րդ դարի վերջին). Հմմտ. **Բ. Մ. Թուղլաճյան**, Հայկական տպագրությունը Օսմանյան կայսրությունում և հայերու նպաստը թուրքական տպագրական արվեստին. -- *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*. XII: Թուրքիա: Երևան, ԳԱ, 1985, էջ 98-114:

74 Տե՛ս **Աբդ-ուլ Ռազզաք Դումբուլի**. *Մուասիրե Սուլթանիե* (պարսկերեն՝ Թագավորական գործեր) Գիրքը վերատպվել է Թեհրանում 1973 թ.:

75 Տե՛ս Н. Бердзенишвили, И. Джавахишвили, С. Джанашиа. История Грузии. Частѣ I, Тбилиси, 1946, с. 387.

76 Նույն տեղում:

77 Նույն տեղում, p. 58.

Հարստությանը, մեծապես թերագնահատում է 16-18-րդ դարերում ապրող հայերի կրթության ու գրագիտության մակարդակը, որ իրականում մի քանի անգամ ավելի բարձր էր, քան օսմանցի թուրքերինը, ասորիներինը (վերջիններս երբեմն հաճախում էին հայկական դպրոցներ)[78]*, վրացիներինը և, նվազ չափով, պարսիկներինը:*

15-16-րդ դարերում, Հայաստանում ընթացող ավերիչ պատերազմները պատճառեցին հայ մշակույթի մեծ նահանջ: Սակայն, 17-րդ դարում սկսվեց հայոց կրթամշակութային վերածնունդը, որը թեև փոքր-ինչ դանդաղորեն, սակայն համաչափ տարածվեց Բաղեշի հռչակավոր դպրոցից մինչև Տաթև, իսկ այստեղից էլ՝ ողջ Հայաստանով մեկ[79]*: Օրինակ, 1653 թ. էջմիածնի դպրոցն ուներ 50 ուսանող՝ «կայաւորեալք են բազմութիւնք եղբարց կուսակրոնից իրրեւ յիսնեակ թուով. միշտ յաստուածաշունչ գիրս պարապեալք եւ յար ի քն[ն]ութիւնս բնախօսական տառից կրթեալք»*[80]*: 1639 թ. մարտին գրված մի նամակում այս դպրոցն անվանված է «գնոր Աթէնս». «Սիմէոն վարդապետն... եկն ի տուրը Աթոռս եւ հաստատեաց գնոր Աթէնս շնորհօք ս. Հոգւոյն... եւ էին ամենեքեան (իմա՝ աշակերտողները – Ա. Ա.) մեծ եւ փոքր Լ (30) հոգի»»*[81]*: Առաքել Դավրիժեցին ևս հաստատում է, որ երբ Սիմեոն Ջուղայեցին դեռ նոր էր եկել էջմիածին*[82]*՝ միաբանների թիվը ավելի քիչ էր՝ «...ոչ միայն էջմիածնի միաբանքն, այլ եւ բոլոր վանօրէից գրոց աշակերտեալ աբեղայքն... միահամուռ ժողովեցան ան-*

---

78 Տե՛ս **Ա. Մովսիսյան.** *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ժ-ԺԵ դարեր.* Երևան, 1958, էջ 302:

79 Տե՛ս **Ներսես Ակինյան,** *Բաղեշի դպրոցը, 1500-1704.* Վիեննա, 1952:

80 *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.),* Հտ. Գ: Կազմեց Վազգեն Հակոբյան. Երևան, 1984, հտ. Գ, էջ 537:

81 Տե՛ս **Հ. Պօղոս Անանեան,** Ոսկան վարդապետի նամակին. – «Բազմավէպ», 1967, թիւ 6-8, էջ 133:

82 Համմտ. **Հ. Գ. Միրզոյան,** *XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն.* Երևան, 1983, էջ 148, ծնթ. 216:

ձիճ երեսուն, *եւ սկսան առնուլ դաս*»[83]: *Հայկական բարձրագույն կրթության օջախներում ուսուցման առարկա են եղել փիլիսոփայությունը, աստվածաբանությունը, աստղաբաշխությունը, մաթեմատիկան, պատմությունը, աշխարհագրությունը, քերականությունը, թվաբանությունը, տարրաբանությունը, երկրաչափությունը, ճարտասանությունը, տրամաբանությունը, մարդակազմությունը, տոմարագիտությունը, երաժշտությունը և այլ առարկաներ*[84]: *Ի դեպ, վերոհիշյալ Սիմեոն Ջուղայեցին, փոխանակ «արտագրելու ու վերարտագրելու հին տեքստերը», նստել ու հեղինակել էր հայերեն* Քերականութիւն *(1637 թ., տպագրվել է 1725 թ. Կ. Պոլսում) ու նաև* Տրամաբանութիւն *(տպագրվել է 1728 թ. Կ. Պոլսում*[85]*:*

Գաղափար կազմելու համար, թե ազգային կրթության զարգացմանն ի՛նչ կարևոր նշանակություն էին տալիս հայ վերնախավերը, ստորև մեջբերում ենք ընդամենը մի պատմական վկայություն: 1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայի հայության հոգևոր և աշխարհիկ ղեկավարությունը («...ի Շոշ եղեալ քրիստոնէախումբ դասք եկեղեցականաց եւ աշխարհականաց») մի գրություն է ուղարկում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններին և Արարատյան ու Ատրպատականի երկրների հոգևոր հայրերին, որը դատապարտում էր անօրինականորեն ընտրված Նահապետ Ա կաթողիկոսի (1691-1705) վարքագիծը: (Ընդ որում, օգտվելով 1638 թ-ից ի վեր Նոր Ջուղայում հաստատված տպարանի ընձեռած հնարավորությունից, այս շրջաբերականը բազմացրել են 200 օրինակ:) Ընդգծելով Ամենայն Հայոց կաթողիկոսի գործունեության առաջնահերթ 12 բնագավառ, նրանք երկրորդ իսկ կետում մատնանշում էին ազգային

---

83 Տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*. Աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 321:

84 Տե՛ս, օրինակ, *Հայ ժողովրդի պատմություն*. Հտ. 4, Երևան, 1972, էջ 437-450:

85 Տե՛ս **Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կոչկոտյան, Ա. Մ. Սավալեան**, *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, էջ 263-264, 278-279:

առաջընթացի գործում կրթա-լուսավորական լայն ցանց ստեղծելու անհրաժեշտությունը (փաստորեն, սա հե՛նց առաջին գործնական կետն է, քանզի բուն առաջին կետը բարոյախոսական է՝ այն խոսում է սոսկ Սուրբ Գրքի «անպարապ ընթերցման» մասին).

> [Ամենայն Հայոց կաթողիկոսը] դպրատունս եւ զդաստատունս հաստատեսցէ՛ յամենայն տեղիս, որպէս սովորութիւն է այլազգեաց քրիստոնէից, եւ մանաւանդ թէ մեզ իսկ գլխովին, նաեւ պարսից եւս, զոր գիտողացն է քաջայայտ՝ թէ որքան ունին ջանք եւ փոյթ յայդմ իրի: Քանզի չինութիւն եւ հաստատութիւն ազգի դովա՛ւ լինի: Որպէս եւ տեսանեմք խոպանացեալ եւ անգիտանացեալ ազգն վրաց՝ յաղագս ոչ ունելոյ փոյթ գայնմանէ[86]:

Այս նախադասությանը ծանոթանալուց հետո, թողնենք, որ ընթերցողն ինքը դատի, թե ինչ արժեք ունի Սյունիի վերոհիշյալ հայտարարությունը 18-րդ դարի ղրությամբ հայերի «մշակութային ոչնչացվածության» մասին, կամ թե՝ իբր հայերը «միասնական՝ ազգային հստակ գիտակցություն ունեցող ժողովուրդ չեն եղել» (not a single people with a clear national sense)[87], այլ մինչև քսաներորդ դար եղել են «մի հասարակ էթնոգրաֆիկ կոնգլոմերատ» (a simple ethnographic conglomerate)[88]: Ցավոք, պրոֆեսորս չի բարեհաճում բացատրել գիտական գրականության մեջ մեզ երբևէ չհանդիպած և բոլո-

---

86 Տե՛ս Ց. Թ. Տէր-Յովհաննեսեանց, *Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան*. հտ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 118-119: Այս փաստաթղթի մանրամասն քննությունը տե՛ս **Արմեն Այվազյան**, Երկու փաստաթուղթ Հալ եկեղեցու պատմութեան դիւանից (1665 եւ 1693 թթ.). - *Շողակաթ*, Ստամբուլ, 1996, (տպագրության մեջ է): Նույն ուսումնասիրության համատոտ տարբերակը լույս է տեսել *Հայաստանի Հանրապետութիւն* օրաթերթում (26 մարտի 1995 թ., էջ 6) հետևյալ խորագրով՝ «Կաթողիկոսական ընտրություններին վերաբերող երկու կարևոր փաստաթուղթ (1665 և 1693 թթ.)»:

87 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 4.

88 Նույն տեղում, p. 27.

րովին անհասկանալի բնորոշման իմաստը՝ ի՞նչ կնշանակի «էթնոգրաֆիկ կոնգլոմերատ»:

Իսկ ռուսական անեքսիայից առաջ կովկասյան հայերի դպրոցներ չունենալու մասին Սյունիի խոշորագույն «գյուտը» կարելի էր ուղղակի ներկայացնել Նոբելյան մրցանակի, եթե, իհարկե, մոռանանք դպրոցում սովորած «մի քանի» փաստ, օրինակ այն՝ որ Հայաստանում, ներառյալ նրա «կովկասյան» մասը, հայերենով ուսուցմամբ առաջին դպրոցները բացել է Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ տակավին 5-րդ դարի սկզբին: Հայոց դպրության ավելի ուշ շրջանների մասին ևս գոյություն ունի ստվարածավալ գրականություն[89]: Կարո՞ղ է Սյունին ասել, թե՝ եթե ոչ հայկական դպրոցներում դասավանդվելու, ապա ի՞նչ այլ նպատակով կամ ու՞մ համար էին գրվում զանազան առարկաների դասագրքերը[90]:

Ինչևիցե՝ Սյունիի այս և այլ «գյուտերը» վկայում են ինչպես հայոց պատմությունից այս հեղինակի տարրական գիտելիքների բացակայության, այնպես էլ նրա՝ միտումով կեղծարարության դիմելու փաստի մասին:

8.2. Հայոց լեզվին վերաբերող հարցեր

Ըստ Սյունիի, 18-րդ դարի դրությամբ հայոց լեզուն «վերածված էր փոխադարձաբար անհասկանալի բարբառների և խառնված էր իշխող ազգությունից փոխառված բառապաշարի հետ»: Եվ դարձյալ՝ հեղինակը չի հղում այն աղբյուրը, որ ի-

---

89 Տե՛ս, օրինակ, հետևյալ աշխատությունները՝ **Ա. Մովսիսյան.** *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, Ճշվ. աշխ.: **Ա. Ալպոյաճյան.** *Պատմություն հայ դպրոցի:* Կահիրե, 1946: Երևանում շուտով լույս կտեսնի նախապես վենետիկյան «Բազմավեպում» հրապարակված մի ուշագրավ աշխատություն, որ նվիրված է ընդամենը մի հայկական դպրոցի պատմությանը՝ **Սահակ Ճեմճեմյան,** *Նախիջևանի հայոց վարժարանը և հոմը (ԺԷ դար):* Երևան, 1998:

90 Տե՛ս, օրինակ, **Գ. Ջահուկյան,** *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում.* Երևան, 1954:

բեն ստիպել է այսպիսի հայտարարություն անելու: Քիչ հետո մենք կնշենք Սյունիի օգտագործած աղբյուրը, սակայն նախ շեշտենք, որ «14-ից մինչև 18-րդ դար [տևած] աղետաբեր ժամանակաշրջանում»[91] ևս՝ հայերը, իրենց բացարձակ մեծամասնության մեջ, խոսելով տարբեր բարբառներով, ունակ էին միմյանց հետ շփվելու և շփվում էին խոսակցական և գրավոր հայերենո՛վ, *քանզի.*

1. Հայոց լեզուն երբեք իր միասնականությունը չի կորցրել. հիշյալ շրջանում ևս հայոց լեզվի քերականական կառուցվածքը և արմատական բառապաշարը միանգամայն կենդանի էին և գործածական. գրվել են քերականական ու պատմագիտական աշխատություններ, ստեղծվել անգուգական բառարաններ, կատարվել թարգմանություններ... Այս փաստը հաստատված է ահռելի ծավալ ունեցող հրապարակված և ձեռագիր վիճակում պահպանված գրականության մեջ[92]*:*

2. Գրաբարը՝ դասական հայերենը, շարունակում էր օգտագործվել իբրև գրական լեզու ընդհուպ մինչև 19-րդ դարի կեսերը (երբեմն՝ նույնիսկ մինչև 20-րդ դար).

3. Գործածական էր նաև միջին (կիլիկյան) հայերենը, 12-րդ դարից ի վեր այն ևս, գեթալի չափով, ձեռք էր բերել գրական լեզվի կարգավիճակ, որի և Կ. Պոլսի բարբառի հիմքի վրա աստիճանաբար ձևավորվեց արևմտահայ գրական լեզուն:

4. Սխալվում է Սյունին նաև հայերենի բարբառների գնահատության հարցում՝ կարծելով, թե հայերենի այդ տարածական միավորները կարող են «փոխադարձաբար անհասկանալի» դառնալ: Ընդհակառակը՝ նրանք հենց փոխադարձաբար լրացնում են մեկը մյուսին, որովհետև բոլոր հնագույն բարբառները և նրանցից հետացած միավորները ունեն նույն հնչյունական, քերականական ու բառային հատկանիշները՝ մի

---

91 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 54.

92 Այս մասին բավարար պատկերացում կարող են տալ **Հակոբ Անասյանի** կոթողային *Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ.* երկու հրապարակված հատորները. Երևան, 1959, 1978:

տեղում մի քիչ ավելի, մյուսում պակաս, սակայն քերականական կուռ կառուցվածքով, գրաբարյան ձևերի յուրացմամբ, նոր ձևերի ու ոճերի ծավալումներով, գրաբարում չվկայված հնդեվրոպական բառերի պահպանումով, լեզվական երևույթների, լեզվական իրողությունների և այլևայլ գործոնների կենսունակությամբ: Բարբառները միշտ էլ գոյություն են ունեցել, գործել են թե՛ դրաբարի, թե՛ միջին հայերենի, թե՛ աշխարհաբարի և թե՛ ժամանակակից հայերենի հետ զուգահեռ և փոխադարձաբար հարստացրել են միմյանց: Եվ այսպես՝ գրաբարի հիմքում ընկած են Տարոնի և Արարատյան բարբառները, նոր գրական հայերենների՝ արևելահայերենի հիմքում Արարատյան, իսկ արևմտահայերենի՝ Կ. Պոլսի բարբառները:

Այսպես է հայոց լեզվի զարգացման պատմությունը, այդպես՝ լեզվական օրինաչափությունների ամբողջությունը, որ փոփոխվում ու կատարելագործվում է դարերի ու հազարամյակների աստիճանական զարգացումով:

Կարճ ասած, պարզ է, որ Սյունին որևէ գաղափար չունի հայագիտության առանձին ճյուղը ներկայացնող Հայերենագիտության *մասին՝ մի գիտություն, որ միջազգային* ասպարեզում հայտնի է առնվազն 19-րդ դարից, իսկ, օրինակ, Հայաստանի Ակադեմիայում 1943 թ. ի վեր գործում է Լեզվաբանության մի ամբողջ ինստիտուտ՝ իր 1973 թ. կազմավորված ու բեղմնավոր աշխատող բարբառագիտական առանձին բաժնով: Այլևս չերկարացնելու համար այս պարզ խնդիրը՝ այստեղ ցանկացողներին հղում ենք հայերենագիտության բնագավառում միջազգային ճանաչում ունեցող առաջատար մասնագետի երեք կոթողային աշխատություն[93]:

Ի դեպ, եթե Սյունին ճիշտ վերլուծեր էմինի պատմությունը, ապա իր՝ հայերենի «փոխադարձաբար անհասկանալի

---

93 Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը*. Երևան, 1969. Նույնի՝ *Հայ բարբառագիտության ներածություն*. Երևան, 1972. Նույնի՝ *Հայոց պատմություն. նախագրային շրջան*. Երևան, 1987:

բարբառների» ձախավեր թեզին չէր հանդի: Արդարև, Էմինը, որ 1726 թ. ծնվել էր Պարսկաստանի Համադան քաղաքում[94] և մեծացել Հնդկաստանում. առաջին անգամ մտնելով իր պատմական հայրենիք՝ Բարձր Հայքի նահանգ, այնուամենայնիվ, ունակ գտնվեց հայերեն լեզվով ազատորեն հաղորդակցվելու հայ գյուղացիների հետ, որոնք անտարակույս խոսում էին այլ բարբառով (ստորև տե՛ս նաև Էմինի պատմության բուն մեջբերումը):

Արձագանքենք, սակայն, Սյունիի այն քամահրական հայտարարությանը, թե հայոց լեզուն «խառնված էր իշխող ազգությունից փոխառված բառապաշարի հետ»: Այսպես ասելով՝ Սյունին անշուշտ ուզում է շատ նրբորեն ընթերցողի մոտ ստեղծել այն տպավորությունը, թե հայերն «իշխող ազգության» (ավելի ճիշտ կլիներ ասել՝ ազգությունների, քանզի դրանք երկուսն էին՝ օսմանցի թուրքերը և պարսիկները) համեմատ զարգացման ավելի ցածր մակարդակի վրա էին, այլապես նա պետք է փորձեր նաև տեսնելու, թե նույն ժամանակաշրջանում ինչպիսին էր իր իմացած իշխող ազգության՝ օսմանցի թուրքի լեզվական դրությունը: Սյունին չգիտե՞, որ օսմաններենն այնքան լի էր արաբերեն ու պարսկերեն (նաև՝ հունարեն, հայերեն ու եվրոպական) փոխառություններով, որ 1928 թ. սկսված թուրքերենի «մաքրագործման» բարենորոգումից ընդամենը մի քանի տասնամյակ անց՝ օսմաններենը գործնականորեն անհասկանալի է դարձել Թուրքիայի այսօրվա քաղաքացու համար: Օրինակ՝ Զիկագոյի Համալսարանի պրոֆեսոր Ռ. Դանկոֆի վերջերս լույս տեսած ընդգրկուն Հայոց փոխառությունները թուրքերենում ուսումնասիրությունը հաշվում է թուրքերենում գործածվող՝ հայերենից փոխառնված առնվազն 806 բառ[95]: Այնպես որ, մեր «Սյունի պրոֆեսորը» որևէ

---

94 *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself.* 2nd ed. (first published in London in 1792), (Calcutta: Baptist Mission Press, 1918), p 5.

95 Տե՛ս **R. Dankoff**, *Armenian Loanwords in Turkish* (Wiesbaden: Harrassowitz, 1995). հմմտ. **Uwe Bläsing**, *Armenishe lehngut im*

իրական-պատմական հիմք չունի ներկայացնելու թուրքական (կամ, թեկուզ՝ պարսկական) կառավարումը Հայաստանում՝ որպես, ասենք, Աֆրիկայում ֆրանսիական կառավարման նման մի «լուսավորիչ» երևույթ:

Այժմ տեսնենք, թե ո՞րն է Սյունիի խնդրո առարկա հայտարարության բուն աղբյուրը: Պարզվում է, որ վերոհիշյալ Էսաթ Ուրասը իր գրքում գրել է դրեթե բառացիորեն նույնը. ահա՝ «նույնիսկ այսօր հայերենը կարելի է բաժանել ութ տարբեր բարբառների, որոնք մեծավ մասամբ աղավաղված են և բացարձակորեն անհամատեղելի»[96]: 1990 թ. Ուրասի գիրքը գրախոսելիս, Ք. Ուոքերը հատուկ ուշադրություն էր դարձրել այս նկատողության վրա և դիպուկ նկատել.

> *Եթե այս նախադասությունը, բացի վիրավորանքից, ունի որևէ այլ իմաստ, ապա այն լիիրավ կարելի է գործածել նաև անգլերենի հասցեին: Լեզուն ազգ հասկացության գլխավոր բաղադրիչն է, այդ պատճառով էլ հայերենն արատավորելու և թուրքերենից նրա ածանցվածությունը ցույց տալու Ուրասի փորձերը, անկասկած, բխում են թուրքերեն առաջաբանում տեղ գտած գլխավոր գաղափարից, այն է՝ ջնջել հայ ազգի ինքնակա գոյության մասին որևէ միտք:*[97]

Ինչպես տեսնում ենք, Ուրասը և Սյունին գործնականում նույն բանն են ասում և անում: Համեմատենք Սյունիի և Ու-

---

Türkeitürkishen am Beispiel von Hemsin (Amsterdam-Atlanta: GA, 1992): Այս բնագավառում լուրջ ուսումնասիրություններով հանդես են եկել նաև հայաստանցի մասնագետները. տե՛ս, օրինակ՝ **Խաչիկ Ամիրյան**, Հայերենից փոխառյալ բառերը արդի թուրքերենում. – *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*. XII: Թուրքիա: Երևան, ԳԱ, 1985, էջ 143-164: **Նույնի՝** *Հայերենից փոխառյալ բառեր թուրքերենում*. Երևան, 1996. **Ներսես Մկրտչյան**, Հայերենից թուրքերեն անցած նորահայտ փոխառություններ. -- *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*. Հտ. XVI, 1996, էջ 230-243:

96 Տե՛ս **Esat Uras**. *The Armenians In History And The Armenian Question*, *op. cit.*, p. 333.

97 Տե՛ս Ուոքերի վերը նշված գրախոսությունը *Journal of the Royal Asiatic Society* (1990) No. 1, p. 167:

բասի անգլերեն բնագրերը. «by the eighteenth century... [the Armenian] language [was] reduced to mutually incomprehensible dialects and mixed with vocabulary borrowed from the dominant nationality»[98]. *Ուրաս՝* «Even today, Armenian can be divided up into eight different dialects, most of which are corrupt and totally incompatible» *և* «Greek and Latin influence reduced Armenian to a state of extreme confusion»[99]: *Ուշագրավ է, որ նույն մտքերն ասված են պարզապես տարբեր համանիշ արտահայտություններով, երբեմն էլ՝ երկուսի բառապաշարը համընկնում է:*

Սյունիի՝ հայ ժողովրդի առաջացման և գոյատևման հիմքի՝ հայոց լեզվի դեմ ուղղված վերոհիշյալ հարձակումը նզակի չէ: Ինչպես վերը տեսանք, անդրադառնալով հայոց լեզվին, Սյունին համարում է, որ ընդհուպ մինչև մ.թ.ա. 1-ին դար հայոց լեզուն դեռ իր նախնական *կազմավորման ընթացքում էր*[100]: *Դժվարանում ենք ասել, թե* նախնական լեզվական կազմավորում (original linguistic formation) *ասելով և հայոց լեզվի ձևավորմանը վերաբերող հսկա գրականության անտեղյակ լինելով՝ Սյունին ի՞նչ է հասկանում, սակայն հայոց պատմության ակնառակ մասնագետներն անգամ գիտեն հույն աշխարհագրագետ Ստրաբոնի (մ.թ.ա. 64–մ.թ. 24) տեղեկությունն առ այն, որ մ.թ.ա. 2-րդ դարում Հայաստանի թագավորության ամբողջ տարածքում իշխող լեզուն արդեն հայերենն էր*[101], *որ նշանակում է, թե հայերենի նախնական կազմավորումը ավարտված պետք է լիներ դրանից շատ ավելի վաղ: Այսպես, Բրիտանական Հանրագիտարանը իրավամբ են-*

---

98 Suny, *Looking toward Ararat, op. cit.*, p. 56, ինմտ. pp. 18, 55.

99 **Esat Uras**, *The Armenians In History And The Armenian Question*, *op. cit.*, p. 329, 333.

100 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 7.

101 **Strabo**. *Geography*, op.cit., book XI, Chapters 14, 5 (Coll. G. Budc, vol. VIII, p. 123).

թադրում է, որ Հայկական լեռնաշխարհում հայերենը գերիշխող էր արդեն մ.թ.ա. 7-րդ դարում[102]:

Հայոց լեզվի մասին Սյունիի մի այլ մեկնաբանություն դարձյալ փորձում է այսօրվա հայերին ետ պահել մ.թ.ա. առաջին հազարամյակում իրենց արմատները փնտրելուց. սիրելի պրոֆեսորս արդի և հին հայերենը բաղդատում է և ինքնագոհ չեչտում՝ թեև «նրանց (իմա՝ հին և նոր հայերի) լեզուն կապված է (sic), բայց նաև հեռու է (sic) և տարբեր (sic)»[103]: Գրաբարին ամենևին չտիրապետող, ժամանակակից հայերենով էլ հազիվհազ կմկմացող պատահական անձի հերթական մերկապարանոց մի հայտարարություն՝ սյունիզմի մի նոր գոհար: Կարծե՛ս՝ խոսքը վերաբերում է մի բրածո ազգի լեզվին, որի զարգացումը պահածոյացվել է ու որևէ առաջընթաց չի ունեցել: Ինչ արժե ապա գրաբարի ու արդի հայերենի՝ որպես տարբեր լեզուների մասին թեզը, մտքի ինչպիսի՛ խորը փայլատակում: Հայոց պատմության ամերիկյան պրոֆեսորն ուղղակի չգիտի, որ հին և նոր հայերենների բառապաշարը նույնական է, քերականությունը՝ մեկը մյուսի մեջ աստիճանաբար փոխանցված, այլև՝ որ միջին կրթության տեր հայ մարդն ինքնուսուցմամբ կարող է կատարելապես տիրապետել հին հայերենին: Պատմական փաստ է նաև այն, որ հին և նոր հայերենը անհամեմատ ավելի մոտ են, քան, ասենք՝ լատիներենն ու իտալերենը, լատիներենն ու ֆրանսերենը, հին կելտերենն ու անգլերենը, հին (մինչև մ.թ. 7-րդ դար) պարսկերենն ու նոր պարսկերենը, հին եբրայերենն ու նոր եբրայերենը և հնուց գործածական շատ այլ լեզուներ: Սա էլ իր հերթին փաստում է հայ ազգի երկարատև խիստ ինքնուրույն քաղաքակրթությունը:

Մնում է, որ իրավացիօրեն լուրջ կասկածի ենթարկենք հայերենի սյունիական իմացությունը, այստեղ էլ արձանագ-

---

102 *The New Encyclopedia Britannica* (Fifteenth ed., 1984, *Macropedia*, Vol. 2), p. 23.

103 Suny, *Looking toward Ararat, op. cit.*, p. 7.

բեննք, որ հայոց հին պատմութիւնը վերաբերող սյունիական դատողութիւնները մասնագիտական կամ «պրոֆեսիոնալ» լինել չեն կարող:

8.3. Էմինի տեղեկությունները գիտական քննության լույսով

Այժմ վերադառնանք հայ գյուղացիների հետ Էմինի հանդիպմանը և հիշեցնենք, որ իր վերոհիշյալ համապարփակ եզրակացությունները Սյունին հիմնել է այդ միակ դրվագի վրա, ինչը պատմագիտական մեթոդաբանության տեսակետից ինքնին գոհհկություն է: Այսուհանդերձ, տեսնենք, թե արդյոք նա պատշաճորե՞ն է օգտագործել գոնե իր նախընտրած այդ միակ աղբյուրը՝ Էմինի վկայությունները: Քանի որ Սյունին ընտրովի և հատվածաբար է ներկայացրել Էմինի հաղորդումը, ապա նախ տալիս ենք հաղորդման ամբողջական շարադրանքը՝ Հ. Խաչմանյանի արևմտահայերեն ընտիր թարգմանությամբ (համեմատել ենք անգլերեն բնագրի հետ և արել մի քանի մանր սրբագրում): Այսպիսով, 1759 թ. Հալեպից դուրս գալով և քսանութ օր շարունակ ճամփորդելով, իր երեք հայ ծառայի ուղեկցությամբ, Էմինը հասել է Էրզրումի մատույցներին (Էմինն իր ինքնակենսագրությունը գրել է երրորդ դեմքով). –

> *Ենգի-Քոչ կոչված գյուղը մտնելուց առաջ տեսան, որ հոս թուրք զորքին նիզակները ցցված էին ամեն տունի առջև, գրեթե 500-ի չափ. ասոնք կերեվի Վրացի Էմիրության, Սողոմոն իշխանին դեմ ելած բանակին ցրված մեկ մասն էին: Էմին ասավ իր մարդոց. «Դուք այս գյուղին մեջ կնցեք և գիշերը հայու մը տուն հանգիստ առեք, ես չարունակեմ իմ ճամփան որ չըլլա թե այս սատանորդիները իմ մասին հետապնդումներ ընեն»: Եվ զանոնք իր ետևը ձգելով, խորունկ ձյուներու մեջեն հառաջացավ մինչև որ երեք ժամ վերջ իրիկնամուտին հասավ Ճինիս (=Ջենիս՝ Ա. Ա.) ուրիշ հայկական գյուղ մը: Երբ գյուղին բնակիչները տեսան Էմինը ընտիր գորշ ձիու մը վրա հեծած, կարծեցին թե թուրք*

հեծելազորային (trooper) մըն էր: Բայց երբ ան սկսավ իրենց լեզվով խոսիլ, շատ բարկացան և ուզեցին բյուրերով հարձակիլ վրան և ծեծիլ զայն: Սպառնական խոսքերով առնոնք հարցուցին թե ան ինչպե՞ս կհամարձակեր առանձին ճամփորդելու, առանց կարավանի, քանի որ քրիստոնյա էր: Էմին անոնց այս վարմունքը տեսնելով, իրենց բիրտ գործողության սկսելե առաջ, թրքերեն լեզվով սկսավ խոսել անոնց հետ, սպառնալով բոլոր գյուղացիները սրի քաշել տալ հաջորդ առավոտ հոն հասնելիք զորքի միջոցավ: Այս կեղծ թուրքին խոսքերն լսածնուն պես, խեղճ արարածները սարսափեցան և հարյուրի չափ գյուղացիներ ծունկի եկան անոր առջև գթություն հայցելով և խոստանալով մեծ գումարներ, եթե ներեր իրենց և այլևս այդ մասին չխորհեր, նույն ատեն հայտնելով իրենց հավատարմությունը Օսմանցիներուն, որոնք միակն էին ձյունին ու բուքին առանձին ճամփորդելու կարող տարվան այս եղանակին մեջ: Էմին այս կարգադրության համաձայն ձևանալով, խոստացավ այս դեպքերը չհիշել երբեք, և իր ձիեն իջնելով, ամենախորին ակնածանքով առաջնորդվեցավ դեպի գյուղապետին տաքուկ տունը, ուր իրեն համար ոչխար մը մորթեցին և իր ձիուն լավագույն ձևով հոգ տարին: Երբ որ փիլավը և քեպապը պատրաստ էին ընթրիքի համար, Էմին հրաման ըրավ որ ամեն մարդ իր տունը երթա. գյուղապետին և անոր եղբոր միայն չնորհք ըրավ որ իր հետ սենյակին մեջ մնան, իրեն ծառայելու համար: Սեղանին սփռոցը գետինը փռվեցավ և կերակուրները վրան գետեղվեցան: Այդ օրը, չորեքշաբթի, ծոմապահության օր ըլլալով, Էմին չէր ուզեր ճաշել. իսկ հայերը կխորհեին թե եղած կարգադրութենեն գոհ չէր ու ավելի կաշառք կպահանջեր: Այդ դիվային սովորությունը թուրք զորքերուն մեջ ընդհանուր էր դարձեր: Ատոնք, իրենց ճամփորդություններու միջոցին, մեկ երկու օրով կմնային հայ գյուղերը: Այդ պատեհությամբ, շատ անգամ կպատահեր, որ այս զորքերը խոժոռ դեմք մը առնեին և մերժեին ուտել իրենց հրամայված ճաշը. անոնք թույլ չէին տար նաև, որ կեր տրվեր իրենց ձիերուն, մինչև որ այդպիսով կարենային խեղճ տանուտերեն մեծ գումարներ կորզել: Այս պատճառով ալ երբ գյուղացիները հանգանակություն մը ընելու պիտի

սկսեին, Էմին հրամայեց որ տեղերնուն չշարժեին, և սկսավ շատ մտերմորեն խոսիլ իրենց հետ. «Դուք քրիստոնյաներդ ինչո՞ւ կառարկեք, երբ ձեր ազգակիցներեն մեկը քմահաճույքը կունենա ոազմիկ դառնալու. և ինչու՞ դուք ազատ չէք: Ինչու՞ դուք ձեր սեփական թագավորը չունենաք»: Անոնց պատասխանը եղավ. «Պարոն, մեր ազատությունը անդիի աչխահրքն է. մեր թագավորը Հիսուս Քրիստոսն է»: Էմին ըսավ. «Ի՞նչ խոսք է այդ. ո՞վ ըսավ ձեզի թե այդպես է»: «Եկեղեցիին Սուրբ Հայրերը, որոնք կըսեն թե հայ ազգը մահմեդականներուն հպատակ եղած է աչխարհի ստեղծվելեն ի վեր, և այդպես ալ պետք է մնա մինչև հարության օրը: Եթե ոչ մենք շատ արագ կրնայինք թուրքերը մեր երկրեն դուրս վռնդել»: «Բարեկամներս, ըսավ Էմին, հիմա ձեզի գաղտնիք մը պիտի հայտնեմ, եթե երդում ընեք Սուրբ Ավետարանի վրա, թե ընթացքնիդ պիտի փոխեք»: Անոնք երդում ըրին, և Էմին շարունակեց. «Նախ այս միսը վերցուցեք, որովհետև ես քրիստոնյա եմ և ձեզ նման ծոմ կպահեմ»: Հետո գրպանեն հանեց Մովսես Խորենացիի պատմությունը, քիչ մը կարդալ գիտցող քահանայի մը լուր ղրկեց. ցուցուց անոր Հայոց թագավորներուն ծննդաբերությունը... [Ապա Էմինը սկսում է քարոզել ազատության գաղափարներ, բերելով օրինակներ եվրոպացի քրիստոնյաների պատմությունից և Աստվածաշնչից -- Ա. Ա.]

Էմին այսպես կշարունակեր իր ճառախոսությունը, երբ քահանան զինքը ընդմիջելով գոչեց. «Իրավունք ունի». և անոնք դուրս վազելով կանչեց գյուղին բոլոր ժողովուրդը՝ մարդիկ, կիներ և երեխաներ, որոնք չերմեռանդությամբ կուզեին Էմինի ոտքերը համբուրել: Էմին սուրբ Հայրերուն փառաբերությունը չունեցավ՝ այդ բանը արտոնելու անոնց, հապա անոնցմե յուրաքանչյուրը նույն խանդաղատանքով առավ իր բազուկներուն մեջ: Խնդության և ողբի այս տեսարանը կարժեր որ նկարագրվեր ճարտասանի մը բերանով: Պարկեշտ քահանան գոչեց. «Սիրեցյալ եղբայրներս, սիրեցեք և հարգեցեք այս անձը, որովհետև ասիկա այն մարդն է, որուն մասին Ներսես Մեծը[104] մարգարեացավ գրեթե 630

---

104 Ջենիսի քահանան կամ Էմինը շփոթել են 4-րդ դարի Հայոց կաթո-

տարի առաջ, և որ պիտի ազատե մեզ մեր հարստահարիչներուն ձեռքեն, մեր և մեր կրոնի թշնամիներեն... սուրբ մարգարեությունը 666 տարի վերջ պիտի կատարվի... 638 տարին անցած են արդեն. կմնա 28 տարի ևս, լրացնելու համար մեր հալածանքը: Հետո մենք ազատ պիտի ըլլանք և աշխարհի վրա ոչ մի ուժ կարող պիտի չըլլա մեզ հարստահարելու[105]*:*

Արդարև, այս շարադրանքը հարկադրում է եզրակացություններ անել ո՛չ թե à la *Սյունի, այլ տրամագծորեն հակառակ ուղղությամբ: Այսպես.*

1. Ջննիսցի հայ գյուղացիները կարծել էին, թե էմինը «թուրք հեծելազորային» է: Նրանք սարսափած էին ("frightened out of their senses") *և՛ այն մտքից, որ նրան թյուրիմացաբար վերրավորել էին, և՛, մանավանդ՝ որովհետև գիտեին, որ մերձակա գյուղում իջևանած թուրքական գումարտակը՝ քրիստոնյա վրացիներից մի քանի օր առաջ կրած պարտությունից հետո, կատաղած տրամադրության մեջ պետք է լինի ու չնչին առիթ տալու դեպքում իսկ կարող է իրենցի՛ց քինախնդիր լինել:*

2. Երբ «թուրք հեծելազորայինը»՝ նույն ինքը էմինը, հարցրել էր այս ահաբեկ գյուղացիներին, թե միթե՞ նրանք չեն ուզում ազատ ապրել և ունենալ սեփական թագավոր, վերջիններս, բնականորեն, չտապել էին ցուցադրելու, հենց էմինի խոսքերով ասած՝ «իրենց հավատարմությունը Օսմանցիներուն» (their fidelity to the Othmans): Այսպիսի վարքագիծը միանգամայն հասկանալի է. այն համապատասխանում էր օս-

---

ղիկոս Ներսես Մեծին (Nerses the Great) 12-րդ դարում ապրած Ներսես Շնորհալու հետ, որը ծնվել է մոտ 1100 թ. և մահացել 1173 թ. օգոստոսի 13-ին: Այսինքն՝ ըստ քահանայի՝ Ներսեսը մարգարեացել է մոտավորապես 1129 թ.:

105 Տե՛ս *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*: Անգլերեն բնագրեն թարգմանեց Հ. Խաչմանյան. (Պեյրութ. Տպարան Մշակ, 1958), էջ 154-157. հմմտ. *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian*, pp. 140-143.

մանյան հասարակության՝ Շարիաթի (իսլամական իրավունքի) կանոններով ապրող հիմնական պահանջին, այն է՝ ոչ-մահմեդականների հնազանդությանը մահմեդականներին: Այս տարրական ճշմարտությունը հասկանալու համար պատմաբանից ու անգամ ո՛չ մասնագետից մեծ ջանքեր չեն պահանջվում: Սոցիալական վարքագծի բազմաթիվ նմանատիպ երևույթների, երբ ինչ-ինչ պատճառներով ճշմարտության փոխարեն ասվում է դիմացինի համար նախատեսված ու նրան ցանկալի ոչ-ճշմարտությունը, մենք հանդիպում ենք գրեթե ամեն օր: Պատկերենք, օրինակ, նույնաբնույթ մի իրավիճակ. ասենք, մեկը 1950-1980-ական թթ. դուրս գար Արևելյան Բեռլինի որևէ փողոց, բացեիբաց քարոզեր Արևմտյան ու Արևելյան Գերմանիաների վերամիավորում ու հարցներ, թե առ այդ ինչ կարծիք ունեն անցորդները. վստահաբար, արևելագերմանական հատուկ ծառայություններից սարսափահար բեռլինցիները այդ մարդուն կպատասխաններին ճիշտ նույն ոճով, որով էմինին պատասխանել էին հայ գյուղացիները, մանավանդ՝ եթե այդ մարդուն համարեին ՇՏԱԶԻ-ի (արևելագերմանական ԿԳԲ-ի) ծպտված գործակալ:

3. Ջենիսցի հայ գյուղացիների հասկանալի վարքագծին անտրամաբանական մեկնություն տալը Սյունիին պետք է ևղել ապացուցելու համար անապացուցելին, այն է՝ թե իբր.

ա) հայերը մոռացել էին, որ իրենք ապրում են Հայաստանում՝ իրենց հայրենիքում, այսինքն՝ այս երկիրն իրականում նրանց հայրենիքն էլ չէ. այս նույն դրույթն ավելի պարզորոշ արտահայտված է Սյունիի մի այլ հրապարակման մեջ՝ «Հայաստան հասկացությունն իսկ կորսված էր հայ զանգվածների մեջ»[106]: Ըստ Սյունիի, էմինի հանդիպած հայ գյուղացիները,

---

106 Տե՛ս **Ronald Suny**, "Some Notes on the National Character, Religion, and Way of Life of the Armenians," unpublished paper presented at the Lelio Basso Foundation conference, Venice, October 18-20, 1985, p. 4; մեջբերված է հետևյալ հոդվածում՝ **Nora Dudwick**, "Armenia: the nation awakens," in **Bremmer, I. and Taras, R.**, eds., *Nations & Politics in the Soviet Successor States* (Cambridge: Cambridge University Press,

ապա և՝ ինչպես ինքն է «մակաբերում», հայերի մեծամասնությունը, չեն էլ լմացել, որ անցյալում անկախ պետականություն են ունեցել, քանզի «հայոց պատմության մասին գիտելիքները բոլորովին ջնջված էին»: Ի դեպ, Սյունիի այս հիասքանչ «հայտնագործությունը» քոչել-մտել է նաև նախկին Խորհրդային Միության ազգային խնդիրներին վերաբերող՝ ամերիկյան համալսարաններում վերջին տարիների գործածական մի դասագիրք, որի մեջ այն հաճույքով վերարտադրել է երիտասարդ «հայագետ» Նորա Դաղվիքը[107]:

Պետք է նկատենք, սակայն, որ այս մտայնությունը նորություն չէ, այլև՝ սրա հեղինակն ամենևին էլ Սյունին չէ: Միայն այս մտայնության ծրագրայնությամբ կարելի է բացատրել այն, որ Հայաստան անունից վաղուց ի վեր խորշում են բազմաթիվ արևմտյան, հատկապես՝ ամերիկյան և բրիտանական պատմագիտական հրատարակություններ: Միայն մի օրինակ. Արևմուտքում Իրանի պատմությանը վերաբերող ամենահեղինակավոր գիտական ուսումնասիրությունը համարվող «Իրանի Քեմբրիջի պատմության» 6-րդ հատորը, որ ընդգրկում է 1335-1735 թթ. ժամանակահատվածը, Հայաստանը հիշում է ընդամենը երկու անգամ (էջ 59, 419), իսկ 1735-1991 թթ. պատմությունը շարադրող 7-րդ հատորի համար Հայաստանն առահասարակ անծանոթ անուն է: Ասենք, որ այս երկու հատորների ընդհանուր ծավալը 2100 էջից ավելի է: Միտումն առավել հստակ կլինի, եթե համեմատենք, թե քանի անգամ է նույն հրատարակությունը հիշատակել, օրինակ, Վրաստան անունը. 6-րդ հատորում՝ էջ 59, 71, 75, 79-80, 163, 172, 245-6, 268-9, 285-6, 296, 309, 327. հտ. 7-ում՝ էջ 20, 47, 95, 97, 114, 126-131, 136, 159, 517, 583, 299-300, 305, 311, 315, 317-319, 325, 327-34, 365, 374, 377, 379, 381-3, 385, 583, 601, 706[108]: Ընթերցողը կարող է հարցնել՝

1993), pp. 261-287: at 264, note 25 (p. 281).

107 Նույն տեղում:

108 *The Cambridge History of Iran.* Vols. 6, 7 (Cambridge: Cambridge

իսկ գուցե՞ Հայաստանն այսպես մոռացության մատնելը բխում է հենց եվրոպական սկզբնաղբյուրներից, գուցե՞ այդ ստվարածավալ հատորների պատրաստությանը մասնակցած արևմտյան անվանի գիտնականներն իրենց կարդացած սկզբնաղբյուրների մեջ պարզապես չե՞ն հանդիպել Հայաստան անվանը: Քա՛վ լիցի. մեր տարածաշրջանի պատմությանը վերաբերող 14–19-րդ դարերի եվրոպական աղբյուրների բացարձակ մեծամասնությունը հրաշալիորեն ծանոթ է Հայաստանին՝ մի երկրի, որ նվաճված էր թյուրք ցեղախմբերի, այնուհետև՝ օսմանյան թուրքերի և պարսիկների կողմից, բայց ամենևին չէր կորցրել իր ազգային դիմագիծը, չէ՛ր դադարել Հայաստան լինելուց[109]*:*

բ) Սյունին պնդում է նաև, թե հայերը ազատագրվելու որևէ մղում իսկի չեն էլ ունեցել: Նա նույնիսկ համարձակվում է քննադատել հայ պատմաբաններին այն բանի համար, որ նրանք «գրում են, թե իբր հայերը անընդհատ դարերի միջով շարունակել են պահպանել իրենց ավանդական ազգային գիտակցությունը և ազատության ու անկախության ձգտումները» (Armenian historians write as if Armenians continued to maintain their traditional national consciousness and aspirations for freedom and independence)[110]*: Այս վերջին կեղծիքը ուղ-*

University Press, 1986, 1991).

109 Տե՛ս, օրինակ, Վատիկանի դիվաններից քաղված՝ 16-18 դդ. գրված փաստաթղթերի ժողովածուն [**Chick H.** (the compiler)] *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth Centuries.* Vol I-II (London: Eyre & Spottiswoode, 1939). Անգլիացի հեղինակների հիմնականում դրական ակնարկները Հայաստանի և հայերի մասին տե՛ս **Christopher Walker**, *Visions of Ararat* (London, 1997). Հայաստանի մասին եվրոպական աղբյուրների մանրամասն քննությունը տե՛ս **Մանվել Ջուլալյան**. *Հայ ժողովրդի 13-18-րդ դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների*: Գիրք Ա - *Քաղաքական պատմություն.* Երևան, ԳԱ, 1990:

110 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 95. հմմտ. **Suny**, "Nation-making, Nation-breaking: The End of the Ottoman Empire and the Armenian Community," a paper prepared for presentation at the colloquium on "The Historian, Nationalism, and the End of Empire," at Prinston

ղակի սրբապղծություն է՝ մեր ամբողջ պատմության հասցեին: Այստեղ չենք պատրաստվում անդրադառնալ հայ ազատագրական շարժումների պատմության հանրահայտ և անթիվ այն փաստերին, որոնք արձանագրված են դասագրքերում և պատմագիտական գիտական ուսումնասիրություններում: Խոսենք միայն Էմինի պատմությունից բխող և Սյունիի՝ միտումով չարած եզրակացությունների մասին:

Այն, որ Սյունին ո՛չ թե անընդունակ է եղել հասկանալու ջենիսցի հայ գյուղացիների սկզբնական վարքագծի պատճառները, այլ ղիմել է մտածված նենգափոխության, պարզ երևում է այնտեղից, որ Ցա կիսատ է թողել Էմինի պատմածը և լռել հաջորդ դրվագի մասին, որն իր «տեսության» բարը բարին չի թողնում: Այն է՝ երբ Էմինը բացահայտել է իր հայ լինելը և սկսել խոսել ազատության ու ազատասիրության մասին, «ամենագիտամենաց» հայ գյուղացիները նրա բարոզն ընդունել են անսահման ոգևորությամբ և խանդավառությամբ *(«գյուղին բոլոր ժողովուրդը՝ մարդիկ, կիները և երեխաները, որոնք ջերմեռանդությամբ կուզեին Էմինի ոտքերը համբուրել: Էմին... անոնցմե յուրաքանչյուրը նույն խանդաղատանքով առավ իր բազուկներուն մեջ: Խնդության և ողբի այս տեսարանը կարժեր որ նկարագրվեր ճարտասանի մը բերանով...»):*

Հետո. եթե այդ հայ գյուղացիներն իրոք չգիտեին, որ անցյալում անկախ երկիր են ունեցել, ինչպես է, որ նրանք բացահայտորեն, անգամ «Թուրք Հեծելազորայինի» երեսին, ասել են, թե ապրում են իրենց երկրում՝ «մենք շատ արագ կրնայինք թուրքերը մեր երկրեն *դուրս վռնդել»: Սա արդեն բռնությանն ուժով պատասխան տալու կարգախոս է և ինքնին վկայում է, որ թուրքերն իրենք էլ շատ լավ գիտեին, որ երկիրը Հայաստան է, և հանրահայտ ճշմարտություն պարունակող այդպիսի խոսքերից չպիտի խրտչեին: Այս եզրակացության համար ունենք բազմաթիվ այլ պատմական տեղեկություններ. օրինակ, Թուրք Հեղինակ Քյաթիբ Չելեբիի՝ 1649 թ.*

University, May 3, 1996, p. 6.

գրած և 1732 թ. տպագրված Ջիհան-Նյումա-ում կարդում ենք. «Ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի, Կարսի և Էրզրումի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան (իմա Կիլիկիան Ա. Ա.)՝ Ադանայի և Մարաշի վիլայեթներից: Որոշ գրքեր ասում են, որ նախկինում Հայաստանի մայրաքաղաքն Ախլաթն էր: [Հայոց] պետության անկումով նրա ժողովուրդը վերածվեց ռայաթների և ցրվեց մինչև Տարսուս ու Մսիս (Կիլիկիայում)»[111]: Այնուհետև, խոսելով Էրզրումի մասին, նույն հեղինակը նկատում է, որ անցյալում Էրզրումը գտնվում էր «պարսիկների, հայերի և Բյուզանդիայի» իշխանության տակ[112]: Ի դեպ, 1957 թ. Քյաթիբ-Չելեբիի մահվան 300-ամյակի կապակցությամբ Անկարայում «Ջիհան-Նյումայի» վերաբերյալ լույս տեսած մի առանձին ուսումնասիրության մեջ հեղինակային «Արմենիա երկրի մասին» շատ պարզ վերնագիրը դարձել է «Արևելյան Անատոլիա»[113]:

Էմինի պատմածից ևս մի փաստ, որ Սյունին «չի նկատել». ի՞նչ են նշանակում հայ քահանայի հետևյալ խոսքերը, եթե ո՛չ ազատագրվելու ձգտում. «սիրեցեք և հարգեցեք այս

---

111 "Джихан-нюма" и "Фезлеке" Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.). Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна (Ереван: АН Арм. ССР, 1973), с. 54. Ժամանակին Ա. Հ. Փափազյանը նկատել է այս նկարագրության մի շարք սխալներն ու շփոթները, այն է՝ ա) Արևելյան Հայաստանը, որ գտնվում էր Սեֆյան Իրանի տիրապետության տակ, լրիվ դուրս է մնացել Մեծ Հայքի նկարագրությունից, բ) 17-րդ դարում Արևմտյան Հայաստանի տարածքում մտնում էին ոչ թե երեք, այլ հինգ վիլայեթ՝ այդ թվում Վանը, Կարսը, Էրզրումը, Բիթլիսը և Զըլդըրը, գ) Փոքր Հայքը շփոթվել է Կիլիկյան Հայաստանի հետ (տե՛ս **Ա. Հ. Փափազյան**. Քյաթիբ-Չելեբիի «Ջիհան-Նյուման»-ն որպես աղբյուր Հայաստանի պատմական աշխարհագրության. – *Պատմա-բանասիրական հանդես* 1966, No. 4 (35), էջ 230-231):

112 Նույն տեղում, էջ 90:

113 Տե՛ս **Kâtip Celepi**, *Hayati ve eserleri hakkinda incelemeler*. Ankara, 1957. - այս մասին տե՛ս **Ա. Հ. Փափազյան**. Քյաթիբ-Չելեբիի «Ջիհան-Նյուման» որպես աղբյուր Հայաստանի պատմական աշխարհագրության, նշվ. աշխ., էջ 232:

անձը, որովհետև ասիկա այն մարդն է, որուն մասին Ներսես Մեծը մարգարեացավ գրեթե 630 տարի առաջ, և որ պիտի ազատե մեզ մեր հարստահարիչներուն ձեռքեն, մեր և մեր կրոնի թշնամիներեն», և ապա՝ «կմնա 28 տարի ևս, լրացնելու համար մեր հալածանքը: Հետո մենք ազատ պիտի ըլլանք և աշխարհի վրա ոչ մի ուժ կարող պիտի չըլլա մեզ հարստահարելու»:

4. Այունին ակնհայտորեն գաղափար չունի, թե ի՞նչ բան է Ս. Ներսեսի գուշակությունը: Նա ծանոթ չէ Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի» դասական ուսումնասիրությանը, որի առաջին հատորի (Երևան, 1957) վերնագրով էլ հայ միջնադարյան ազատագրական գաղափարախոսության «տեսիլքային» բաժինը արդարացիորեն կոչում են «Հայ ազատագրական լեգենդ»[114]: Վերջինս, փաստորեն, Հայաստանի ազատագրության մի ծրագիր էր, որ 10-ից մինչև 18-րդ դար չափազանց տարածված էր և՛ հայ վերնախավերի, և՛ ժողովրդական զանգվածների մեջ: Լեգենդի բազմազան տարբերակների գլխավոր և անփոփոխ միտքն այն էր, որ Հայաստանը օտար տիրապետության լուծը կթոթափի և կվերականգնի իր անկախությունը միմիայն քրիստոնյա հզոր ազգերի աջակցությամբ: Ըստ միջազգային իրադրության փոփոխությունների, ազատագրությանը նպաստող քրիստոնյա հզոր ազգեր համարվում էին սկզբում բյուզանդացիները ու «ֆրանկները» (այսինքն՝ կաթոլիկ եվրոպացիները), ավելի ուշ՝ ռուսները: Լեգենդի մի քանի հնագույն տարբերակներ կանխագուշակում էին, որ քրիստոնյա ազատագրիչ բանակները Հայաստան պիտի առաջնորդեին այսպես կոչված «արմաններ-ը» կամ «որմաններ-ը», այսինքն՝ Հայոց Տրդատ Մեծ թագավորի (298-330) 4-րդ դարի սկզբում Հռոմում թողած հայ զինվորների ժառանգները[115]: Այն փաստը, որ Ջենիսի քահանան

---

114 Տե՛ս, օրինակ, *Հայկական Սովետական Հանրագիտարան*. Հ. 6. Երևան, 1980, էջ 121:

115 Տե՛ս **Աշոտ Հովհաննիսյան**. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*. Հտ. Ա. Երևան. ԳԱԱ հրատարակչություն, 1957, էջ 33-

հայ էմինին դրել էր գուշակությամբ նախատեսված Հայաստանի ազատագրողի տեղը, կարծե՛ս հուշում է, որ նա ծանոթ է եղել լեգենդի՝ հե՛նց արմանների դիպաշարով տարբերակին: Լեգենդի դիպաշարի երկու փոխկապակցված առանցքներն էին. ա) որ Հայաստանը կորցնելու է իր ինքնուրույնությունը, և բ) որ նա դարձյալ այն ետ է բերելու: Սա ինքնըստինքյան նշանակում էր, որ հայ զանգվածները քաջատեղյակ էին անցյալում անկախ թագավորություն ունեցած լինելուն: Ավելին՝ հայ ազատագրական լեգենդը առատորեն արտացոլված ու արձանագրված է ինչպես հայ մատենագրության մեջ, նույնպես և եվրոպական բազմաթիվ աղբյուրներում: Այսպես՝ շվեդ արևելագետ Հենրիխ Բրենները, որ Հայաստանում ճանապարհորդել է 1699 թ., լեգենդի տարբերակներից մեկը և նրա վայելած ժողովրդականությունն արձանագրել է այսպես.

Հին մի մարգարեության համաձայն, ...հայերը, ...որոնք հզոր էին երբեմն... ժամանակի ընթացքում... հուզած լինե-

---

57, 66, 76–78: Տրդատ Գ-ի ճանապարհորդությունը Հռոմ գիտության կողմից դեռևս չի հաստատվել: Աշոտ Հովհաննիսյանի կարծիքով, լեգենդը Տրդատ Գ-ին վերագրել է Տրդատ Ա-ի (65–88) հայտնի այցը Հռոմ 66 թ. և այնտեղ նրա թագադրությունը Ներոնի կողմից: Եթե Տրդատ Գ իրոք Հռոմ չի մեկնել, ապա մեր կողմից ավելացնենք, որ հայ զինվորների գործունեությունը Հռոմում հնարավոր է, որ արդեն ոչ թե մ. թ. 1-ին, այլ 3-րդ դարի արձագանք լինի: Խոսքս վերաբերում է հայ նետաձիգների այն գնդերին, որոնց 233 թ. Ալեքսանդր Սևերուս կայսրը բերել էր Հռոմ Սասանյան Պարսկաստանի դեմ հայ-հռոմեական պատերազմից հետո: Հետագայում հայկական այս գնդերը հաջողությամբ կռվել են գերմանական ցեղերի դեմ, իսկ 237 թ. արդեն այնչափ ազդեցություն են ունեցել, որ Հռոմում գահի են բարձրացրել նոր կայսր՝ Տիտոսին: Այս փաստերը հստակ արձանագրված են հռոմեական աղբյուրներում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. Հտ. II, Երևան, 1984, էջ 34. հմմտ. **Aellus Lampridius**, *Alexander Severus*, 61, 8 Scriptores Historiae Augustae, Hohl., vol.1, Lipsiae, 1927; **Herodianus**, *Ab excessu divi Marci libri* VII. 2. Ed. K. Stavenhagen, Lipsiae, 1922; "Trebelli Pollionis," Tyranni triginta, 32, 3, *Scriptores historiae Augustae*, ed. Hohl, vol. II, Lipsiae, 1927, p. 132. Տե՛ս նաև **R. D. Wilkinson**, *Introduction to the History of Pre-Christian Armenia, op. cit.*, p. 62.):

լով իրենց դեմ Աստծու բարկությունը, զրկվելու են սեփական թագավորությունից և ցաքուցրիվ լինելու աշխարհով մեկ, ինչպես երբեմնի ԵՀովայի սիրած ժողովուրդը՝ հրեաները: Բայց պիտի գա ժամանակ, երբ Աստծու բարկությունը պիտի նահանջի նրա գթասրտության առաջ: Պիտի հառնի եվրոպական մի թագավոր, վերականգնելու նրանց թագավորությունը, ազատի հայերին իրենց տառապանքներից և վերադարձնի նրանց իրենց վաղեմի բնակավայրը: Եվրոպական այդ թագավորին հայերը սպասում են հիմա այնպես, ինչպես հրեաները Մեսիային[116] *(ընդգծումն իմը՝ Ա. Ա.):*

Այսպիսի վկայություններ արձանագրել են եվրոպացի բազմաթիվ ճանապարհորդներ, օրինակ՝ Տավերնիեն, Շարդենը, Լա Բուլե լա Գուզը, դը Լալեն, Պողոս Փիրոմալլին, Արևելքում երբևէ գործած ամենանշանավոր կաթոլիկ միսիոներ Ռաֆայել դյու Մանը և ուրիշները[117]*, որոնք փաստում են և՛ հայերի քաջածանոթությունը լեզվին, և՛ անկախ պետականությունը վերագտնելու հայոց մեծ տենչը: Հիշենք թեկուզ Էմինի հետ կապված մի այլ դեպք, որ Սյունին չէր էլ ուզի նկատել: Երբ 1763 թ. Էմինը ժամանում է Աստրախան.*

> *մարգարեացող հայ վաճառականները... այլևս հաստատված իրողություն նկատեցին, թե Էմին բուն իսկ այն մարդն էր, զոր Ս. Մովսես, մեծ նահապետը գուշակած էր վեց հարյուր*

---

116 Տե՛ս **Heinricus Brunner**, *Epitomae commentariorum Moysis Armeni, de origine et regibus armenorum et parthorum etc*, Stockholmiae, 1723, p. 96. - մեջբերումը տե՛ս **Աշոտ Հովհաննիսյան**. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*. Հտ. Բ, Երևան. ԳԱ հրատ., 1959, էջ 315: Բրենների մասին առավել հանգամանալից տե՛ս **Գոհար Մուրադյան**. Ուշ միջնադարի շվեդ հեղինակը Կովկասի և Ռուսաստանի ժողովուրդների մասին. - *Իրաց-Նամե* հմր. 16-17 (1995-1996), էջ 22-29:

117 Բոլորի քննությունը տե՛ս **Աշոտ Հովհաննիսյան**. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*. Հտ. Բ, էջ 163–223 և **Հ. Ս. Անասյան**, *17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (Պատմական հետազոտություն)*, Երևան, ԳԱ հրատ., 1961, էջ 153-170:

քսան տարի առաջ[118]*: Ասոնք իրենց զավակները ևս միասին բերելով, գետնամած ինկան Էմինի ոտքերուն առջև*[119]*:*

Լեգենդի ազդեցությամբ էլ հայերը Էմինին սկսեցին կոչել «Հայաստանի իշխան» (the prince of Armenia)*, «ամենայն Հայոց իշխան», «մեծայարգ և պերճապատիւ նրբանկատ և խոհեմագոյն ազնուատոհմ և պայազատ իշխանազուն իշխանաց իշխան», իսկ վրաց Հերակլ թագավորի նամակում (14/25 նոյեմբերի 1762 թ.) նա անվանված է «բարիծնունդ և պայծառափայլ բայազատափառ իշխանիդ Էմին Ազայիդ»*[120]*:*

Փաստերը մեզ բերում են այն համոզման, որ Սյունին Էմինի երկը չի էլ կարդացել: Այլապես, նա պետք է նկատած լիներ, որ թե՛ արևմտահայերը և թե՛ արևելահայերը Էմինի գործունեությամբ բավական ոգևորված էին և նույնիսկ սկսել էին ապստամբելու կոնկրետ նախապատրաստություններ տեսնել: Այսպես, 1763 թ. գրված մի նամակում Ս. Կարապետի առաջնորդ Հովհան արքեպիսկոպոսը (ի դեպ՝ բարձրաստիճան հոգևորական)[121] *Էմինին հաղորդում էր.*

> *Անցնող տասնևմեկ ամիսը գրելով էի զբաղած: Ինձ շատ դյուրին եղավ ձեզմով շահագրգռել ու ձեր հերոսական մտածողությամբն համակել Թուրքիո բոլոր կարևոր հայերը՝ Պոլիս, Զմյուռնիա, Կեսարիա, Թոքատ, Էրզրում, Տիարպեքիր... Վուեր (Վա՞ն -- Ա. Ա.) և այլն, և այլն... Գալով կռվողներուն, գիտցեք որ... ձեզ պիտի դիմավորեն 40,000*

---

118 Հավանական է, նկատի ունի Մովսես Բ Եղվարդեցի կաթողիկոսին (574-604) կամ գուցե Մովսես Խորենացուն, իսկ ժամանակագրությունը շփոթ է -- Ա. Ա.:

119 Տե՛ս *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, նշվ. աշխ., էջ 224. հմմտ. *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian*, p. 199.

120 Տե՛ս *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian*, p. 182, А. Р. Иоаннисян, Иосиф Эмин. Ереван, Изд-во Госуниверситета, 1945, с. 109-111 (2-ое издание вышло в свет в АН Арм. ССР, 1989).

121 Հովնան արքեպիսկոպոսի գործունեության մանրամասն քննությունը տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, сс. 145-161, 230-235.

մարտիկներ: Ասորիներ և եզիտի քյուրտեր նմանապես պատրաստ են միանալու մեզ[122]:

Սյունին կարող էր այսպիսի բազմաթիվ այլ մանրամասնություններ գտնել թե՛ Էմինի գրքում և թե՛ այդ գրքի դեռևս չգերազանցված պատմագիտական հետազոտության մեջ, որը պատկանում է հանգուցյալ ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի գրչին (Սյունիին անհայտ են ինչպես երկիցս՝ 1945 և 1989 ԹԹ. տպված այս մենագրությունը[123], նույնպես և Էմինին ու նրա ժամանակին վերաբերող բոլոր սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները):

Ի վերջո, նշենք ևս երկու ակնառու փաստ, որ Սյունին զանց է առել հանուն հայերի՝ ազատագրական ցանկություններ չունենալու մասին իր «եզրակացության».

ա) Սյունին տեղյակ չէ անգամ Սասնա ծռեր ժողովրդական էպոսի գոյությանը. էպոս, որ ազգային անկախության և ազատության իր կենտրոնական թեմայով ու բազմաթիվ պատումներով պահպանվել է ընդհուպ մինչև մեր օրերը: Ընդ որում, էպոսը դեռևս 16-րդ դարում[124] առաջինն արձանագրել են եվրոպացի ճանապարհորդները:

«Սասնա ծռեր» հերոսական էպոսը հայ ժողովրդի փայլուն տարեգրությունն է, որ իբրև բանարվեստի անմահ կոթող, իր բազմաթիվ պատումներով ու տարբերակներով տարածված է եղել Հայաստանի տարբեր շրջաններում: Հայ ժողովրդական վեպում առանձնապես շեշտված են հերոսականությունը, հայոց պետականության ամուր հիմքերի, հայ ընտանիքի, հայոց համախմբվածության, հայկական գաղափարախոսության ա-

---

122 Տե՛ս Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, ընդ. աշխ. էջ 267. հմմտ. *The Life and Adventures of Joseph Emin, an Armenian,* pp. 234-235. հմմտ. pp. 228-229.

123 Տե՛ս ծնթ. 120:

124 Տե՛ս **Roberto Gulbenkian et H. Berberian**, "La Legende de David de Sassoun d'apres deux voyageurs Portugais du XVIe siécle," *Revue des Études Arméniennes* Tome VIII (Paris, 1971), 175-188.

մենաբազմազան հարցեր: Եվ եթե հանկարծ հայ անգրագետ չինականին հասու չէր լինի հայ դասական մատենագրությու-ը, ապա «Սասնա ծռեր», «Արշակ» և նմանաբնույթ այլևայլ ծավալուն երկերը միշտ էլ վառ էին պահում հայրենասիրական, ազատասիրական, ինքնուրույն լինելու գաղափարները: Ավելին՝ վանքերին կից բազմաթիվ դպրոցներում Խորենացու «Հայոց պատմությունը» եղել է ուսուցման պարտադիր դասագիրք (վկա՝ հիշատակված հնատիպ բազմաթիվ հրատարակություններից բացի, նաև նրա հարյուրավոր ձեռագիր օրինակությունները): Սխալմունք, ավելին՝ չփացածություն է մտածելը, որ եթե գրագիտությունը զանգվածային չի եղել, ապա մարդը զուրկ է եղել մտածելուց, չի հասկացել հայրենասիրությունը, հայրենիքին պահապան կանգնելը, թե՝ զուլում, մահ ու ավեր տարածող օտար նվաճողը հաճելի է եղել հայ մարդուն, կամ, ասենք՝ եզդի, ասորի փոքրամասնություններին:

բ) Սյունին կատարելապես անտեսում է 1720-ական թթ. հայոց ազատամարտը, երբ, ըստ հայկական ու ոչ-հայկական աղբյուրների, Արևելյան Լեռնահայաստանը՝ Ղարաբաղն ու Կապանը, ռազմի դաշտ հանելով 30,000-ից 60,000-ը մինչև տատանվող հայոց մշտական զորամիավորումներ, նվաճել էին փաստացի անկախություն[125]: Կարելի է ասել, որ հայոց պատմության այդ փառահեղ ժամանակաշրջանը ամերիկյան «հայագիտության» համար մնացել է իսկական terra incognita՝ անծանոթ մի տարածք: Այսպես՝ ԱՄՆ-ում հայոց 18-րդ դարի

---

125 Տե՛ս Эзов, *op. cit.*, документы 213, 215, 216, 219, 224, 231, 233, 252, 301; *A Chronicle of the Carmelites in Persia, op. cit.*, p. 578; [**Judasz Tadeusz**] **Krusinski**, *The History of the Late Revolutions of Persia.* - Vols. II. (New York: ARNO Press, 1973; reprint of the 1740 London ed), p. 131; П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., Москва: Изд. АН СССР, 1953, сс. 158-162; Армянское Войско в *XVIII* веке. Документы. Подготовил к изд. А. Хачатрян. Ереван: Изд. АН Арм. ССР, 1968, сс. 69-72; **Ա. Մ. Այվազյան.** Իրադարձություններն Այսրկովկասում 1723 թ. և արցախահայերի առաջին օգնական ռազմերթը Սյունիք. - *Պատմա-բանասիրական հանդես* No. 4 (131) (1990), էջ 68-71.

պատմության երկու «առաջատար» մասնագետ՝ Ջորջ Բուռնուտյանը և Ռոբերթ Հյուսնը Դավիթ-բեկին անգիտաբար կոչում են Ղարաբաղի և Կապանի հայկական զինված ուժերի գլխավոր գորահրամանատար[126]: Մինչդեռ հայտնի է, որ Դավիթ-բեկի իշխանությունը Կապանի սահմաններից անդին չի անցել և երբեք չի տարածվել դաշնակից հայկական Ղարաբաղի վրա, որի ղեկավարները ևս քաջ հայտնի են՝ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյան, Ղարաբաղի հայոց զորքերի գլխավոր գորահրամանատար Ավան-յուզբաշի, Թարխան-յուզբաշի և այլն:

Ընդհանուր առմամբ՝ ամերիկացի հայագետները խորշել են 1720-ական թթ. հայոց ազատագրական պատերազմն ու-սումնասիրության առարկա դարձնելուց և նույնիսկ այդ շրջանի մասին եզած հայտնի փաստերն անգլախոս ընթերցողին պատշաճորեն ներկայացնելուց: Այս բավական հետաքրքրքիր «պիտախտրական» վերաբերմունքը, մեր կարծիքով, երկու պատճառ ունի: Նախ՝ այդ շրջանում հայերի՝ պարսկական և թուրքական կանոնավոր գերակշիռ ուժերի դեմ տարած տասնյակ ռազմական հաղթանակները[127] հաստատում են հայերի՝ ազատասեր և մարտունակ ազգ լինելը և ցրիվ տալիս թուրք-ադրբեջանա-սյունիական հակառակի մասին տարփողող «պատմական տեսությունները»: Երկրորդ, ու, թերևս, ավելի

---

126 G. **Bournoutian**, *A History of Qarabagh.* An Annotated Translation of Mirza Jamal Javanshir Qarabagh's *Tarikh-e Qarabagh* (Costa Mesa, CA: Mazda Publisher's, 1994), p. 17; Նույնի՝ *The Khanate of Erevan Under Qajar Rule, 1795-1828* (Costa Mesa, CA and New York: Mazda Publisher's, 1992), p. 4, note 12; **Robert Hewsen**, *Russian-Armenian Relations, 1700-1828* (Cambridge, Mass.: Society for Armenian Studies, 1984), pp. 13-14.

127 1723-1727 թթ. հայկական և օսմանյան զորքերի միջև տեղի ունեցած 13 խոշոր ճակատամարտերի վայրը, ժամանակը և օսմանցիների կրած կորուստները նշող աղյուսակը տե՛ս **A. M. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Center for Policy Analysis, American University of Armenia, 1997), p. 20.

կարևոր հանգամանքն այն է, որ Սառը պատերազմի ծնունդ և այդ պատերազմի գաղափարական պահանջները սպասարկելու կոչված սյունիատիպ ամերիկացի «հայագետները» բնականաբար չէին ցանկանալու հանգամանորեն խոսել հե՛նց նույն 1720-ական թթ. սկիզբը առած հայ-ռուսական ռազմաքաղաքական համագործակցության մասին. չէ՞ որ այդ համագործակցությունը պատմականորեն ուղղված էր Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ական դաշնակցի դեմ: Ավելին՝ այդ համագործակցության բացառիկ կայունությունը ամրապնդում էր հակառակորդ խորհրդային Միության մեջ ապրող երկու ազգերի՝ ռուսների և հայերի բարեկամությունը ու դրանով իսկ՝ խորհրդային Միությունը: 1991 թ. Հայաստանի անկախանալով՝ հայ-ռուսական ավանդական ռազմա-քաղաքական համագործակցությունը վերածվեց միջպետական ռազմա-քաղաքական դաշինքի, որ այս անգամ հանդես է գալիս իբրև լուրջ մի խոչընդոտ ՆԱՏՕ-ի ազդեցության ոլորտների ընդլայնման համար: Կարելի է չկասկածել, որ ռուս-հայկական ավանդական ռազմաքաղաքական համագործակցությունից դժգոհ ճիշտ այս մտայնությունն է առթել Սյունիի՝ խորհրդահայ պատմաբաններին ուղղված հետևյալ «քննադատությունը», թե՝ «փորձելով արդարացնել Ռուսաստանի և Հայաստանի միջև արդի կապերը, սովետական պատմաբանները շատ են շահագործել 18-րդ դարի Ղարաբաղի մելիքների ռուսական կողմնորոշումը... իրականում՝ ռուսական կողմնորոշումը ո՛չ կովկասյան հայերի համար է եղել կայուն մի տրամադրություն, և ո՛չ էլ հայերի մեծամասնության համար՝ ընդգրկուն մի շարժում» (In their efforts to legitimize the present links between Russia and Armenia, Soviet historians have made much of the Russian orientation of the eighteenth-century meliks of Karabakh.... in fact the Russian orientation was neither a consistent attitude of Caucasian Armenians nor a widespread movement among the majority of Armenians)[128]:

---

128 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 34.

5. Մի երկու խոսք էլ՝ ազատագրական պայքարի նկատմամբ հայոց եկեղեցական գործիչների ունեցած դիրքորոշման մասին: Հիշեցնենք Սյունիի դնահատականները. «Հայերի կրավորականությունը... խրախուսվում էր հայերի մեջ եղած հեղինակություններին, հատկապես՝ հոգևորականների կողմից»:

Ինչպես տեսանք, հե՛նց Հովսեփ Էմինի հավատարիմ գիներից մեկը՝ ազատագրական շարժման բուռն ջատագով ու կազմակերպիչ Հովնան արքեպիսկոպոսը, հայոց ամենաբարձրաստիճան հոգևորականներից էր: 1720-ական թթ. ազատագրական շարժման ամենահայտնի ղեկավարներից էր Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (†1728), որի նամակներից մեկում (24 սեպտեմբերի 1718 թ.) կարդում ենք բառացիորեն հետևյալը (պահպանվել է ռուսերեն թարգմանությամբ).

> О, дабы исполнилось оное дело (իմա Հայաստանի ազատագրությունը՝ Ա. Ա.) по желанию и намерению нашему, чтоб свободился бедный наш народ от рук тиранских!...все, как малые, так и большие, упадшаго народа християне армянские желают свободы, о которых мы здесь попечение имеем, а оных сколько есть силы, все в готовности обретаются и ожидают видеть тот день, в которой бы новую издавна желаемую свободу от всего сердца получить![129]

Եսայի կաթողիկոսը 20-րդ դարի հայ պատմաբան չէ, սակայն ո՞վ գիտե՝ Սյունին նրան էլ կարող է մեղադրել հայերին ազատագրական ցանկություններ վերագրելու մեջ:

Բերենք հայ հոգևորականության «կրավորականության» թեզի փուչ լինելը հաստատող մի վերջին փաստարկ ևս: 1723 թ. ապրիլի 2-ին էջմիածին այցելած թուրք դեսպանը, Աս-

---

129 Армяно-русские отношения в первой трети *XVIII* века. Сборник документов. Том II, часть I. Под ред. Аш. Иоаннисяна. (Ереван: Изд. АН Арм. ССР, 1964), док. 155, с. 371.

տուածատուր Ա. Համադանցի կաթողիկոսին (1715–1725) մեղադրում էր թէ՝ «դու էլ մեծ սուչի (=հանցանքի) տէր աս, որ Ըռուստին խնտ մին աս դառցէլ, էսչանք խայ աս կանգընացուցել, որ ասում ան, թէ կՌ (60,000) խայ եարաղով հազիր ան (=զինված պատրաստ են [կռվելու])»[130]: Նույն հարցում կաթողիկոսին մեղադրում էր Երևանի պարսկական իշխանության լիազոր ներկայացուցիչը[131]: Այս ամբաստանութիւնները ամենևին էլ հիմնազուրկ չէին. մասնագետների կողմից չափազանց հավաստի ճանաչված նույն աղբյուրի[132] համաձայն՝ «մեր կաթուղիկոսն (իմա Աստվածատուր Համադանցին՝ Ա. Ա.) հայոց ասկարին (=զինվորության) խետ մին այ, որ յամիշայ (=մշտապես) գաղտուկ մինն ըզմինու դիր ան ելէլ գրում»[133]: Այսպիսով, 1720-ական թթ. հայոց ազատամարտի ուղղակի մասնակիցներից մեկը եղել է ոչ այլ ոք, քան Ամենայն Հայոց կաթողիկոսը ու, հետևաբար, բազմաթիվ այլ հոգևորականներ (անունները չենք թվարկում): Ընդ որում, Սյունին դարձյալ անտեղյակ է այս տեղեկությունները հաղորդող աղբյուրի՝ «Պետրոս դի Սարգիս Գիլանենցի ժամանակագրության» գոյության մասին, թեև այն հայտնի է ոչ միայն հայերեն բնագրով, այլև ռուսերեն և անգլերեն թարգմանություններով (տե՛ս 130 և 132 ծանոթագրությունները):

Այստեղ մանրամասն չենք անդրադառնա Հայաստանյայց եկեղեցու հասցեին Սյունիի արած մյուս թերուս հայտարարու-

---

130 Տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի». – *Կոոնգկ Հայոց աշխարհին*, 1863, հմր. Գ, էջ 196:

131 Նույն տեղում:

132 Տե՛ս Петрос ди Саргис Гиланенц. Дневник осады Испагани афганами (`1722-1723). Перевод и объяснения К. Патканова. Санкт-Петербург, 1870, с. XXIII. հմմտ. Ա. Յովհաննիսեան. *Պետրոս դի Սարգիս Գիլանէնց*. Ս. Էջմիածին, 1916. էջ 12. տե՛ս նաեւ *The Chronicle of Petros di Sarkis Gilanentz*. Translated from the original Armenian and annotated by Caro Owen Minasian. With an Introduction and additional Notes by Laurence Lockhart. Lisbon, 1959, pp. X-XII:

133 Տե՛ս «Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանէնցի», § 104. – *Կոոնգկ Հայոց աշխարհին*, 1863, հմր. Գ, էջ 196:

թյանը, այն է՝ թե «նրանց կրոնը խառնված էր նախապաշարմունքի և հնթանոսական պրակտիկայի փոխառությունների հետ, իսկ նրանց եկեղեցին տիրահռչակորեն այլասերված էր...»: Այս նախադասությունը գրված է ընթերցողի մոտ հայերի ու, մասնավորապես, Հայ եկեղեցու մասին գեչ տպավորություն առաջացնելու համար: Մյուս տպավորությունն էլ այն է, որ Սյունին համեմատել է Հայ եկեղեցին մյուսների հետ և եկել այն եզրակացության, որ ոչ-հայկական եկեղեցիները ազատ են առավել առաջադեմ ու նախապաշարմունքներից ազատված: Այս առթիվ իրոք կարելի է բազմաթիվ զուգահեռներ անցկացնել: Այսպես՝ Հայ եկեղեցին վհուկների որսով երբեք չի զբաղվել, մարդկանց՝ գիտությամբ զբաղվելու կամ նմանատիպ այլ «հանցանքների» համար խարույկի վրա երբեք չի ողջակիզել, իսկ ահա, օրինակ, աշխարհածավալ կաթոլիկ եկեղեցու ինկվիզիցիան հրաշատության (autodafé) է մատնել տասնյակ հազարավոր մարդկանց, 1481-1808 թթ. միայն Իսպանիայում՝ ողջակիզվել է 35,000 մարդ (վերջին հրաշատությունն արձանագրվել է 1826 թ., Վալենսիայում)[134]:

Թուլլ տանք, որ զուգահեռների շարքը շարունակի 1230-ական թթ. կիլիկյան Հայաստան այցելած մի օտարական՝ դոմինիկյան կրոնավոր Բրոքարդ Սթրազբուրգցին, որն անկեղծորեն գրել է Հայոց եկեղեցու ու նրա կաթողիկոսների մասին իր տպավորությունները.

> Հայոց [հոգևոր] առաջնորդներուն գլուխը կկոչվի կաթողիկոս: Անոր քով մնացի տասնևչորս օր, ան իր մոտ ունի արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, վանահայրեր և ուրիշ եկեղեցականներ: Ան իր սնունդովն, զգեստներովն և կենցաղովն այնքան օրինակելի է, որ անոր նման ոչ մին տեսած եմ, ըլլայ կրոնական ըլլայ աշխարհական, և ստույգ կերպով կհայտարարեմ, թե՝ իմ կարծիքովս իր հագած զգեստները հինգ սահրլին չիլին արժեք չունին: Սակայն ան ունի շատ

134 Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1980, հ. 6, էջ 614:

Հաստատուն դղյակներ և մեծ եկամուտներ, և հարուստ է որևէ հասարակ մարդե ավելի: Ան կը հագնի ոչխարի կարմիր մորթե կոշտ մուշտակ մը, շատ մաշած և տգեղ և լայն թևերով, և անոր տակեն շատ հինցած գորշ պարեգոտ մը, և գրեթե մաշած: Բայց աստ ան կհագնի սև փորուրար մը, և աժան տեսակեն հաստ սև կրկնոց մը... Բոլոր վանականները մեծապես հարգելի են և ի պատվի...

...վանականներուն ես ալ հարցումներ ըրի, որոնք կպատասխանեին հեղինակութեյամբ, իբր Հովհաննես Ոսկեբերան, Գրիգոր Նազիանզացի և Կյուրեղ Աղեքսանդրացի: Կղերական և աշխարհական խիստ բարեպաշտ են եկեղեցիին մեջ, և հոն ուրիշ բան չեն ըներ, բայց միայն կաղոթեն կամ կերգեն կամ ուրիշ ինչ որ պետք էր ընել հոն: Ջտեսա որևէ մեկը, որ ծիծաղեր կամ անպատշաճ վարմունք ուններ եկեղեցիին մեջ (հավանաբար՝ Բրոքարդը Եվրոպայում նման բաների է ականատես եղել՝ Ա. Ա.):

Պատարագի պաշտամունքը բարեպաշտորեն կկատարվի իրենց եկեղեցիին մեջ:

...Այդ երկրին մեջ տեսած եմ ուրիշ օրինակելի սովորութեյուններ՝ աշխարհականներու, կղերիկոսներու և վանականներու միջև, որ կկարծեմ թե հազվագյուտ պիտի ըլլար մեր երկրին մեջ գտնելու[135]*:*

Հիշենք նաև 17–18 դարերի մի քանի լուսավորիչ և չինաբար կաթողիկոսների անունները. Մովսես Գ. Տաթևացի (1629–1632), Փիլիպպոս Ա. Աղբակեցի (1632–1655), Հակոբ Դ. Ջուղայեցի (1655–1680), Աղեքսանդր Ա. Ջուղայեցի (1705–1715), Աստվածատուր Ա. Համադանցի (1715–1725), Սիմեոն Ա. Երևանցի (1763–1780). վերջինս, ի դեպ, հաղթահարելով բազմաթիվ դժվարութեյուններ, էջմիածնում հիմնեց տպարան (1771 թ.) և թղթի գործարան (1776 թ.), և այլն, և այլն: Հայաստանի անկախութեյան կորստից հետո հայ եկեղեցուն էր վիճակվել ա-

---

135 **Մկրտիչ եպս. Աղավնունի**, Կիլիկիո հայ արքունիքին և հայ եկեղեցականութեյան մասին ԺԳ դարուն օտար ճանապարհորդի մը տեղեկութեյունները. – *Սիոն* (1933, հունիս), էջ 179–182:

ռաջնորդել ազգը աննկարագրելիորեն բարդ պատմական ժամանակաշրջանում և, պետք է ասել, որ եկեղեցին, երբեմն՝ ավելի, երբեմն էլ պակաս հաջողությամբ, ստանձնել ու կատարել է այդ առաքելությունը:

Այսուհանդերձ՝ առավել մանրամասն մեկնաբանությունները թողնում ենք մեր այսօրվա եկեղեցական գործիչներին. եթե պատասխանը շատ ուշանա, ապա պետք է մտածենք, որ Սյունին պատմության իր աղքատիմացության պատճառով մեր եկեղեցու փայլուն դեմքերին պարզապես չփոթել է 20-րդ դարի վերջին իր հանդիպած հայ եկեղեցական որոշ գործիչների հետ: Հետաքրքիր է, համամիտ էր արդյո՞ք Սյունիի՝ Հայոց եկեղեցուն տված վերոհիշյալ գնահատականների հետ մեր բարձրաստիճան կղերը, երբ նրան հրավիրեց 1996 թ. մայիսին մասնակցելու Փարիզում կայացած՝ հայ եկեղեցական բարձրագույն մակարդակի մի խորհրդակցության:

6. Վերջին նկատողությունը Հովսեփ Էմինի և նրա տեղեկությունների կապակցությամբ: Սյունին Էմինին բնութագրում է իբրև «արկածախնդիր» (adventurer)[136]: Անգլերենում այս բառն ունի միայն բացասական իմաստներ և ենթիմաստներ և վերաբերում է շահադիտական նկատառումներով արկածախնդրության մեջ մտնող մարդկանց[137]: Մինչդեռ Էմինը, բոլոր առումներով, կատարյալ հայրենասերի տիպար էր. նա իր անձնական շահն և անվտանգությունը բազմիցս է զոհաբերել իր նպատակադրած սուրբ գործին՝ Հայաստանը օտար տիրապետությունից ազատագրելուն: Սակայն Էմինը հայոց

---

136 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 55. հմմտ. Suny, "Nation-making, Nation-breaking," *op. cit*, p. 4.

137 Տե՛ս, օրինակ, անգլերեն լավագույն բառարաններից մեկը՝ *Merriam-Webster's Collegiate Dictionary* -h (Tenth ed., 1993, p. 17): "adventurer is **1**. one that adventures: as **a**: SOLDIER OF FORTUNE ("one who follows military career wherever there is promise of profit, adventure, or pleasure", *նույն տեղում*, p. 1118); **b**: one that engages in risky commercial enterprises for profit; **2**. one who seeks unmerited wealth or position esp. by playing on the credulity or prejudices of others."

նվիրյալ միակ ազատամարտիկը չէ, ում Սյունին փորձել է վարկաբեկել: Բոլորովին վերջերս Փրինստոնի համալսարանում կարդացած իր մի դասախոսության մեջ Սյունին պատմականորեն սխալ և վիրավորական բնորոշում էր տվել 19-րդ դարի վերջի հայ ազատագրական շարժման սիրված գործիչներին ևս, ահավասիկ. «Սոցիալական բանդիտներն ու ավազակները, ինչպիսիք էին, օրինակ, Ավոն Վանի կողմերում կամ Արաբոն և Միխոն Տարոնի կողմերում՝ դարձան ապստամբներ և ազատամարտիկներ» (Social bandits and brigands, like Avo near Van or Arabo and Micho near Taron, became rebels and freedom-fighters)[138]:

Այսպիսով, բազմիցս համոզվեցինք, թե ինչ արժեք, գին ու «խորութիւն» ունի հայոց վաղ նորագույն պատմութեյան Սյունիի, իր իսկ խոսքերով՝ «ավելի մոտից» կատարած «քննութեյունը»:

9. Հայոց ցեղասպանության սյունիական մեկնությունը

Հայոց ցեղասպանութեյան ուսումնասիրութեյունն ԱՄՆում ունի երկու թև. առաջինը սփյուռքահայ և օտարերկրացի այն ճանաչված պատմաբաններն են, որոնք ամենայն անաչառութեյամբ քննում են հայ ժողովրդի այս մեծագույն ողբերգութեյան միջազգային, սոցիալական և բազմազան այլ դրդապատճառներն ու կողմերը (ուշագրավ են հատկապես Վահագն Տատրյանի կոթողային աշխատութեյունները), երկրորդը՝ թուր-

---

138 Տե՛ս **Ronald Suny**, "Nation-making, Nation-breaking," *op. cit.*, p. 9. Ի դեպ, հայ ժողովրդի սիրված զավակներին անվանարկելիս, Սյունին հղում է, առանց, սակայն, էջը նշելու՝ Ժիրայր Լիպարիտյանի դոկտորական ավարտաճառը, որը ձեռքի տակ չունենք. - տե՛ս **Gerard Libaridian**, *The Ideology of Armenian Liberation. The Development of Armenian Political Movement Before the Revolutionary Movement (1639-1885)* (Ph.D. dissertation in history, University of California, Los Angeles, 1987).

քիայի կողմից ֆինանսավորվող կեղծարարներն են, որոնք ուղղակի կամ անուղղակի ժխտում են ցեղասպանության փաստը (այս թևին են հարում կամ «չեզոք» դիրք բռնում հակառուսական-թուրքամետ ավանդական դիրքորոշումներ ունեցող ամերիկացի քաղաքագետներից շատերը): Սա հայապիտության միակ ասպարեզն է, որ գտնվում է ամերիկահայ համայնքի սևեռուն հայացքի տակ. այստեղ կեղծարարները սովորաբար հակահարված են ստանում, ընդ որում՝ նաև ոչ-հայ անկաշառ պիտնականների կողմից: Սակայն, ամերիկյան ակադեմիական ասպարեզում (էլ չասած հասարական-քաղաքական շրջանակների մասին) դեռևս շատ աննկիք կա Թուրքիայի հետ բազմաթիվ թելերով կապված կեղծարար թևի դիմադրությունը հաղթահարելու համար[139]*:*

Ինչպե՞ս է Սյունին դնահատել հայոց ցեղասպանության հարցերը: Անմիջապես ասենք, որ ցեղասպանության փաստը նա չի ժխտել, սակայն այնպես է կեղծել ցեղասպանության պատմական ամբողջ ետնախորքը, որ հարց է առաջանում՝ արդյոք սա կեղծարարության մեկ այլ, գուցե և ավելի վտանգավոր նոր տարբերակ չէ՞.

---

139 Հայկական ցեղասպանությունը ժխտողների ակտիվ գործունեության և Թուրքիայի հետ ոչ-ակադեմիական կապերի մասին տե՛ս **Roger W. Smith, Eric Markusen, and Robert Jay Lifton**, "Professional Ethics and the Denial of the Armenian Genocide," *Holocaust and Genocide Studies* Vol. 9 (Spring 1995, 1), pp. 1-22; **R. P. Adalian**, "The Ramifications in the United States of the 1995 French Court Decision on the Denial of the Armenian Genocide and Princeton University," *Revue du monde arménien moderne et contemporain* 3 (1997), pp. 99-122; **Robert Fisk**, "US academics join rush to deny Turkish massacres of Armenians: Slaughter viewed as accident of First World War," *The Independent* (London), Monday, 2 June 1997. Թուրքական պետության ԱՄՆ պատմագիտական հաստատությունների հետ մշակած կապերի մասին տե՛ս հետևյալ աշխատության երրորդ գլուխը՝ **Speros Vryonis, Jr.**, *The Turkish State and History: Clio Meets the Grey Wolf* (Institute for Balkan Studies, Thessalonike: Aristide D. Caratzas, Publisher, New Rochelle, New York, 1993). 2nd ed., pp. 79-118.

ա) ժողովրդագրության կեղծում. *օգտագործել է միայն պատմության հայտնի ուսիզիոնիստ, թուրքոֆիլ Ջուստին Մըքքարթիի կեղծած ժողովրդագրական տվյալները, թեև իր զարմանս հենց իրեն, սպրդել է՝ Մաքքարթին «կողմնակից է Հայոց ցեղասպանության թուրքական ժխտմանը»* (a demographer sympathetic to Turkish denial of the Genocide)[140]:

Ահա այն հիմնական ժողովրդագրական «փաստը», որ Սյունին երկի՛ցս հրամցնում է ընթերցողին.

> *«1912 թ. ոչ-մահմեդականները կազմում էին Անատոլիայի բնակչության ընդամենը 17%-ը»*[141]:

Ստացվում է, որ, եթե այս 17%-ից հանենք հույներին, ասորիներին, վրացիներին և մյուս ոչ-մահմեդականներին, ապա հայերը պետք է կազմեն ավելի ցածր տոկոս, թե որքա՞ն՝ հենց այստեղ էլ Սյունին գերադասում է խորհրդավոր քղամիդի տակ լռել: Սրանով, փաստորեն, հայերին ասվում է հետևյալը. Այո, ցեղասպանություն եղել է, սակայն, նախ՝ այն եղել է ո՛չ թե ինչ-որ մտացածին Հայաստանում, այլ Թուրքիայի անբաժանելի մաս կազմող Անատոլիայում. և երկրորդ՝ դուք, հայերդ, այդ տարածքներում այնքան չնչին տոկոս եք կազմել, որ, անկախ ցեղասպանության փաստից, Թուրքիային տարածքային որևէ պահանջ ներկայացնելու իրավունք ո՛չ այն ժամանակ կարող էիք ունենալ, ո՛չ էլ՝ հիմա:

Իսկ ո՞րն է պատմական իրականությունը: Նախ՝ Հայոց ցեղասպանությունը մեկնաբանելիս, Անատոլիա եզրի օգտագործումը բոլորովին չեղում է ընթերցողին, որովհետև հայերը ինքնավարություն և անկախություն էին պահանջում ո՛չ թե Անատոլիայի, այլ Արևմտյան Հայաստանի վնց՝ պատմականորեն հայկական վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքիրի, Էրզրումի և Սիվասի տարածքներում: Սյունին դարձյալ անտեսել է այս հարցի մասին գոյություն ունեցող

---

140 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 217.

141 Նույն տեղում, pp. 107, 217.

պատմագիտական այն աշխատութիւնները, որոնց համաձայն 1912 թ. դրութեամբ հիշեալ վեց վիլայեթներում հայերը կազմել են միջին հաշվով ողջ բնակչութեան առնվազն 36-41%-ը, ինչը նրանց դարձնում էր հարաբերական մեծամասնութիւն առանձին-առանձին վերցրած մյուս բոլոր էթնիկ խմբերի համեմատութեամբ *(մինչդեռ Վասպուրականում, հայերի թիվը 60 %-ից ավելին էր)*[142]: *Ընդ որում, 1912 թ. տվյալները որպես Արևմտյան Հայաստանի նախացեղասպանական շրջանի ժողովրդագրական հաշվարկ ընդունել չի կարելի, քանի որ հայոց ցեղասպանութեան առաջին խոշոր փուլի ընթացքում՝ 1890-ական թթ., ոչնչացվել, բռնի մահմեդականացվել և երկրից դուրս էին մղվել հարյուր հազարավոր հայեր: Այդպիսով՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմ նրանց թիվն արդեն իսկ մեծապես նվազեցվել էր: Ավելին՝ թուրքական պաշտոնական մարդահամարների տվյալները ևս չի կարելի ընդունել իբրև Արևմտյան Հայաստանի պատմական ժողովրդագրութիւնը բացահայտող արժանահավատ աղբյուր, ինչպես անում են արևմտյան թուրքամետ հեղինակները: Ինչպես ժամանակին խոստովանել է թուրք բարձրաստիճան մի պաշտոնյա, դեռևս Սուլթան Աբդուլ-Համիդն էր հատուկ հրահանգ իջեցրել մարդահամար անցկացնողներին՝ «դիտավորյալ (kasden) պակաս ցույց տալ հայերի թվաքանակը» և «մենք պակասեցրեցինք հայկական բնակչութեան թվերը, որպեսզի ձևացնենք, թե հայերը գոյութեան չունեն»: Մեկ այլ*

---

142 Տե՛ս, օրինակ, Е. К. Саркисян, "Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении", в Страны и Народы Ближнего и Среднего Востока, Т. V. Турция. Ереван: АН Арм. ССР, 1970, сс. 357-380; **Richard Hovanissian**, *Armenia on the Road to Independence* (Berkley, Calif.: 1967), p. 37; **Levon Marashlian**, *Politics and Demography: Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire (Cambridge, Mass.: - Zorian Institute, 1991)*; Հ. Հ. Գալստյան. Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը ըստ Վիտալ Քինեի վիճակագրության. – *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*. XII: Թուրքիա: Երևան, ԳԱՀ, 1985, էջ 59-79:

էջում էլ նույն հեղինակը ընդունում է, որ «թուրքական տարրը քանակային փոքրամասնություն էր այն նահանգներում, որոնք բնակեցված էին հայերով և քրդերով»[143]*:*

Մեկ այլ առիթով Սյունին դարձյալ «նրբորեն» փորձում է մեղմել թուրքերի ոճիրը՝ մեկ անգամ ևս շեշտելով՝ թե «Անատոլիայում» պատմականորեն ավելի վաղ ապրած լինելու միակ փաստարկն ուննենալով,

> *19-րդ դարի վերջին հայ ազգայնականները հայտարարեցին իրենց այդ իրավունքը [իմա՝ «Անատոլիան հռչակել իբրև հայրենիք»*[144]*], իսկ թուրք ազգայնականները պատասխանեցին դրան:*
>
> [Armenian nationalists made such a claim in the late nineteenth century, and Turkish nationalists responded][145]

Սյունիի ասածը պարզ է՝ հակամարտությունը հրահրել են հայ ազգայնականները, որոնք անհիմն կերպով ուզեցել են տիրանալ թուրքական Անատոլիային: Իսկ թուրք ազգայնականներն ընդամենը «պատասխանել են»: Զափազանց պարզունակ ու նույնքան թափանցիկ շուտասելուկ: Ըստ նրա՝ հայ և թուրք ազգայնականները «կռիվ-կռիվ» են խաղացել: Իսկ երկրի իսկական տերը՝ հայ ժողովուրդն ի՞նչ էր անում:

Սյունին Փրինսթոնի համալսարանում կարդացած իր դասախոսության մեջ ասում է, թե 1915-1918 թթ. ընթացքում Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թիվը «ըստ պահպանողա-

---

143 **Seyh Muhsin Sani [Hüseyin Kâzim Kadri]**, *10 Temmuz Inkilabi ve Netayici* [Հուլիսի 10-ի հեղափոխությունը և նրա հետևանքները], Ստամբուլ, «Օրհանիյե», 1336 [1920], էջ 116, 121, 123. բնագիրն օսմաներեն է. - Հղումը տե՛ս **Vahakn N. Dadrian**, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics, op. cit.*, pp. 294, 308 (notes 45, 46). Այս հոդվածում Տատրյանը թվերով փաստում է Ջ. Մըքքարտիի, ինչպես և վերջինիս համար աղբյուր ծառայած Էսաթ Ուրասի, կանխամտածված կեղծարարությունը:

144 Տե՛ս **Suny**, "Nation-making, Nation-breaking," *op. cit.*, p. 3.

145 Նույն տեղում:

կան հաշվարկների (ուրիշ հաշվարկներ չի հիշատակում – Ա. Ա.)՝ 600,000-ից մինչև 1,000000-ի միջև է»[146], *իր Հայացք դեպի Արարատ-ի մեջ մի տեղ կարդում ենք, որ 1915-1916 թթ. զոհվել է «մի քանի հարյուր հազարից մինչև 1,500000 հայ», իսկ մի ուրիշ էջի մեջ Սյունին խոսում է 1915-1922 թթ. զոհված 600,000-ից մինչև մոտավորապես 1,500000 հայերի մասին*[147]*: Նույն 1993 թ. լույս տեսած իր մյուս գրքում նշված է, թե 1915-1922 թթ. հայերի կորուստները գնահատվում են «600,000-ից մինչև 2,500000»*[148]*: Ի՞նչ է սա, եթե ոչ դասական օպորտունիզմ, երբ նույն հեղինակը նշում է իրարից շատ հեռու կամ առաձգական թվեր, տարբեր լսարանների համար ասում է տարբեր բաներ, արդյունքում միայն թերահավատություն սերմանելով Հայոց Եղեռնի զոհերի մեկուկես միլիոնից անցնող թվի նկատմամբ:*

բ) Հայոց ցեղասպանության հարցում թուրքական կեղծարարությանը Սյունիի արած հաջորդ զիջումը ևս նշանակալի է, ահավասիկ.

> *Միայն 1915 թվին՝ կայսրության անխուսափելի կործանման կոնտեքստում էր, երբ ռուսները սպառնում էին Արևելքին, իսկ ավստրալացիներն ու բրիտանացիները ափ էին իջել Գալիպոլիում, որ Օսմանյան կառավարությունը որոշեց լուծել Հայկական հարցը ռադիկալ կերպով:* ...Հայոց ցեղասպանությունն ավելի վրեժխնդրությունից և խուճապահարությունից դրդված ճնշման գործողություն էր, քան թե վաղուց ծրագրված և վերևից մանրակրկիտ կերպով կառավարված ոչնչացման ծրագիր... *(ընդգծումն իմն է՝ Ա. Ա., ահա ընդգծածիս անգլերեն բնագիրը* -- "Rather than a long-planned and carefully orchestrated program of extermination, the

---

146 Տե՛ս **Suny**, "Nation-making, Nation-breaking," *op. cit.*, p. 16.

147 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 114, 217.

148 **Suny**, *The Revenge of the Past, op. cit.*, p. 74.

Armenian Genocide was more a vengeful and panicky act of suppression")[149]:

Ինչպես տեսնում ենք, Սյունին պնդում է, որ 1915 թ. եղեռնը. ա) նախապես ծրագրված չէր, բ) «վերևից մանրակրկիտ կերպով կառավարված ոչնչացման ծրագիր» չէր, այլ՝ գ) հայերին ոչնչացնելու՝ երիտթուրքերի վճիռն ընդունվել է պատերազմական իրավիճակից բխող քաղաքական և հոգեբանական ճնշումների ներքո[150]: Ինչպես ասացինք, ցեղասպանության փաստը Սյունին չի ժխտում, սակայն բերված երեք սխալ թեզն էլ վերցված են թուրքական քարոզչության պինանոցից[151]: Հենց դրանով իսկ Սյունին արդեն զգալիորեն աջակցում է և «ջուր լցնում» Հայոց ցեղասպանությունը ժխտողների ջրաղացին: Վերը բերածի վերջին հատվածն առել էինք 1996 թ. մայիսին Փրինսթոնում Սյունիի կարդացած զեկույցից (նույնը նրա գրքում շարադրված է ավելի երկարաբան[152]), այնինչ 1995 թ. Ա.Մ.Ն-ում լույս է տեսել Հայոց ցեղասպանության հարցերի առաջատար մասնագետ Վահագն Տատրյանի հիմնարար աշխատությունը, որտեղ վերլուծված են նշված թուրքական կեղծիքների ճիշտ հակառակը հաստատող՝ թուրքական, գերմանական, ավստրիական, անգլիական և այլ դիվաններից քաղված՝ քանակով ու որակով ջախջախիչ փաստացի նյութեր: Սակայն, դարձյալ թույլ տալով գիտական էթիկայի կոպիտ խախտում, Սյունին անտեսել է Տատրյանի ինչպես այս գիրքը, նույնպես

---

149 **Suny**, "Nation-making, Nation-breaking," *op. cit.*, p. 16.

150 Համմտ. նույն տեղում, էջ 10-11, 16, 18:

151 Օրինակ, հայտնի կեղծարար Ստանֆորդ Շոուն գրում է. «Այդ ժամանակվա Օսմանյան կառավարության խորհրդի գաղտնի արձանագրությունների ուշադիր ուսումնասիրությունը չի ցույց տալիս որևէ փաստ, որ իթթիհադական ղեկավարներից որևէ մեկը կամ որևէ ուրիշը կենտրոնական կառավարության միջից հրամայել է կոտորածներ ձեռնարկել» **Stanford J. Shaw and Ezel Kural Shaw**, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, Vol. 2 (Cambridge: Cambridge University Press, 1977), p. 316.

152 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, pp. 94-115.

և նրա ու այլոց՝ ճշմարիտ իրականությունը ներկայացնող բազմաթիվ այլ ուսումնասիրություններ[153]*:*

Բացի այս, Սյունին 1890-ականների հայոց ջարդերը ցեղասպանություն չի համարում[154]*, այլև՝ ժխտում է հայտնի պատմական այն ճշմարտությունը, որ երիտթուրքերի 1915 թ-ին կազմակերպած Հայոց մեծ եղեռնը Աբդուլ Համիդի վարած հայասպան ու հայաջինջ քաղաքականության շարունակությունն էր, նրա վերջնական մահասարսուռ արդյունքը: Ավելին, ահա թե ինչպես է Սյունին խոսում, օրինակ, Սասունի 1894 թ. ջարդերի մասին.*

1894 թ. Սասունում հայերի և քրդերի միջև տեղի ունեցած բախումները հանգեցրին պետական զորքերի միջամտությանը և հարյուրավոր հայերի սպանությանը: Ավելի ուշ հայերն այս բռնությունն ընկալեցին իբրև առաջին փուլ ջարդերի այն շարքի, որ ավարտվեց 1915 թ. ցեղասպանությամբ: Բայց (sic՝ Ա. Ա.), 1894-1896 թթ. արևելյան Անատոլիայում կատարված ջարդերը կարելի է դիտել իբրև սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կողմից միջէթնիկական հարաբերությունների հին հավասարակշռությունը վերականգնելու փորձ:

[In 1894 clashes between Kurds and Armenians in Sassun led to the intervention of state troops and the killing of hundreds of

---

153 Տե՛ս **Vahakn N. Dadrian**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucausus, op. cit.*, հատկապես էջ 219-247, ուր հանգամանալիորեն ներկայացված է ցեղասպանության նախնական մանրակրկիտ ծրագրավորումը և իրականացումը թուրքական կառավարության կողմից: Տե՛ս նաև **Vahakn N. Dadrian**, "The Secret Young-Turk Ittihaddist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians," *Journal of Political and Military Sociology*, Vol. 22 No. 1, Summer 1994, pp. 173-202.

154 Արևմտյան պատմաբանների այս սխալ մոտեցումների մասին տե՛ս **Մ. Գ. Ներսիսյան.** Արևմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանության պատմության մի քանի հարցերի շուրջը. - *Պատմա-բանասիրական հանդես* No. 2:142 (1995), էջ 11-20:

> Armenians. This violence would later be read by Armenians as the first stage of a series of massacres that would culminate in the genocide of 1915. But the massacres in eastern Anatolia can be seen as part of an effort by the Sultan Abdul Hamid II to restore an old equilibrium in interethnic relations...][155]

Այսպիսով, ըստ Սյունիի՝ թուրքական զորքերը սոսկ «միջամտել էին» հայ-քրդական բախումներին, ասել է թե՝ հանդես էին եկել գրեթե ՄԱԿ-ի զորքերին հատուկ «խաղաղարարական» առաքելությամբ: Սասունի կոտորածի այստեսակ մեկնաբանությունն առնվազն վրդովեցուցիչ է, քանզի, օրինակ, հե՛նց Տատրյանի վերոհիշյալ դիրքն այդ դեպքերին նվիրել էր մի ամբողջ գլուխ, որում, դիվանական փաստաթղթերի հիման վրա, ապացուցված է, որ Սասունի ջարդերի ուղղակի կազմակերպիչը թուրքական կառավարությունն էր, իսկ կռիվներին ամենասկզբից և անմիջականորեն մասնակցել են քրդական տարազ հագած թուրքական կանոնավոր զորամասերը[156]:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության սյունիական մեկնաբանությունը կարելի է որակել իբրև գիտական օպորտունիզմի դասական օրինակ, իսկ ցեղասպանության փաստի նրա ձևական ճանաչումը՝ լոկ սփյուռքահայ զանգվածների աչքին թոզ փչելու մի միջոց՝ «անաչառ գիտնականի» վարկը պահպանելու և հայոց պատմության խեղաթյուրումը մյուս բոլոր ասպարեզներում անարգել առաջ տանելու համար:

Պետք է ասել, որ ԱՄՆ-ում էս նկատել են հայոց ցեղասպանության Սյունիի մեկնաբանությունները: 1986 թ. Ռուբեն Ադալյանը, գրախոսելով Սյունիի «Հայաստանը քսաներորդ դարում» գիրքը, իմիջիայլոց, գրել էր.

> *Սյունին կոտորածը ցեղասպանությունից չի տարբերում: Նա վերաբերվում է Հայկական եղեռնին որպես մի կոտորածի, որը [սովորականից] ավելի մեծ թվով զոհեր խլեց: Որևէ*

---

155 **Suny**, "Nation-making, Nation-breaking," *op. cit.*, p. 10.

156 Տե՛ս **Vahakn N. Dadrian**, *The History of the Armenian Genocide*, pp. 114-116.

կերպ չեն նշված նրա (իմա՝ Հայկական ցեղասպանության - Ա.Ա.] գաղափարաբանական արմատները թուրքական ազգայնականության մեջ: Նրա դիտավորությունն անտեսված է: Նրա վերջնականությունն ու ամբողջականությունը՝ չրջանցված: Նրա ողբերգությունը՝ հասարակացված: ...Պնդել, թե «թուրքական գործողությունները հայերի դեմ ձեռնարկվել էին հուսահատության ու խուճապահարության մեջ» (էջ 18) նշանակում է նսեմացնել ցեղասպանություն իրականացնողների մեղքը, պատասխանատվությունը և անմարդկայնությունը: Ավելին՝ այդպիսի հայտարարությունը սխալ է: ...մինչդեռ փաստերը այնքան պարզ ցույց են տալիս գործողությունների մի շատ հստակ ծրագիր, որ արդյունավետորեն իրագործվեց ու չդադարեցվեց մինչև որ լիակատար գործադրումն ապահովված էր: ...Ես դնահատում եմ Հայկական ցեղասպանության Սյունիի վերլուծությունը վրդովեցնելու չափ ծանծաղ:

[Suny does not differentiate between massacre and genocide. He treats the Armenian holocaust as a massacre with a larger number of victims. Its ideological roots in Turkish nationalism are never mentioned. Its deliberateness is ignored. Its finality overlooked. Its tragedy trivialized....To contend that "Turkish actions against the Armenians were taken in dispersion and panic" (p. 8) is to minimize the guilt, responsibility, and inhumanity of the perpetrators of the genocide. Besides, the statement is false...the facts so evidently show a very clear plan of action, executed with efficiency and not halted until fully implemented... I found Suny's analysis of the genocide of the Armenians disturbingly shallow.][157]

Հատկանշական է, որ Ադալյանի սույն քննադատությունն ամերիկյան «Հայագիտության» կողմից անուշադրության է մատնվել և անտեսվել, մնալով ընդամենը «ձայն բարբառոյ յանապատի»: Իսկ ամերիկահայ հասարակական

---

157 **Rouben Adalian**'s review of Ronald Grigor Suny, *Armenia in the Twentieth Century*. Chico, Calif.: Scholars Press, 1983. - in *Journal of the Society for Armenian Studies* Volume 2 1985-1986, pp. 217-222.

չրջանակներն ու կազմակերպություններն անգիտաբար շարունակել ու դեռ շարունակում են Սյունիի մեծարումն ու մեկենասությունը[158]*:*

10. Նախիջևանի և Շուշիի հայաթափության մեկնաբանությունները

Սյունին գրում է. «Շուշի քաղաքը, որ նախկինում հայոց մշակույթի կենտրոն էր, դարձավ գրեթե ամբողջովին ադրբեջանաբնակ»[159]*: Սակայն, «մոռանում է» պարզաբանելու ամենակարևորը, այն՝ թե ինչպե՞ս Շուշին հայաթափվեց. գրքում ո՛չ մի խոսք չկա 1920 թ. մարտին մուսավաթականների կազմակերպած հայկական թաղամասերի հրդեհման և կոտորածի մասին: Սրանով Սյունին շատ նրբանկատորեն ընթերցողին մղում է եզրակացնելու, որ Շուշիի հայաթափությունը եղել է մի ինչ-որ բնական, սահուն և անարյուն ճանապարհով:*

Նույն էջում անդրադառնալով Նախիջևանի ժողովրդագրությանը, առանց մանրամասնելու գրում է. «Ի տարբերություն Ղարաբաղի, Նախիջևանը շատ մեծ գերակշռությամբ ադրբեջանաբնակ էր» (Unlike Karabakh, Nakhichevan was very largely Azerbaijani in population)[160]*: Մի այլ էջում էլ գրում է, թե 1926 թ. Նախիջևանում հայերը կազմում էին բնակչու-*

---

158 Նշենք ժամանակագրորեն ամենավերջին դեպքը միայն՝ 1998 թ. սեպտեմբերի 17-ին Կոլումբիայի համալսարանի Հայկական կենտրոնը նախաձեռնել. ու հովանավորել էր Սյունիի դասախոսությունը Դեյվիսի անվ. լսարանում, որտեղ վերջինս քննադատում էր Ռ. Քոչարյանի վճռական դիրքորոշումը Ղարաբաղի, հայոց ցեղասպանության և Թուրքիայի հետ հարաբերությունների հարցերում, որակելով Հայաստանի կառավարությունը իբրև կարծրամիտ ու ազգայնական (hard-line and nationalistic). - տե՛ս **Prof. Michael Haratunian**, "Suny Predicts Trouble for Armenia," *Columbia University Armenian Center, Press Release - Event Report*, September 25, 1998.

159 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 195.

160 Նույն տեղում, p. 195.

թյան ընդամենը 15%-ը[161]: Կարծում ենք, ավելորդ էասելը, թե ինչու՞ է «Հայաստան» արձանագրում 1926, այլ ո՛չ, ասենք, 1916 թվականի դրությունը՝ երբ հայերը Նախիջևանի բնակչության 40%-ն էին[162]: Նախիջևանում ադրբեջանցիների «շատ մեծ գերակշռության» մասին խոսք լինել չի կարող նաև այն պատճառով, որ բնակչության մնացած 60%-ը կազմում էին ոչ թե «ադրբեջանցիները»՝ մի էթնոս, որ գոյացել է 1920-ականներից մինչև 1960-ականները ընկած ժամանակահատվածի ընթացքում, այլ չիա և սուննի թուրքախոս մահմեդականները, քրդերը, ասորիները և ռուսները: Ուստի՝ Նախիջևանի ադրբեջանական մեծամասնության մասին Սյունիի արած հայտարարությունը սխալ ու անհեթեթ է:

Փոխանակ նշելու այն հայտնի ճշմարտությունը, որ Նախիջևանից հայերը դուրս մղվեցին Բաքվի կառավարության ծրագրված քաղաքականության (մասնավորապես՝ իրենց տները վերադառնալու նախիջևանահայերի առջև դրված պաշտոնական արգելքի, տնտեսական ու ազգային հետևողական ճնշումների) հետևանքով[163], Սյունին գրում է, թե Նախիջևանի հայաթափությունն արդյունք էր ադրբեջանցիների «ներգաղթի և ավելի բարձր ծնելիության»[164]: Ինչ խոսք, սա պատկանում է ընդամենը թուրք-ադրբեջանական կեղծիքների շարքին:

Միաժամանակ, Սյունին չի վարանում հայերին կշտամբելու՝ Ադրբեջանի հակահայկական քաղաքականության նկատմամբ նրանց տածած անվստահության համար: Ահավասիկ.

---

161 Նույն տեղում, p. 188.

162 "Кавказский календарь на 1917 г.", с. 214-221; **Christopher J. Walker**, ed., *Armenia and Karabakh, op. cit.*, pp. 64-65.

163 Այս մասին մանրամասն տե՛ս, օրինակ, Владимир Ходжабекян, Баграт Асатрян, "Из истории армянского населения Нахичевана", Вестник общественных наук АН Арм. ССР, 1988, No. 6, сс. 18-27.

164 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 188.

«Համոզված լինելով, որ իրենք մահմեդականներից ավելի բարձր մշակութային մակարդակ ունեն, [Ղարաբաղի] հայերը իրենց հեռու էին պահում ադրբեջանական քաղաքականությունից».

«Բազմաթիվ հայեր այն կարծիքի են, որ ադրբեջանցիները պրիմիտիվ և վայրենի ժողովուրդ են, որոնք հազիվ թե քաղաքակրթվել են խորհրդային [իշխանության] շրջանում».

«Թեև նրանք (իմա՝ ղարաբաղցի հայերը -- Ա. Ա.) ավելի լավ էին ապրում, քան հարևան շրջաններում ապրող ադրբեջանցիները, հայերը տեսնում էին, որ իրենց կենսամակարդակը այնքան բարձր չէ, որքան Հայկական հանրապետությունում ապրող հայերինը».

«Ղարաբաղցի հայերը, թշնամաբար տրամադրված լինելով ադրբեջանցիների դեմ, որոնց նրանք մեղադրում էին իրենց սոցիալական և մշակութային անբավարարվածությունների համար, նախընտրում էին սովորել ռուսերեն և ոչ թե ադրբեջաներեն».

«[Հայաստանից դուրս եկած] ադրբեջանցի գաղթականները շարժվեցին դեպի Ղարաբաղ, իսկ տեղացի հայերը վախեցան, որ փորձ է արվում մեծացնել մարզի մահմեդական բնակչությունը»[165]*:*

Այս բոլոր կեղծիքներն ու հերյուրանքները, որոնք դեռևս 1988 թ. փետրվարից շրջանառության մեջ են դրվել ադրբեջանական և մոսկովյան խորհրդային քարոզչության կողմից, ժամանակին ենթարկվել են հայ գիտնականների հանգամանալի քննադատության[166]*: Սակայն, ինչպես միշտ, Սյունին հայկական՝ ճշմարիտ տեսակետին ունկնդիր և լսողունակ չէ:*

---

165 Նույն տեղում, pp. 188, 194, 200.

166 Տե՛ս, օրինակ, Правда о Нагорном Карабахе. Материалы и документы. Ереван: ГУ, 1989. Григор Авакян, Нагорный Карабах: Ответ фальсификаторам. Ереван: "Айастан", 1991.

11. Ղարաբաղյան շարժման վարկաբեկություն

Անդրադառնալով 1988 թ. սկսված Ղարաբաղյան ազգային-ազատագրական պայքարին, Սյունին այսպես է բնութագրում հակամարտությունը.

> *Ի տարբերություն Խորհրդային Մերձբալթիկայում սկսված ազգային շարժումների, որոնք հիմնականում սահմանադրական բնույթ ունեին և զերծ էին զանգվածների կողմից կիրառվող բռնություններից, հայ-ադրբեջանական հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանի շուրջ շատ ավելի անկայուն էր, ավելի քիչ էր ենթակա քաղաքական իշխանությունների մանիպուլյացիաներին, և ավելի էր ենթակա արագ և անկանխատեսելի էսկալացիայի... այն ամենասկզբից շերտավոր խնդիր էր:*[167]

Այսպիսի դնահատականը շա՛տ թերի է ու միտումնավոր, քանզի Սյունին զլանում է ասելու ամենակարևորը՝ այն, որ միայն արցախահայության ինքնորոշման իրավունքի ոտնահարումը Բաքվի և մոսկովյան կենտրոնի կողմից, ինչպես նաև Ադրբեջանում կազմակերպված հայկական ջարդերն էին պատասխանատու հակամարտության խաղաղ՝ սահմանադրական լուծման ձախողման համար: Երկրորդ՝ Սյունին չի ասում, որ հայկական կողմը մինչև վերջ էլ հետամուտ եղավ Ղարաբաղյան ճգնաժամի սահմանադրական լուծմանը: Զարմանալիորեն, հակասելով ինքն իրեն, Սյունին այս փաստը նշում է 7 էջ հետո. «Մի քանի ամիս շարունակ Խորհրդային կառավարությունը, ինչպես նաև հայերը, փորձում էին գտնել մի ինչ-որ "սահմանադրական" լուծում»[168]*: Այլ կերպ ասած, գիծ քաշելով մերձբալթների քաղաքակիրթ (իմա՝ «սահմանադրական») և հայերի ու ադրբեջանցիների «վայրենի» (իմա՝ «անսահմանադրական») վարքագծի միջև, Սյունին կանխամտածված ձևով փորձում է բարդացնել այն պարզ հարցը, թե այս հակամարտության մեջ ի վերջո ո՞վ է արդար և ո՞վ՝ մեղավոր: Սյու-*

---

167 Suny, *Looking toward Ararat, op. cit.*, p. 193.

168 Նույն տեղում, p. 200.

նին իր ողջ շարադրանքի մեջ այդպես էլ զլանում է ասելու, որ Ղարաբաղի հայերի պայքարը համապատասխանում է և՛ խորհրդային, և՛ միջազգային իրավական նորմերին և արդար ու բարոյական է բոլոր առումներով: 1993 թ. լույս տեսած այս գրքում ոչ մի խոսք չկա արցախահայության ինքնորոշվելու և ինքնապաշտպանվելու անկապտելի իրավունքի մասին: Իսկ 1997 թ. հունիսին, մասնակցելով Այսրկովկասի արդի խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովին, որը կազմակերպել էր Հայաստանի Ամերիկյան համալսարանը, Սյունին արդեն քարոզում էր Ղարաբաղն Ադրբեջանի կազմում թողնելու օգտին, իմիջիայլոց ասելով, թե ծավալապաշտությամբ տառապող Հայաստանի համար «ընդարձակվելու միակ իրականանալի հնարավորությունն առաջացավ Ղարաբաղում՝ Ադրբեջանի հաշվին» (Armenia's only practical chance for expansion came at the expense of Azerbaijan in Karabakh)[169]: Թուրքամետ էժանագին քարոզի ոճով կառուցված այսպիսի արտահայտություններն ու նախադասությունները Սյունիի համար սովորական են: Ահավասիկ ևս մի նմուշ նույն ելույթից. Հայաստանի առաջին հանրապետությունը «փորձում էր գրավել և՛ – Ղարաբաղը, և՛ արևելյան Անատոլիայի որոշ մասերը» (attempted to take both Karabakh and parts of eastern Anatolia)[170]: Ուշագրավ է, որ Սյունին փոխանակ ասելու, թե

---

169 Պատմական փաստերի աղաղակող կեղծումներով համեմված Սյունիի երևանյան ելույթի ամբողջական շարադրանքը, առանց որևէ մեկնաբանությունների, անգլախոս հասարակությանը շատ արագ մատուցեց... Հալ բարեգործական ընդհանուր միության պաշտոնաթերթը. տե՛ս **Ronald Grigor Suny**, "Living with the other: Conflict and Cooperation among the Transcaucasian peoples," *AGBU*, September, 1997, pp. 27-29. Մոտ մեկ տարի ուշացումով նույն ելույթը լույս տեսավ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի հրատարակությամբ՝ *The Transcaucasus Today: Prospects for Regional Integration, June 23-25, 1997.* Edited Conference Report (American University of Armenia, Extension Program), pp. 51-57: Այս ելույթի քննադատությունը տե՛ս «ՀԱՀ ուսանողությունն՝ ի պատասխան Անդրանիկ Բուռնազյանի և այլոց». -- «Ազգ», օրաթերթ, 15 հուլիսի, 1997, էջ 4:

170 *AGBU*, September, 1997, p. 27.

1918-1920 թթ. Հայաստանը փորձում էր պահպանել իր տարածքները՝ Ղարաբաղը և Արևմտյան Հայաստանը, ասում է, թե Հայաստանը փորձում էր գավթել դրանք, կարծես դրանք իր սահմաններից դուրս էին և պատկանում էին ուրիշին: Հայաստանի ազատագրության համար մղված անհավասար պայքարի անվանումը «Ղարաբաղի ու արևելյան Անատոլիայի որոշ մասերի գրավում» ևս մեկ անգամ ցույց է տալիս Սյունիի իսկական դեմքը: Սյունիի ընտրած «take» բառը բազմիմաստ է, նրա ամենատարածված իմաստը «վերցնելն» է, սակայն դրվելով վերոհիշյալ՝ ռազմական գործողություններ նախատեսող ետնախորքի մեջ, take-ը անվերապահորեն նշանակում է «գավթել, գրավել», մանավանդ, որ Սյունին օգտագործել է ոչ թե Արևմտյան Հայաստան, այլ արևելյան Անատոլիա հորինված եզրը: Նույն ելույթի ռուսերեն պաշտոնական խմբագրված թարգմանությունը այս արտահայտությունը թարգմանել է մի այլ բառով՝ «пытавшейся заполучить и Карабах, и земли восточной Анатолии»[171]*:*

Ամենահետաքրքրականը, սակայն, այն է, որ ժամանակին Սյունին Ղարաբաղի հարցում այլ դիրքորոշում է ունեցել: Ամերիկյան Արմինիոն Միրըր-Սպեֆթեյթըր թերթի 1978 թ. ապրիլի 8-ի և 15-ի համարներում նա հանդես էր եկել «Ղարաբաղյան խնդիրը. Պատմական ակնարկ» խորագիրն ունեցող մի հոդվածով, որտեղ կրծքով պաշտպանում է Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը, մասնավորապես գրելով.

...Ղարաբաղն ու Նախիջևանը Ադրբեջանին հանձնելու Սովետների որոշումը անհետևողական է և՛ էթնիկական, և՛ պատմական, և՛ աշխարհագրական առումներով: Հայկական դիրքորոշման օգտին եղած ամենահզոր փաստարկը էթնիկականն է: Լենինյան ազգային քաղաքականության համաձայն, ժողովուրդները ամենուր պետք է իրենք որոշեն, թե

---

171 Закавказье сегодня: перспективы региональной интеграции, 23-25 июня, 1997. Отредактированные тексты выступлений. Ереван: Американский Университет Армении, Отделение Специальных курсов.

ինչ հանրապետություն, ինչ կառավարություն են ուզում ունենալ: Ուստի՝ էթնիկական տեսակետից, Ղարաբաղը, որն այս պահին ունի 80 տոկոսանոց հայկական բնակչություն, պետք է անպայման լինի Հայկական հանրապետության կազմի մեջ: Ըստ նույն փաստարկի, Նախիջևանը կազմելու է Ադրբեջանական հանրապետության մասը:

Երկրորդ. եթե հարցին նայենք պատմական տեսանկյունից, ապա այդ տարածքներից երկուսն էլ, լինելով պատմական Հայաստանի մասը, պետք է լինեն Հայաստանի հանրապետության մասը:

...Եթե դիտենք աշխարհագրության տեսանկյունից, Ղարաբաղն ու Նախիջևանը, իրենց աշխարհագրությամբ և տեղագրությամբ, իսկապես մասն են այն լեռնաշխարհի, որ կազմում է Հայաստանը: Այս փաստարկով Նախիջևանը պետք է լինի Հայաստանի մաս, քանզի այն շրջապատված է Հայկական հանրապետությամբ և Հայկական լեռնաշխարհի մասն է: Ղարաբաղը, մյուս կողմից, նույնպես այդ լեռնաշխարհի մասն է, ուստի նույնը նրան էլ է վերաբերում:

...Հայ ժողովուրդի պահանջը Լեռնային Ղարաբաղի տարածքի վերաբերյալ արդար է:

...փաստեր կան առ այն, որ Ադրբեջանի վերահսկողությունը Ղարաբաղի նկատմամբ իրականում հետ է գցել այս շրջանի տնտեսական և մշակութային արագ զարգացումը...

...[Խորհրդային իշխանությունները ազգային հարցում] պետք է վերադարձ կատարեն դեպի լենինյան քաղաքականություն՝ ազատություն տալով ամեն մի ազգի ուրույն և եզակի զարգացմանը...[172]

Բնական հարց է առաջանում՝ ինչպե՞ս եղավ, որ Ղարաբաղի հարցում 1978 և 1993-1997 թթ. Սյունին արտահայտեց տրամագծորեն հակառակ դիրքորոշումներ: Պատասխանը շատ պարզ է: 1978 թ. ամերիկյան քաղաքականությանը պետք էր

---

172 Հոդվածը վերատպվել է նույն թերթում ինը տարի անց, տե՛ս **Ronald Grigor Suny**, "The Karabagh Problem: A Historical Perspective," *The Armenian Mirror-Spectator*, November 14, 1987, pp. 8-9:

ազգային շարժումները բորբոքել Խորհրդային Միության մեջ, իսկ 1993 թ.՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, Վաշինգտոնի նպատակներն արդեն բոլորովին այլ էին: Մասնավորապես, Ղարաբաղի հարցում ԱՄՆ-ն սկսեց հանդես գալ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ տարածքային ամբողջականության սկզբունքին զոհելու դիրքորոշմամբ: Ամերիկյան այսպիսի քաղաքականությունը բացատրվում է նախ և առաջ հարավում՝ Մերձավոր, Կենտրոնական և Միջին Արևելքի ուղղություններով, Ռուսաստանի դիրքերը հնարավորին չափ նեղացնելու և թուլացնելու փափագով: Ամերիկյան այդ քաղաքականության իրագործման մեջ մեծ նշանակություն է տրվում տարածաշրջանում ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի ազդեցությունն առավելագույնս ամրապնդելուն:

Առավել պարզ պատկերացնելու համար Ղարաբաղի հարցում ԱՄՆ քաղաքականության փոփոխվող երանգները, հիշենք ԱՄՆ Մերակույտի և Ներկայացուցիչների Տան՝ Ղարաբաղի խնդրին վերաբերող որոշումները, որոնք ընդունվել էին մինչև ԽՍՀՄ փլուզումը և որոնք աներկբայելիորեն խրախուսում և պաշտպանում էին հայկական կողմին (ի դեպ, Հայաստանի կառավարությունը, ինչպես նաև սփյուռքահայ կազմակերպությունները լիակատար մոռացության են մատնել և չեն օգտագործում այս որոշումները իրենց քաղաքական-քարոզչական աշխատանքներում).

1. 1988 թ. հուլիսին ԱՄՆ Մերակույտն ընդունեց մի բանաձև, որը, մասնավորաբար, կոչ էր անում Խորհրդային կառավարությանը «հարգել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի օրինական պահանջները» (to respect the legitimate aspirations of the Armenian people of Nagorno Karabagh): Այս բանաձևի համահեղինակներն էին հանրապետական Մերակուտականներ Ջոն Մըքքեյնը (Արկանզաս նահանգից), Փիթ Ուիլսոնը (Կալիֆորնիա նահանգից) և Ռոբերթ Դոուլը (Կանզաս նահանգից):

2. 1989 թ. հուլիսի 19-ին ԱՄՆ Մերակույտը ընդունեց մի բանաձև, որը, մասնավորապես, նշում էր, թե «ԱՄՆ պետք է.

ա) քաջալերի Խորհրդային Միության նախագահ Միխայիլ Գորբաչովին, որպեսզի նա շարունակի երկխոսությունը ԽՍՀՄ ժողովրդի Կոնգրեսի հայ ներկայացուցիչների հետ (բանաձևը ընդունելուց մի քանի օր առաջ տեղի էր ունեցել ԽՍՀՄ հեռուստատեսությամբ մասնակիորեն հեռարձակված՝ Գորբաչովի հանդիպումը հայ և ադրբեջանցի պատգամավորների հետ, որտեղ Գորբաչովը, փաստորեն, պաշտպանեց ադրբեջանցիների դիրքորոշումը՝ Ա. Ա.).

բ) քաջալերի Խորհրդային Միության նախագահ Միխայիլ Գորբաչովին, որպեսզի նա լուրջ քննարկումներ անցկացնի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ընտրված ներկայացուցիչների և Հայաստանի ժողովրդավարական շարժման ղեկավարության, ներառյալ վերջերս ազատ արձակված Ղարաբաղ կոմիտեի հետ՝ Հայաստանի հայրենիքին վերամիանալու իրենց պահանջների վերաբերյալ. (Այս կետի մեջ հատկապես ուշագրավ է վերջին հատվածը, որը պարզ ընդունում է Ղարաբաղի՝ Հայաստան հայրենիքին վերամիանալու պահանջի արդարացիությունը: Ահա և այդ հատվածի անգլերեն բնագիրը՝ «their demands of reunification with the Armenian homeland»*: -- Ա. Ա.).*

գ) Խորհրդային Միության հետ իր երկկողմանի քննարկումների ժամանակ սատար լինի Ղարաբաղի հարցի արդար և այդ շրջանի ժողովուրդի տեսակետները արտահայտող լուծմանը.

դ) Խորհրդային Միության հետ երկկողմանի քննարկումների ժամանակ պնդի, որ Հայերի դեմ կատարված բռնարարքների հետաքննությունը կատարվի Խորհրդային դատական ամենաբարձր մակարդակով և մեղավոր անձինք հայտնաբերվեն և պատժվեն»:

Այս բանաձևի հեղինակն էր դեմոկրատական ծերակուտական Քլեյբորն Փելլը, Ռոդ Այլենդ նահանգից:

3. 1989 թ. նոյեմբերի 19-ին *ԱՄՆ Ծերակույտն ու Ներկայացուցիչների տունը միաձայն ընդունեցին հայկական կող-*

մը պաշտպանող հմր. 178 շատ հետաքրքրական միացյալ բանաձևը, որում մասնավորապես ասված էր.

> *«Հմր. 178 միացյալ բանաձևն արտահայտում է Միացյալ Նահանգների աջակցությունը Խորհրդային Հայաստանի ժողովրդի՝ Ղարաբաղի հարցին խաղաղ և արդար լուծում տալու ձգտումներին:*
>
> *Քանի որ Միացյալ Նահանգների ժողովուրդը պատմական և մշակութային ամուր կապեր ունի Հայաստանի ժողովրդի հետ.*
>
> *քանի որ Լեռնային Ղարաբաղի հայկական՝ ութսուն տոկոս կազմող մեծամասնությունը շարունակաբար արտահայտել է ինքնորոշվելու և ազատ ապրելու իր ցանկությունը (բնագրում՝* its desire for self-determination and freedom).
>
> *քանի որ Ղարաբաղի ներկա կարգավիճակը մտահոգության ու վեճի առարկա է Հայաստանի և Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունների ժողովուրդների միջև.*
>
> *քանի որ Խորհրդային Միության կառավարությունը փետրվարի 28-29-ին՝ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքի մեջ եղած հայերի սպանությունները կոչել է «ջարդեր».*
>
> *քանի որ Ղարաբաղի հայերի նկատմամբ շարունակվող խտրականությունը և Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ անորոշությունը պատճառ են դարձել զանգվածային ցույցերի և անկարգությունների, որոնք մինչև օրս շարունակվում են այս տարածաշրջանում.*
>
> *...քանի որ [Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի] երեքամսյա շրջափակումը, ինչպես նաև Հայաստան փոխադրվող բեռների թալանումն ու փչացումն անգործության են մատնել հայերի, Խորհրդային Միության, ամերիկացիների և համայն միջազգային հանրության աշխատանքները՝ 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում եղած ողբերգական երկրաշարժից հետո.*
>
> *...քանի որ Միացյալ Նահանգներն աջակցում է Լեռնային Ղարաբաղի վեճին արդար լուծում տալու Խորհրդային Հայաստանի ժողովրդի ֆունդամենտալ իրավունքներին ու ձգտմանը,*

Կոնգրեսում հավաքված Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների տունը կարծում են, որ Միացյալ Նահանգները

...(3) պետք է քաջալերի ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին, որպեսզի նա վերականգնի կարգն ու կանոնը, անմիջապես վերացնի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և ապահովի Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հայերի անվտանգությունը [իրականացվող] հարձակումների դեմ.

(4) Խորհրդային Միությանն հետ իր երկկողմ քննարկումներում առաջ մղի Լեռնային Ղարաբաղի վեճի՝ այդ տարածքի ժողովրդի կարծիքն արտահայտող արդար լուծումը...» և այլն:

Ամենահատկանշականն այն է, որ այս բանաձևը ճանաչում է Ղարաբաղի հայ մեծամասնության ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև Ղարաբաղը որևէ կերպ չի դիտում Ադրբեջանի մաս, նույնիսկ ընդհակառակը՝ միմյանցից պարզորեն տարանջատում է:

ԱՄՆ Ներակույտը միաձայն ընդունեց հայկական կողմին խրախուսող ևս մի քանի բանաձև 1991 թ. մայիսի 17-ին (Ներակույտի բանաձև համ. 128) և հուլիսի 26-ին: ԱՄՆ Ներկայացուցիչների տունն էլ իր հերթին միաձայն ընդունեց նույնատիպ մի բանաձև 1991 թ. հունիսի 13-ին: Հետաքրքիր է, որ այս բանաձևերում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացվող շրջափակումները հստակ որակվում են որպես բռնարարքներ՝ «...շրջափակումները և ուժի ու շանտաժի այլ գործադրումները» (the blockades and other uses of force and intimidation): Այս որոշումների միակ գործնական հետը եղավ ԱՄՆ Ներակույտի՝ 1992 թ. հունիսի 29-ին ընդունած որոշումը, որով ԱՄՆ կառավարությանը արգելվում է ուղղակի տնտեսական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին, մինչև որ վերջինս վերացնի Հայաստանի Հանրապետության և -- արդեն փոխված սահմանումով -- «Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանի» դեմ: Նույն որոշմամբ, սակայն, Ղարաբաղի հայերը

ճանաչվում են Ադրբեջանի փոքրամասնություն և խոսվում է միայն նրանց մարդկային և ոչ կոլեկտիվ իրավունքների ապահովման անհրաժեշտության մասին[173]:

Իսկ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին այլևս ոչ մի խոսք չկա: Այս բանաձևը դարձավ օրենք, երբ ԱՄՆ նախագահական ընտրությունների նախօրյակին, ամերիկահայերի աջակցությունը շահելու նպատակով՝ 1992 թ. հոկտեմբերի 24-ին, այն ստորագրեց նախագահ Բուշը[174]:

Այսպիսով՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, Լեռնային Ղարաբաղի հարցում ամերիկյան քաղաքականությունը կտրուկ փոփոխություն ապրեց: Այսօր ԱՄՆ Ծերակույտի՝ Ադրբեջանի դեմ վերոհիշյալ համեստ սահմանափակումն է անգամ կանգնած վերանայման իրական վտանգի առջև:

Այժմ, վերադառնալով Ղարաբաղի հարցի մեկնաբանությունների մեջ Սյունիի «մաշկափոխությանը», կարող ենք վստահ ասել, որ 1978 թվականին ոչ-գիտական ատյաններից նրա ստացած հանձնարարականները մեծապես տարբերվում են 1990-ականներին նույն ատյաններից նրան իջեցված հանձնարարականներից: Կարճ ասած, Սյունին առաջնորդվել է մեծ տերության վարած քաղաքականության հետ համընթաց փեսրափոխ լինելու և հարմարվելու սկզբունքով. երգում ու նվագում է վճարողի պատվերով:

12. «Մաճր հայտնագործություններ»

Այժմ համառոտակի նշենք Սյունիի արած մի քանի այլ «արժեքավոր» հայտնագործություն:

1. Սյունին գրում է. «Ռուս գրականության մեջ առաջին անգամ հայերը հիշատակվել են 1778 թ.՝ Վ. Պետրով անունով մի անհայտ բանաստեղծի մի անհայտ պոեմում» (The first

---

173 **Shireen T. Hunter**, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflic*, *op. cit.*, pp. 51-52.

174 Նույն տեղում, էջ 193, ծնթ. 42:

mention of an Armenian in Russian literature appeared in 1778 in an obscure poem by an obscure poet, V. Petrov)[175]: *Քանզի էլի որևէ աղբյուր չի նշում, ամերիկացի ընթերցողը երևի ննթադրելու է, թե այսպիսի ինքնավստահ հայտարարություն անելուց առաջ Սյունին ծայրեծայր «քրքրել է» ռուսական վիթխարի գրականությունը: Ավա՛ղ, սա իրականությունից այդչափ հեռու չէր լինի, եթե չլիներ նաև Սյունիի* բացարձակ անտեղյակությունը՝ *հայ-ռուսական գրական կապերի պատմությանը նվիրված այն բազմաթիվ մենագրություններին ու հոդվածներին, որոնք հրապարակվել են և՛ ռուսերենով, և՛ հայերենով (կարծե՛ս՝ Սյունին տիրապետում է այս երկու լեզուներին էլ): Տողատակում նշում ենք խնդրո առարկա հարցերին նվիրված ընդամենը մի քանի ուսումնասիրություն, քանզի հայ-ռուսական կապերին նվիրված գիտական գրականության մատենագիտությունն այնքան ծավալուն է, որ այստեղ այն ամբողջությամբ վերարտադրելն անհնար ու անիմաստ է*[176]: *Սակայն փաստ է, որ ինչպես Հայաստանը, նույնպես էլ հայերը, որ հին և միջին դարերում հայտնի էին որպես նշանավոր երկիր ու ազգ, ռուս գրականության մեջ հիշվել են բազմից՝*

---

175 Suny, *Looking toward Ararat, op. cit.*, p. 35. Ցույցը Սյունից ասել է այլուր ևս՝ հմմտ. idem, "Images of the Armenians in the Russian Empire," in **Richard G. Hovannisian**, ed., *The Armenian Image in History and Literature*, (Malibu, CA: Udena Publications, 1981), p. 111.

176 Բազմաթիվ այլ ուսումնասիրությունների մեջ նշենք մի քանի մենագրություն միայն. К. Н. Григорян, Из истории русско-армянских культурных связей 10-17 вв. Ереван: АН Арм. ССР, 1953; Նույնի՝ Из истории русско-армянских литературных и культурных отношений (X-начало XX вв..). Ереван: АН Арм. ССР, 1974; Նույնի՝ Армения в русской литературе и живописи. *XVIII*-первая половина *XIX* в.. Ереван: АН Арм. ССР, 1962; Р. Г. Хачатрян. Русская историческая мысль и Армения. Ереван: АН Арм. ССР, 1987. К. В. - Айвазян. История отношений русской и армянской церквей в средние века. Ереван, АН Арм.ССР, 1989. Լևոն Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա. - *Բանբեր Մատենադարանի*, 1980, No. 13, էջ 7-107:

այդ գրականության սկզբնավորման օրից ի վեր: Այստեղ բավարարվենք ընդամենը մի քանի օրինակով.

ա) ռուս տարեգրության մեջ առաջին անգամ հայերին հիշատակել է 1080-1090-ական թթ. գրված «Կիևո-Պեչորյան Հարանց վարքը»: Այն պատմում է բարի համբավ ունեցող հայ բժիշկ Ագապիտի և նրա հայրենակիցների մասին: Ագապիտը ելումուտ ուներ Կիևյան Ռուսիայի ավատատիրական ամենաբարձր շրջանակներում, նա բժշկել էր, օրինակ, Կիևի մեծ իշխան Վսեվոլոդ Յարոսլավիչին (1030-1093), հուչակավոր Վլադիմիր Մոնոմախին (1053-1125), որն այն ժամանակ դեռևս Չեռնիգովի իշխանն էր, բոյարների: Հավանաբար, Ագապիտը բուժօգնություն է ցույց տվել նաև հասարակ ժողովրդին, քանզի, ինչպես սկզբնաղբյուրը հատուկ շեշտել է, նա հաճախ անվճար է աշխատել՝ «безмездный врач... арменин родом и верою, хитер бе врачеванию»[177]:

բ) Մեծ և Փոքր Հայքերը նշված են ռուսական վաղ գրականության խոշորագույն երկի՝ մոտավորապես 1113 թ. գրված, «Անցյալ տարիների պատմության» (Повесть временных лет) հե՛նց առաջին էջում[178]:

գ) Ռուսական մի հնագույն պոեմում հիշվում է «ազգությամբ հայ թագուհի Ալեքսանդրիան» (Царица Александрия, родом армения)[179]:

---

177 Киево-Печерский Патерик по древним рукописям. В переложении на современный русский язык Марии Викторовой. Киев, 1870, сс. 88-89.

178 Տե՛ս Повесть временных лет. Часть 1. Ред. Д. С. Лихачев. Москва-Ленинград: АН СССР, 1950, с. 9. Համմտ. անգլերեն թարգմանություն՝ **Samuel Hazzard Cross and Olgerd P. Sherbowitz-Wetzor**, transs., *The Russian Primary Chronicle*: Laurentian Text. Pp. XI, 313. 1953.

179 Տե՛ս Н. Ф. Дробленкова, "Царица Александрия, родом армянина... в древнерусском легендарно-политическом сказании", в Русская и Армянская средневековые литературы. Под ред. Д. С. Лихачева (Ленинград: Наука, 1982),сс. 375-387.

դ) Մասնագետները բավական մանրամասնորեն քննել են Գրիգոր Լուսավորչի կերպարի արտացոլումը ռուս միջնադարյան գրականության մեջ[180]: Հավանաբար, Սյունին շատ կզարմանա, եթե իմանա, որ Մոսկվայի Կարմիր հրապարակում դեռևս Իվան Ահեղի (1530–1584) կողմից կառուցված Վասիլի Երանելու տաճարի ինը փոքր եկեղեցիներից մեկը կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով[181]:

ե) Ավելին՝ 14–16 դարերում Մոսկվայում գաղութ կազմած հայերը, որոնք մասնակցել են երկրի կարևոր անցուդարձերին, ինչպես ասենք՝ Կուլիկովյան ճակատամարտին, դարձել են նաև ռուս ժողովրդական բանահյուսության հերոսներ[182]:

զ) Մինչև 1778 թ. հայերին իրենց գրքերում հիշատակել են այնպիսի հայտնի ռուս հեղինակներ, ինչպիսիք են, օրինակ՝ Մ. Վ. Լոմոնոսովը, Վ. Ն. Շչերբատովը, Վ. Ն. Տատիշչևը, Գ. Միլլերը, Ֆ. Ի. Սոյմոնովը, Մ. Դ. Ջուլկովը և այլն[183]: Ասենք նաև, որ մեզ դեռևս չի հաջողվել պարզելու, թե Սյունիի նշած Վ. Պետրովն ո՞վ է եղել, որտե՞ղ և ի՞նչ է գրել հայերի մասին. թերևս, սա Սյունիի հույժ դաղտնի պահպանվող հայտնագործություններից է:

Այսպիսով, Սյունին, որերորդ անգամ, գաղափար չի ունեցել, թե ինչ և ինչի մասին է գրում: Մեր համոզմամբ, Սյունին պարզապես ցանկացել է հայերին պատկերել որպես մի այնպիսի աննշան ժողովուրդ, որին Ռուսաստանում «նկատել էին» իբր ընդամենը 1778 թ.:

---

180 Տե՛ս Русская и Армянская средневековые литературы, с. 5, прим. 1:

181 Տե՛ս Լևոն Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում, էջ 83:

182 Լևոն Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում, էջ 60–107: Խաչիկյանի ուսումնասիրության այս հատվածը հրատարակվել է նաև ռուսերեն, տե՛ս Л. С. Хачикян, "Гости-сурожане" в русских летописях и сказании о Мамаевом побоище. -- Русская и армянская средневековые литературы, *op.cit.*, 1982, сс. 333-357:

183 Տե՛ս Р. Г. Хачатрян. Русская историческая мысль и Армения. сс. 82-209.

2. Թյուրիմացության մեջ գցելով իր ընթերցողին, Սյունին գրում է, թե՝ «հայերը դրվեցին էջմիածնի կրոնական իշխանության ներքո» ռուսական տիրապետության շրջանում և ռուսական կառավարության կողմից[184]: Հետաքրքիր է իմանալ «հայագետի» կարծիքը՝ թե մինչև ռուսական տիրապետությունը հայերը, եթե ո՛չ Ս. Էջմիածնի, ապա ու՞մ կրոնական իշխանության ներքո էին: Մի՞թե Սյունիին անծանոթ է պատմական այն հանրահայտ փաստը, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրը 1441 թ. վերահաստատվից Էջմիածնում և որ հայերի բացարձակ մեծամասնությունը միշտ էլ ճանաչել է Ամենայն Հայոց կաթողիկոսի գերագահությունը: Իսկ գուցե իր այս փխրուն կեղծիքով Սյունին ուզեցել է անպայման ինչ-որ կերպ հաստատե՞լ հայերի «միասնական ազգ չլինելու»՝ իր առաջադրած փուչ տեսակետը: Այս հարցերին պատասխանելը, իրոք, անիմաստ է:

3. «Հայոց պատմության մեծ մասի ընթացքում առևտուրը գերակշիռ չափով եղել է օտարականների ձեռքում» (most trade for much of Armenian history was in the hands of outsiders)[185]: Թե ո՞րտեղից է այս անհեթեթ միտքը մտել մեր «հայագետ պրոֆեսորի» գլուխը, միայն իրեն է հայտնի, քանզի կրկին նա որևէ աղբյուր չի հղել և չէր էլ կարող հղել:

13. Ամփոփում առաջին մասի

Մենք անդրադառնարձանք այս գրքում տեղ գտած սխալների և կեղծիքների ընդամենը մի մասին: Սակայն Սյունիի գրքի գրեթե յուրաքանչյուր էջ նույն ցավով է տառապում: Բայց բա՛վ է՝ ավարտենք առանց այն էլ երկարած այս վերլուծաբանությունը, ի մի բերելով «Հայացք դեպի Արարատ» անունով «գրքի» հեղինակի մեթոդաբանական ընդհանուր կարգի թերությունները.

---

184 Տե՛ս **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 58, հմմտ. p. 9.

185 Նույն տեղում, p. 8.

ա) հայտնի է, որ արդի պատմագիտությունը հիմնվում է անհրաժեշտ երկու կարգի աղբյուրների օգտագործման և վերլուծության վրա. առաջինը բուն սկզբնաղբյուրներն են, երկրորդը՝ արդեն իսկ գոյություն ունեցող պատմագիտական ուսումնասիրությունները: Աղբյուրագիտական այս երկու դաշտերին լավատեղյակ լինելը պատմագիտական որևէ լուրջ աշխատություն գրելու համար անհրաժեշտ նախապայման է: Այս առումով պատմության մեծ փիլիսոփա անգլիացի Ռ. Ջ. Քոլլինգվուդն իրավամբ նկատել է.

> Որևէ պատմական խնդիր չպետք է ուսումնասիրվի առանց ուսումնասիրելու այն, ինչը ես անվանում եմ երկրորդ շարքի պատմություն, ասել է թե՝ առանց այդ խնդրի մասին պատմագիտական մտքի պատմության ուսումնասիրության: Որևէ ուսանող իր ղեկավարին չի ներկայացնի Մարաթոնյան ճակատամարտի մասին իր ավարտաճառը, առանց պարզելու, թե ինչ են գրել այդ մասին ուրիշները[186]:

Ոչ ուսանող, այլ «պրոֆեսոր» Ռոն Սյունին գաղափար չունի (ու նաև՝ չի ուզում իմանալ), թե խոշոր մասնագետներն ի՞նչ են գրել հայոց պատմության հանգուցային հարցերի մասին:

Սյունիի մեթոդաբանական հիմնական սխալն արդյունք է այն բանի, որ նա պատմության, մասնավորապես՝ հայոց պատմության տեսական, քննական, փաստական նյութին գրեթե բացարձակապես անտեղյակ է, հաճախ նաև անգետ, որ և նրան դրել է խղճալի կացության մեջ:

Սյունիի մյուս թերություններն են.

բ) մերժել և անտեսել հայաստանյան հայագիտությունը.

գ) խաղալ քաղաքական մի քանի լարի վրա.

---

186 Р. Дж. Коллингвуд, Идея истории. Автобиография. Москва, "Наука", 1980, стр. 399.

դ) հարկ եղած դեպքում աչք փակել իր կանխակալ (իրեն պատվիրված) տեսակետը հերքող սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վրա.

ե) սկզբնաղբյուրների սխալ ընթերցում.

զ) սկզբնաղբյուրների բացահայտ կեղծում:

Կրկնենք՝ Սյունիի մեթոդաբանական գլխավոր սխալը, այսուամենայնիվ, նրա ունեցած հայագիտական գիտելիքների աղաղակող պակասն է. սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության՝ խեղկատակային աստիճանի հասնող չիմացությունը: Եթե մի պահ մոռանանք «Հայացք դեպի Արարատ» գրքի քաղաքական կողմնակալությունն ու նպատակները, ապա այս գիրքը կարելի է բնորոշել որպես գիտական որևէ արժեքից զուրկ սիրողական մակարդակի շարադրանք:

Զարմանալին այն է սակայն, որ այս գիրքը լույս աշխարհ է եկել ամերիկյան ամենահեղինակավոր հրատարակություններից մեկում, այլև առայժմ գրախոսվել է բացառապես դրականորեն: Այս գրքի գրախոսություններն իրենք իսկ բավական հետաքրքրաշարժ են և կարող են լույս սփռել ամերիկյան «հայագիտության» քաղաքականացված ետնախորքի վրա: Բերենք մի քանի հատված աշխարհում ամենահեղինակավոր պատմագիտական հանդեսներից մեկում՝ «American Historical Review»-ում (ունի 19,000 բաժանորդ) հայտնված գրախոսություն-գովերգությունից, որի հեղինակը հայագիտությունը քաջածանոթ Ռոբերթ Հյուսնն է: Ահա.

> Սույն գրքով, Ռոնալդ Գրիգոր Սյունին հաստատում է իր՝ արդի Հայաստանի և աշխարհում նրա գրաղեցրած տեղի մասին դրող առաջատար մասնագետներից մեկի համբավը: Նա մի ճարտարախոս, լավ պատրաստված, լայն մտահորիզոն ունեցող հեղինակ է, որը հոժարամիտ է ճայելու ճեղ, ազգայնական տեսադաշտերից անդին: Նա արել է ավելին, քան որևէ այլ ոք՝ բարձրացնելու համար հայկական արդի պատմագրությունը այն բարձր մակարդակին, որը վաղուց է

վեր ձեռք էր բերված սովետոլոգիայում, բայց որը տասնամյակներ շարունակ չէր հաջողվում հասնել խորհրդային զանազան ազգությունների պատմաբաններին: Սյունիի գրած յուրաքանչյուր բան արժե կարդալ, և սա նրա հեղինակած ամենակարևոր գործերից մեկն է...

Հոդվածների իր այս հավաքածուով, Սյունին ոչ միայն դրել է Խորհրդային Հայաստանի արժանահավատ պատմության հիմքերը (այդ պատմությունը դեռ պետք է գրվի), ոչ միայն մեծապես առաջ է տարել մեր հասկացողությունը արդի աշխարհում Հայաստանի [տեղի և դերի] մասին, այլև արտադրել է հետխորհրդային հայ պատմագրության առաջին հիմնարար աշխատությունը *(ընդգծումներն իմն են՝ Ա. Ա.):*

[With this book, Ronald Grigor Suny confirms his statute as one of the leading authorities on contemporary Armenia and its place in the modern world. An eloquent writer, well trained, broad in his vision, and willing and able to look beyond narrow, nationalistic perspectives, he has done more than anyone to raise the field of modern Armenian historiography to the level of sophistication that the study of the Soviet Union long ago attained but which for so many decades has eluded historians of the various Soviet nationalities. Anything that Suny writes is worth reading, and this is one of the most important works that he has produced...

With this collection of essays, Suny has not only laid the foundations for a definitive history of Soviet Armenia (which still needs to be written) and greatly advanced our understanding of Armenia in the modern world but has also produced the first major work of post-Soviet Armenian historiography.][187]

---

187 **Robert H. Hewsen**, "Review of Ronald Grigor Suny's *Looking toward Ararat: Armenia in Modern History*," *American Historical Review* October, 1994, p. 1357. Հետաքրքիր է, որ նույն Ռոբերթ Հյուսենը գովաբանական ու, ինչպես ժամանակին ճիշտ նկատել էր Պ. Հովհաննիսյանը, միտումնավոր մի գրախոսություն էլ գրել էր Ռ. Թոմսոնի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» անգլերեն խայտառակ հրատարակության մասին, որին ստորև դեռ անդրադառնալու ենք (տե՛ս Պ. Հովհաննիսյան. Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» անգ-

Ամերիկյան «սովետոլոգների» հայտնի ձայնասփյուռ «The Russian Review»ում Սյունիի գիրքը բարձր է գնահատել ոչ այլ ոք, քան ուղղափառ թուրքոֆիլ, երկար տարիներ Ստամբուլում կենտրոնական հետախուզական վարչության գրասենյակի պետ ծառայած կադրային լրտես Փոլ Հենցեն[188] *(վերջին տարիներին աշխատում է ՌԱՆԴ կորպորացիայում): Խոսքը տանք Հենցեին.*

> *Փոքր ժողովուրդների պատմությունը շատ հաճախ գրվում է նույն ազգության ներկայացուցիչների կամ նրանց ձգտումները պաշտպանողների կողմից: Քսաներորդ դարի ընթացքում Հայաստանը եղել է այս միտումի ծայրահեղ օրինակը: Ամբողջությամբ վերցված, այս գիրքը հաճելի բացառություն է:*
>
> [The history of small peoples is too often written by people of the same ethnic origin or advocates of their aspirations. During the twentieth century, Armenia has been an extreme example of

---

լերեն թարգմանության մասին. - *Բանբեր Երևանի Համալսարանի* 1981, հմր. 3 (45), էջ 239):

188 ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչության (ԿՀՎ) գործունեության ցածր արդյունավետությունը վերջերս խիստ քննադատության ենթարկած մի ուրիշ նախկին հետախույզ՝ Էդվարդ Շըլլին, նկարագրելով, թե ինչպես իր աշխատանքի տարիներին՝ 1985-1993 թթ., ԿՀՎ-ի գաղտնի ծառայության (Directorate of Operations) «Իրանի բաժանմունքը գլխավորած պետերից որևէ մեկը պարսկերեն խոսել կամ կարդալ չգիտեր... Մերձավոր Արևելքի բաժնի պետերից և ոչ մեկը չգիտեր արաբերեն, պարսկերեն կամ թուրքերեն և միայն մեկը կարող էր ֆրանսերենից մի քիչ գլուխ հանել», հարկ է համարել հատուկ առանձնացնելու, ի թիվս երկու մյուսների՝ Փոլ Հենցեին՝ «որպես փառաբանված օպերատիվ սպայի, որ լավ գիտեր իր երկիրը (իմա՝ Թուրքիան) և նրա լեզուն». - **Edward G. Shirley**, "Can't Anybody Here Play This Game?" *The Atlantic Monthly* February 1998, p. 48. Ավելացնենք, որ Հենցեն, իր իսկ խոստովանության համաձայն, տարաբախտ մարդ է. սիրում է կրկնել, թե իր դժբախտությունն այն է, որ ինքը թուրք չի ծնվել -- "It is my misfortune that I was not born a Turk" (մի ականատեսի հետ իմ վարած հարցազրույցից):

this tendency. *Taken as a whole, this book is a welcome exception]* – *ընդգծումն իմն է՝ Ա. Ա.*[189]:

Հենցեն իրավացի է՝ Սյունիին անհնար է դասել հայոց ազգային արդար իրավունքները պաշտպանող հեղինակների շարքը: Ցավալի է, սակայն, որ հայտնի թրքասերի՝ Սյունիին տված այս միանգամայն ճշմարիտ գնահատականը վրիպել է ամերիկահայ համայնքի ուշադրությունից: Ասենք՝ գուցե և չի վրիպել, այլ՝ քանի որ խոսքը վերաբերել է ԱՄՆ ակադեմիական շրջանականներում «հարգված» մի գիտնականի և ամերիկյան «հայագիտության» կարկառուն ներկայացուցիչ Սյունիին, նախընտրել են չնկատելու տալ Հենցեի գրախոսությունը: Այլապես ինչով կարելի է բացատրել, որ Հենցեի՝ Անկարայում արտահայտած նույն միտքը (թե որքան վնասակար է արևմտյան հասարակությանը մատուցել հայերի կողմից ուսումնասիրված հայոց պատմությունը)՝ որտեղից որտեղ նկատել են, թեև չեն համարձակվել սուր քննադատության ենթարկել: Նկատողն էլ ո՛վ է՝ Լևոն Ավդոյանը, Սյունիին արժանի մի «հայագետ» (երկուսն էլ, ի դեպ, Նինա Գարսոյանի սաներն են), որ ամերիկյան հայագիտության և ամերիկահայ գաղութի հարաբերություններին նվիրված իր մի հոդվածի նույն էջում էլ անմիջապես շտապում է մեղադրել ամերիկահայ գաղութին իբր «անընդհատ շովինիստական բանավեճ վարելու» (the chauvinistic debate which proceeds in uninterrupted fashion throughout the community) *և ամերիկյան «հայագետներից» «նախնական քաղաքական կամ շովինիստական սպասելիքներ»* (prior political or chauvinistic expectations) *ունենալու մեջ*[190] *(Ավդոյանի «գիտական» վաստակի մասին՝ ստորև):*

---

189 **Paul B. Henze**, ""Review of Ronald Grigor Suny's *Looking toward Ararat: Armenia in Modern History*, " *Russian Review* Vol. 54, April 1995, pp. 304-305.

190 **Levon Avdoyan**, *Armenian Studies and the Armenian American Community: An Old Curmudgeon's Viewpoint.* The Krikor and Clara Zohrab Information Center: Occasional Papers Series: ZCOP-001 (New York: Diocese of the Armenian Church of America, 1995), p. 4.

Սյունիի «թագավորության» սահմաններն ամբողջապես պատկերելու համար հիշենք, որ նրա գրքի երեք գլուխ, նեբառյալ՝ Հովսեփ Էմինի հաղորդումների հիման վրա Սյունիի կեղծ մեկնությունները, նույնությամբ հրապարակվել են ոչ այլուր, քան ՀՅԴ Հաշնակցության գիտական օրգան համարվող «Armenian Review»-ի 1979, 1980, 1983 թթ. համարներում (այդ տարիներին այս հանդեսի գլխավոր խմբագիրը Ժիրայր Լիպարիտյանն էր)[191]: Սա էլ բավական չէ՝ 1989 թ. նույն հանդեսի խմբագրությունը Սյունիին հրավիրել էր լինելու Ղարաբաղի հարցին նվիրված հատուկ համարի հրավիրյալ խմբագիրը (guest editor), իսկ վերջինս էլ, առիթից օգտվելով, հայկական այս պարբերականի էջերում հրապարակել է ադրբեջանական կեղծարարություններով համեմված՝ Թադեուշ Սվետոկովսկու հոդվածը[192]: Սյունին ԱՄՆ-ում հրատարակվող հայագիտական հանդեսների՝ «Armenian Review»ի, «Journal of the Society for Armenian Studies»ի և «Armenian Forum»ի խմբագրական հանձնախմբերի անդամ է: Հայոց պատմության մասին նրա «տեսակետները» սկսում են դուրս գալ ամերիկյան շրջանակներից՝ հրատարակվելով նաև եվրոպական այլ լեզուներով (գիտենք նրա մի գրվածքի ֆրանսերեն թարգմանությունը[193]): Սյունին հաճախ է հրավիրվում հայագիտական պանազան ժողովների: Ամերիկյան քաղաքական գործիչներն ու դիվանագետները ևս հաճախակի են լսում Սյունիի դատողությունները Հայաստանի պատմության և ներկայի մասին, կարծելով, թե գործ ունեն խոշոր մի հայագետի հետ: Կարելի է

---

191 Համմտ. **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. X. Էմինի տեղեկությունները խեղաթյուրող հոդվածը տե՛ս "The Formation of the Armenian Patriotic Inelligentsia in Russia: The First Generations,"*Armenian Review*, Autumn 1983, Vol. 36, #3, pp. 18-34.

192 **Tadeusz Swietochowski**, "Azerbaijan: Between Ethnic Conflict and Irredentism," *Armenian Review* (Summer/Autumn 1990, Vol. 43, #2-3), pp. 35-49.

193 **Ronald Suny**, "Quelques remarques sur le caractere national, la religion et la maniere de vivre des Armeniens," in *Les Armeniens: Le visage d'un peuple*, ed. by Roupen Boghossian (Venise, Octobre, 1985), pp. 97-111.

պատկերացնել, օրինակ, թե ինչպիսի նախնական պատկերացումներով պետք է Հայաստան ժամանած լինի նոր նշանակված ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմանը՝ 1998 թ. օգոստոսին Սյունիի հետ հանդիպելուց և «լուսավորվելուց» հետո: Այս ամենը հնարավոր է դարձել նաև այն պատճառով, որ սփյուռքահայությունը, առանձնապես՝ ամերիկահայությունը չատ վատ գիտի իր լեզուն և իր արմատների պատմությունը: Սակայն, այս հարցում մեր՝ Հայաստանի գիտնականների մեղքի բաժինն ամենամեծն է: Իսկ ամենավտանգավոր երևույթն այն է, որ Սյունիի համբավը սփյուռքում չշմեցրել է նաև որոշ հայաստանցիների, և նրա գրածը սկսվել է տպագրվել այստեղ՝ Հայաստանում[194]*: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի հետևանքներով են հղի այսօրինակ զարգացումները:*

Ավելին՝ Սյունին հրավիրվեց և մասնակցեց Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունների հարցերին նվիրված՝ 1997 թ. հունիսին Հայաստանում անցկացված գիտաժողովին: Թեև Սյունիի պես մեկի Հայաստան հրավիրվելը պետք է թյուրիմացություն համարել, սակայն, այս դեպքում, թերևս առաջին անգամ, նրա հակահայկական ընթացքն ուժգին հակահարված ստացավ հայաստանցի մասնագետների կողմից, իսկ հայ ուսանողությունը տվեց նրա կատարելապես անթերի բնորոշումը՝ «գաղափարախոսական դիվերսանտ»[195]*: Սա՛ է,*

---

194 Տե՛ս **Ռոնալդ Գրիգոր Սյունի**. Հայաստանը սառը պատերազմի մեջ. – *Միտք* («Ազատամարտ» շաբաթաթերթի գիտատեսական հավելված), թիվ Ե, մայիս, 1993 թ., էջ ԻԳ–ԻԵ:

195 Տե՛ս «ՀԱՀ ուսանողությունն՝ ի պատասխան Անդրանիկ Բուռնազյանի և այլոց» հրապարակումը «Ազգ» օրաթերթում (15 հուլիսի 1997 թ.), էջ 4: Խիստ ուշագրավ է, որ գիտաժողովում Սյունիի ունեցած խայտառակ ելույթի դրույթները, որոնց մի մասն «Ազգ»-ում նշել են Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողները, գրեթե նույնությամբ գտնում ենք Ղարաբաղյան հակամարտության գծով ԱՄՆ հատուկ պատվիրակ, դեսպան Ջոն Փրեսելի 1996 թ. հուլիսի 30-ին ԱՄՆ Կոնգրեսի Միջազգային հարաբերությունների կոմիտեի առջև արտասանած ելույթում (հմմտ. Արմեն Այվազյան. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը», Երևան, «Հայաստան», «Հայինֆո», 1998, էջ 11–

թերևս, առավել խոստումնալից և փոքր-ինչ հանգստացնող զարգացումը:

Նշանակում է՝ դրությունն անհուսալի չէ՝ դեռևս շտկելի է:

12, ծնթ. 8): Բացի վերոհիշյալ հրապարակումից, Սյունիի ելույթի քննադատությամբ հանդես եկան նաև երևանյան «Իրավունք» շաբաթաթերթը (27 հունիսի, 1997), դարձյալ «Ազգ»-ը (27 հունիսի, 1997) և «Голос Армении» եռօրյան (3 հուլիսի, 1997): «Ազգը», սակայն, մոռացության մատնելով իր նախորդ երկու հրապարակումը, մեկ տարի անց՝ 1998 թ. հունիսի 11-ին թարգմանաբար ներկայացրեց Սյունիի մի հոդվածը՝ Թուրքիայում նրա կարդացած «հերոսականն» դասախոսության մասին: Կարծում ենք, եթե «Ազգ»-ի խմբագրությունը հարմար էր նկատել անպայման հրապարակել այդ նյութը, ապա պարտավոր էր գոնե հիշեցնելու ընթերցողին ընդամենը մեկ տարի առաջ Սյունիի մասին «Ազգ»-ում հրապարակվածը, որը ընթերցողին կօգներ ճիշտ կողմնորոշվելու հեղինակի ով լինելու, Թուրքիայում նրա անակնկալ հայտնվելու ու այնտեղ «սխրանքներ» գործելու իսկական ետնախորքի մեջ, այլ ոչ՝ ներկայացնելու Սյունիին իբրև «հայտնի պատմաբան, Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության ամբիոնի դասախոս» բնորոշումներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ամերիկյան «հայագիտության» ընդհանուր միտումները, զարգացումները և դրանց հետևանքները

1. Հայագիտական դաշտի «իշխող բարձունքների» գրավումը

Իրականում Սյունիի գրքի ծնվելն ու գովերգվելն օրինաչափ երևույթներ են: Սյունին այլ բան չի արել, սոսկ՝ հայագիտության ամերիկյան դպրոցը ներկայացրել է իր ողջ «պերճանքով ու չքեղությամբ»: Առավել հստակ պատկերացնելու համար, թե «գիտական» ինչ մթնոլորտում է ստեղծագործում Սյունին, ստորև համառոտակի կանդրադառնանք հայագիտության բնագավառում ամերիկացի առաջատար մի շարք մասնագետների գործունեությանն ու «նվաճումներին»:

Ամերիկյան «հայագիտական» դպրոցը գրավել և ատամներով պաշտպանում է հայագիտության դաշտի հետևյալ իշխող բարձունքները.

1. Հայերը հայտարարված են հայկական լեռնաշխարհում «եկվոր» տարր.

2. Հայոց ոսկեդարի երեք գլխավոր պատմիչների՝ Մովսես Խորենացու, Եղիշեի և Փավստոս Բուզանդի երկերը հայտարարված են անարժանահավատ նյութեր պարունակող աղբյուրներ:

3. Զանազան ձևերով նսեմացվում են հայերի ազգային բնավորությունը, արժանապատվությունը, ինչպես նաև հայ-

կական քաղաքակրթության և մշակույթի մեծագույն նվաճումները (պատկերման եղանակները տարաբնույթ են):

4. Հին և միջնադարյան հայկական պետականությունը ներկայացվում է իբր միշտ օտար ուժերի ճեռքին խաղալիք եղած, գրեթե երբեք կենտրոնացված իշխանություն չունեցած թույլ և անարյուն մի գոյություն:

5. Հայաստանի պատմական ժողովրդագրությունն աղճատվում է ու Հայաստանում գրեթե միշտ ցուցադրում սակավահայություն (անսքող կեղծիք):

6. Այսօր Հայաստանի և ողջ հայության համար առաջնահերթ կենսական նշանակություն ունեցող՝ Արցախի ազատագրության ամրապնդման հարցում ամերիկացի «հայագետները» պաշտպանում են ադրբեջանական տխրահռչակ կեղծարարությունը, ըստ որի՝ Արցախն իբր եղել է Կովկասյան Աղվանքի բնիկ տարածքը, ուր իբր նախապես ապրել են ոչ թե հայերը, այլ ադրբեջանցիների «ուղղակի նախահայրեր» հորջորջվող աղվաններն: Այսպես՝ 1992 թ. լույս է տեսել մի ծավալուն մենագրություն, որի հեղինակը՝ այժմ Չիկագոյի համալսարանում ասիստենտ-պրոֆեսորի (Assistant Professor) *պաշտոնով դասավանդող Ա. Ալթստատն միտումնավոր անքննադատ եղանակով վերարտադրել է Չիյա Բունիաթովի, Ցարդա Մամեդովայի և ադրբեջանցի այլ կեղծարարների տեսություններն*[196]*:*

Այժմ փոքր-ինչ մանրամասն քննենք կեղծված գլխավոր դրույթները:

---

196 **Audrey Altstadt**, *The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule* (Hoover Press, 1992), 331 pages.

2. Հայերի՝ Հայկական լեռնաշխարհում եկվոր լինելու թեզը

Այս թեզի քաղաքական ենթատեքստը շատ պարզ է. եթե հայերը եկվորներ են Հայկական լեռնաշխարհում և փոխարինելու են եկել ինչ-որ այլ ժողովուրդների, ապա մեկ այլ պատմական ժամանակահատվածում այդ տարածքից նրանց օտարացումը դիտվելու է որպես զրեթե բնականոն երևույթ: Եթե հիշենք, որ թուրք որոշ հեղինակներ նույնիսկ մեղադրում են հայերին «պատմության մեջ առաջին ցեղասպանությունն իրականացնելու», այն է՝ ուրարտացիներին իբր բնաջնջելու մեջ[197]*, ապա 20-րդ դարի սկզբին թուրքերի իրականացրած հայոց ցեղասպանությունն այլևս փորձելու են նկատել որպես զգալի չափով արդարացված իրադարձություն, նույնիսկ պատմական փոխհատուցման պես մի բան:*

Հայերի եկվորության թեզն առաջացել է տակավին 19-րդ դարի վերջում, երբ հայտնաբերվեցին ուրարտական կոչված սեպագրերը. ու անմիջապես էլ հայտարարեցին, թե իբր «նախահայերը» Հայկական լեռնաշխարհ են գաղթել միայն մ.թ.ա. 6-րդ դարի կեսերին: Այս տեսակետը, ինչպես վերն արդեն նշել ենք, գիտական քննություն չբռնեց: Սակայն, կարծում ենք, ընթերցողն ինքն արդեն կարող է մակաբերել, թե ինչու՞ Ամերիկայում թարգմանել ու երկու անգամ՝ 1985 և 1995 թթ., հրատարակել են հայերի եկվոր լինելը փողահարող գլխավոր երկը՝ լենինգրադյան պրոֆեսոր Իգոր Դյակոնովի խիստ կողմնակալ աշխատությունը[198]*: Դյակոնովի գիրքը մոսկովյան կենտրոնից պարտադրվեց Հայաստանի Ակադեմիային. և պատահական չէ, որ այն Երևանում լույս ընծայվեց 1968 թ.:*

---

197 Տե՛ս **Մ. Զուլալյան.** *Հայոց պատմության խեղաթյուրումը*, Գշվ. աշխ., էջ 41:

198 Игорь М. Дьяконов, Предистория армянского народа. Ереван: АН, 1968. **Igor M. Diakonoff**, *The Pre-history of the Armenian People.* The English translation by Lori Jennings (Delmar: Caravan Books, 1985 and 1995).

Բանն այն է, որ 1965-1968 թթ. Հայաստանում արագորեն ձևավորվում էր Արևմտյան Հայաստանի թուրքական բռնազավթմանը վերջ տալու պահանջով հզոր ժողովրդական շարժում: Անկանխատեսելի զարգացումներով հղի այս հուժկու ժողովրդական շարժումն աննախադեպ էր Խորհրդային Միության պատմության մեջ, այն չափազանց վտանգավոր էր և Կրեմլի համար իրոք կարող էր դառնալ մեծ գլխացավանք: Ինչպես ցույց տվեցին ավելի ուշ՝ 1988-1991 թթ. ԽՍՀՄ-ում տեղի ունեցած իրադարձությունները, հայկական ազգային շարժումները՝ իրենց հզոր ժողովրդականության և արտերկրյա կապերի շնորհիվ, իրոք ընդունակ էին քայքայելու խորհրդային կայսրության ազգային քաղաքականության հիմքերը: 1968 թ. երևանում հրապարակելով մի գիրք, որ Հայկական լեռնաշխարհը հայտարարում էր ինչ-որ ուրիշ էթնիկ խմբերի նախնական հայրենիքը, Կրեմլը, ի թիվս ավանդական բռնի և ոչ-ավանդական միջոցառումների, «գիտական» հարված էր հասցնում հայկական ժողովրդական նոր ծիլ տված շարժման ծրագրային դրույթներին:

Իհարկե, ակադեմիկոսներ Գրիգոր Ղափանցյանի և Գևորգ Ջահուկյանի հիմնարար ուսումնասիրությունները ԱՄՆ-ում Դյակոնովի գրքի բախտին արժանանալ չէին կարող. չէ՞ որ դրանք ապացուցում են հայերի բնիկությունը Հայաստանում՝ Ուրարտական պետության հիմնադրումից դարեր առաջ[199]: Ի դեպ, Դյակոնովի գիտական անաչառության մասին դատելու համար, բավական է հիշել, որ նա «ոտքի վրա»՝ ընդամենը 4-5 էջում, «անհիմն» է հայտարարել Ղափանցյանի և Ջահուկյանի ծավալուն աշխատությունները[200] (այդ աշխատությունների. գիտական բարձր արժեքը հաստատվել է հետագա բազմաթիվ ուսումնասիրություններով[201]: Իսկ հայերի փուլուգիա-

---

199 Տե՛ս վերը, ծնթ. 18:

200 Տե՛ս Дьяконов, Предистория армянского народа, стр. 209-214.

201 Տե՛ս, օրինակ, Հ. Խ. Բարսեղյան. Գրիգոր Ղափանցյանը լեզվաբան-հայագետ (ծննդյան 110-ամյակի առթիվ). - *Պատմա-բանասիրական հանդես* 1997, 2 (146), էջ 33-40:

կան ծագման անհնարինությունը եզրահանգած՝ գերմանացի գիտնական Օ. Հաասի մենագրությունը (Die phrygischen Sprachdenkmäler, Sofia, 1966) *արժանացել է Դյակոնովի քամահրական մերժմանը ընդամենը մի... ծանոթագրության մեջ*[202]*: Ինչպես նշում է ակադ. Բ. Առաքելյանը, Դյակոնովը նաև «բացասական վերաբերմունք է ցուցաբերում հայկական աղբյուրների, մասնավորապես՝ Մովսես Խորենացու պահպանած ավանդական տեղեկությունների նկատմամբ»*[203]*: Այս փաստը Դյակոնովի կողմնակալությունը մատնում է լավագույնս (Խորենացուն «գերքննադատելու» քաղաքական շարժառիթների մասին առավել մանրամասն կխոսենք ստորև):*

Այս առումով ուշագրավ են ամերիկացի «հայագետների» վերջին մի քանի ելույթները: Հայաստանի անկախացումից անմիջապես հետո մի կոչ-զգուշացում ուղղվեց բոլոր նրանց, ովքեր կփորձեն կասկածի առնել հայերի եկվորության մասին փուչ թեզը: Ճավեշտ է, սակայն այդ կոչը հրապարակողի դերում՝ Ուրարտուի և հայերի ծագումնաբանության խնդիրների իր անճարակ «մեկնաբանություններով» հանդես եկավ այս հարցերի հետ մասնագիտական որևէ առնչություն չունեցող մի անձնավորություն՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի Հայկական բաժնի պատասխանատու Լևոն Ավդոյանը: 1992 և 1993 թթ. կարդացած իր զեկուցումների և դրանք ամփոփող առանձին ընդարձակ հոդվածի մեջ, Ավդոյանը, փաստական նյութի հետ կապ չունեցող տարատեսակ դատողություններ անելուց հետո, հավասարության նշան դրեց հայերի բնիկ լինելն ապացուցող հեղինակների և ադրբեջանցի հայտնի կեղծարար Զիյա Բունիաթովի միջև[204]*: Արևմտյան բոլոր «անհնազանդ» գիտնա-*

---

202 Նույն տեղում, էջ 243.

203 Նույն տեղում, էջ 184–187. հմմտ. **Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան.** *Ուրարտու-Հայաստան*, էջ 36, ծնթ. 41:

204 **L. Avdoyan**, "Afro-Centrism, Armeno-Centrism and the Uses of History," in **Jean-Pierre Mahé and Robert W. Thomson**, eds., *From Byzantium to Iran: Armenian Studies in Honour of Nina G. Garsoian* (Atlanta, Georgia: Scholars Press, 1997), pp. 81-96: on 91.

կաններին ուղղված այս հոդված-նախազգուշացման ամբողջ իմաստը պարփակված է հետևյալ նախադասության մեջ. «այդ (իմա՝ Հայաստանի -- Ա. Ա.) հողի վրա հայերը տիրապետություն են հաստատել այլ ժողովուրդների տիրապետությունից դարեր հետո» (...the Armenians, whose dominance over the land **comes after centuries of dominance by other peoples** - *ընդգծումն իմն է՝ Ա. Ա.*)[205]*: Այսքանով չբավարարվելով, Ավդոյանն առաջ է անցնում և դոնքիշոթավարի գրոհում աստվածաշնչական մի հայտնի ավանդության վրա, ինչ է թե դրանից ևս մակաբերելի է Հայաստանում հայերի բնիկությունը: Նոսքը վերաբերում է տարածված երկհազարամյա հայկական, եբրայական, հունական և եվրոպական այն ավանդությանը, ըստ որի Նոյյան տապանն իջել էր Արարատ լեռան գագաթին ու, հետևաբար՝ Հայաստանը մարդկության բնօրանն է, իսկ հայերն էլ Նոյի այն ժառանգներն են, որոնք մնացել են իրենց բուն նախնական հայրենիքում: Ավդոյանի համար «հաստատված փաստ» է, որ Աստվածաշունչը նկատի է ունեցել ո՛չ թե Արարատ լեռը, այլ սոսկ «Արարատի/Ուրարտուի սարերը»: Ավդոյանը, չգիտես ինչու, ջղաձգվում է նաև միջնադարյան մեկ այլ՝ Եղեմի պարտեզը Հայաստանում տեղադրող ավանդությունը հիշելիս*[206]*: Ընդամին, Ավդոյանը մի կողմից գովաբանում է Ի. Դյակոնովին, Կ. Թումանովին և Ն. Գարսոյանին (վերջինս նույնպես անվերապահորեն գրում է հայերի եկվորության մասին, առանց մե՛կ բառով իսկ հիշելու հայերի բնիկությունը հաստատող տեսակետները*[207]*), իբրև օբյեկտիվ, անկաշառ գիտնականների, իսկ, մյուս կողմից, քննադատում է, կրկին* առանց որևէ փաստարկի, *իր օբյեկտիվ դիրքով հայտնի Դեյվիդ Մ. Լանգին («կասկածելի» անվանելով նրա աշխատությունները), Լևոն Զեքիյանին ու Էդվարդ Գալ-*

---

205 Նույն տեղում, p. 89.

206 Նույն տեղում, p. 87, note 22.

207 Thomas F. Mathews and Roger S. Wieck, eds., *Treasures in Heaven: Armenian Illuminated Manuscripts* (The Pierpont Morgan Library, New York: Prinston University Press, 1994), p. 5.

բեկյանին, որոնք համարձակվել էին անգլերենով գրել հայերի՝ Հայաստանում բնիկ լինելու մասին[208]:

Ավդոյանի եւրյթի ծրագրային բնույթ ունեցալը վերջերս ստացավ մի հետաքրքրական հաստատում եւս: 1996-1997 թթ. հայ երիտասարդ գիտնական Ա. Մովսիսյանը, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ղեկավարությամբ, աշխատում էր ընթերցել ուրարտական գաղափարագրերը (sic – ո՛չ սեպագրերը), որոնց ուսումնասիրությունը դեռ նոր է սկսվում: Ա. Մովսիսյանի պրպտումները հանգել էին տակավին հաստատում չգտած այն վարկածին, համաձայն որի այդ հիերոգլիֆները գրված են հին հայերենով: Այս վարկածի հրապարակմանն առնչվելով հետևեց Հարվարդի համալսարանի՝ Մաշտոցի անվան հայագիտական ամբիոնի պրոֆեսոր Ջեյմս Ռասսելի՝ մամուլով լայնորեն սփռված հայտարարությունը, որտեղ նա՝ նախապես Ավդոյանի առաջադրած եղանակով, բունիաթովականության մեջ մեղադրեց հայ գիտնականներին, առանց դույզն իսկ խորամուխ լինելու հարցի էության մեջ, նույնիսկ չիմանալով, որ խոսքը վերաբերում է ուրարատական գաղափարագրերին, և ո՛չ վաղուց ի վեր հիմնականում վերծանված սեպագրերին[209]: Այստեղ կարևորն այն չէ, թե Ա. Մովսիսյանի վարկածը հետագայում կհաստատվի կամ կմերժվի, այլ այն, որ կրեմլյան քենլադրանքից ազատված հայաստանյան հայագիտությանն այժմ էլ փորձում են պարտադրել «Հարվարդյան սանձը»:

---

208 Նույն տեղում, p. 86, 91-92.

209 Տե՛ս, օրինակ, Голос Армении, 15 марта 1997 г., с. 4.

3. Մովսես Խորենացու, Եղիշեի և Փավստոս Բուզանդի երկերի ապապատմականացման ձկրտումները

3.1. Մովսես Խորենացու «Հայոց պատմութան» «քննություն»-ը

Հայոց պատմագրության հիմքը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» անվստահելի աղբյուր հռչակելը, իսկ հեղինակին էլ «ստախոս» և «ինքնակոչ» անվանելն ունեն քաղաքական երկու այժմեական նպատակ.

ա) առանց Խորենացու տեղեկությունների մենք՝ հայերս, երբեք չենք գտնի մերօրյա՛ ռազմավարական նշանակություն ունեցող բազմաթիվ հանգուցային հարցերի պատասխանները, օրինակ՝ թե արդյո՞ք հայերը Հայոց բարձրավանդակի բնիկներո՞ն են, թե ո՞չ, ե՞րբ և ինչպե՞ս է ստեղծվել Հայոց պետությունը, ի՞նչ հզորություն և միջազգային կշիռ է այն ունեցել, ազգային ինքնագիտակցության ի՞նչ մակարդակ ենք մենք ունեցել հին ժամանակներում, ի՞նչ կառույց և ի՞նչպիսի ավանդույթներ է ունեցել հին հայկական բանակը և այլն:

բ) Մովսես Խորենացուն և նրա երկն այսպես վարկաբեկելն ու իբրև անվստահելի սկզբնաղբյուր ներկայացնելը մեխանիկորեն հարվածում է հայ հին և միջնադարյան ամբողջ պատմագրությանը, որի պատկերացումները Հայոց պատմության մասին, ինչպես նաև սկզբունքներն ու մոտեցումները պատմական նյութին, բնականաբար, ունեն Պատմահոր խորը և բարերար ազդեցության կնիքը: Դրանով իսկ փորձում են մեկ առ մեկ պատմականորեն անարժեք հռչակել հայ պատմագրության մյուս գլուխգործոցները ու նրանց պարունակած փաստական ահռելի նյութը:

Ինչպես հայտնի է, Մովսես Խորենացու երկի ուսումնասիրությունն անցել է 19 դարի վերջի և 20 դարի սկզբի մոդայիկ, այսպես կոչված՝ գերքննադատության (գիպերկրիտիցիզմի) փուլի միջով: Բանասիրության նորագյուտ գիտաքննական եղանակներով այդ տարիներին մի շարք գիտնականներ (Ա.

Գուտշմիդտ, Ա. Կարիեր, Գ. Խալաթյանց, Հ. Դաղբաշյան, հետագայում սրանց միացան նաև Ն. Ադոնցը Հ. Մանանդյանը և ուրիշներ) Մովսես Խորենացուն հայտարարեցին հեղինակ ոչ թե 5-րդ դարի, ինչպես Խորենացին ինքն էլ հստակ իր մասին հաղորդել է, այլ ավելի ուշ՝ 7, 8 կամ 9-րդ դարում ստեղծագործած մի ինքնակոչ: Ժամանակագրորեն ավելի այս կողմ գալ չկարողացան, որովհետև 10-րդ դարի հեղինակները, հատկապես՝ Թովմա Արծրունին ու Հովհաննես Դրասխանակերտցին, առատորեն օգտվել են Խորենացու երկից: Այս գիպերկրիտիկներից մի քանիսը, հատկապես՝ Գ. Խալաթյանցը, Ա. Քարիերը և Հ. Դաղբաշյանը, ավելի առաջ էին անցնում ու անարժանահավատ հայտարարում Խորենացու երկի պարունակած պատմական ամբողջ նյութը: Սկսած արդեն 1890-ականներից, պատմագիտական տեսակետից անվարժ այս քննադատությունն ինքը հիմնավորապես քննադատվեց այնպիսի խոշոր հայագետների կողմից, ինչպիսիք էին, օրինակ, Ն. Բյուզանդացին, Հ. Տաշյանը, Ֆ. Կոնիբերը, Գ. Տեր-Մկրտչյանը, Մ: Աբեղյանը, Ստ. Մալխասյանցը, Թ. Ավդալբեկյանը, Հ. Աճառյանը և այլոք: 1940-60-ական թթ. դրությամբ, խորհրդահայ մի շարք մասնագետների քննախույզ պրպտումների (հատկապես՝ Գագիկ Սարգսյանի երկու ուղեննիշային մենագրություններիի[210] հրապարակումներով Խորենացու երկի 5-րդ դարին պատկանելը և անգերագնահատելի արժանահավատությունն այլևս մեկընդմիշտ պարզված փաստեր էին, որոնք հետագա տարիներին իրենց համոզիչ հաստատումը գտան բազմաթիվ այլ գիտնականների ուսումնասիրություններում և հայտնագործություններում[211]:

---

210 Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան.** *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը.* Երևան, ԳԱ, 1965: **Նույնի՝** *Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին.* Երևան, ԳԱ, 1966:

211 Տե՛ս, օրինակ, **Gaguik Sarkissian,** *"The History of Armenia" by Movses Khorenatzi* (Yerevan: State University Press, 1991), pp. 47-58. Խորենացիագիտության մատենագիտության ծավալների մասին որոշ

Սակայն 1950-ական թթ. անսպասելիորեն խորհնացիագիտության ասպարեզ ցատկեց թուրքական գաղտնի ծառայությունը՝ ի դեմս իր գործակալ վերոհիշյալ Էսաթ Ուրասի: 1950 թ. Անկարայում լույս տեսավ վերջինիս հաստափոր «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» վերը նշված հանրահայտ գեղծարարությունը, որը Խորհնացուն ընտրել էր որպես հատուկ հարձակմանն արժանի կարևոր թիրախ[212]: Անշուշտ, Ուրասը հայոց պատմությունը կեղծելու հանձնարարությունն ստացել էր ո՛չ նույն 1950 թ., այլ դրանից առնվազն մի քանի տարի առաջ, ամենայն հավանականությամբ՝ 1945 թ., երբ Խորհրդային Միությունը մարտի 19-ին չեղյալ հայտարարեց 1925 թ. սեպտեմբերի 17-ի Թուրք-սովետական պայմանագիրը, իսկ հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը կայացած Պոտսդամի կոնֆերանսում՝ Մոլոտովն արդեն պաշտոնապես տարածքային պահանջներ ներկայացրեց Թուրքիային Կարսի և Արդահանի վերաբերյալ, դրանք հիմնավորելով հայ ժողովրդի և Հայկ. ԽՍՀ պատմական իրավունքներով[213]: Հետաքրքիր է, որ այդ պահին

պատկերացում կարող են տալ Երևանում կայացած՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը» միջազգային գիտաժողովի դրույթները (Երևան, ԳԱ, 1991):

212 **Esat Uras**, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi* (Ankara: Yeni Matbaa, 1950), pp. 3-15, Esat Uras, *The Armenians In History And The Armenian Question* (Istanbul: Documentary Publications, 1988), pp. 225-244. Օրինաչափ է, որ թուրք պատմագրությանը և, մասնավորապես, Ուրասին խիստ քննադատության ենթարկած ամերիկացի գիտնական Ֆոսսը, ընկնելով ԱՄՆ-ում Խորենացուն քննադատողների ազդեցության տակ, ինքն էլ է բացառում է Պատմահոր «Հայոց պատմության» և հայկական մյուս թանկարժեք պատմագրական աղբյուրների հավաստիությունը, ասելով, թե հայոց պատմությունը հնարավոր է վերականգնել... հույն և հռոմեական պատմիչների հաղորդած նյութի հիման վրա միայն: Բացի այդ, Ֆոսսը նույնպես չափից դուրս հաճախ անտեղի օգտագործում է Անատոլիա և արևելյան Անատոլիա եզրերը՝ Հայաստան ասելու փոխարեն՝ **Clive Foss**, "The Turkish View of Armenian History: A Vanishing Nation," *op. cit.*, pp. 258-260.

213 Այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Christopher J. Walker**, *Armenia: The Survival of a Nation.* Revised Second edition (New York: St. Martin's Press, 1990), pp. 360-363.

ԱՄՆ նախագահ Հ. Տրումենը այդ հարցը համարում էր թուրք-խորհրդային երկկողմանի հարաբերությունների առարկա, դեմ չլինելով որևէ լուծման, որին կհանգեին Թուրքիան և Խորհրդային Միությունը: Սակայն, Թուրքիայի թիկունքին կանգնեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջերչիլը, իսկ 1947 թ. մարտին՝ ԱՄՆ-ում «Տրումենի դոկտրինայի» հռչակումով, ԱՄՆ-ն ևս ստանձնեց «կոմունիստական վտանգի» առջև կանգնած Թուրքիայի պաշտպանությունը:

Հասկանալի է, որ 1940-ական թթ. (ու այդուհետև՝ միշտ, քանզի ԽՍՀՄ-ը, հարմար առիթի դեպքում, կարող էր միշտ էլ վերարծարծել տարածքային նույն պահանջը) Թուրքիայի համար շատ անհրաժեշտություն էր առաջացել «ապացուցել», որ իր արևելյան մասում մնացած հայկական հողերը պատմականորեն երբեք Հայաստան չեն եղել:

Պատահականությո՞ն էր, ուրեմն, որ Սառը պատերազմի բորբոքման տարիներին Պատմահոր նկատմամբ թուրքական պրոպագանդայի մոտեցումները «գիտականորեն» զարգացվեցին ՆԱՏՕ-ի խմբավար երկրում՝ ԱՄՆ-ում, անմիջապես Թուրքիայի ՆԱՏՕ-ին անդամագրվելուց (1952 թ.) հետո: ԱՄՆ-ում Խորենացու (իմա՝ Հայ պատմագրության և Հայոց պատմության) դեմ նոր խաչակրաց արշավանքի նախաճեռնողի դերում հանդես եկավ պրոֆեսոր Կիրիլ Թումանովը: Վերջինս, առանց որևէ նոր լուրջ փաստարկ ներկայացնելու, և, որ ամենակարևորն է՝ ամբողջությամբ զանց առնելով վերջին տասնամյակներում հրապարակված արժեքավոր ուսումնասիրությունները, *վերարծարծեց Մովսես Խորենացուն ու նրա «Հայոց պատմության»ը վերաբերող հին դրույթները: Ստորև մեջբերված Թումանովի խոսքերը ցուցադրում են Էսաթ Ուրասի հետ նրա գաղափարաբանական կապն ու հարազատությունը.*

> *Այս որոշակիորեն խորհրդավոր և միստումնավոր կերպով հնարող հեղինակը... որ ձևացնում էր, թե գրում է իր ապրած իսկական ժամանակից շատ ավելի վաղ շրջանում... ստեղծեց իր սեփական ավանդույթն ու դպրոցը, ամբողջությամբ խեղաթյուրելով իրեն անմիջապես նախորդող անց-*

*յալն ու այդպիսով իսկ ձևավորելով [Հայոց] հաջորդ սե-
րունդների պատկերացումները պատմության մասին:*

[This somewhat mysterious and deliberately mystifying author... who pretended to belong to an epoch far anterior to his own... but also forged a tradition, a school, of his own, which completely disfigured the more immediate past and so molded the historical perspective of generations to follow.][214]

Թումանովը գրեց, թե «կեղծ-Մովսես Խորենացու "Հայոց պատմությունը" կազմվել է 8-րդ դարի երկրորդ կեսին, սակայն ձևացվել է՝ թե գրվում է 5-րդ դարի երկրորդ կեսին (History of Armenia of pseudo-Moses of Chorene, purporting to have been written in the latter half of the fifth century, but actually compiled in the latter half of the eighth)[215]*: Թումանովն էր, որ դրեց Խորենացուն անվանարկելու ամբրիկյան ավանդության սկիզբը, գրելով, թե՝ «լինելով մտածված կերպով մոլորեցնողի նման մեկը, այս հեղինակը վաստակել է իր կեղծ-Մովսես անունը* (Being, thus, something of a deliberate mystifier, this author has deserved his appelation of Pseudo-Moses)»[216]*:*

Այսքանով հանդերձ, խորենացիագիտությունն արդեն այնպիսի խոշոր նվաճումներ էր արձանագրել, որ Թումանովը անմիջապես չհամարձակվեց հուչակել Խորենացու Պատմությունը անվստահելի աղբյուր, ասելով, որ այն «այդուամենայնիվ, պարունակում է հնագույն ժամանակաշրջանին վերաբերող անգնահատելի տեղեկություններ»[217]: Իրականում, Թումանովն զբաղված էր Խորենացու դեմ հաջորդ՝ կատաղի և «վճռական» գրոհի նախապատրաստմամբ: Այդ գրոհը ձեռնարկեց Հարվարդում ու, վերջերս էլ, Օքսֆորդի համալսարա-

---

214 Տե՛ս **Cyril Toumanoff**, *Studies in Christian Caucasian History* (Georgetown University Press, 1963), p. 108.

215 **Cyril Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, pp. 104-105.

216 Նույն տեղում, p. 330.

217 Նույն տեղում, pp. 104-105.

նում հայագիտություն դասավանդող «աշխարհահռչակ պրոֆեսոր» Ռոբերթ Թոմսոնը, որը 1978 թ. առաջին անգամ անգլերեն թարգմանեց Մովսես Խորենացու գլուխգործոցը:

Թոմսոնն սկսեց նրանից, որ Խորենացու «Հայոց պատմությունը» թարգմանեց ո՛չ թե «Հայաստանի պատմություն» (History of Armenia), ինչպես որ նրանից առաջ դեռևս ճիշտ թարգմանում էր Թումանովը[218], այլ՝ առաջին անգամը լինելով, «Հայերի պատմություն» (History of the Armenians): Ասենք, որ արդի հայագիտությունը միակարծիք է, որ իրենց երկերը «Հայոց պատմություն» վերնագրելով, մեր ոսկեդարի պատմիչները նկատի են ունեցել Հայաստանի պետության և նրա մեջ ծաղկող հայկական քաղաքակրթության պատմությունը: Իսկ վերջերս Արտաշես Մաթևոսյանը, միանգամայն պատճառաբանված կերպով, ցույց տվեց, որ Խորենացու երկի խորագիրը եղել է ոչ թե սոսկ «Հայոց պատմություն», այլ «Պատմություն Հայոց Մեծաց», այն է՝ «Մեծ Հայաստանի պատմություն»[219]:

Այս առթիվ ուշագրավ է Թոմսոնի տված բացատրությունը.

> Թեև ոմանք կնախընտրեն թարգմանել Հայաստանի պատմություն, սակայն դասական հայերենում "Հայաստան" աշխարհագրական եզրը ավելի հաճախ հաղորդվում է "Հայոց աշխարհ, երկիր" ձևով (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)[220]:

---

218 Տե՛ս **Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, pp. 104, 108 և այլն:

219 **Ա. Ս. Մաթևոսյան**. Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտման թվականը. - *Էջմիածին*, 1991, Թ-Ժ, էջ 85-93: Նույն հոդվածը պարզ ցուցադրում է նաև «Հայոց պատմությունը» իբրև «Հայերի պատմություն» հասկանալու անհիմնարիությունը: Ֆրանսերեն լեզվով Խորենացու երկի վերջին թարգմանությունը նույնպես կրում է «Հայաստանի պատմություն» խորագիրը, տե՛ս **Moïse de Khorène**, *Histoire de l'Arménie*. Nouvell Traduction de l'arménien classique par Annie et J.-P. Mahé (Paris: Gallimard, 1993).

220 **Moses Khorenats'i**, *History of the Armenians*. Translation and

Ինչպես դժվար չէ նկատելը, Թոմսոնը Հայաստանին հաղորդում է սոսկ աշխարհագրական իմաստ, դրանով իսկ մատնելով այն, որ ինքը Հայաստան եզրին մոտենում է թուրքական պատմագրության կիզակետի միջով, տակավին Ուրասի կողմից ձևակերպված գաղափարախոսական սահմանումների համաձայն: Մինչդեռ Հայաստան եզրը, նախ և առաջ, նշանակում էր հայկական էթնոսով բնակեցված և դարեր շարունակ ազգային պետականություն վայելող տարածք, և ո՛չ թե լոկ աշխարհագրական հասկացություն, Աֆրիկայի կամ Հնդկաստանի պես մի եզր:

Մեկ պարբերությամբ չեղվենք խորհնացուց: Համոզվելով, որ իր կեղծիքները հակահարված չեն ստանում, Թոմսոնը լկտիացավ մինչև այն աստիճան, որ 1991 թ. իր Ղազար Փարպեցու «Հայոց պատմության» վերնագրի հետ վարվեց a la Բունիաթով. բուն խորագրից ջնջեց Հայաստան բառը և գրքի կազմի ու տիտղոսաթերթի վրա, նաև՝ բոլոր էջերի վերևում գրեց. «Ղազար Փարպեցու պատմությունը»: Եթե հիշենք, որ տխրահռչակ Զիյա Բունիաթովը ճիշտ նույն սկզբունքով Կիրակոս Գանձակեցու երկի վերնագրից Հայաստան անունը ջնջել և այն «Հայոց պատմությունից» վերածել էր սոսկ «Պատմության»[221], ապա, կարծում եմ, ամեն ինչ պարզ է: Սակայն, այս հարցում Թոմսոնը փոքր-ինչ անհետևողական և անփույթ եղավ. առաջաբանում և 33-րդ էջում նա Ղազար Փարպեցու երկի վերնագիրը նշում է իբրև «Հայերի պատմություն», սակայն անցնելով Փարպեցու շարադրանքին, նույն էջում այդ երկի հեղինակային վերնագիրն անզգուշորեն ճիշտ թարգմանում է՝ «Հայաստանի պատմություն»[222]:

---

commentary on the literary sources by Robert W. Thomson (Cambridge, Mass.: Harvard University Press, 1978), p. 61, note 120.

221 Паруйр Мурадян. История - память поколений: Проблемы истории Нагорного Карабаха. Ереван, "Айастан", 1990, с. 152.

222 Տե՛ս The History of Lazar Parpeci. Translated by Robert Thomson (Atlanta, Georgia: Scholars Press, 1991), p. 33.

Իր առաջաբան-«ուսումնասիրություն»[223] *Թոմսոնը Մովսես Խորենացուն մեղադրում է բոլոր հնարավոր և անհնար մեղքերի մեջ, ներառյալ՝ «խաբեություններին»* (mystifications)[224] *և զանազան «պատմություններ հնարելու»* (entirely Moses' own invention[225], Here also Moses invents a "history"[226], *դարձյալ՝* Moses invents a history[227], Again, he has given a personal, tendentious, and composite story[228]), *«դիտավորյալ աղբյուրներն աղավաղելու և դրվագներ հորինելու»* (He willfully distorts his sources and invents episodes)[229], *«կեղծարարության»* (fraud)[230], *«կատարյալ կեղծարարության»* (complete fraud)[231], *«աղավաղումներին»* (Moses definitely distorts his reading of Josephus)[232], *«իր աղբյուրը կեղծելու»* (has faked his source)[233], *«հայկական անուններին համար անհավատալի ստուգաբանություններ առաջարկելու»* (interest in implausible etymologies for Armenian names)[234], *«կեղծիքով Հայաստանը համաշխարհային ասպարեզ մտցնելու»* (false introduction of Armenia onto the world scene)[235], *«գոյություն չունեցած կերպար պատմության բեմի վրա ավելացնելու»* (Moses has added a nonexistent character to the stage of history)[236], *«պատմությունը հայացնելու» նպատակ ունենալու* (part of Moses'

---

223 Moses Khorenatzi, *History of the Armenians, op. cit.*, pp. 1-61.

224 Նույն տեղում, p. 27.

225 Նույն տեղում, p. 34.

226 Նույն տեղում, p. 35.

227 Նույն տեղում, p. 42.

228 Նույն տեղում, p. 45.

229 Նույն տեղում, p. 58.

230 Նույն տեղում, p. 34.

231 Նույն տեղում, p. 29.

232 Նույն տեղում, p. 26.

233 Նույն տեղում, p. 14.

234 Նույն տեղում:

235 Նույն տեղում, p. 27.

236 Նույն տեղում, pp. 34-35.

"Armenianizing" of history)[237], *«Հայաստանի գերակայությունը ցուցադրելու համար տեքստային փոփոխություններ»* կատարելու (The amendments to his story are all designed to show the preeminence of Armenia)[238], *Շամբատ անունը հորինելու* (the name Shambat he has invented)[239], *«կողմնակալության»* (tendentiousness)[240], *«բացահայտ կողմնակալության»* (patent tendentiousness)[241], *«տենդենցիոզ անախրոնիզմի»* (tendentious anachronism)[242], *«Հայաստանը գովաբանել-փառաբանելու իր ծանոթ սովորությանը տրվելու ու այդ նպատակով ինֆորմացիան փոփոխության ենթարկելու»* (he also indulged in his usual habit of adapting the information he found there ad maiorem gloriam Armeniae)[243], *«պատմական իրողությունների նկատմամբ քամահրական վերաբերմունք»* ունենալու (Moses' cavalier attitude toward historical realities)[244], *«բացահայտ կեղծ հայտարարություն»* (patently fraudulent claim)[245], *Եվսեբիոսի «ժամանակագրությունից ծավալուն գողագրություն»* (...the Chronicle was widely plagiarized by Moses)[246] *կատարելու, նույնիսկ՝ իր օգտագործած հեղինակներին միտումնավոր չհիշատակելու ու նաև նրանցից «իր փոխառությունները սեփական արտադրության լրացումներով զարդարելու»*[247] *և բազ-*

---

237 Նույն տեղում, p. 35.

238 Նույն տեղում, p. 37.

239 Նույն տեղում, p. 30.

240 Նույն տեղում, p. 37.

241 Նույն տեղում, p. 46.

242 Նույն տեղում, p. 49.

243 Նույն տեղում, p. 36.

244 Նույն տեղում, p. 60.

245 Նույն տեղում, p. 40.

246 Նույն տեղում, p. 33.

247 Նույն տեղում, p. 48 (Moses embroiders his borrowings from Koriun with additions of his own devising), cf, pp. 14 (Moses also mentions various Greek historical works without quoting them directly. etc.), 46 (Faustus Buzandats'i... is never mentioned by name).

մաթիվ այլ բաների մեջ: Գիտական էթիկայի խախտումներ կատարելու մեղադրանքը միայն ի՛նչ ասես արժե. ըստ Թոմսոնի՝ Պատմահայրը պետք է իր աղբյուրները հղեր այնպես, ինչպես ընդունված է մերօրյա պատմագիտության մեջ: Սակայն, Թոմսոնը «մոռանում» է, որ 5-րդ դարում այդ կարգի գիտական ապարատ չէին գործածում ո՛չ հույները, ո՛չ հռոմեացիները, ո՛չ ասորիները, ո՛չ չինացիները, և ո՛չ էլ սեփական պատմագրություն ստեղծած այլ ժողովուրդները[248]: Անհեթեթ և մոլի հայատյացության հայտարար է՝ պահանջելը Խորենացուց հղումների կիրառման այն ձևը, որ Եվրոպայում արմատավորվեց միայն 20-րդ դարի սկզբին: Իրականում՝ Թոմսոնի հայատյացությունն արտածվում է իր գրած առաջաբանի յուրաքանչյուր էջից: Այսքանն ասելուց հետո, Թոմսոնը եզրակացնում է, որ Մովսես Խորենացին, «փաստորեն, լկտի և կեղծարար խաբեբա է» (in fact, Moses is an audacious, and mendacious, faker)[249], «առաջին կարգի աճպարար:... Խիստ մեթոդաբանության մասին նրա հանդիսավոր հայտարարությունները նպատակ են ունեցել խաբել, շեղել քննադատական հայացքը և ապահովել իր սեփական տենդենցիոզ շարադրանքի ընդունելությունը» (he was a mystifier of the first order....His protestations of strict methodology were intented to deceive, to divert critical attention, and to encourage acceptance of his own tendentious narrative)[250]: Ինչպես ստորև կտեսնենք, այս բնութագրումները գերճշգրիտ բացահայտում են ի՛ր իսկ՝ Թոմսոնի «գիտական» գործունեությունը: Վերևում խոսեցինք Խորենացուն անհավաստի աղբյուր հռչակելու երկու քաղաքական նպատակների մասին: Թոմսոնն ունեցել է (մեծ հավանականությամբ՝ նրան պատվիրվել է) ևս մեկ կարևոր խնդիր. փորձել ապացուցելու հայ ամենամեծ ազգային հեղինակություններից

---

248 Հմմտ. **Gaguik Sarkissian**, "*The History of Armenia by Movses Khorenatzi* (Yerevan: State University Press, 1991) (in English), pp. 68-71:

249 **Moses Khorenatzi**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 58.

250 Նույն տեղում, p. 56.

մեկի անազնիվ լինելը, անվանարկել ու սևացնել այդ հեղինակությանը ու այդպիսով իսկ՝ նսեմացնել հայերի ազգային ինքնասիրությունը, «խեղճացնել» հայերին, նրանց «տեղը դնել», որպեսզի հանկարծ չատ չոգևորվեն իրենց փառահեղ պատմությամբ և Արևմուտքի դաշնակից Թուրքիայի չահերի դեմ «խելքից դուրս բաներ» չանեն, մի խոսքով՝ իրենք իրենց համարեն մի խեղճ ու կրակ ազգ, ըստ այդմ էլ՝ չարժվեն, գործեն ու առաջնորդվեն (ցավոք, այսպիսի մտայնությունից դեռևս չեն ձերբազատվել չատ և չատ հայեր): Պետք է խոստովանել, որ այս նպատակի իրագործումը մեծապես հաջողվել է: Սկզբում Նորենացու հասցեին արված վերոհիշյալ անվանարկությունները լուռ ու մունջ կուլ տվեցին սփյուռքահայ, հատկապես՝ անգլախոս մտավորականներն ու մեկենասները (չմոռանանք՝ Թոմսոնն այն ժամանակ էլ, հիմա էլ աշխատում և վարձատրվում է սփյուռքահայերի՛ գումարներով հաստատված ու գործող հայագիտական ամբիոններում): Նույն կերպ վարվեց Հայաստանի Գիտությունների Ակադեմիան, որը դեռ ավելին՝ Թոմսոնին երկիցս հրավիրեց Հայաստան՝ 1986 և 1998 թթ., իսկ բոլորովին վերջերս նույնիսկ ետնաբեմային զրույցներ հնչեցին Թոմսոնին ՀԳԱ արտասահմանյան անդամ դարձնելու մասին: Մինչդեռ ազգային առողջ նկարագիր ունեցող յուրաքանչյուր հայ մարդ ու, առավել ևս, հայ մտավորական չի կարող հանգիստ ու անխռով անցնել Պատմահորն ուղղված վերոբերյալ հայհոյաբանությունների կողքով:

Մենք նպատակ չունենք անդրադառնալու Թոմսոնի պատմագիտական տեսակետից չափազանց թերի և թույլ առաջաբանին, քանզի այն որոշ չափով քննադատվել է (թեկուզ և՝ մեզ հայտնի երեք քննադատներից առավել ուղղամիտ և սուր է արտահայտվել միայն մեկը՝ Պ. Հովհաննիսյանը, մյուս երկուսը՝ Լ. Տեր-Պետրոսյանը և Գ. Սարգսյանը Թոմսոնի նկատմամբ որդեգրել են անհարկի բարյացակամ-բարեկամական քննախոսական դիրքորոշում[251]: Նկատենք, սակայն, երեք

---

251 Տե՛ս **Լևոն Տեր-Պետրոսյանի** գրախոսությունը *Պատմա-բանասիրա-*

սկզբունքային կետ, որոնցից միայն առաջինն է, որ մատնանշել են Թոմսոնի նախորդ քննադատները, իսկ երկրորդն ու երրորդը կատարելապես անտեսվել են.

1. Մովսես Խորենացու Պատմության քննության Թոմսոնի մեթոդաբանական մոտեցումները հակագիտական են, քանզի նա, ինչպես ասացինք, զանց է առել՝ պարզապես չի անդրադարձել հայագետների ներկայացրած այն փաստերին ու փաստարկներին, որոնք հակասում են իրեն նախընտրելի պատասխաններին: Սա վերաբերում է հատկապես հայաստանցի հայագետներին, որոնց աշխատությունները, ի դեպ, Թոմսոնը սիրում է հիշել ոչ այլ կերպ, քան միայն վարկաբեկիչ քամահրական ընդմիջարկություններով[252]: Ինչ արժե միայն այն փաստը, որ Թոմսոնն իր առաջաբանում չի քննել (առավել ևս՝ մերժել) 1978 թ. դրությամբ խորենացիագիտության մեջ ամենածանրակշիռ և վերջին խոսք համարվող՝ 1965 և 1966 թթ. լույս տեսած, Գ. Սարգսյանի վերոհիշյալ երկու մենագրու-

---

կան հանդեսում 1980, No. 1, էջ 268-270: Պ. Հովհաննիսյան. Մովսես Խորենացու «Պատմություն Հայոցի» անգլերեն թարգմանության մասին. - *Բանբեր Երևանի Համալսարանի* 1981, No. 3 (45), էջ 237-239: **Gaguik Sarkissian**, "*The History of Armenia by Movses Khorenatzi*, *op. cit.*, pp. 47-86. այս քննադատությունը նախապես լույս էր տեսել ռուսերենով նույն հրատարակչությունում 1986 թ. և կրկին՝ 1991 թ.: Տե՛ս նաև իտալացի երիտասարդ հայագետ Ջուսթո Տրայինայի՝ Խորենացու 5-րդ դարին պատկանելիությունը հաստատող հետաքրքիր աշխատությունը՝ **Giusto Traina**, *Il complesso di Trimalcione: Movses Xorenaci e le origini del pensiero storico armeno* [Թրիմալչիոյի բարդույթը. Մովսես Խորենացին և հայ պատմական մտքի ծագումը] (Venezia: Eurasiatica, 1990).

252 Տե՛ս, օրինակ, **Elishe**, *History of Vardan and the Armenian War*. Transl. and commentary by Robert W. Thomson (Cambridge, Mass.: Harvard University Press, 1982), p. 19; **Moses Khorenats'i**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 39; **Moses Khorenatsi**, *Patmutiwn Hayots*. A facsimile reproduction of the 1913 Tiflis edition with an introduction by Robert W. Thomson (Delmar, New York: Caravan Books, 1981), p. XVIII; Review of Krikor H. Maksoudian's translation of Yovhannes Drasxanakertsi's *History of Armenia* in *Journal of the Society for Armenian Studies*, Vol. 3 (1987), p. 165.

թյուններէ դեթ մեկ փաստարկ: Սակայն, գիտնականին ոչ-հատուկ այս «չրջանցման» սկզբունքի կիրառման մեջ Թոմսոնը միայն հայաստանցի գիտնականներով չէ սահմանափակվել: Միայն մի օրինակ. Մովսես Խորենացուն վերաբերող իր կազմած մատենագիտության մեջ, Թոմսոնը նշել է բրիտանացի նշանավոր հայագետ Ճ. Կոնիբերի՝ Մովսես Խորենացու խնդիրներին առնչվող երկու հոդվածը, սակայն վերջինիս՝ «Մովսես Խորենացու ժամանակը» խորագրով չափազանց ուշագրավ հոդվածը[253] չէ հիշել: Թոմսոնի այս «մոռացկոտության» (իրականում՝ եղած գիտական ուսումնասիրություններին խորաթաթոնալու) պատճառը միանգամայն պարզ՝ է. իր այդ փայլուն ուսումնասիրության մեջ Կոնիբերը լուրջ քննադատության է ենթարկել իր ժամանակի գերքննադատների ճիշտ այն «փաստարկները», որոնց 1960-ական թթ. սկսած փորձում են հարություն տալ Թումանովներն ու Թոմսոնները: Կարծում ենք, այս «չրջանցման» կամ «անտեսման» սկզբունքները նկատի ուներ ակադ. Գագիկ Սարգսյանը՝ դիպուկ բառով որպես «անախրոնիզմ» բնորոշելով Թոմսոնի դատողությունները[254]:

2. Թոմսոնի քննադատները, ցավոք, չեն արել վերջինիս գրեթե յուրաքանչյուր նախադասությունից ուղղակի ինքնաբերաբար թելադրվող ամենակարևոր հետևությունը, այն է՝ Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» մասին գրելիս, Թոմսոնը զբաղվել է ո՛չ թե աննչաուռ գիտական հետազոտությամբ, այլ կատարել է քաղաքական պատվեր:

Ըստ Թոմսոնի, Մովսես Խորենացու նպատակն է եղել՝ «փորձել ի մի բերել հայկական ավանդությը և ներկայացնել այն ներդաշնակ, թեև տենդենցիոզ, ձևով, ու նաև հայերին ապահովել այնպիսի պատկառելի մի պատմությամբ, ինչպիսիք

---

253 **F. C. Conybeare**, "The Date of Moses of Khoren," *Byzantinische Zeitschrift* (Munich) 1901, #'s 3-4, pp. 489-504. Հմմտ. **Moses Khorenats'i**, *History of the Armenians, op. cit.*, pp. 369-386: on p. 378.

254 Տե'ս **Gaguik Sarkissian**, *"The History of Armenia" by Movses Khorenatzi, op. cit.*, p. 59.

ունեին ուրիշ ազգերը» (to provide the Armenians with a history as respectable as that of other nations)[255]. *ասել է՝ հայերի պատմությունը պակաս պատկառելի էր, քան այլ ազգերինը: Եթե Թոմսոնի այս հայատյաց միտքը բաղդատենք Մովսես Խորենացու հաղորդումները հնարովի հայտարարելու նրա ձախորդ փորձերի հետ, պարզ է, որ Թոմսոնի նպատակը հայերին ամեն կերպ իբր մի աննշան պատմություն ու մշակույթ ունեցող ազգ պատկերել փորձելն է: Իր առաջաբանը եզրափակող պարբերության մեջ Թոմսոնը բացահայտում է նաև իր մտահոգությունների քաղաքական ենթատեքստը՝ պարզ խոսում է Պատմահոր երկի արդիական՝ չխամրող նշանակության մասին. ըստ Թոմսոնի՝ հայ սերունդներին Մովսես Խորենացու հաղորդածը «19-րդ դարում կարևորագույն նշանակություն ունեցավ հայկական ազգայնականության առաջացման գործում: Այժմ նույնպես՝ այն (իմա՝ «Հայոց պատմությունը»՝ Ա. Ա.) դեռևս հզոր ուժ է ազգային ինքնության շուրջը տարվող բանավեճերում»*[256]*: Ահա՛ թե ինչն է Թոմսոնին դրդել՝ ամեն կերպ ձգտելու ոչնչացնել Խորենացու հաղորդումների նկատմամբ որևէ հավատ. նախ՝ որպեսզի հայոց ինքնության այս իսկական աղբյուրն այլևս երբեք հայերին չծառայի այնտեղից դարձյալ ազգային ոգի ու հայրենասիրություն սովորել-ժողովելուն, ապա, երկրորդ՝ որպեսզի աշխարհում ոչ ոք չկարողանա, Խորենացու «Հայոց Պատմության» վրա հենվելով, ճշտորեն քննելու, թե իրականում ի՞նչ էին Հայաստանն ու հայկական քաղաքակրթությունը և ո՞վ էր հայ ժողովուրդը հնագույն և հին ժամանակներում: Հետաքրքիր է, որ Խորենացու վրա Թոմսոնի գրոհը համընկավ հայության քաղաքական պահանջների բարձր ալիքին՝ 1978 թ. երկրորդ կեսին ցեղասպանության ճանաչմանն ուղղված սփյուռքահայության բավական եռանդուն գործունեության, մասնավորապես՝ հայկական ահաբեկչության ծավալման ժամանակաշրջանին:*

---

255 **Moses Khorenats'i**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 60.

256 Նույն տեղում, p. 61.

Կրկնում ենք՝ Թոմսոնի սխալները ո՛չ թե ակադեմիական բնույթի են, ինչպես որ ցայսօր ընդունված է կարծել մեզանում, այլ կարևոր բաղկացուցիչ մասն են կազմում հակահայկական հզոր և տևական քաղաքական այն արշավի, որ վաղուց ի վեր ձեռնարկել են Թուրքիան և վերջինիս սատարող արևմտյան որոշակի շրջանակները:

3. Թոմսոնի քննադատների ուշադրությունից ամբողջովին վրիպել է մի չափազանց կարևոր հանգամանք ևս, այն է՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Թոմսոնի փառաբանված թարգմանությունը[257] *խիստ թերի է, իսկ որոշ հատվածներում՝ բացահայտորեն կեղծված: Ստորև, ներկայացնում ենք ընդամենը այդպիսի երկու ցցուն օրինակ: Ընդգծենք, որ երկու դեպքում էլ Թոմսոնը խեղաթյուրել է Խորենացու այն շատ թանկարժեք վկայությունները, որոնք վերաբերում են հայերիս՝ վաղ ժամանակներում ունեցած ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակին: Այստեղ նպատակահարմար չենք համարում Մովսես Խորենացու այս նախադասությունների պարունակած ամբողջ իմաստի մանրամասն վերլուծությունը, քանզի մտադիր ենք շատ շուտով հրապարակել այդ խնդրի մեր քննությունը:*

Ա. «...ենք ածու փոքր»

Պատահականություն չէ, որ Թոմսոնը կեղծել է Մովսես Խորենացու թերևս ամենից հաճախ հիշատակվող՝ գանազան

---

257 Վերջերս անգլերենին անձնապես չտիրապետող հայաստանցի պատմաբաններ Պ. Մուրադյանը և Վ. Բարխուդարյանը, հավանաբար հենվելով ափյուռքահայ անգլախոս մասնագետների կարծիքի վրա, դարձյալ «գերազանց» որակեցին Թոմսոնի կատարած Խորենացու թարգմանությունը՝ տե՛ս *Գագիկ Խորենի Սարգսյան: Նյութեր Հայաստանի գիտնականների կենսամատենագիտության.* Համար 47, Երևան (ՀՀ ԳԱԱ Ֆունդամենտալ գիտական գրադարան), 1998, էջ 21, 39:

հանդիսավոր առիթներով կրկնվող, գրքերի, դասագրքերի և հոդվածների բնաբան ծառայող հետևյալ խոսքը.

> *Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զորութեամբ տկար, և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի*[258]*:*

Ահա և Թոմսոնի թարգմանությունը.

> For although we are a small country and very restricted in numbers, weak in power, and often subject to another's rule, yet many manly deeds have been performed in our land worthy of being recorded in writing[259].

Առավել պարզ լինելու համար, այս հատվածը վերաթարգմանենք սրդի հայերենի, համեմատելով այն հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն վերջին թարգմանությունների հետ (սրանք երեքն էլ բնագիրը հիմնականում հարազատ են վերարտադրել).

Թոմսոն.

> *Որովհետև թեպետ մենք* փոքր երկիր ենք *և շատ սահմանափակ թվով և* ուրիշի իշխանությանը հաճախ ենք ենթակա, *բայց և այնպես մեր հողի վրա էլ* տղամարդկության *շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի (ընդգծումներն իմն են և վերաբերում են բնագրից Թոմսոնի կատարած շեղումներին՝ Ա. Ա.):*

---

258 Տե՛ս **Մովսէս Խորենացի**. *Պատմութիւն Հայոց*: Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի: Լրացումները Ա. Բ. Սարգսեանի. Երևան, ԳԱ, 1991 (Նմանահաանություն Տփղիսի 1913 թ. հրատարակությունից), Գիրք Ա, Գլուխ Գ, էջ 10:

259 **Moses Khorenats'i**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 69.

Մալխասյանց.

Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի[260]*:*

Սարգսյան.

Ибо хотя мы и небольшая грядка, и числом очень ограничены, и обделены могуществом, и многократно бывали покорены другими государствами, но ведь и в нашей стране свершено много подвигов мужества, достойных быть письменно увековеченными.[261]

Մահե.

En effet, quoique nous ne soyons qu'une petite nation, d'un - nombre limité, d'une force restreinte, et bien des fois soumise à une royauté étrangère, il se trouve que beacoup d'actes de vaillance ont été accomplis dans notre pays, dignes d'être rappelés par ecrit.[262]

Թումսոնի շեղումները բնագրից նշանակալից են.

1. Թումսոնը թարգմանել է «ածու փոքր»ը ոչ թե բառացիորեն (անգլերեն համարժեքն է՝ «a small garden bed») *կամ «փոքր ազգ», որ թերևս առավել մոտ է բնագրի իմաստին, այլ «փոքր երկիր»* (a small country)*: Իրականում՝ Հայաստանն այ-*

---

260 Տե՛ս **Մովսես Խորենացի**. *Պատմություն հայոց*: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի: Երևան, «Հայաստան», 1968, էջ

261 Мовсес Хоренаци. История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна. Ереван, "Айастан", 1990, с. 7.

262 **Moïse de Khorène**, *Histoire de l'Arménie*. Nouvell Tr. (1993), *op. cit.*, p. 106.

սօր է փոքր երկիր, սակայն հանրահայտ փաստ է, որ նույն Հայաստանը հին և միջին դարերում Մերձավոր և Միջին Արևելքի հզոր և մեծ պետություններից մեկն էր, իսկ Կովկասյան տարածաշրջանում՝ անվիճելիորեն ամենահզորը: Հիշենք ընդամենը մեկ պերճախոս վկայություն: Մ.թ. 1-ին դարի սկզբին հռոմեացի հեղինակ Պոմպեոս Տրոգոսը գրում էր.

> *Չի կարելի լռությամբ անցնել այդպիսի մեծ թագավորության կողքից, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմաններն, ընդ որում Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը 1,100,000 քայլ տարածություն ունի, իսկ լայնքով նրա երկարությունն է 700,000 քայլ*[263]*:*

Բնական է, ուրեմն, որ հայերը, անգամ լիակատար անկախության բացակայության ժամանակներում, իրենք էլ անխուսափելիորեն և հրաշալիորեն պետք է գիտակցեին Հայաստանի մեծությունը և անգամ մեծապետականությունը: Մերկախոս չլինելու համար, հիշենք մի քանի դրվագ 5-րդ դարի հեղինակներ Եղիշեից ու Ղազար Փարպեցու երկերից.

Ղազար Փարպեցի.

> *ա. ...[Պարսից և Հունաց թագավորները] զմեծ զաշխարհս Հայոց՝ բաժանեալ ծառայեցուցին.*
>
> *բ. ...ժողովուրդքն այսպիսի մեծ աշխարհի [ինչպիսին Հայաստանն է].*
>
> *գ. օտար մարզպանն որ երթայ յաշխարհն Հայոց՝ աշխարհն մեծ է, յամս երկուս և երիս հազիվ կարէ ճանաչել նախ զիրս աշխարհին, զդիւրն և զդժուարն, ապա զմարդիկ աշխարհին*[264]*:*

---

263 Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն.* Հ. 1. Երևան, 1971, էջ 707: Այստեղ 1,100,000-ը սխալմամբ թարգմանվել է իբրև «տասնմեկ հազար քայլ». հմմտ. նույն էջի 8-րդ ծանոթագրության մեջ զետեղված լատիներեն բնագրի հետ:

264 Տե՛ս **Ղազար Փարպեցի.** *Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան*

Եղիշե.

> *Եվ մինչ [մոգերը] չև հասեալ էին մեծ աշխարհն Հայոց...*[265]:

Այս վկայությունները, որ Թոմսոնին պետք է շատ լավ ծանոթ լինեն (ինչպես վերն ասացինք, նա հետագայում թարգմանել է նաև Ղազար Փարպեցու և Եղիշեի հիմնական երկերը), բավարար են փաստելու համար, որ Մովսես Խորենացու «ածու փոքր» պատկերավոր խոսքը ոչ մի կերպ հնարավոր չէ թարգմանել «փոքր երկիր», այլ պետք է պահպանել բնագրային տարբերակը այնպես, ինչպես այն գրվել է: Այլապես, յուրաքանչյուր թարգմանիչ կարող է այն թարգմանել իր ցանկացած ձևով, օրինակ՝ «փոքր ազգ» (այսպես են վարվել մի շարք թարգմանիչներ, այդ թվում Ժ.-Պ. Մահեն), «փոքր բանակ», «փոքր քաղաքակրթություն», «փոքր դաշտ», կամ էլի ինչ-որ փոքր բան: Ի դեպ, այս ամենը գիտակցելով, Մովսես Խորենացու Պատմության հայերեն և ռուսերեն վերջին թարգմանությունների մեջ, «Թէպէտ և եմք ածու փոքր»ը հստակ և ճիշտ թարգմանվել է իբրև «Թեպետ մենք փոքր ածու ենք» ու «хотя мы и небольшая грядка»[266]*: Բացառված չէ, որ Թոմսոնն ընկել է «Հայկազյան բառարանի» ազդեցության տակ, որտեղ ևս այս հատվածն սխալ է ներկայացված, իբրև՝ «ազգ սակավաթիվ, փոքր աշխարհ»*[267]*: Սակայն, պակաս հավանական չէ նաև այն, որ Թոմսոնը «փոքր ածուն» «փոքր երկրի» վերածած լինի մտածված կերպով՝ թուրքական պատմագրության իր որդեգրած սկզբունքների համաձայն:*

Մամիկոնեաց: Երևանի Համալսարանի հրատ., 1982, էջ 26, 30, 430:

265 **Եղիշե.** *Վարդանի և Հայոց պատերազմի մասին:* Թարգմ. և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևանի Համալսարանի հրատ., 1989, էջ 102:

266 Տե՛ս **Մովսես Խորենացի.** *Պատմություն հայոց:* Թարգմանությունը Ստ. Մալխասյանցի, ճշվ. աշխ., էջ 70: Movsec Xorenaci. История Армении. Перевод Гагика Саркисяна, с. 7.

267 *Նոր բառգիրք հայկազեան լեզուի:* Վենետիկ, Սբ. Ղազարի տպարան, 1836, էջ 21:

2. Բնագրի «ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ»ը Թոմսոնը վերածել է սոսկ «հաճախ ուրիշի իշխանութեան ենթակա» (often subject to another's rule): Այս դեպքում նա արել է իմաստային երկու ծանրակշիռ աղավաղում.

ա) նախ՝ նա պարզապես դուրս է նետել «օտար թագավորութիւնների տակ նվաճված» արտահայտությունը. սրանով նա ոչնչացրել է բնագրի այս հատվածի իմաստային կարևոր շերտը՝ Հայաստանի թագավորության հականիշային ենթաիմաստը. «այլ թագավորութիւնները»ը նվաճել էին ոչ թե սոսկ հայերով բնակեցված մի երկիր, այլ Հայաստանի թագավորությունը, հայկական պետությունը:

բ) Դուրս նետելով Մովսես Խորենացու բառերը՝ Հայաստանի քանիցս նվաճված լինելու մասին, Թոմսոնն արդյունքում ստացել է, որ հայերը եղել են «հաճախ ուրիշի իշխանության ենթակա», այն էլ՝ ինչ-ինչ անհայտ պատճառներով: Այնինչ Պատմահոր այս պարզ շարադրած հատվածի ճիշտ անգլերեն թարգմանությունը պետք է լիներ այսպես՝ «we... many times have been conquered by foreign kingdoms»: Եվ այսպես՝ Թոմսոնի թարգմանության մեջ ամբողջությամբ վերացված է բնագրում շատ հստակ արտահայտված այն միտքը, որ Հայաստանի թագավորությունը նվաճվել է բռնի ուժով այլ պետություններից:

Կարելի՞ է արդյոք Թոմսոնի կատուցած այս՝ «մենք... հաճախ ենք ուրիշի իշխանության ենթակա» բառաշղթան պատահական վրիպում համարել: Այս կապակցությամբ տեղին է դարձյալ հիշատակել ամերիկացի պիտնական Ջլիվ Ֆոսսին, որն ուշադիր քննելով հայոց պատմության հանդեպ թուրքական պատմագրության որդեգրած մոտեցումներն ու սկզբունքները, եկել է այն եզրակացության, որ թուրք պատմաբանները «որպես կանոն, հայերին ներկայացնում են իբրև մեկ ուրիշին ենթակա» (Armenians [were] presented, as usual, as subject to someone else)[268]: Որքա՜ն կզարմանա Ֆոսսը, եթե հանկարծ

---

268 **Clive Foss**, "The Turkish View of Armenian History: A Vanishing

պարզի, որ իր վստահած ամերիկացի՛ հեղինակը՝ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Թոմսոնը, անում է նույնը, սակայն ո՛չ թուրքական բռի եղանակներով, որոնք արևմտյան փոքրիշատե պատրաստված ընթերցողին կարող են անվստահություն ներշնչել, այլ շատ ավելի «բարձր որակով»՝ պատմական սկզբնաղբյուրը կեղծելով մինչև այն աստիճան, որ Հայերի Պատմահայրն ինքն արտասանի (ընդ որում՝ բառացիորեն) Հայոց պատմության Հանդեպ թուրք պրոպագանդիստների մշակած գլխավոր սկզբունքներից մեկը՝ «մենք... հաճախ ենք ուրիշի իշխանության ենթակա»:

Թուրքական «հայագիտության» հետ վերոհիշյալ նմանությունները թույլ են տալիս վստահությամբ անելու ևս մեկ խիստ կարևոր եզրակացություն. Թոմսոնը (ինչպես և վերը քննված Սյունին և Ընկ.) ունեցել են միևնույն, ընդհանուր և, ամենայն Հավանականությամբ՝ գրավոր Հանձնարարական-աղբյուրները, ինչ որ թուրք պատմաբանները: Այդպիսի աղբյուր-Հանձնարարական ծառայելու նպատակով է գրվել և անգլերեն թարգմանվել Էսաթ Ուրասի վերոհիշյալ գիրքը, սակայն, անշուշտ, եղել են (ու, թերևս, կան) այլևայլ նույնանպատակ գրավոր նյութեր ևս:

3. Թոմսոնը «գործք արութեան»ը թարգմանել է իբրև «տղամարդկային գործեր» (manly deeds), այլ ոչ թե առավել համապատասխանող «քաջության, անվեհերության, խիզախության գործեր» բառերով (անգլերենում հնարավոր են բազմաթիվ տարբերակներ, օրինակ՝ valiant deeds, deeds of valor կամ deeds of bravery): «Տղամարդկայնություն» բառը «քաջություն» իմաստը պարունակող հոմանիշներից, թերևս, ամենաթույլն է: Ուստի, բնական է, որ Թոմսոնը պետք է նախընտրեր պակաս ուժգին հնչողություն ունեցող հոմանիշը, որպեսզի՝ իր պատվիրատուների առաջադրանքներին և ճաշակին համապատասխան, փորձեր հնարավոր չափով նսեմացնել հայերի ազգային արժանիքները: Սակայն, Թոմսոնն ինքն էլ

Nation," *op. cit.*, p. 263.

հննց բացահայտել է իր սխալը, երբ նույն գրքի մեջ՝ առաջաբանում, նույն հատվածն անզգուշորեն թարգմանել է ճիշտ՝ valiant deeds[269]*:*

Վերջում առաջարկում ենք այս հանգուցային նշանակութիւն ունեցող հատվածի՝ առավել ճշգրիտ անգլերեն ամբողջական թարգմանութիւնը.

> Although we are a small garden bed, quite limited in numbers and weak in power, and many times have been conquered by foreign kingdoms, yet many deeds of bravery can also be found to have been done in our realm which are worthy of written remembrance.

Բ. «Արանց կացեալ գլուխ» հատվածը

Մովսես Խորենացու երկում կա մի հատված, որ, ի թիվս նմանատիպ այլ տեղիների, շեշտակիորեն ընդգծում է հայոց մեջ զարմանալիորեն վաղ առաջացած ազգային հստակ ինքնագիտակցութեան, հայրենասիրութեան, նույնիսկ՝ ազգայնականութեան (նացիոնալիզմի) փաստը: Այդ հատվածը վերաբերում է մ.թ.ա. 6-րդ դարի հայ թագավոր Տիգրան Երվանդյանին, որը, ըստ Պատմահոր.

> *Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց...*[270]

Թոմսոնը թարգմանել է.

> He was supreme among men and by showing his valor he glorified our nation. Those who had been under a yoke he put in a position to subject and demand tribute from many.[271]

---

269 **Moses Khorenatzi**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 56.

270 **Մովսէս Խորենացի**. *Պատմութիւն Հայոց*. Ա, ԻԴ, էջ 72:

271 **Moses Khorenats'i**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 113.

Դարձյալ՝ վերաթարգմանելով այս հատվածը հայերենի՝ համեմատենք այն հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն (երկուսն էլ բնագրին հարազատ են) վերջին թարգմանությունների հետ.

Թոմսոն՝

> *Նա գլխավորն էր տղամարդկանց մեջ և ցույց տալով քաջություն՝ փառաբանեց մեր ազգը: Նրանց, ովքեր լծի տակ էին, նա կարգեց չատերի վրա վերադաս և հարկ պահանջող:*

Մալխասյանց՝

> *Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց չատերին լուծ դնողներ և հարկապահանջներ*[272]*:*

Սարգսյան.

> Отважно возглавив мужей, он возвысил наш народ и нас, угнетённых, сделал угнетателями, налагающими дань на многих.[273]

Մահե.

> Sans égal parmi les hommes et montrant partout son courage, il éleva haut notre nation. Nous qui étions sous le joug, il nous mit en état de subjuguer et de rendre tributaires de nombreux peuples.[274]

Արդ, Խորենացու բնագրի համեմատ Թոմսոնն արել է երեք իմաստափոխիչ շեղում.

---

272 Տե՛ս **Մովսես Խորենացի**. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի, ճշվ. աշխ., էջ 111:

273 Мовсес Хоренаци. История Армении. Перевод Гагика Саркисяна, с. 39.

274 Տե՛ս **Moïse de Khorène,** *Histoire de l'Arménie*. Nouvell Tr., *op. cit.*, p. 142.

ա) նա անհարկի կերպով բաժանել է Խորենացու մեկ նախադասությունը երկու մասի: Նույն սխալը թույլ է տվել նաև Մահեն, որի թարգմանությունը, սակայն, ընդհանուր առմամբ, ճշգրիտ է.

բ) «բարձրացոյց»ը թարգմանել է իբրև "glorified"=«*փառաբանեց*», «*մեծարեց*», *այնինչ միակ ճիշտը կլիներ՝* "raised" *կամ* "lifted up"=«*բարձրացրեց*».

գ) ամենանշանակալից չեղումը, կամ, ավելի ճիշտ՝ բացահայտ կեղծիքն այն է, որ Թոմսոնը Խորենացու «մենք»ը, տվյալ դեպքում՝ հոլովված ձևը՝ «մեզ» (Հայց. հոլով), վերածել է «նրանք»ի: Արդյունքում՝ այս կարևոր հատվածի ենթախմաստները, դառնալով խրթին և անորոշ, մեծապես մթագնել են[275]*: Մասնավորապես, և՛ արևմտյան, և՛ խորհրդային ազգաբանությունը (էթնոլոգիան) վաղուց է, ինչ բացահայտել և մանրամասն պարզաբանել են «մենք–նրանք» կամ «մերխումբ–նրանցխումբ»* (wegroup-theygroup) *բանաձևի գիտակցման վճռորոշ նշանակությունը ազգային ինքնագիտակցության առաջացման և զարգացման գործում*[276]*: Բացի այդ, ըստ, օրինակ, սոցիոլոգիայի ամերիկյան մի բառարանի, «մենք»ի հստակ գիտակցումը որևէ խմբի մեջ, նշանակում է, որ այդ խմբի անդամները միմյանց և իրենց խմբի նկատմամբ «կառավարվում են հավատարմության, նվիրվածության, համակրանքի, հարգանքի և համագործակցության ըմբռնումներով, ինչպես նաև ունենում են հպարտության և ընտրվածության որոշակի պատկերացումներ»*[277]*: Բնականաբար, Թոմսո-*

---

275 Այդ ենթահմաստների համառոտ քննությունը տե՛ս **Գագիկ Սարգսյան**. Ինքնորոշում և կողմնորոշում, ճշվ. աշխ., էջ 90–91:

276 Տե՛ս, օրինակ, Б. Ф. Поршнев. Социальная психология и история. Москва, 1966, сс. 78-84, 103-111; **David L. Watson, Gail deBortali-Tregerthan and Joyce Frank**, *Social Psychology: Science and Application* (Scott, Foresman, and Company, 1984), pp. 195-198.

277 Տե՛ս **Henry Pratt Fairchild**, ed., *Dictionary of Sociology* (Westport, Connecticut: Greenwood Press, 1970), p. 135.

նին չպետք է դուր գար հայերի մասին նմանօրինակ եզրակացություններ հանգեցնող՝ Խորենացու այս թափանցիկ հաղորդումը, քանզի նա և իր թիմակիցները ներկայացնում են հայոց ազգային բնավորությունը իբրև անմիաբանության, անհավատարմության, անազնվության մի թանձրույթ:

Ուստի և՝ Թոմսոնը Խորենացու «մենք»ը վերաճևել է «նրանք»ի և դրանո՛վ իսկ աղճատել է Պատմահոր այս հաղորդման տարողունակ իմաստը, որ փաստում է հին ժամանակներում հայերի ազգային համախմբման և կայուն ազգային ինքնագիտակցության անսովոր բարձր մակարդակը: Թոմսոնի վայ-թարգմանությունից անգլախոս ընթերցողը կարող է նույնիսկ մտածել, թե խնդրո առարկա հատվածում Մովսես Խորենացին խոսում է ո՛չ թե ազգամիջյան, այլ միջդասակարգային հարաբերությունների մասին, մանավանդ, որ պիտի ծանոթ լինի Աստվածաշնչում նույն երրորդ դեմքով գրված հանրահայտ ու նմանակառույց հատվածին՝ «Շատ առաջիններ պիտի վերջին լինեն, և վերջիններ՝ առաջին»[278]:

Ընդ որում, Թոմսոնն ինքն էլ է զգացել, որ խնդրո առարկա հատվածի իր «թարգմանությունը» խիստ թերի և խոցելի է, ուստի և փորձել է ինքն իրեն ապահովագրել, ծանոթագրելով, թե «ընդ լծով»ը և «լծաղիր»ը իբր դժվար է թարգմանել անգլերենի: Որպեսզի ցույց տանք, որ անգլերենի կարողություններն ամենևին էլ այդքան համեստ չեն, ստորև առաջարկում ենք այդ հատվածի մեր թարգմանությունը.

> Taking his place at the head of his men and demonstrating his courage, he raised up our nation, and put us, the once subjugated, in a position to subjugate the many and exact tribute from them.

Արդ, եթե վերոբերյալ երկու իմաստալից հատվածներում Թոմսոնն ակնհայտ միտումով այդ աստիճան աղավաղել է բնագիրը, ապա պարզ է, թե որքան չնկատված չեղումներ կան

---

278 Մատթէոս, ԺԹ 30, Ի 16. Մարկոս, Ժ 31. Ղուկաս, ԺԳ 30:

նրա ամբողջ թարգմանության մեջ: Սակայն, այստեղ բավարարվենք թեև այսքանով:

Ինչպե՞ս է Թոմսոնը 1978 թ. հետո անդրադարձել Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» և Հայաստանից իր հատցեին ուղղված քննադատությանը: Շատ պարզ. ոչ էլ անդրադարձել է, կարծես իր դեմ բերված ոչ մի փաստարկ էլ չկա ու չի կարող լինել, այլև՝ ինքը Խորենացու հետ իր հաշիվները փակել և անցել է մյուս հեղինակների «քննությանը»: Մինչդեռ 1978 թ. հետո խորենացիագիտությունը լրացուցիչ ծանրակշիռ ապացույցներ ձեռք բերեց Պատմահոր «Հայոց պատմության» տեղեկությունների չափազանց բարձր արժանահավատության և 5-րդ դարում գրված լինելու վերաբերյալ: Անդրադառնանք միայն մի փայլուն հայտնագործության:

1989 թ. հրապարակված մի հոդվածում,[279] *վաստակաշատ բանասեր Արտաշես Մաթևոսյանը մասնագետների ուշադրությունը հրավիրեց Հայոց Հնագույն թղթե ձեռագրում գետեղված մի «ժամանակագրության» վրա, որ, ինչպես պարզվեց նրա քննությամբ, 584 թ. հեղինակել էր Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդ, Հայոց տոմարի կարգող Աթանաս Տարոնացին (ժամանակագրությունը գետեղված է 981 թ. գրված հայերեն Հնագույն թղթե ձեռագրի մեջ*[280]*: Մաթևոսյանն ապացուցեց, որ, իր «ժամանակագրությունը» կառուցելիս, Տարոնացին որպես սկզբնաղբյուր առատորեն օգտագործել էր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», «որից քաղված 74 պատմական վկայություններից 55-ը վերաբերում են Հայ իրականությանը, 7-ը՝ պարսկական թագավորներին, 12-ը՝ ...Հռոմեա-*

---

279 Տե՛ս **Ա. Մ. Մաթևոսյան.** Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը. -- *Պատմա-բանասիրական հանդես*, 1989, No. 1, էջ 220-234:

280 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2679: Այս մատյանը նորերս հրատարակվեց նաև ամանաճանաությամբ, տե՛ս *Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դավթի քահանայի:* Նմանաճանաությունը տպագրության պատրաստեց և աշխատասիրեց Արտաշես Մաթևոսյանը. Երևան, «Նաիրի» հրատ., 1995:

կան կայսրերին»[281]: Այսպիսով, ինչպես իրավացիորեն նշում է Մաթևոսյանը, Աթանաս Տարոնացու մատենագրական երկը,

> դառնում է Մովսես Խորենացու՝ և դարի անսասան "տնղաբնիկության" ազնիվ վավերագիրը: Եվ ոչ միայն Խորենացու "Հայոց պատմության" օգտագործմամբ, այլ նաև Պատմահոր վերաբերյալ եզակի վկայությամբ: Խորենացու Պատմությունից քաղած վերջին վկայությունից հետո... գրված է. "ՆՀԴ (474) Մովսէս Խորենացի փիլիսոփա և մատենագիր": ՆՀԴ – 474 թ. պետք է լինի Մովսես Խորենացու "Պատմություն Հայոց Մեծաց" երկի ավարտման թվականը, քանի որ այն չի կարող լինել Խորենացու ո՛չ ծննդյան (նա Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից է), ո՛չ էլ մահվան (Սամվել Անեցին նրան հիշատակում է 492 թ. շարականներ հորինելու առթիվ) թվականը:... Աթանասի նշած 474 թ. համընկնում է Խորենացու Պատմության ավարտման վերաբերյալ ուսումնասիրողների բանասիրական քննությունների եզրահանգումներին, որոնց առաջարկները տատանվում են 470-482 թթ. միջև: Աթանաս Տարոնացին վերջ է տալիս այդ տատանումներին: Մովսես անվան կողքին ավելացնելով Խորենացի մականունը, "փիլիսոփա" կոչման կողքին՝ "մատենագիր" մակդիրը, ամրողջացնում է անձը և տեղավորում ժամանակագրության մեջ նրա խոշորագույն Մատյանի ավարտման՝ 474 թ. դիմաց, երբ տեղի է ունեցել Խորենացու բառերով՝ "Ավարտումն... պատմութեան Հայոց Մեծաց"[282]:

Մթե՞ Թոմսոնը տեղյակ չէ այս փաստերին, մթե՞ նա չի կարդում աշխարհիս լավագույն հայագիտական պարբերական «Պատմա-բանասիրական հանդես»ը: Եթե իրոք չի կարդում, ապա լիակատար հայագետ համարվելու հավակնությունը չպետք է ունենա: Սակայն, Ա. Մաթևոսյանի հայտնագործությանը նա իրազեկ է, քանզի 1992 թ. մայիսին Նյու-Յորքում կայացած գիտաժողովի ժամանակ անձամբ է ունկնդրել հայաստանցի գիտնականի՝ այս հարցին նվիրված զեկուցումը:

---

281 Նույն տեղում, էջ 225:

282 Տե՛ս անդ, էջ 226:

Բացի այդ, Ա. Մաթևոսյանի նույն ուսումնասիրությունը, իբրև հավելված, վերահրատարակվել է 1995 թ. լույս տեսած նրա մի մենագրության մեջ[283], *որը, մեր ունեցած տեղեկությունների համաձայն, Թոմսոնին հասել է:*

Ավելացնենք միայն այն, որ Խորենացուն 8-րդ դար տեղաշարժելու ջանքերը ի չիք դարձնող այս իրողությունը միակը չէ: Կան նաև 5-7-րդ դարերի ընթացքում գրված՝ Խորենացուն և նրա երկը հիշող ու այնտեղից փաստական նյութ քաղող, բազմաթիվ այլ վկայություններ[284], *որոնք Թոմսոնի և նրա հավատակիցների կողմից պարզապես անտեսվում են՝ կարծես գոյություն էլ չունեն: Այսպես, 1996 թ. լույս տեսած իր հերթական թարգմանություններից մեկի առաջաբանում, ձևացնելով, թե անտեղյակ է վերոհիշյալ փաստերին, Թոմսոնը դարձյալ դրեց՝ «Մովսես Խորենացուն ոչ ոք չի մեջբերում մինչև 10-րդ դարը՝ մինչև որ այդ անում է Թովմա Արծրունին»* (Moses Khorenac'i is not quoted until the tenth century -- by Thomas Arcruni)[285] *Այս ասելով, Թոմսոնը ևս մեկ անգամ պարզեց, որ պատմական փաստերն իր համար որևէ նշանակություն չունեն:*

Այսքանից հետո պետք է խիստ անհամաձայնություն հայտնենք Հայաստանի ակադեմիական շրջանակներում տարածված այն մտայնությանը, թե մենք չպետք է թշնամական (այս բառից ևս չենք խուսափելու) դիրքորոշում բռնենք Թոմսոնի և նրա թիմի հանդեպ: Օրինակ, Թոմսոնների հետ բարե-

---

283 Տե՛ս **Արտաշես Մաթևոսյան.** *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գիրքը.* Երևան, Մատենադարան, 1995, էջ 205-222:

284 Տե՛ս անդ, էջ 226-232, ծնթ. 36. տե՛ս նաև **Պարույր Մուրադյան.** Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետքերը 6-7 դարերի երկերում. -- *Էջմիածին*, 1992, Ջ-Է, էջ 85-98: Г. Х. Саркисян, "Моисей Хоренский и Давид Непобедимый (опыт установления источниковедческой связи)" Кавказ и Византия (АН АрмССР, Ин-т востоковедения). - 1979. - Вып. 1, с. 67-72.

285 Տե՛ս *Rewriting Caucasian History. The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles.* Translated with introduction and commentary by Robert W. Thomson (Oxford: Clarendon Press, 1996), p. XXX.

կամական հարաբերությունների պահպանման ջատագովներից մեկը՝ անվանի կովկասագետ Պարույր Մուրադյանը նախ արդարացիորեն նշում է, թե՝ «գիտության, մանավանդ բնագրագիտության նորմերով ու մեթոդներով առաջնորդվող հետազոտողի համար այլևս տարակուսելու հնարավորություն և առիթ չպիտի լինի» Խորենացու 5-րդ դարում ապրելու և ստեղծագործելու փաստը, ապա տեղնուտեղն էլ ավելացնում՝ «Բայց այդ ամենևին չի նշանակում, թե պիտի բանադրել Խորենացու քննադատությամբ պարապողներին»[286]*: Ահա այսպիսի «ճկուն» տրամաբանություններ էլ հենց Խորենացուն ծաղրուծանակի ենթարկողների առջև «կանաչ լույս է վառել»: Ցավալի փաստն այն է, սակայն, որ այս մտայնության հայաստանցի կողմնակիցները, թեկուզ միայն իրենց՝ անգլերեն չիմանալու հետևանքով, կարգին ծանոթ էլ չեն Թոմսոնի գրածներին:*

Զարմանում ենք նաև, որ այս ամենից հետո, ակադ. Գ. Խ. Սարգսյանը կարող էր իբրև խորենացիագիտության ապագա զարգացման «շատ կոնստրուկտիվ ուղղություն» կոչել Թոմսոնի լավագույն ընկեր, Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ժ.-Պ. Մահեի 1991 թ. արտահայտած հետևյալ միտքը.

> *...ժամանակավորապես հետաձգենք Խորենացու ժամանակաշրջանի հարցը, շարունակելով հետազոտությունները նրա աղբյուրների ու տեղեկությունների որակի վերաբերյալ: Հաջողությունները հայ գրականության, ժամանակագրության և, հատկապես, թարգմանության բնագավառում, անկասկած, կհանգեցնեն նաև այդ խնդրի լուծմանը*[287]*:*

---

286 Տե՛ս, օրինակ, **Պ. Մուրադյան**. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետքերը 6-7 դարերի երկերում, էջ 98:

287 **Գ. Խ. Սարգսյան**. Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» ձվիրված առաջին միջազգային գիտաժողովը (Փարիզ, 1991 թ. հունվարի 25-26). - *Պատմա-բանասիրական հանդես*, 1991, No. 1 (132), էջ 219:

Իսկ մենք՝ անդրադառնալով խորհնացիագիտուԹյան զարգացման այս «նոր ուղղուԹյանը», նկատենք, որ այն ոչ միայն անհեթեթ է, այլև բոլոր տեսակետներից արատավոր: Իրականում, հայագետների առանց այդ էլ նոսր ուժերը փորձում են դատապարտել ևս մի քանի հարյուրամյա դեգերումների՝ 100 տոկոսով լուծված և պարզ մի հարցի շուրջը: Եթե նկատի ունենանք նաև, Թե գիտական ինչ բարեխղճուԹյուն են ցայժմ դրսևորել Թոմսոնները, ապա, կարծում ենք, պարզ կլինի, որ իսկական գիտական բանավեճի մասին խոսք լինել չի կարող, քանի որ Թոմսոնները, սյունիներն ու ուրասները անտեսելու են հայագիտուԹյան նվաճումները՝ կեղծելով հավերժորեն և միշտ: Գեթ մի պահ պատկերացնենք, Թե ի՞նչ արդյունք կունենայինք, եթե նույնպիսի հանդուրժողականուԹյամբ և կրավորականուԹյամբ մոտենայինք Արցախը «Աղվանք-Ալբանի» անբաժան մաս կազմելու բունիաթովների և մամեդովաների կարծիքին, և կամ՝ Թուրք պատմագրուԹյան՝ 1915-1922 ԹԹ. Հայոց ցեղասպանուԹյունը ժխտող տեսակետներին. չէ՞ որ ցեղասպանուԹյան հարցում Թուրքերը ևս մեզ առաջարկում են չշտապել, առայժմ եզրակացուԹյուններ չանել, այլ վ.ոխարենը ինչ-որ դիվանական պեղումներ կատարել «պարզելու համար», Թե ի վերջո եղել է հայոց ցեղասպանուԹյունը, Թե՞ ոչ: Իսկ Ձե ինչ արդյունք են տալիս Թուրքերի դիվանական և այլ կարգի պեղումները՝ շատ լավ հայտնի է. միշտ «պարզվում է», որ ոչ Թե հայերն են եղել տուժող կողմը, այլ Թուրքերը: Ինչ վերաբերում է խորհնացիագիտուԹյանը, ապա այն Հայաստանում գիտական միանգամայն ուղիղ շավղի վրա է, որի վերջին ծանրակչիռ ձեռքբերումներից այստեղ պարզապես չենք կարող չհիշել Մ. Ս. Օհանյանի բառիս բուն իմաստով հեղաշրջիչ ուսումնասիրուԹյունը[288]*:*

---

288 **Մ. Ս. Օհանյան.** Մար Աբասյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը». -- *Պատմա-բանասիրական հանդես*, 1996, No. 1-2 (143-144), էջ 295-310:

Բացի հայաստանցի մասնագետների ցուցաբերած կրավորական վերաբերմունքից, ժամանակին մեկ այլ հանգամանք ևս օգնեց Թոմսոնին պարտադրելու իր խեղաթյուրումները գրեթե ամբողջ արևմտյան ակադեմիական համայնքին ու նաև ամերիկահայությանը: Բանն այն է, որ նրա թիկունքին կանգնեցին ոչ միայն Թոմսոնի թիմակիցները՝ Ն. Գարսոյանը[289] և այլոք, որ օրինաչափ էր և սպասելի, այլև՝ ամերիկահայ հայտնի հասարակական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը: Զարմանալի է, որ իրավամբ ինքն իրեն «անճնապես այս նյութի մասնագետը» չհամարող հարգարժան պրոֆեսորը, այդուհանդերձ իրավունք վերապահեց և իր պարտքը համարեց պաշտպանել Թոմսոնի՝ Խորենացուն ստախոս հռչակելու նկրտումները: «Արդարև, -- գրում է Ռ. Հովհաննիսյանը, -- Թոմսոնը կհաստատե, թե Խորենացին մեծ ազատությամբ կօգտագործե իր ձեռքի տակ ունեցած աղբյուրները և հակառակ այն իրողության, որ ան կհավակնի ըսել; թե ինք կարդացած է այլազան դասական աղբյուրներու բնագրերը, իրականության մեջ, սակայն, այդ բնագրերու հայերեն թարգմանություններուն ծանոթ է միայն»[290]: Ըստ Հովհաննիսյանի՝ Թոմսոնը «իրականության մեջ չատ ավելի կգնահատե հայ դասական հեղինակները, քան ոմանք կենթադրեն», ուստի և անտեղի են «զարմացած և վր-

---

289 Ինչպես խոստովանում է Գարսոյանը՝ «ես միշտ վստահել եմ իմ գործընկերոջ և ընկերոջ (իմա՝ Թոմսոնի) գիտելիքներին վաղ հայկական և հայրաբանական գրականության մեջ» (տե՛ս, *The Epic Histories (Buzandaran Patmutiwnk)*. Translation and commentary by Nina G. Garsoian. Cambridge, Mass.: Harvard University Press, 1989, p. X): Իր այդ «գործընկերոջ և ընկերոջ»ը հետևելով էլ, Գարսոյանը Մովսես Խորենացուն «պատմական լուրջ աղավաղումներ ներմուծելու» մեջ մեղադրելուց չի զլանում (introducing serious historical distortions), տե՛ս նույն տեղում, pp. 44-45.

290 Ռիչարդ Հովհաննիսյան. Հայ դասական աղբյուրներու թարգմանությունը Միացյալ Նահանգներու մեջ. -- *Պատմա-բանասիրական հանդես*, 1987, No. 1, էջ 110: Այս հոդվածը նախապես զեկուցվել էր Երևանում կայացած Միջնադարյան հայ գրականությանը նվիրված միջազգային առաջին գիտաժողովում, 1986 թ. սեպտեմբերին:

դոված» բազմաթիվ հայ մտավորականների քննադատութիւններն առ այն, որ Թոմսոնի վերաբերմունքը Խորենացուն և Եղիշեին հանդիսանում է «չարամիտ քննադատութիւն մը, սկզբնաղբյուրներու ընթերցանութեան լուրջ սխալ հասկացողութիւն մը և ավելին՝ սխալ մեկնաբանութիւն մը»[291]: Այսպիսով՝ Ռ. Հովհաննիսյանն իր պաշտպանութեան տակ է առնում Թոմսոնին, հետո էլ վերամբարձ խրատ կարդում Թոմսոնի հայ քննադատներին: Ի՞նչն է ստիպել մեր հայրենասեր ամերիկահայ պատմաբանին հանդես գալու այսպիսի հեղհեղուկ և անհիմն դիրքորոշմամբ: Ինչու՞ է նա՝ գիտական այլ բնապավառում ձեռք բերած իր հեղինակութիւնը ի սպաս դրել Պատմահորը միտումնավոր անվանարկող Ռոբերթ Թոմսոնի պաշտպանութեանը (մանավանդ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ինքը Հովհաննիսյանը, ցավոք, ի վիճակի էլ չէ կարդալու հայկական հին կամ միջնադարյան որևէ սկզբնաղբյուր, ներառյալ՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը», գրաբար բնադրի վիճակում): Կարծում ենք, այստեղ իրենց բացասական դերն են խաղացել երեք հանգամանք: Առաջինը, մեր համոզմամբ, Թոմսոնի գործունեութեան նկատմամբ դարձյալ այն հրահրելու աստիճանի հասնող ներողամիտ կեցվածքն է, որ որդեգրել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան: Ջմոռանանք, որ Ռ. Հովհաննիսյանի վերոհիշյալ ելույթը նախապես հնչել էր 1986 թ. Երևանում անցկացված Միջնադարյան հայ գրականութեանը նվիրված միջազգային առաջին գիտաժողովին ու հե՛նց Թոմսոնի ներկայութեամբ և որևէ պատասխանի հայաստանյան գիտնականների կողմից չէր արժանացել:

Երկրորդ հանգամանքը՝ Հովհաննիսյանի, ինչպես նաև բազմաթիվ այլ ամերիկահայերի ինչ-որ տեղ՝ հասկանալի ամերիկյան մեծապետական մտածելակերպն է, ըստ որի, պրոֆ. Հովհաննիսյանը հակված է կարծելու, թե թերևս՝ աշխարհիս ամենահզակավոր համալսարան համարվելիք ամերիկյան

---

291 Նույն տեղում, էջ 108–109:

Հարվարդում դասավանդող Թոմսոնը, ի վեր ամենայն կասկածանաց, պետք է առավել պատրաստված և հմուտ հայագետ լինի, քան, ասենք՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանում տասնամյակներ շարունակ ձեռագրերի վերծանությամբ և վերլուծությամբ զբաղվող որևէ հայաստանցի մասնագետ: Այսպեսակ մտայնությունը ոչ միայն սխալ է, այլև զավեշտական, քանզի վերջին տասնամյակների ընթացքում, շատ բնականորեն, Հայաստանը՝ եղել է, է՛ և դեռևս մնում է հայագիտության ամենահզոր կենտրոնը: Մինչդեռ, եթե անգամ մի պահ մոռանանք կանխատրամադրված աղավաղումների իրողությունը, ապա Թոմսոնն ու Թոմսոնականներն ավելին չեն, քան՝ սոսկ հայագիտական երկրորդական և երրորդական մակարդակի պատրաստություն ունեցող արևելագետներ[292]*:*

Երրորդ հանգամանքն էլ կոնֆորմիզմն է, այն է՝ համարվողականությունը ամերիկյան միջավայրի պարտադրած պահանջներին: Ռ. Հովհաննիսյանի համար բավական դժվար խնդիր պետք է լիներ տարիներ շարունակ ամերիկյան UCLA *հեղինակավոր համալսարանի ամբիոններից մեկի ղեկավարությունը, եթե նա հակամարտության մեջ մտներ կուռ շարքերով ու հզոր ուժերի հովանավորությամբ հանդես եկող կեղծ-հայագիտական դպրոցի հետ: Այս տեսանկյունից դիտելու դեպքում հասկանալի են դառնում նաև Ռ. Հովհաննիսյանի սերտ համագործակցությունն ու ջերմ հարաբերությունները Ռ. Սյունիի հետ (Սյունիի հակահայկական ընթացքը, մասնավորապես, ցեղասպանության վերաբերյալ նրա*

---

292 Ասածս փաստենք հորդորելով ընթերցելու սոսկ հետևյալ երեք գրախոսությունը. **Գ. Տեր-Վարդանյան.** «Դանիելի [մարգարեության] հայերեն տարբերակը. աշխատասիրությամբ Պիտեր Ս. Քաուիի». – *Պատմա-բանասիրական հանդես*, 1993, հմր. 1-2 (137-138), էջ 199-206. Նույնի՝ «Մատենագիտություն հայ մատենագրության՝ մինչև մ. թ. 1500 թ., կազմեց Ռ. Վ. Թոմսոն». – *Պատմա-բանասիրական հանդես*, 1997, հմր. 1 (145), էջ 269-275: **Արմեն Մութաֆյան.** Գանձեր՝ երկնքի արքայության մեջ. – *Յառաջ*, օրաթերթ (Փարիզ), հունիս 18-19, 1994, էջ 2-3:

եւ յիշեցնելը, չպետք է գաղտնիք լիներին Հովհաննիսյանի համար, այստեղ գրաբարի իմացություն չէր պահանջվում):

Ինչևիցե, արժեր որ հարգանքի լիովին արժանի պրոֆ. Հովհաննիսյանը հայոց պատմության իրեն անծանոթ ժամանակաշրջանների հարցերի մասին այլևս եւս չունենար և իրեն անհարմար վիճակների մեջ չդներ, կամ էլ՝ նախապես լրջորեն ծանոթանար անհրաժեշտ ամբողջ նյութին:

3.2. Եղիշեի թարգմանության և թվագրության պարագաները

Հայոց վաղ պատմագրության գլուխգործոցը անգլախոս աշխարհին աղճատված վիճակում ներկայացնելուց հետո Թոմսոնը, փաստորեն, որևէ լուրջ հակահարված չստացավ, որից էլ ակնհայտորեն ոգևորվեց և ձեռք զարկեց հայոց ոսկեդարի այլ երկերի նոր հակագիտական «քննություններին» և «թարգմանություններին»: Մովսես Խորենացուն «չարքից հանելուց» հետո, հերթը հասավ հայոց ազատաշունչ և մարտական ոգու մի այլ վկայի՝ Եղիշեին ու նրա «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» հրաշազան ստեղծագործությանը: Կարծում ենք, ընթերցողն այլևս չի զարմանա՝ տեղեկանալով Թոմսոնի արած եզրակացություններին, այն է՝ թե Եղիշեն ևս գիտական էթիկան խախտող մի ոչ-բարոյական կերպար է («թաքցնում է, թե որքան է օգտվել Մակաբայեցիների պատմությունից»)[293]: Ըստ Թոմսոնի, Եղիշեն ստել է, թե ինքն անձամբ մասնակցել է 450-451 թթ. հայոց ապստամբությանը, իրականում ապրած լինելով «6-րդ դարի վերջին տասնամյակում կամ ավելի

293 **Elishe**, *History of Vardan and the Armenian War*. Transl. and commentary by Robert W. Thomson (Cambridge, Mass.: Harvard University Press, 1982), p. 25. Հայաստանից գրադարձներում, ցավոք, չունենք Եղիշեի նույն երկի՝ 1993 թ. նյու-յորքյան վերահրատարակությունը, որտեղ Թոմսոնն իր-իրէ ոչ-առանցքային լրացումներ է կատարել (տե՛ս «*Revue des Études Arméniennes* », 1994-1995, Tome 25, p. 460-461):

ուշ»[294]: Անկապ դատողություններ և բանասիրական արհեստական զուգահեռներ անցկացնելուց հետո, Թոմսոնն ու վերջերս նրան կապկած Քաուչին հայտարարում են, թե Եղիշեի երկը իբր Ղազար Փարպեցու հաղորդումների գրական ընդարձակ վերամշակում է, այլ՝ ո՛չ ականատեսի պատմած[295]: Սա այսպես է ասված, որպեսզի ժխտվի Եղիշեի հաղորդած պատմական եզակի արժեք ունեցող տեղեկությունների հավաստիությունը, ինչը և ասածս երկուսն անվարան արել են: Բոլոր այս մեքենայությունների նպատակը շատ պարզ արտահայտված է Քաուչիի եզրահանգման մեջ.

> *Հետևաբար՝ Եղիշեի գմայլելի [գրական] նվաճումը ճշդրիտ կամ հավաստի քիչ տեղեկություններ ունի տալու հայոց քաղաքական կամ ռազմական պատմության հետազոտողներին:*
>
> [In consequence, Elishe's fascinating achievement affords little precise or reliable information to the student of Armenian political or military history.][296]

Որքան էլ զարմանալի է, սակայն Եղիշեի՝ Թոմսոնի արած անգլերեն թարգմանությունն ու նրան կից «քննությունը» մեզանում դեռևս չեն գրախոսվել, թեև լույս են տեսել տակավին 1982 թ.: Այդ տարիներին Հայաստանի Ակադեմիան, Մաշտոցյան Մատենադարանը և Պետական Համալսարանը գործում էին շատ ավելի բարենպաստ պայմաններում և, ունենալով 5-րդ դարի հարցերով զբաղվող մի քանի մասնագետ պատմաբաններ, լիովին ի վիճակի էին անմիջապես կասեցնելու Թոմսոնի և նրա դպրոցի հակահայկական քաոատրոփ ընթացքը: Մինչդեռ այժմ, երբ Հայաստանի գիտական համայնքը

---

294 **Elishe**, *History of Vardan and the Armenian War, op. cit.*, p. 27.

295 Տե՛ս նույն տեղում, էջ 25-27. հմմտ. **Peter S. Cowe**, "Elise's *Armenian War* as a Metaphor for the Spiritual Life," **in Jean-Pierre Mahé and Robert W. Thomson**, eds., *From Byzantium to Iran: Armenian Studies in Honour of Nina G. Garsoian, op. cit.*, pp. 341-369: on 345, 355.

296 **Peter S. Cowe**, "Elise's *Armenian War, op. cit.*, p. 355.

կխսաքայքայված վիճակում է, հայոց պատմության դեմ Թոմասոնի և նրա արբանյակների կազմակերպած լայնածավալ հարձակման չեզոքացումը շատ ավելի բարդ, թեև լուծելի խնդիր է:

Այստեղ բավարարվում ենք հայագետների ուշադրությունը հրավիրելով Թոմասոնի՝ Եղիշեին քննադատելու հետևյալ մոտեցումների վրա.

ա) Ինչպես և Մովսես Խորենացու քննադատության պարագայում, և՛ Թոմասոնը, և՛ Քաուին դարձյալ զանց են առել Եղիշեի մասին եղած պատմաբանասիրական ահռելի գրականությունը՝ ընտրովի նշելով միայն իրենց կանխակալ եզրակացություններին համապատասխանող հեղինակներին և նրանց գործերը: Հիմնականում, Թոմասոնը շարունակել է դեռևս 1930-ական-1940-ական թթ. Վիեննայի մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ակինյանի որդեգրած ձախող մոտեցումները[297]*, թեև արտաքնապես վերջինիս հետ «անհամաձայնություն» է հայտնում: Ու թեև Թոմասոնը պարտավոր էր նույն «Առաջաբանում»*[298] *անդրադառնալու հատկապես խոշորագույն եղիշեագետ ու նաև Ակինյանի քննադատ Երվանդ Տեր-Մինասյանի բազմաթիվ ուսումնասիրություններին*[299]*, նա այդ բանը չի արել՝ իր ողջ քննության մեջ Տեր-Մինասյանն առհասարակ հիշատակված չէ: Կեղծարարին վայել մի հնարք, որին դիմելու պատճառները միանգամայն պարզ են ու հասկա-*

---

297 Ձենք բացառում, որ դեռևս 1920-ական թթ. սկզբին Հայաստանից աւօրինական գործունեության (մասնավորապես՝ հայերեն ձեռագրերը արտասահման տեղափոխելու) համար արտաքսված Ակինյանը ևս քաղաքական պատվեր էր կատարում:

298 **Elishe**, *History of Vardan and the Armenian War*, pp. 1-53.

299 Եղիշեի մատենագիտությունը տե՛ս **Հ. Անասյան**. «Մատենագիտություն» (Եղիշէ. Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, հրատ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1957, էջ 204-219): Այդ մատենագիտության մեջ չնշված մի շարք հետազոտություններ լրացրել է **Պողոս Լևոն Զեքիյանը**, տե՛ս նրա «Եղիշեի երկը որպես վաղ հայկական եկեղեցու եկեղեցաբանության վկայություն» հոդվածը. – *Էջմիածին*, 1990, Ա, էջ 40, ծնթ. 2:

նալի, այն է՝ Ե. Տեր-Մինասյանը բառիս բուն իմաստով չախ-ջախել էր Ակինյանի կառուցած հե՛նց այն շինծու դրույթները, որոնք Թոմսոնը փորձում է ներկայացնել իբրև նորույթ: Պատկերացրեք մի հեղինակ, որը պատմագիտական երկ է գրում, օրինակ, Տիդրան Մեծի մասին և առհասարակ չի անդրադառնում այդ հարցին Հակոբ Մանանդյանի նվիրած կապիտալ մենագրությանը՝ այնտեղ առաջադրված դրույթները հաստատելու, զարգացնելու կամ, ընդհակառակը, հերքելու նպատակով: Այդպես վարվելու դեպքում, առնվազն մի բան հաստատ կլինի. հեղինակը պրոֆեսիոնալ չէ՛: Ճիշտ այսպիսի գնահատականի են արժանի Տեր-Մինասյանի եղիշեագիտական հետազոտությունները Թոմսոնն ու Քաուբին:

Ե. Տեր-Մինասյանը ժամանակին շատ ճիշտ էր նկատել Եղիշեի հասցեին ուղղված քննադատության զարգացման ընթացքը.

> *Այդ քննություններն սկզբում, ժթ դարի վերջին և ի դարի առաջին տասնամյակում, կրում են չափավոր և փոքր ի շատե անաչառ, զուտ բանասիրական բնույթ (Գր. Տ. Պողոսյան, Ն. Ադոնց, Բարգեն Կյուլնաերյան և այլք), իսկ հետագայում, Խորենացու վերաբերյալ եղած անչափավոր և մոտումնավոր քննադատությունների օրինակով, Եղիշեի վերաբերյալ քննադատություններն էլ դառնում են անանձ, անհիմն, բռնազբոսիկ և նախատական ու հայհոյական արտահայտություններով լի. Եղիշեն էլ հանդես է բերվում իբրև մի գրական կեղծիք, «ամենաթույլ մի մատյան, որ չի կրնար դիմանալ լուրջ քննադատության» (Ն. Ակինյան)[300]:*

Նույն ընթացքը, ուշացած, ժամանակավրեպ, ըստ որդեգրված քաղքականության, ԱՄՆ-ում կրկնվեց 1960-ականներից մինչև 1990-ականները ընկած ժամանակամիջոցում: Եթե ամերիկյան «հայագիտության» պատրիարք Կ. Թումանովը ե-

---

300 «*Եղիշեի Վարդանանց պատմությունը*»: Թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր Ե. Տեր-Մինասյանի: Երևան, Հայպետհրատ, 1946, էջ 16:

ղիշեի հարցում դեռևս ստիպված էր ընդունելու (թեև չատ զուսպ ձևով) Ե. Տեր-Մինասյանի և այլոց փաստարկների ճշմարտացիությունը[301], *ապա Թոմսոնը, Քաուին և մյուսները պարզապես ձևացրին, թե գիտական այդպիսի գրականություն գոյություն իսկ չունի: Իսկ թե ինչ կարգի անլուրջ պատճառաբանություններ են առաջ քաշել Եղիշեի «Հայոց պատերազմի» արժանահավատության դեմ Ակինյանը և այլոք (այս բնագավառում Թոմսոնն ու Քաուին իրենցից քիչ բան են ավելացրել) կարելի է համոզվել՝ ընթերցելով Ե. Տեր-Մինասյանի ընդարձակ քննադատությունները*[302]: *Եղիշեին վերաբերող ուշագրավ բազմաթիվ աշխատությունների շարքում կուզեինք հատուկ հիշատակել վերջերս Վ. Խաչատրյանի հրապարակած մի ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը, համեմատական վերլուծության ենթարկելով Ղազար Փարպեցու և Եղիշեի՝ ռազմական պատմությանը վերաբերող հաղորդումները, գրեթե մաթեմատիկական ճշտությամբ ապացուցում է 450-451 թթ. հայոց բանակում Եղիշեի ծառայությունը և նրա տեղեկությունների բացառիկ հավաստիությունը*[303]:

բ) Եղիշեին ևս ստախոս հայտարարելուց հետո, Թոմսոնն ու Ընկ. արդեն հանգիստ անցնում են ամբողջ հայ պատմագրությունը սևացնելու և այն ոչ-հավաստի որակելու աշխատանքին: Ահա թե այս առթիվ ինչ է գրում Թոմսոնը.

> *Հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք դեպքերի նկարագրությունը Եղիշեի կողմից՝ Սասանյաններին հալածանքները, դիմադրության չարժման առաջացումը, Ավարայրի պատերազմը, պարտիզանական պատերազմը և այն կանանց*

---

301 **Cyril Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, *op. cit.*, p. 17.

302 Առավել ամփոփ տարբերակով տե՛ս *«Եղիշեի վարդանանց պատմությունը»:* Հայպետհրատ, 1946, էջ 5-91 (Ակինյանին վերաբերող հատվածը էջ 41-91-ում):

303 Տե՛ս В. Н. Хачатрян. "Вопросы военного искусства в книге Егише "О Вардане и войне армянской". -- *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1992, No. 1 (583), էջ 126-139:

տոկունությունը, որոնց ամուսինները սպանվել էին կամ բանտարկված էին, արդյո՞ք այս տեղեկությունները իսկապես պատկանում են ժամանակակից ականատեսին, թե՞ դրանք դեպքերից շատ ավելի ուշ գրառած մեկնաբանություն են:

Եղիշեի պնդումը [դեպքերին իր ականատես լինելու մասին՝ Ա. Ա.] չի կարելի հալած յուղի տեղ դնել, քանի որ հայկական Պատմությունները գրված են եղել այն մարդկանց կողմից, որոնք հայտարարում են իրենց ականատես, սակայն ճանաչված են իբրև ավելի ուշ գրած արտադրանքներ (sic – լեզվա-ոճական անհարթությունը Թոմսոնինն է՝ Ա. Ա.): Այսպես՝ բոլորն են ընդունում, որ Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից Տրդատին դարձի բերելու մասին Ագաթանգեղոսի պատմությունը՝ ամենաշուտը 5-րդ դարի գործ է, այլ ո՛չ Տրդատի գրագրի բառացի հաղորդումը: ...«գրագրի» թեման հարմարեցրել են նաև Եղիշեին, որը հայկական ավելի ուշ աղբյուրներում անվանված է Վարդան Մամիկոնյանի քարտուղար:

Մովսես Խորենացու պնդումները իր՝ իբր Մեսրոպ Մաշտոցի աշակերտ լինելու և իր Պատմությունն իբր 5-րդ դարում գրած լինելու մասին հաստատակամորեն պաշտպանվում են Խորհրդային Հայաստանում, սակայն սուտ են ճանաչված վերջին տասնամյակների ընթացքում ԽՍՀՄ-ից դուրս ապրած գրեթե բոլոր գիտնականների մի քանի սերունդների կողմից: Հետևաբար՝ անհնար է ճանաչել Եղիշեի Պատմությունը իբրև 5-րդ դարի երկրորդ կեսի արտադրանք, հենվելով միայն հեղինակի պնդման վրա[304]*:*

Պիթըր Քաուին էլ, ավելի ուղղափառ երևալու համար, առաջ անցնելով, հայ պատմիչների երկերն անվանում է «մերձպատմական շարադրանքներ» (parahistorical texts)[305], *ասել է թե՝ պատմագրությանը հավակնող, սակայն անհավաստի տեղեկություններ պարունակող գործեր:*

---

304 **Elishe**, *History of Vardan and the Armenian War*, p. 19.

305 **Peter S. Cowe**, "Elise's *Armenian War, op. cit.*, p. 345.

Այսպիսով, ըստ Թոմսոնների՝ Հայաստանը եղել է մշակութային առումով մի խոպան տարածք, որտեղ ով ինչ ուզենար՝ կգրեր, իրեն ինչ ուզեր՝ կհռչակեր: Ըստ այս անհեթեթ տեսակետի՝ 8-րդ դարում ապրած Մովսես Խորենացին, մի ինչ-որ անհայտ քարանձավում նստած, ինքն իրենից բաներ է մոգոնել Հայաստանի անցյալի մասին, իրեն էլ հռչակել է 5-րդ դարի հեղինակ, իսկ հայ մշակույթի, գիտության, քաղաքական վերնախավի բոլոր ներկայացուցիչները անվերապահորեն հավատացել էին նրա այդ ստերին:

Այսպիսի մոտեցումները հայոց պատմագրությանը ինքնին ապապատմական են, քանզի իրականում հին և միջնադարյան Հայաստանի մշակութային դաշտը չափազանց զարգացած է եղել, ունեցել է գիտակրթական ներդաշնակ և խիտ համակարգ, որը համախմբում էր տասնյակ խոշոր և հարյուրավոր միջին ու մանր կենտրոնները (ընթերցողին մոտավոր պատկերացում տալու համար հայոց դպրության ընդգրկումների մասին, ասենք, որ, ըստ ոչ-ավարտուն հաշիվների, հայտնի է հայկական մատյանների 1500-ից ավելի գրչության կենտրոն[306]): Հետևաբար, Մովսես Խորենացու և Ղևիշեի՝ իրենց և իրենց ապրած ժամանակի մասին արած հստակ հաղորդումները ինքնին ծանրակշիռ փաստ ու փաստարկ են: Եթե նրանց այդ հաղորդումները կեղծ լինեին, ապա ժամանակին անմիջապես կկանխվեին հե՛նց հայոց միջավայրում՝ նախքան 19-20-րդ դարերում բանասեր գերքննադատների կամ ավելի ուշ Թոմսոն-քաուչների լույս աշխարհ գալը: Մինչդեռ, հայոց հին և միջնադարյան վիթխարի դպրությունն ու մատենագրությունը ոչ միայն պաշտպանել են Խորենացու և Ղևիշեի 5-րդ դարին պատկանելությունը, այլև լրացուցիչ կենսագրական մանրամասնություններ են հաղորդել այս երկու մեծ այրերի մասին: Այս առումով առավել ուշագրավ է, որ Մովսես Խորե-

---

306 Տե՛ս Օ. Եգանյան, Ա. Զեյթունցյան, Փ. Անթաբյան. *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի:* Հ. Ա, Երևան, ԳԱ, 1984, էջ Թ:

նացուն համարել են «պատմահայր», «երանելի փիլիսոփա», «ճարտասան», «մատենագիր», «քերթող, քերթողահայր»: Ինչպես արդարացիորեն նկատվել ու մանրամասն պատճառաբանվել է, այս որակավորումները հաճոյախոսություններ չեն, այլ՝ սրանցից յուրաքանչյուրը ներկայացրել է Խորենացու իրական վաստակը տարբեր բնագավառներում՝ բացի պատմագրությունից, նաև քերականության, փիլիսոփայության, աշխարհագրության, ճարտասանական արվեստի մեջ[307]: Նույնը լիովին վերաբերում է նաև Եղիշեին[308]:

Մովսես Խորենացին և Եղիշեն իրենց հանճարեղ երկերով բացահայտվում են նախ և առաջ իբրև բարոյական ամենաբարձր առաքինություններով օժտված անհատներ: Մի՞թե նրանց ստեղծագործությունները իսկ լավագույն ապացույցը չեն նրանց բյուրեղյա ազնիվ կերպարի: Մի՞թե պարզ չէ, որ այդպիսի մարդիկ ստախոսության չէ, որ պարապել են: Նաև այս պատճառով՝ նրանց երկերում եղած ինքնակենսագրական մանրամասնությունները ունեն հավաստիության ամենաբարձր աստիճան: Այս առումով տեղին է հիշել գերմանացի թատերագիր Ֆրիդրիխ Գեբբելի արդարացի խոսքը՝ «Յուրաքանչյուր գրող գրում է իր ինքնակենսագրությունը»[309]: Սակայն, այսպիսի տրամաբանություն պահանջել Թոմսոնից և նրա կարգի այլ «հայագետներից» անհույս գործ է, քանզի սրանց ըմբռնումները ու պատկերացումները հայ պատմագրության, ինչպես և ամբողջ հայ ազգի մասին ճիշտ հակառակն են: Ի դեպ, Թոմսոնն ինքն էլ հենց քաշել է Հայաստան-

---

307 Մանրամասն տե՛ս Ա. Մ. Մաթևոսյան. Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը. -- *Պատմա-բանասիրական հանդես*, 1989, հմր. 1, էջ 226-230. հմմտ. Պ. Մուրադյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետքերը 6-7 դարերի երկերում, էջ 98:

308 Եղիշեի կենսագրությանն ու մահվանը վերաբերող արժեքավոր նշխարներ ևս պահպանվել են. տե՛ս *Սուիերք հայկականք*. ԺԱ. Վենետիկ, 1853, է 39-45:

309 Фридрих Геббель. Избранное. Том 2. Москва, "Искусство", 1978, с. 432.

ցի գիտնականների և իր միջև այդ գիծը, Խորենացու մի հաղորդման առթիվ մեծամտորեն հայտարարելով՝ «Թերևս անմտություն կլինի ենթադրելը (ինչպես անում է գիտնականների մեծամասնությունը Հայաստանում), որ այստեղ Մովսեսն ավելի անկեղծ է, քան այլուր» [It is perhaps unwise to assume (with the generality of scholars in Armenia) that Moses is being more candid here than elsewere][310]: Կարծում եմ՝ այդքան շատ տարփողելով հայ պատմիչների և նրանց հաղորդումների «կեղծ» և «սուտ» լինելը, Թոմսոնն ու նրա գործընկերները նույնպես, Գեբբելի բանաձևի համաձայն՝ նախ և առաջ շարադրել են իրենց ինքնակենսագրությունը:

Կարևոր մի հանգամանք ևս. տասնյակ հազարավոր հայերեն մատյաններ, առնվազն այնքան, որքան այսօր մեզ են հասել, կամ գուցե ավելին, կիսելով իրենց ծնած ժողովրդի դառը ճակատագիրը՝ պարզապես ոչնչացվել են՝ ընդմիշտ զրկելով մեզ պատմական տեղեկությունների մի անգնահատելի և մեծ ամբողջությունից[311], որ անշուշտ գալու էր հաստատելու և լրացնելու Մովսես Խորենացու և Եղիշեի մասին մեր ունեցած գիտելիքները: Միայն այս կորուստը հաշվի առնելուց հետո է կարելի ճշմարիտ գնահատական տալ հայ մատենագրությանը, մի բան, որ Թոմսոններն երբեք չեն էլ ուզի անել:

Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսին, ապա պետք է ասենք, որ վերջինիս երկը հայագիտության անբավարար ուսումնասիրված հարցերից է, ուստի և չէինք շտապի հաստատապես ասելու, որ Ագաթանգեղոսը 5-րդ դարի հեղինակ է և վերջ: Միանգամայն ընդունելի՝ ու նաև բազմից արտահայտված կարծիք է այն, որ վերջինիս Պատմությունը նախապես կարող էր գրված լինել 4-րդ դարում՝ հունարենով, այնուհետև, հայոց գրերի ստեղծումից հետո՝ վերաշարադրվեր և վերամշակվեր 5-րդ դարում: Ինչևիցե, հայագիտությունն առայժմ գո-

---

310 **Moses Khorenatzi**, *History of the Armenians*, *op. cit.*, p. 39.

311 Օ. Եգանյան, Ա. Ջեյթունցյան, Փ. Անթաբյան. *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, էջ Է-Թ:

հացուցիչ որևէ լուծում չի տվել Ագաթանգեղոսի առեղծվածին[312]:

Այսպիսով, ամփոփենք. Թոմսոնյան «հայագիտության» հիմնական սկզբունքները նույնն են, ինչ արդեն ծանոթ Սյուննիինը.

ա) նկատելու չտալ սկզբնաղբյուրների այն հաղորդումները, որոնք հակասում են իրենց կանխորոշած պատասխաններին.

բ) անտեսել գիտական այն գրականությունը, որը հակասում է իրենց կանխորոշած եզրակացություններին:

- Սառըպատերազմյան այսպիսի քարոզչական «մեթոդաբանությամբ» դժվար չէ ուզածդ հին հեղինակին վարկաբեկելը, ստախոս հռչակելը, նրան մի դարից մյուսը տեղաշարժելը: Այսպես առաջնորդվելով, մեծ ցանկության դեպքում, կարելի է Պուշկինի մահն էլ թվագրել ոչ թե 1837, այլ 1937 շատ հարմար թվականով:

Կարծում ենք, վերոշարադրյալը բավարար չափով բնութագրում է «հայագետ» Թոմսոնին որպես գիտության մեջ ոչ-գիտական պատվեր կատարող մի անձի: Հետևապես՝ մեր ամենակարևոր հետևություններից մեկն այն է, որ Թոմսոնի կանխակալ և թերի թարգմանությունները չեն կարող օգտագործվել իբրև վստահելի աղբյուր, առանց բնագրի հետ մանրազնին համեմատության:

Փաստորեն, 1978 թվականից ի վեր, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» անգլերեն Թոմսոնյան հրատարակությամբ հայոց պատմագրության այս երախայրիքը դուրս հանվեց անգլախոս գիտական լուրջ ուսումնասիրությունների շրջանակից[313]: Նույնը կատարվեց նաև Եղիշեի՝ հայոց

---

312 Ագաթանգեղոսի Պատմությունը ունեցել է իրարից տարբեր բազմաթիվ մեկնաբանություններ, մատենագիտությունը տե՛ս Հակոբ Անասյան. «Հայկական մատենագիտություն. Ե-ԺԸ դդ.» Հ. Ա, Երևան, ԳԱ, 1959, էջ 151-214:

313 Ջուսթո Տրայինայի «*Il complesso di Trimalcione*» վերը հղված աշխա-

հերոսական ավանդույթներն ու ազգային բարձր ինքնագիտակցությունը բացահայտող, հետագա շատ սերունդներ հայրենասիրական ոգով դաստիարակած, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկի հետ՝ 1982 թ. Թոմսոնյան թարգմանությունից հետո (ի դեպ, ի տարբերություն Մովսես Խորենացու «Հայոց պատմության», ասպարեզում կային Եղիշեի երկու անգլիերեն թարգմանություն՝ 1830 թ. Կ. Ֆ. Նոյմանինը և 1952 թ. Տ. Հ. Պոյաճյանինը[314]): Բերենք ամերիկյան «հայագիտության» այս տխուր իրականությունը ցցուն ներկայացնող մի օրինակ: Կոլումբիայի համալսարանում Նինա Գարսոյանի ղեկավարությամբ իր դոկտորականը պաշտպանած (իսկ այժմ՝ Նյու Յորքում համակարգչային ծրագրավորող աշխատող)[315] Ռոբերտ Բեդրոսյանը՝ 1983 թ. հանդես եկավ Արշակունյաց Հայաստանի սպարապետական գործակալությունը քննող մի ընդարձակ ուսումնասիրությամբ[316], որտեղ նա, բնութագրելով իր սկզբնաղբյուրները, գրել է բառացիորեն այսպես.

> [*Սկզբնաղբյուրների*] *քննության միջից պարտավոր ենք հանել* [eliminate] *երկու գիրք, որոնք ավանդարար ընդունվել են իբրև 5-րդ դարի ստեղծագործություններ. դրանք են՝ Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին»ը և «Հայոց պատմությունը», որ վերագրվում է Մովսես Խորենացուն:*
>
> *...Ինչ վերաբերում է Խորենացուն, ապա թվում է, թե այս առեղծվածային գրողը կամ խմբագրողն աշխատում էր 8-րդ դարի վերջին... ուստի Խորենացու տեղեկությունների*

տությունը գրախոսելիս, այս փաստը ճրքորեն նշել է Հ. Լևոն Ջեքիյանը, տե՛ս *Journal of the Society for Armenian Studies* Vol. 7 (1994, սակայն լույս է տեսել 1996-ին), pp. 167, 172.

314 Տե՛ս Հ. Անասյան. «Մատենագիտություն» (Եղիշէ. Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957), էջ 211:

315 Տե՛ս **Richard Hovannisian**, ed., *The Armenian People from Ancient to Modern Times, op. cit.*, Vols. 1, p. 350.

316 **Robert Bedrosian**, "The Sparapetutiwn in Armenia in the Fourth and Fifth Centuries," *Armenian Review*, 1983, Vol. 36, #2, pp. 6-45.

քննությունը սահմանափակել ենք ծանոթագրությունների մեջ[317]*:*

Այս դեպքում ուղղակի դժվար է չբացականչել՝ բրա՛վո, պարոնայք «հայագետներ», փայլուն եք աշխատում: Միայն թե ինչ՞ գիտական արժեք կարող է ունենալ հայոց սպարապետությունը «քննող» մի գործ, եթե այն հաշվի չի առնում իր թեմատիկայի մասին ամենահարուստ տեղեկությունները պարունակող երկու հիմնական սկզբնաղբյուր: Սա գիտություն չէ, այլ՝ ձախորդ աճպարարություն: Պատկերացնենք, ասենք, կոմունիստական շարժման որևէ պատմաբանի, որը դեն է նետում 1848 թ. Մարքսի և Էնգելսի գրած «Կոմունիստական մանիֆեստը», որովհետև համոզված է, թե հեղինակները ապրել են 20-րդ դարում և գրել են այդ երկը 1940-ական թթ., ասենք՝ Մոսկվայում: Այսպիսի եղանակներով ինչպիսի՛ ցնցիչ հայտնագործություններ կարելի է անել: Իրականում, Թոմսոնի թարգմանությունների արդյունքը (եթե ո՛չ բուն նպատակը) եղել է ո՛չ թե հայ պատմագրության հարուստ նյութը լայն շրջանառության մեջ դնելը, այլ ընդհակառակը՝ դրանք գիտական լուրջ ուսումնասիրությունների շրջանակից հանելը, դրանք մեկընդմիշտ անվստահելի աղբյուրներ հռչակելը: Այս ուղղությամբ ԱՄՆ-ում տարվող արդյունավետ աշխատանքների վկայությունն է նաև այն, որ Թոմսոնյան տիպի առաջաբաններով վերահրատարակվում են հայերեն երկերի ոչ միայն թարգմանությունները, այլև՝ բուն բնագրերը[318]*:*

Այն էլ նշենք, որ Ռ. Բեդրոսյանը թարգմանել է նաև Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Կիրակոս Գանձակեցու Հայոց պատմությունները՝ սրանք բոլորը խորագրելով ոչ

---

317 Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

318 Տե՛ս **Moses Khorenatsi**, *Patmutiwn Hayots*. A facsimile reproduction of the 1913 Tiflis edition with an introduction by Robert W. Thomson (Delmar, New York: Caravan Books, 1981). **Ps. Pawstos**, *Buzandaran Patmutiwnk* [*The Epic Histories*]. Classical Armenian Text Reprint Series, gen. ed. John A. C. Greppin (Delmar, N. Y., 1984), with an introduction by N. G. Garsoian, a reprint of the 1883 St. Petersburg edition.

թե «Հայաստանի պատմություն», այլ «Հայերի պատմություն» (History of the Armenians)[319], որ, ինչպես վերը նշել ենք, կանխամտածված ու կոպիտ սխալ է:

Մովսես Խորենացու (կարդա՝ Հայաստան պետության պատմության) դեմ սկսված արշավը շարունակվում է ամբողջ թափով: Սյունին, հղելով միմիայն Թոմսոնին, տարակարծություն չհանդուրժող ոճով, Մովսես Խորենացու բնագիրը կարդալու ունակ չլինելով իսկ՝ Մովսես Խորենացուն անվանում է 8-րդ դարի հեղինակ[320]: Նորերս՝ 1995 թ., Թոմսոնի աշակերտներից մեկը՝ Էրիխ Քեթենհոֆենը Գերմանիայում հրապարակել է «Տրդատը և Պայկուլիի արձանագրությունը» խորագրով գիտականորեն չափազանց թույլ մի գիրք[321] (վերջինիս սուր քննադատությամբ հանդես եկավ Ջուսթո Տրայինան[322]), որի մեջ այս նորաթուխ «հայագետը» բառացիորեն կրկնել է Խորենացու և հայ պատմագրության դեմ Թոմսոնի բարբաջանքները[323]: Մովսես Խորենացու ավանդական ոսկեդարյան թվագրությունը հաստատող իր մեկ այլ հոդվածում Տրայինան Քեթենհոֆենի գիրքը բնութագրում է որպես «ռևիզիոնիստական մի ուսումնասիրություն», քանի որ՝ «ոչ միայն հայագիտական բազում գործեր, այլև նույնիսկ հայկական շատ աղբյուրներ միտումնավոր կերպով զանց են առնված»[324]:

---

319 Տե՛ս Ռիչարդ Հովհաննիսյան. Հայ դասական աղբյուրների թարգմանությունը Միացյալ Նահանգներու մեջ, էջ 106-109:

320 Տե՛ս **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, pp. 7, 248, note 9.

321 Տե՛ս **Erich Kettenhofen**, *Tirdad und die Inschrift von Paikuli. Kritik der Quellen zur Geschichte Armeniens im späten 3. und frühen 4.* Jh. n. Chr., (Wiesbaden, Reichert Verlag, 1995).

322 Տե՛ս *Mesopotamia: Rivista di archeologia, epigrafia e storia orientae antica* (Casa editrice le lettere, Firenze) 1996, XXXI, pp. 308-311. Նույն գիրքն ավելի զուսպ քննադատել են նաև Բաբկեն Հարությունյանը և Ժ.-Պ. Մահեն (տե՛ս *Պատմա-բանասիրական հանդես* 1996, No. 1-2 (143-144), էջ 353-355 և *Revue des Études Arméniennes*, 1994-1995, Tome 25, pp. 469-472):

323 Տե՛ս *Revue des Études Arméniennes*, 1994-1995, Tome 25, p. 470-471.

324 Տե՛ս **Ջուստո Տրայինա**, *ժամանակագրութիւն* եզրի ըմբռնումը Մով-

Ինչ վերաբերում է հայաստանյան հայագիտական համայնքին, ապա պարտավոր ենք ի վերջո գիտակցել, որ գործ ունենք ո՛չ թե առանձին՝ Թոմսոնի և Սյունիի կարգի «հայագետների» հետ, այլ ԱՄՆ-ում (մասամբ նաև՝ ամբողջ Արևմուտքում) հաստատագրված (ինստիտուտիզացված) կեղծ-հայագիտական մի ամբողջ դպրոցի հետ: Փաստորեն, «հայագիտության» այս դպրոցը կյանքի է կոչվել արևմտյան որոշակի ուժերի կողմից՝ սպասարկելու համար հզոր և վաղուց ի վեր գործող թուրքամետ քարոզչությանը: Վերջին երեսնամյակի ընթացքում, կեղծարարական եռանդուն աշխատանքների շնորհիվ, կառուցվել է այդ քարոզչությանը հարմարեցված բավական տարածուն «ակադեմիական» մի հիմք, որի վրա հենվելով էլ քաղաքական պատվեր կատարող արևմտյան «մկնաբանները» ձևավորում են համապատասխան հասարակական մթնոլորտ[325]: Այս կեղծարարության մյուս լուրջ հետևանքն էլ ո՛չ հայախոս և վաղուց հայերեն չկարդացող սփյուռքահայ զանգվածների ստացած աղճատված պատկերացումներն են հայոց պատմության և մշակույթի մասին: Իր ժողովրդի պատմությանն անիրազեկ սփյուռքահայը՝ սյունիների և թոմսոնների գրքերին վստահելով, այնտեղից ստանալու է

սես Խորենացու "Հայոց պատմության" մեջ (Բ, 82). - *Իրան-Նամե*, 2-3, 1997 (թիվ 24-25), էջ 16, ծնթ. 4:

325 Բազմաթիվ այդպիսի օրինակներից ճշենք Արևմուտքում միջազգային հարաբերությունների ամենահեղինակավոր հանդեսներից մեկում՝ *Foreign Affairs*-ում (Միջազգային հարաբերություններ) 1997 թ. մարտ-ապրիլյան համարում՝ ոմն Դեյվիդ Ռիֆի տպագրած հոդվածը, որտեղ Ղարաբաղյան հակամարտության ողջ մեղքը բարդվում է հայերի «իռացիոնալ ազգայնականության» վրա, իսկ հայ հասարակությունը նկարագրված է ռասիստական նողկալի քամահրանքով: Այս հոդվածի թարգմանությունը և տպագրությունը «Ռեսպուբլիկա Արմենիայա» պաշտոնաթերթում (հուլիսի 17, 1997)՝ այն էլ խմբագրության կցած դրական մեկնաբանությամբ, վկայում է, թե դեռևս որքան թույլ է մեզանում, անգամ պետական քարոզչության մակարդակի վրա, *ազգային անվտանգություն* հասկացության ըմբռնումը. հմմտ. այս առթիվ Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցչության և Հ. Հովհաննիսյանի հրապարակած քննադատությունը «Գոլոս Արմենիի» եռօրյայում (հուլիսի 22, 1997):

հակահայկական պրոպագանդայի այնպիսի հզոր դոզա, որ այլևս դժվար թե ցանկանա որևէ ձևով իր ուժերը ծառայեցնել Հայաստանի և հայ ազգի շահերին:

3.3. Փավստոս Բուզանդի թարգմանության և քննության պարագաները

3.3.1.Փավստոսագիտության արդի վիճակը

1989 թ. ԱՄՆ-ում հրապարակվեց Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը»՝ Նինա Գարսոյանի անգլերեն թարգմանությամբ: Մինչ այս հրատարակության բուն քննությանն անցնելը, համառոտակի բնութագրենք փավստոսագիտության արդի վիճակը:

Ցավալի է, բայց հրապարակի վրա դեռևս չունենք Բուզանդի քննական բնագիրը, իսկ վենետիկյան հրատարակությունը (1832) (սրանից են վերարտադրվել բոլոր հետագա տպագրությունները) չի կարող բավարարել հայագիտության արդի պահանջները: Այսօր հնացած պետք է համարել նաև այս երկի Ստ. Մալխասյանցի կատարած վերաշարադրությունը աշխարհաբար հայերենի (1947, 1968), էլ չասած ռուսերեն (1953), գերմաներեն (1879) և ֆրանսերեն (1867) թարգմանությունների մասին[326]*:*

Ամենադժգույն վիճակում է հայտնվել, սակայն, Փավստոս Բուզանդի և նրա «Հայոց պատմության» պատմագիտական ուսումնասիրությունը: Կարելի է նույնիսկ վստահ ասել, որ, ի տարբերություն խորենացիագիտության, փավստոսագիտությունը տակավին չի հաղթահարել գերքննադատության բացասական ազդեցությունը:

Ելնելով այն դրույթից, որ 5-րդ դարում ապրած լինելով՝ Փավստոսը չարադրել է 4-րդ դարում տեղի ունեցած իրա-

---

326 Ռուսերեն թարգմանության քննադատական գրախոսությունը տե՛ս Հ. Ս. Աճառյան. *Մանր երկեր:* Լոս Անջելես, 1987, էջ 355-373:

դարձությունների պատմությունը, նախորդ բոլոր հետազոտողները եզրակացրել են, որ Փավստոսի աղբյուրները եղել են բացառապես բանավոր, էպիկական: Այսպես, հետևելով Մանուկ Աբեղյանին, «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակը գրում է, թե Փավստոսը «ամենից շատ օգտվել է 4-րդ դարի պատմական անձանց և նրանց արարքների շուրջ հյուսված ժողովրդական աշխարհիկ ու կրոնական զրույցներից, լեգենդներից, վեպերից, անգամ երգերից և դրանց հիման վրա գրել իր պատմությունը»[327]*: Նույն այս կարծիքը, ընդհանուր առմամբ, պաշտպանել են նաև Ն. Ադոնցը, Ստ. Մալխասյանցը, Կ. Մելիք-Օհանջանյանը և այլոք*[328]*: Այստեղից էլ արվել է հաջորդ մեծապես սխալ եզրակացությունը, այն է՝ թե Փավստոսի «Հայոց պատմությունը» պատմական ստույգ աղբյուր չէ, «իսկական պատմական երկ» չէ, այլ առավելապես գեղարվեստական գործ է, վեպ է, որից «կարելի չէ... օգտվել պատմության համար»*[329]*:*

Իրականում, սակայն, Փավստոսի հաղորդումների մեծ մասը պարունակում է տրամաբանորեն կուռ շաղկապված այնպիսի դիպաշար և մանրամասնություններ, որոնք հնարավոր էր քաղել բացառապես գրավոր, վավերագրական աղբյուրներից: Հատկապես, պատերազմական անցքերի նկարագրությունները, Փավստոսի կողմից խմբագրված և գաղափարապես գունազարդված լինելով հանդերձ՝ իրենց չոր ոճով կարծե՛ս ուղղակի արտագրված լինեն մարտական զեկուզագրերից կամ

---

327 Տե՛ս *«Հայ ժողովրդի պատմություն»: Հտ. Բ*, Երևան, ԳԱ, 1984, էջ 452. հմմտ. **Մանուկ Աբեղյան.** *Երկեր*, հտ. Գ *(Հայոց հին գրականության պատմություն.* Գիրք առաջին), Երևան, ԳԱ, 1968, էջ 193-194:

328 Տե՛ս Н. Адонц. Фауст Византийский как историк. - "Христианский Восток", 1922, VI, вып. 3, с. 235-272. **Կ. Մելիք-Օհանջանյան.** Տիրան-Տրդատի վեպը ըստ Փավստոս Բուզանդի. - *Տեղեկագիր հաս. գիտ.*, 1947, No. 6, էջ 59-74, 1947, No. 7, էջ 59-77. **Փավստոս Բուզանդ.** *Պատմություն հայոց:* Թարգմ., ներած. և բացատրություններով Ստ. Մալխասյանցի. Երևան, «Հայաստան», 1968, էջ 44-53:

329 Տե՛ս **Մանուկ Աբեղյան.** *Երկեր*, հտ. Ա, Երևան, ԳԱ, 1966, էջ 199. հմմտ. *«Հայ ժողովրդի պատմություն»: Հտ. Բ*, նշվ. աշխ., էջ 453-454:

տեղեկագրերից[330]: Ջմռուանանք, որ Փավստոսը ստեղծագործել է հայոց սպարապետ Մամիկոնյանների նախարարական տան հանճնարարությամբ և հովանավորությամբ, կարելի է ասել՝ եղել է Մամիկոնյանների «պալատական պատմիչը»: Այս առումով զարմանալի է, որ հայ պատմիչների հաղորդումների մեծամասնության արժանահավատությանը միշտ «պոզ ու պոչ» կպցնողները կատարյալ վստահությամբ են վերաբերվել Փավստոսից ընդամենը մի քանի տասնամյակ ավելի ուշ՝ դարձյալ Մամիկոնյանների հանճնարարությամբ, «Հայոց պատմություն» շարադրած Ղազար Փարպեցու խառնակ և խիստ անվստահելի մի վկայությանը, ըստ որի՝ վերջինս իբր լավ չգիտեր, թե Փավստոս Բուզանդը ո՞վ է եղել և ի՞նչ կրթություն է ունեցել (Ա, 1, 3–4): Այնինչ Ղազարը պետք է շատ էլ լավ իմանար Փավստոսի ով լինելը թեկու՛զ միայն Մամիկոնյանների միջոցով, որոնք, ուշադիր լսելով հանդերձ նրա քննադատական խոսքերը Բուզանդի երկասիրության մասին (այս քննադատության պատճառները պետք է հիմնականում անձնական բնույթի լինեին), այնուամենայնիվ հրահանգել են նրան սկսելու իր աշխատությունն այնտեղից, որտեղ ավարտել էր Բուզանդը: Դրանով իսկ՝ Մամիկոնյանները իրենց վստահությունն էին հայտնել Փավստոս Բուզանդին և նրա հեղինակած Պատմությանը: Հետևաբար, Ղազար Փարպեցու անտեղյակությունը Փավստոսի կենսագրությանը պետք է համարել ուղղակի անհնարին բան և նրա գրական հնարանքը: Ավելին՝ հայկական մի ավանդություն պնդում է, թե տարբեր ժամանակներում Փավստոսը և Ղազար Փարպեցին ապրել և գործել են միևնույն՝ Բարձր Հայքի Ս. Թորոս վանքում (Բաբերդ քաղաքից 16 կմ արևմուտք), ընդ որում Փավստոսը՝ «կամ իբրև վանահայր առաջնորդ և կամ վանահայր առաջ-

---

330 Ի թիվս այլ նմանօրինակ դրվագների, տե՛ս հատկապես՝ **Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն,* Դ դպրութիւն, ԻԱ–ԽԳ, ԽԵ–ԽԹ, ԾԵ. Ե դպրութիւն, Ը–ԺԹ, ԼԹ–ԽԱ:

նորդին ազգականը»[331]: Ուստի, եթե այս ավանդությունը համապատասխանում է ճշմարտությանը (իսկ հակառակը պնդելու հիմքեր չունենք), ապա Ղազարն այստեղից ևս պետք է իմանար Փավստոսի մասին:

Ինչևէիցե, Փավստոսի համար գրավոր հնարավոր աղբյուր կարող էին լինել, օրինակ, Մամիկոնյանների տոհմական դիվաններում պահպանվող, հունարենով կամ ասորերենով գրված՝ պատերազմական անցուդարձերի մանրամասն արձանագրություններ, զանազան նամակներ ու փաստաթղթեր, մարտական զեկուցագրերի ժողովածուներ: Իսկ որ այդպիսի դիվաններ ու փաստաթղթեր եղել են՝ չենք կասկածում, քանզի հայկական պետականության աշխույժ կենսագործունեությունը, սպարապետության ճյուղավորված գործակալության բարդ զեկավարությունը, այն էլ՝ մշտական պատերազմական իրադրության մեջ, պետք է Մամիկոնյաններին պարտադրած լիներին գրեթե ամենօրյա գրագրություն վարել և՛ արքունիքի, և՛ սահմաններում ու բերդերում գտնվող զորապնդերի, և՛ այրուձի տրամադրող նախարարական բոլոր տների հետ (հիշենք՝ դեռևս մ.թ.ա. 1-ին հազարամյակում Հայաստանի մայրաքաղաքներում, ինչպես նաև նահանգային կենտրոններում և տաճարներում եղել են «բանիմաց դպրեվրներ՝ կրթություն ստացած համապատասխան դպրոցներում»[332]): Մյուս կողմից՝ հայկական զինված ուժերի զարգացած համակարգի կայունությունն ու շարունակականությունը (հատկապես՝ հրամկազմի սահուն սերնդափոխությունն) ապահովելու գործում անհրաժեշտ և նույնիսկ անխուսափելի էր հայ ռազմական ավանդույթի պահպանումը և ուսուցումը ոչ միայն բանավոր, այլև գրավոր ձևով: Ավելին՝ մեզ է հասել այդպիսի թանկարժեք մի փաստաթուղթ՝ հայոց գորքերի թվաքանակն ու տեղաբաշխումը ար-

---

331 Տե՛ս Գ. Թուրիկեան, *Եփրատեան Հայաստան կամ Ջոի եւ շրջ. գաւառները*. Հտ. Ա, Փարիզ, 1947, էջ 80:

332 Յովհաննէս Կարագեոզեան, *Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)*: Երևան, «Մագաղաթ», 1998, էջ 48-50:

ձանագրած հանրահայտ «Զորանամակը», որ, Բաբկեն Հարությունյանի պատճառաբանված քննությամբ, հառնում է իբրև 3-րդ դարի դիվանական վստահելի վավերագիր[333]: Հետևաբար՝ կասկածից դուրս պետք է համարել, որ 5-րդ դարում ապրած Փավստոս Բուզանդն իր ձեռքի տակ ունեցել է ոչ թե մեկ կամ մի քանի, այլ՝ բազմաթիվ նմանօրինակ վավերագրեր:

Սխալ է Փավստոս Բուզանդին ներկայացնելն իբրև ընդամենը «իսկապես գրագետ մի վիպասան, որ սովորած է եղել շատ ըրույցներ և իմացել է բերանացի վիպել շատ պատումներ «Պարսից պատերազմից», ինչպես մի Նախո Քեռի կամ Մոկացի Հովան պատմել են "Սասնա Ծռերից"» (Մ. Աբեղյան)[334], իսկ Փավստոսի «Հայոց պատմությունն» էլ հասկանալ «իբրև մի ժողովածու ավանդությունների ու ըրույցների» (Ստ. Մալխասյանց)[335]: Ո՛չ, հազար անգամ ո՛չ՝ Փավստոսը Նախո Քեռի չէ, իսկ նրա «Հայոց պատմությունը» ոչ թե «Սասնա ծռերի» ժանրին պատկանող աղբյուր է, այլ պատմագրական երկ: Եթե տրամաբանորեն չարունակենք մեր պատմագրության բանասեր քննադատների մտքի թիելը, ապա պետք է եզրակացնենք, որ հին Հայաստանում բանահավաքչությունը դրված է եղել գրեթե մերօրյա գիտական մակարդակի վրա, իսկ Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին եղել են Գարեգին Սրվանձտյանի կամ Մանուկ Աբեղյանի՝ 5-րդ դարում ապրած ճշգրիտ նախատիպերը:

---

333 Տե՛ս Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ստեղծման 1500-ամյակը» միջազգային գիտաժողովի դրույթները (Երևան, ԳԱ, 1991), էջ 28-30:

334 Տե՛ս Մանուկ Աբեղյան. **Երկեր**, հտ. Գ, էջ 193. Ըստ Կ. Մելիք-Օհանջանյանի ևս՝ Բուզանդը «չի ունեցել ոչ դոկումենտալ գրականություն և ոչ էլ որևէ այլ գրավոր սկզբնաղբյուր: Նրա անմիջական սկզբնաղբյուրն է եղել հայ ֆոլկլորը...» (տե՛ս «Տեղեկագիր հաս. գիտ.», 1947, հմր. 7, էջ 59):

335 **Փավստոս Բուզանդ**. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 44:

Իրականում, Փավստոսը Հայաստանի պատմություն ու առավելապես՝ ռազմական պատմություն գրած մի խիստ յուրօրինակ պատմիչ է, որի եզակիությունը արտահայտվում է իր երկին գաղափարախոսական սուր ուղղվածություն հաղորդելու մեջ: Փավստոսը գաղափարախոս պատմիչ է, իր ժամանակի հայ իրականության և մտայնության հանճարեղ արտահայտիչ: Համեմատելու դեպքում, Փավստոսին ավելի շուտ կնմանեցնենք Րաֆֆու հետ, նրա երկն էլ նույն հարթակի վրա կդնենք Րաֆֆու «Խամսայի մելիքություններ»-ի հետ (նկատելով միաժամանակ Փավստոսի աղբյուրների առավել մեծ հավաստիությունը):

Սակայն ի՞նչն է առիթել ուսումնասիրողների կատաղի հարձակումները Փավստոսի հաղորդումների հավաստիության դեմ: Հիմնականում երեք հանգամանք.

1. <u>Առասպելական դրվագներով հատվածները</u>, որոնք, սակայն, կազմում են Փավստոսի ամբողջ Պատմության մի փոքր՝ 10%-ից էլ պակաս մասը: Միաժամանակ, այդ հատվածները, հայ ազգային գաղափարախոսության էությունն ու նրբերանգները բացահայտող՝ պատմական թանկարժեք մասունքներ են (այս ճշմարտությունը մասամբ ընդունում են նաև Փավստոսի քննադատները[336]): Կարճ ասած՝ այն, որ Փավստոսն ունի առասպելաբանություններ, դեռևս չի նշանակում, թե նրա «Հայոց պատմությունն» ամբողջությամբ առասպելաբանություն է: Առասպելաբանություններով լեցուն են նաև հին ժամանակների հունա-հռոմեական պատմիչների երկերը, սակայն այդ պատճառով Հերոդոտոսին և նրան հաջորդած պատմիչներին չեն հայտարարել սովորական «գուսան», ինչպես մեզանում հռչակել են Փավստոս Բուզանդին[337]:

2. <u>Հստակ ժամանակագրության բացակայությունը</u>: Փաստ է, որ Փավստոսի ժամանակագրությունը բավական

---

336 Տե՛ս **Մանուկ Աբեղյան**. *Երկեր*, հտ. Գ, էջ 259-261:

337 Տե՛ս **Մանուկ Աբեղյան**. *Երկեր*, հտ. Գ, էջ 259:

խառնաշփոթ վիճակում է[338]: Սակայն, սա վկայում է միայն այն մասին, որ Փավստոսի ձեռքի տակ եղած ցրիվ աղբյուրները նրան հնարավորություն չեն ընձեռել կառուցելու դեպքերի կուռ և ճշգրիտ ժամանակագրությունը: Փավստոսն ի վիճակի չի եղել, իսկ գուցե և նպատակ էլ չի ունեցել ժամանակագրական խնդիրներին վերաբերվելու ինքնուրույն՝ գրեթե ժամանակակից մեթոդաբանական բծախնդրությամբ: Հնարավոր է նաև, որ Փավստոսի ժամանակագրության և շարադրանքի որոշ չփոթներ առաջացել են հետագա մասնակի խմբագրումների և օրինակումների ընթացքում: Ինչևիցե, թերի ժամանակագրություն ունեն նաև բազմաթիվ այլ միջնադարյան պատմագրական հուշարձանները, ինչը, սակայն, դեռևս իրավունք չի տալիս դրանք վեպի ժանրին դասելու, եղելությունները ճշտությամբ չվերարտադրող «այլափոխված պատմություն» կոչելու (Մ. Աբեղյան)[339]: Ժամանակագրության սխալականությունը դեռևս չի նշանակում, թե սկզբնաղբյուրում հիշատակված իրադարձություններն առհասարակ տեղի չեն ունեցել: Միևնույն ժամանակ, Փավստոսի ունեցած ժամանակագրական որոշ տեղեկությունների (հայ-պարսկական ութամյա խաղաղության և հայ-բյուզանդական վեցամյա թշնամության մասին)[340] հավաստիությունը ընդունում էր նույնիսկ Փավստոսի աղբյուրների վավերականությունը բացառող, դրանք «հեքիաթային պատումներ» որակող հեղինակներից մեկը՝ Ն. Ադոնցը[341]: Ադոնցը, սակայն, ձախողեց այստեղից անելու այն ճիշտ եզրահանգումը, որ ժամանակագրական այդպիսի ճշգրիտ հաղորդումների աղբյուրները պետք է անպատճառ գրավոր լինեին: Մինչդեռ այդպիսի եզրահանգման համար ունենք նաև լրացուցիչ, շատ լուրջ փաստարկ, այն է՝ նույն այն գլխում

---

338 Տե՛ս, օրինակ, **Փավստոս Բուզանդ**. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 30–32:

339 Տե՛ս **Մանուկ Աբեղյան**. *Երկեր*, հտ. Ա, էջ 199:

340 Տե՛ս **Փավստոս Բուզանդ**. Դ, ԺԱ, ԻԱ:

341 Տե՛ս Н. Адонц. Фауст Византийский как историк, с. 235, 259-260.

(Դ, ԻԱ), որտեղ խոսվում է հայ-պարսկական ուխտամյա խաղաղության մասին, Փավստոսը հաղորդում է Պարսից թագավորին Հունաց թագավորի հղած դաշնագրի թղթի մասին և նույնիսկ ամփոփ մեջբերություն է անում *այդ վավերագրից ու նաև մեկնաբանում է այն.*

> *«Քեզ եմ տալիս Մծբինը, որ Արվաստանում է գտնվում, և Ասորոց Միջագետքը. Հայաստանի ներքին նահանգներից էլ ձեռք եմ քաշում. եթե կարող ես, նրանց հաղթի՛ր և քո իշխանության տակ նվաճի՛ր, ես նրանց օգնության չեմ գա»: Այսպես ուրեմն, Հունաց թագավորը նեղն է ընկնում ու ճարահատյալ այսպիսի դաշնագիր է կնքում և ուղարկում Պարսից թագավորին և այս կերպով ազատվում է նրանից*[342]*:*

Ի՞նչն է այստեղ վիպական ոճ հիշեցնում: Ոչի՛նչը: Մի՞թե այսպիսի ոճ ունի Քեռի Նախոյի խոսքը: Իհարկե, ո՛չ: Այս հակիրճ և տարողունակ բովանդակություն ունեցող հատվածում մենք առնչվում ենք միջազգային քաղաքական անցուդարձին քաջածանոթ, մեզ հետ վավերագրական ճշտությամբ խոսող մի հեղինակի հետ:

Այսուհանդերձ, Փավստոսի քննադատների ամենամեծ վրիպումն այլ է: Նրանք ամբողջովին աչքաթող են արել այն չափազանց կարևոր փաստը, որ Հայաստանի 4-րդ դարի պատմության ժամանակագրությունը վերականգնելու ուղղությամբ Փավստոսը ծավալուն և մեծապես հաջողված աշխատանք է կատարել, այն է՝ կարողացել է հիմնականում ճիշտ վերականգնել 4-րդ դարի դեպքերի հաջորդականությունը: *Անշուշտ, սա պետք է մեր պատմիչի մեծ նվաճումը համարել, եթե մանավանդ հաշվի առնենք նրա ձեռքի տակ եղած աղբյուրների խճճվածությունը և այն, որ գրերի գյուտից հետո Փավստոսը թերևս առաջինն էր, որ ձեռնարկում էր հայաստանյան պատմության մի ընդգրկուն ժամանակահատվածի*

---

342 **Փավստոս Բուզանդ**. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 186:

շարադրումը (Ագաթանգեղոսն ավելի կենտրոնացած էր Հայոց դարձի պատմությունը շարադրելու վրա):

Սխալվում են Աբեղյանն ու Մալխասյանցը, կարծելով, թե Փավստոսի՝ «ապա, յայնմ ժամանակի, յետ այնորիկ, ետ այսորիկ, յետ այսր ամենայնի» բառերը ժողովրդական վիպի ոճ են կամ էլ՝ «անորոշ խոսքեր, [որոնք] կարող են մեկը մյուսից առաջ կամ ետ դասավորվել կամ դուրս գցվել՝ առանց Պատմության ամբողջությանը վնասելու»[343]*: Իրականում՝ այդ բառերի դործածումն ինքնին ապացուցում է, որ Փավստոսը կիրառել է միջնադարյան պատմագրության ամենակարևոր գիտական սկզբունքներից մեկը՝ ժամանակագրական հաջորդականության պահպանման սկզբունքը: Այդ նույն սկզբունքը կիրառել են հայ պատմագրության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ՝ ընդհուպ մինչև 19-րդ դար: Օրինակ, հայ մատենագրության մեկ այլ սկզբնաղբյուրի՝ «Դավիթ-բեկի կամ Ղափանցվոց պատմության» (1730-ական թթ.) մեջ ճիշտ նույն սկզբունքի, ճիշտ նույն բառերով արտահայտված հետևողական կիրառությունը մեծապես օգնեց տողերիս հեղինակին վերականգնելու 1720-ական թթ. սյունիք-արցախյան ազատամարտի հատակ՝ երբեմն օրերն ու ժամերը ճշտող, ժամանակագրությունը*[344]*:*

---

343 Տե՛ս **Մանուկ Աբեղյան.** *Երկեր*, հտ. Գ, էջ 194. **Փավստոս Բուզանդ.** *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 30:

344 Տե՛ս վեց մասից բաղկացած հոդվածաշարս՝ *Պատմա-բանասիրական հանդես* 1990, հմր. 2, 3, 4, 1991, հմր. 1, 2, 1992, հմր. 1 (այս որոշակիորեն ամփոփիչ հոդվածի խորագիրն է՝ «"Ղափանցվոց պատմության" ժամանակագրության հավաստիությունը և կառուցվածքը»): 1720-ականների ժամանակագրության առավել ընդգրկուն ամփոփումը տե՛ս 1992 թ. պաշտպանած թեկնածուական ատենախոսության ավարտաճառիս («"Ղափանցվոց պատմությունը" և 1720-ական թթ. ազատագրական շարժման ուսումնասիրությունը») եզրափակիչ գլխում և անգլերենով լույս տեսած հետևյալ գրքում՝ **A. M. Aivazian**, *The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal* (Center for Policy Analysis, American University of Armenia, 1997).

Այս առումով օգտակար է նկատել ու բաղդատել, որ Փավստոսին վիպասան հռչակած ամենահեղինակավոր հեղինակներից մեկը՝ Ն. Ադոնցը, անվստահելի պատմական աղբյուր էր հռչակել նաև «Դավիթ բեկի պատմությունը»՝ չափազանց հավաստի տեղեկություններ պարունակող մի սկզբնաղբյուր: Ինչպես և Փավստոսի պարագայում՝ ի վիճակի չլինելով ամբողջական քննության առնելու «Դավիթ-բեկի պատմություն»ը, այդ թվում՝ շարադրանքում տեղ գտած բնագրական շփոթները, հետագա ներմուծումները, հեղինակի պիտական աշխատանոցը և այլ կարևոր հարցեր, Ադոնցը շտապով այս սկզբնաղբյուրի հաղորդումներն էլ որակեց «անհեթեթ զրույցներ», «չափազանցություններ»: Բնականաբար, հավաստի սկզբնաղբուրն այսպես արհամարհելով, Ադոնցն ինքը շփոթեց 1720-ական թթ. պատմական իրադարձությունների ամբողջ ժամանակագրությունն ու ընթացքը: Իսկ հետագայում, ընկնելով Ադոնցի վայելած մեծ հեղինակության ազդեցության տակ, որոշ գիտնականներ բունեցին նրա այս անհիմն տեսակետի «զարգացման» ճանապարհը[345]*:*

Ինչևիցե, Փավստոսի «Հայոց պատմության» ժամանակագրության կառուցվածքը դեռևս ունի իր հմուտ ուսումնասիրողի կարոտը: Մի բան, սակայն, պարզ է՝ Փավստոսի գործածած ժամանակագրական հաջորդականության պահպանման սկզբունքը վճռական նշանակություն և պատմագիտական արժեք է ունենալու լրացուցիչ զուգահեռ սկզբնաղբյուրների բաղդատությամբ կատարվելիք այդ քննության համար:

---

345 Տե՛ս **Ն. Ադոնց**. «Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը և գաղափարախոսական արժեքը. – *Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան). Կյանքը, գրականությունը, հիշողություններ*, Փարիզ, 1937, էջ 122-148 (հատկապես էջ 126, 130, 136-137. հմմտ. **Աշ. Հովհաննիսյան**. Դավիթ բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը. – *Բանբեր Երևանի համալսարանի*, 1970, No. 1, էջ 96-111. **Ա. Գ. Մադոյան**. Դիտողություններ Դավիթ Բեկի ապստամբության պատմության շուրջը. – *Պատմա-բանասիրական հանդես* 1973, No. 3 (62), էջ 177-193:

3. Ամենից շատ ուսումնասիրողները խրտնել են Փավստոսի այն հաղորդումներից, որոնք խոսում են հայկական զինված ուժերի տարած տասնյակ փայլուն հաղթանակների և այդ հաղթանակներում պարսիկների կրած մեծ կորուստների մասին: Հայոց ռազմական հաջողությունների նկատմամբ այս թերահավատ վերաբերմունքը ուներ (և ունի) ոչ այնքան պատմագիտական, որքան հոգեբանական պատճառներ: Անկախ պետականության կորստից հետո հայոց մեջ ձևավորված ազգային թերարժեքության բարդույթից չկարողացան խուսափել նաև գիտնականները: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած հայկական ցեղասպանությունը եկավ հայոց հոգեկանում առավել ևս ամրապնդելու այդ բարդույթի գրաված խորը դիրքերը: Ցեղասպանությանն ականատես հայագետների համար այլևս շատ դժվար էր պատկերացնել, որ Հայաստանն անցյալում դարեր շարունակ հզորագույն պետություն է եղել: Մենք սկսեցինք ամբողջ չորսհազարամյա հայոց պատմությունը դիտել ցեղասպանության կիզակետի միջով: Այս ոչ-գիտական, հուզական մտայնությունը, թերևս, լավագույնս արտահայտված է Լեոյի՝ 1927 թ. օգոստոսի 3-ին Թիֆլիսում գրառած հետևյալ տողերում.

> *[Հայոց պատմությունը] շարունակ կրկնվում էր, բերում միշտ միևնույնը.... մեր ժողովրդի պատմությունը ամբողջովին, ծայրից ծայր դժբախտություն [է]: Մի՛ մոռանաք, մեր պատմությունը ամենից առաջ և ամենից շատ մի հսկայական մարտիրոսագրություն է...*[346]

Հայոց պատմության այսպիսի գնահատականը, անշուշտ, սխալ է: Կրկնենք, որ այս մինչև վերջերս դեռևս շատ տարածված մտայնությունը վերջին մի քանի հարյուրամյակների համազգային աղետների ու հատկապես՝ հայոց ցեղասպանության պատճառած հոգեբանական վնասվածքի (տրավմայի) արգասիք է:

---

346 Տե՛ս Լեո, *Հայոց պատմություն:* Հտ. 4: (Երկերի ժողովածու: Հտ. 4) Երևան, 1984, «Հայաստան», էջ 12-13:

Վերադառնանք, սակայն, Փավստոս Բուզանդի նշած՝ պարսիկների մեծ կորուստների հարցին: Նկարագրելով հայոց հաղթանակները՝ Փավստոսի մեզ հասած բնագիրը ավանդաբար խոսում է թշնամու բանակների ամբողջական ոչնչացումների մասին, այդ բանակների թվաքանակը հասցնելով երբեմն մի քանի հարյուր հազարի: Եթե փորձենք այս հաղորդումներին մոտենալ ուղղակիորեն, սրանց հիման վրա հաշվարկներ կատարել, ապա պարզ է, որ պարսիկների բանակներն այդ թվերը չեն ունեցել, ուստի նրանց կորուստներն էլ միլիոնավոր չեն եղել: Սակայն այսպիսի պարզունակ մոտեցումը 5-րդ դարում գրված սկզբնաղբյուրի նկատմամբ գիտական չէ, սխալ է, քանզի թվային չափազանցություններ բնորոշ են հին և միջնադարյան, հայկական և ոչ-հայկական աղբյուրներին առհասարակ: Քննադատական մոտեցումը թվային այդ տվյալներին ո՛չ թե այդ հաղորդումները իրենց ողջ դիպաշարով անվստահելի համարելն է (ինչ և մեզանում արել են), այլ իրական թվերի վերականգնման ու ճշտման աշխատանքը, մի բան, որ լիովին հնարավոր է: Մեկ օրինակով պատկերացում տանք, թե ինչպես են մեկնաբանել Բուզանդի հաղորդումները:

Փավստոսը, 380-ական թթ. Հայաստանում եղած իրադարձությունների իր նկարագրած լայն հենքի վրա, բավական մանրամասնորեն չարադրում է հայկական և պարսկական զորքերի միջև տեղի ունեցած չորս ճակատամարտ, որոնք բոլորն էլ ավարտվել են սպարապետ Մանվել Մամիկոնյանի հրամանատարությամբ կռված հայերի հաղթանակով: Սրան հետևել էր յոթամյա խաղաղության և Հայաստանի լիակատար անկախության մի շրջան[347]: Ըստ Փավստոսի, առաջին դեպքում հայկական զորքն անսպասելի հարձակում էր գործել պարսկական 10,000-անոց բանակի (հրամանատար՝ Սուրեն) ճամբարի վրա և այն ամբողջովին սրի մատնել: Երկրորդ ճակատամարտում 20,000-անոց հայկական բանակը հաղթել էր հայոց սահմաններըը Ատրպատականի կողմից ներխուժել փորձող

---

347 Փավստոս Բուզանդ. *Պատմություն հայոց*, Ե, ԼԸ-ԽԲ:

48,000-անոց պարսկական զորքին (հրամանատար՝ Գումանդ Շապուհ): Ինչպես մեր պատմիչը հատուկ ընդգծում է՝ իր հարաբերականորեն փոքրաթիվ զորքը Մանվելը հավաքել էր չտապով՝ «որքան կարողացավ ձեռք բերել այդ խռովահույզ ժամանակներում» (Ե, ԼԹ): «Սրանից հետո, -- ինչպես հաղորդում է Փավստոսը, -- Պարսից թագավորի ոմն Վարազ զորավարը Հայոց աշխարհն է գալիս տասնութ բյուրով (180,000)... ապա Հայոց զորավար-սպարապետ Մանվելը կազմակերպում, պատրաստում է տասը հազար լավ սպառազինված հեծելազոր» և դարձյալ կատարյալ հաղթանակ տոնում (Ե, ԽԸ): Այնուհետև պարսիկների չորրորդ՝ 40 բյուրանոց (400,000) բանակը, ոմն Մոկան զորավարի հրամանատարությամբ, ներխուժելով Հայաստան, կարողանում է գրավել երկրի մի մասը և բանակ է դնում Արտանդան կամ Արտանգան դաշտում (վայրն այժմ անհայտ է): Իսկ «Մանվելը գիշերով հարձակվեց նրա բանակի վրա և հենց բանակատեղում բոլորին առհասարակ սրի քաշեց» (Ե, ԽԱ):

Արդ, այս հաղորդումների մեջ կասկածելի որևէ բան չկա, բացառությամբ երկու հանգամանքի, որոնց պարզաբանումն էլ հենց պատմաբանի գործն է.

ա) երրորդ և չորրորդ ճակատամարտերում պարսկական զորքերի թվաքանակը խիստ չափազանցված է և անհնար՝ տասնութ բյուր (180,000) և քառասուն բյուր (400,000): Բաղդատելով այս երկու անհնարին թիվն առաջին երկու ճակատամարտերում պարսիկների ունեցած բանակների միանգամայն հավանական 10,000-անոց և 40,000-անոց թվերի հետ, տեսնում ենք, որ կա և տրամաբանական և բնագրական ինչ-որ լուրջ անհարթություն: Տրամաբանորեն, երրորդ և չորրորդ ճակատամարտերում պարսիկների զորքերը պետք է մոտավորապես նույն չափերն ուննային, ինչ առաջին երկու ճակատամարտի դեպքում: Փավստոսի ահռելի և հանգիստ չարտրանքը հուշում է, որ երրորդ և չորրորդ ճակատամարտերում պարսկական զորքը ամեննևին էլ տասնապատիկ հավելում չի ունեցել: Մեր համոզմամբ, Փավստոսի ինքնագրում տասնութ

բյուրի (180,000-ի) փոխարեն եղել է 18,000, իսկ քառասուն բյուրի (400,000-ի) փոխարեն՝ 40,000, այսինքն՝ վերոհիշյալ երկու չափազանցված դեպքերում ունենք մեկ զրոյի հավելում: Ամենայն հավանականությամբ, այս տարընթերցումը ներմուծվել է ձեռագրերի մեջ հետագայում, ինչ-որ գրչի ձեռքով:

բ) Բացառությամբ, առաջին ճակատամարտից, երբ պարսիկների 10,000-անոց բանակն անսպասելի շրջապատվել և ոչնչացվել էր հայկական գերակշիռ ուժերի կողմից, հասկանալի է, որ մյուս երեք դեպքում անհավանական էր պարսիկ բոլոր զինվորների իսպառ բնաջնջումը: Սակայն, ինչպես ասացինք, այդ ժամանակաշրջանի շատ մատենագիրներ հաճախ են չափազանցնում թշնամու կրած կորուստները, որ սակայն բնավ էլ չի նշանակում, թե ո՛չ սկզբնաղբյուրի հիշած ճակատամարտերն էին եղել, ո՛չ էլ հաղթանակները: Օրինակ, 4-րդ դարի հռոմեական պատմիչ Ցեստուս Ռուֆուսը, հաղորդելով Դիոկլետիանոս կայսրի (284-305)՝ պարսիկների դեմ տարած մեկ փայլուն հաղթանակի մասին, ճիշտ նույն ոճն է գործածում՝ «25,000-անոց զորքի գլուխ անցած հասավ թշնամու ճամբարին, հանկարծակի հարձակվեց պարսիկների անթիվ գնդերի վրա և բնաջնջեց նրանց»[348]:

Այժմ տեսնենք, թե ինչպես է Հակոբ Մանանդյանը վերլուծել Փավստոսի՝ հայերի վերոհիշյալ չորս հաղթանակների մասին հաղորդումները.

> *Փավստոսի պատմության վիպական-ստեղծական այս հատվածները... չեն ստուգվում հունա-հռոմեական աղբյուրների վկայություններով և ունեն հեքիաթային բնույթ: Շատ պարզ է, որ անդամահատված և քայքայված Հայաստանը, որի ռազմական ուժն այդ ժամանակ շատ փոքր էր, չէր կարող պատերազմ վարած լինել հզոր Պարսկաստանի դեմ[349]:*

---

348 **Rufi Festi**, *Brevarium*, էջ XXV -- մեջբերումը տե՛ս Н. Адонц. "Фауст Византийский как историк", стр. 238-239.

349 Տե՛ս Հ. Մանանդյան, *Երկեր*: Հտ. Բ, Երևան, 1978, էջ 237-238:

Մանանդյանի բերած երկու փաստարկներն էլ կատարելապես խախուտ են. նախ՝ հունա-հռոմեական պատմագրությունն ամենևին կոչված չէր շարադրելու Հայաստանի պատմությունը: Այդպիսի խնդիր հույն և հռոմեացի պատմիչների առջև դրված չէր: Ավելին՝ Հայաստանում օր-օրի փոփոխվող պատերազմական մանրամասնությունների շարադրությունը հունա-հռոմեական պատմագրության մեջ նաև պարզապես անհնար էր, այն էլ՝ հին ժամանակներում: Եթե անգամ, օրինակի համար, վերցնենք մեր՝ կապի և ինֆորմացիայի զարգացած ժամանակաշրջանը, ապա դարձյալ՝ տեղական դեպքերի հեռվում կատարված արձանագրությունը, այն էլ ոչ-լավատեղյակ օտարի կողմից, որպես կանոն, զիջում է իր հավաստիությամբ տեղում գրանցված ինֆորմացիային: Եթե որևէ մեկը փորձի գրել, օրինակ, 1988-1991 թթ. Ղարաբաղյան շարժման պատմությունը, և օգտագործի այդ մասին եղած ոչ թե հայկական, այլ մոսկովյան կամ ամերիկյան մամուլի նյութերը, ապա արդյունքում կունենա իրականության շատ թերի, հաճախ էլ ուղղակի կեղծված պատկերը: Սա առավել ևս ճշմարիտ է, եթե օտար աղբյուրն ունենում է նաև աշխարհաքաղաքական ինչ-ինչ շահեր: Իսկ որ 4-5-րդ դարերում Հռոմեական կայսրությունը և նրա շահերը սպասարկող հունա-հռոմեական պատմագրությունը կայսրապետական նկրտումներ ուննին Հայաստանի վերաբերյալ՝ անվիճելի է: Հետևաբար, բացառությամբ որոշ դեպքերի, իրադարձությունների հավաստիությունը պետք է ճշտել հիմք ընդունելով ոչ թե օտար աղբյուրը, այլ տեղական աղբյուրը, այն էլ ունենալու դեպքում այնպիսի հարուստ ու արժեքավոր տեղեկություններ պարունակող տեղական աղբյուր, ինչպիսին Փավստոսի փառահեղ «Պատմություն Հայոցն» է: Ավանդաբար, մեզանում առաջնորդվել են ճիշտ հակառակ մեթոդաբանական սկզբունքով՝ բոլոր դեպքերում նախապատվությունն անհիմն կերպով տալով օտար աղբյուրներին:

Մանանդյանի երկրորդ փաստարկը, թե իբր հայկական գործքերը ապրիորի չէին կարող հաղթել պարսիկներին, ուղղա-

կի անլուրջ է: Ռազմական պատմությունը գիտի հարյուրավոր հաղթանակներ, որոնք հարաբերականորեն փոքրաթիվ ազգերն ու զորքերը տարել են գերազանցող ուժերի դեմ: 1996 թվականի օգոստոսին ռուսական բանակը՝ իր ավիացիայով, զրահատանկային և հրետանային կրակային ամբողջ հզորությամբ, այլ հատուկ ուժերով և միջոցներով, այնուամենայնիվ պարտություն կրեց անհամեմատ ավելի փոքրաթիվ չեչենական ուժերից և դուրս շպրտվեց Գրոզնի քաղաքից: Չեչնիա-Ռուսաստան հակամարտության մեջ առկա էր ուժերի հարաբերակցության սարսափելի մեծ տարբերություն՝ մեկ միլիոնանոց չեչեն ժողովրդի դեմ էր 160 միլիոնանոց Ռուսաստանը, որի բանակում այդ ժամանակ ընդհանուր առմամբ ծառայում էին շուրջ երկու միլիոն զինվոր: Պատերազմներում հաղթանակները շատ հաճախ կախված են լինում ոչ թե զուտ թվային կամ սպառազինության առավելությունից, այլ հազար ու մի այլ գործոնների դինամիկ եզակի փոխազդեցություններից:

Դժվարանում ենք ասել, թե արդյո՞ք կհավատար Մանանդյանը չեչենների հաղթանակի հնարավորությանը, եթե նրա ձեռքում մի քանի հարյուր տարի հետո լիներ այդ հաղթանակի մասին չեչենական մի աղբյուր: Հայոց բանակի տոնած հաղթանակների հավաստիության նկատմամբ Մանանդյանի փաստարկի անհիմն լինելը լիովին պարզ կլինի, եթե նկատի ունենանք մի քանի լրացուցիչ հանգամանք ևս.

1) Չորրորդ դարի Հայաստանի և Իրանի ուժերի միջև եղած տարբերությունն այդ աստիճան մեծ չէր՝ գուցե մեկը երեքի կամ հինգի դիմաց, ո՛չ ավելին.

2) Նույն չորրորդ դարում հայոց զինված ուժերը հաջողությամբ դիմագրավել էին և՛ Իրանի, և՛ Հռոմի՝ Հայաստանի անկախության դեմ ուղղված բազմաթիվ ոտնձգություններին.

3) Հայկական զորքի հաղթանակելու անհնարինությունը պատճառաբանելով Հայաստանի մասնատվածությամբ, Մանանդյանը զարմանալիորեն չի կապում հայերի հաղթանակները իր իսկ կողմից նույն էջի մեջ նշած այն կարևոր փաստի

հետ, որ Մանվել սպարապետի իշխանության հենց սկզբից՝ 379 թվականից ի վեր Իրանում սկսվել էին գահակալական կռիվները.

> *...379 թվին Պարսկաստանում վախճանվել էր Շապուհ Բ-ն... Նրան հաջորդել էր ծերունի Արտաշիր Բ-ը (379-383/4), որին գահընկեց արին մեծամեծները: Այնուհետև թագավորեցին Շապուհ Բ-ի որդիները՝ Շապուհ Գ-ը (383/4-388/9) և Վռամ Դ-ը (388/9-399), որոնց երկուսին էլ սպանեցին ազնվականները*[350]*:*

Այսպիսով, հայոց հաղթանակների հնարավորությունը ժխտող Մանանդյանի վերոհիշյալ դատողությունները ոչ թե պատմական տեղեկության քննադատական վերլուծություն են, այլ արժեքավոր, թեև տխուր, ինֆորմացիա՝ ցեղասպանության ականատես Մանանդյան անհատի ծանր վնասված հոգեկանի մասին: Ցեղասպանությունից հետո Մանանդյանի (ինչպես և իր սերնդից շատ ուրիշների, ներառյալ գիտնականների) աշխարհայացքի վերափոխությունը առավել ևս ակնառու է դառնում, երբ ընթերցում ենք նրա՝ տակավին 1902 թ. գրված փոքրիկ, բայց ճշմարիտ և դիպուկ նկատողություններ պարունակող մի հոդվածը, որում հեղինակն ինքն էր կոչ անում հրաժարվել ժողովրդական ու նաև գիտական շրջանակներում հայոց պատմության նկատմամբ ձևավորված թերարժեքության սոցիալ-հոգեբանական մտապատճեններից (ստերեոտիպներից) (մի ընդարձակ մեջբերում այս հոդվածից մեկ ուրիշ առիթով բերել ենք ստորև)[351]*:*

3.3.2. Փավստոս Բուզանդը՝ Ն. Գարսոյանցի «քննության» լույսով

Սակայն այն, ինչ Բուզանդի «Հայոց պատմության» հետ արել է Նինա Գարսոյանը, ոչ թե սոսկ վերոհիշյալ անհիմն

---

350 Նույն տեղում, էջ 238:

351 Տե՛ս Հ. Մանանդյան, *Երկեր:* Հտ. Դ. Երևան, 1981, էջ 7-10:

գերքննադատության կրկնությունն է, այլ այդ սխալների ո-րակական և միտումնավոր զարգացումը:

Մասնագետ ընթերցողը անակնկալի է գալու այս չքեղ հրատարակության կազմը տեսնելուն պես, քանզի այնտեղ նշված միակ հեղինակը Նինա Գ. Գարսոյանն է, իսկ խորագիրը՝ «Դյուցազնական պատմվածքներ (Բուզանդարան պատմութիւնք)» – Nina G. Garsoian, *The Epic Histories (Buzandaran Patmutiwnk):* *Վրդովեցուցիչ է և՛ Փավստոս Բուզանդի հեղինակային բացակայությունը, և՛ մանավանդ այն, որ մեջտեղից վերացվել է այս փառահեղ ստեղծագործության խորագիրը՝ «Հայոց պատմություն»: Ու թեև տիտղոսաթերթը տարբերվում է կազմից, մասնակի ուղղում մտցնելով առ այն, որ Նինա Գարսոյանն այս գրքի թարգմանիչն ու ծանոթագրողն է, իսկ «Դյուցազնական պատմությունները» ընդամենը «վերագրվում են» ոմն Փավստոս Բուզանդին*[352]*, ամենակարևորն այն է, որ Փավստոսի երկի վերնագիրը՝ «Հայոց պատմություն» այլևս չի վերականգնված: Նկատենք, որ ճիշտ նույնպես Նինա Գարսոյանը վարվել էր նաև Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» մենագրության անգլերեն թարգմանելուց հետո, կազմին գրելով՝ Նինա Գ. Գարսոյան. «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում»*[353]*, ու հետո միայն տիտղոսաթերթին ճշտելով, թե ո՞վ է այդ մենագրության հեղինակը, իսկ ո՞վ՝ թարգմանիչը: Թարգմանչի անունը կազմի վրա դնելը և իսկական հեղինակի անունն այնտեղից ջնջելը լավագույնս են բնորոշում ամերիկյան «Հայագիտության» որդեգրած գիտական էթիկայի, մեղմ ասած, տարօրինակ չափանիշները:*

---

352 *The Epic Histories Attributed to Pawstos Buzand (Buzandaran Patmutiwnk).* Translation and Commentary by Nina G. Garsoian (Cambridge, Mass.: Harvard University Press, 1989).

353 **Nina Garsoian**, *Armenia in the Period of Justinian* (Lisbon: Galouste Gulbekian Foundation, 1970).

Մինչդեռ ԱՄՆ-ում Փավստոսի «Հայոց պատմության» գարսոյանական թարգմանությունն ու քննությունը հռչակվել են «մոնումենտալ» գիտական նվաճում[354]*, պետք է ցավով նկատենք, որ դրանք մեզանում տակավին գրախոսված չեն և մնացել են անարձագանք:*

Գարսոյանի խնդրո առարկա հրատարակության պատմագիտական և թարգմանչական անսահման թերությունների ամբողջական գրախոսություն գրելու նպատակ ամենևին չունենալով, ստորև կխոսենք միայն Գարսոյանի մի քանի գլխավոր միտումի մասին՝ լրացնելով մեր քննադատությունը որոշ օրինակներով:

Նախ, պատմագիտական խնդիրների մասին:

Դեռևս մինչև իր թարգմանության գլուխ բերելը Նինա Գարսոյանը, կրկնելով անախրոնիզմները վերակենդանացնելու Թումանովի և Թոմսոնի անցած ուղին, որդեգրել էր Փավստոս Բուզանդի նկատմամբ հայագիտության կողմից վաղուց ի վեր մերժված այն տեսակետը, թե այդպիսի անունով հեղինակ առհասարակ չի եղել ու դեռ ավելին՝ այդ երկը երբեք էլ «Հայոց պատմություն» չի կոչվել: Այսպես, արդեն 1983 թ. Փավստոսի երկը Գարսոյանի համար «այսպես կոչված Հայոց պատմություն» *էր, իսկ Փավստոս Բուզանդը կեղծ-Փավստոս՝* Pseudo Pawstos Buzand *(հիշե՛նք. ճիշտ ինչպես Թումանովի համար Մովսես Խորենացին կեղծ-Մովսես էր)*[355]*: Իսկ 1984 թ., այլևս ժամանակ չկորցնելով, նույն տեսակետներն արտահայտող մի առաջաբանով, Գարսոյանը վերատպեց Փավստոսի 1883 թ. պետերբուրգյան հայերեն հրատարակությունը հետևյալ խորագ-*

---

354 Տե՛ս **J. R. Russel**, "A Parthian Bhagavad Gita and its Echoes," in *From Byzantium to Iran: Armenian Studies in Honour of Nina G. Garsoian, op. cit.*, p. 30, note 27.

355 **Nina Garsoian**, "Iran and Caucasia," in *Transcaucasia: Nationalism and Social Change*. Essays in the history of Armenia, Azerbaijan, and Georgia. Ed. Ronald Grigor Suny (The Univ. of Michigan, Ann Arbor, 1983), p. 14 (n. 24), 20.

րուքյամբ՝ «Կեղծ-Փավստոս. Բուզանդարան պատմութիւնք»[356]*:*

Այսինքն՝ 1980-ականների սկզբի դրուքյամբ, հայ ոսկեդարի պատմագրուքյան աղավաղման ուղղուքյամբ ամերիկյան «հայագիտուքյան» մեջ արդեն աշխատանքի բաժանում էր արված. Թոմսոնն իր վրա էր վերցրել Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու և Եղիշեի երկերի անհավաստի պատմական աղբյուր հռչակելու գործը, իսկ Փավստոս Բուզանդի «հարցերի լուծումը» հանձնվել էր Գարսոյանին:

Հայ միջնադարյան պատմագրուքյան նկատմամբ Ն. Գարսոյանի վերաբերմունքը բացահայտված է հարևանցիորեն արած նրա մի նկատողուքյան մեջ՝ թե միջնադարյան հայ մատենագրուքյունը «կենտրոնացած էր պատմագրուքյան վրա, որի մեջ այն ներարկեց առասպելական թեմաներ, ինչպես նաև տարբեր տիպի կրոնական գրականուքյան վրա»[357]*, ասել կուզի՝ հայ պատմագրուքյունը վստահելի չէ, քանզի այն իբր ողողված է անարժանահավատ առասպելաբանուքյուններով: Այս հայտարարուքյամբ Գարսոյանը ցուցադրում է հայ մատենագրուքյանն իր վատատեղյակ լինելու փաստը, քանզի անտեղյակի աղաղակող սխալ է ասելը, թե հայ միջնադարյան գիտուքյունն ու գրականուքյունը կենտրոնացած է եղել հիմնականում պատմագրուքյան և կրոնապիտական գրականուքյան վրա: Ծավալային ու որակային առումներով հայկական պատմագրուքյանն ու աստվածաբանուքյանը չէին կիջում հայ փիլիսոփայուքյունը, բժշկուքյունը, քերականուքյունն ու աշխարհագրուքյունը, իրավունքը, միջնադարյան մշակույթի այլ բնագավառները:*

Գարսոյանը վաղուց էր լծվել հակահայկական գործունեուքյանը: Հիշենք թեկուզ ռուսերենով գրված նրա մի հոդվածը, որը 1971 թ. հրապարակվել էր ոչ այլուր, քան Երևա-

---

356 **Ps. Pawstos,** *Buzandaran Patmutiwnk* [*The Epic Histories*]. *op. cit.*.

357 **Nina Garsoian,** "Iran and Caucasia," in *Transcaucasia: Nationalism and Social Change*, *op. cit.*, p. 20:

նում[358]: 5-րդ դարի հայոց պատմության ու պատմագրության իր այս ծանոթագրության մեջ Գարսոյանը փորձում է ո՛չ ավել, ո՛չ պակաս կասկածի տակ դնել Հայաստան եզրի ըմբռնման ճշմարտացիությունը Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկերում: Ըստ Գարսոյանի, այս երկու հեղինակները՝

> *կամա թե ակամա, արտահայտել են սեփական իդեալները՝ զրադաշտական Իրանին դիմագրավող միասնական, միացյալ Հայաստան: Նրանք խոսում են միասնական թագավորության մասին..., ընդգծում են հայ եկեղեցու միասնականությունը... նրանք անտեսում են հայկական հասարակության և հաստատությունների վրա իրանական խորը ազդեցությունը..., նախընտրում են մոռացության տալ այն, որ հայ Արշակունիները պարթևական լեգիտիմիզմի (sic) վերջին և ամենավառ ներկայացուցիչներն են: Մեզ համար այժմ կարևոր չէ, թե արդյոք այս պատկերը ճիշտ է 5-րդ դարի համար: Մեզ համար կարևորը միայն այն է, որ այն խեղաթյուրում է 4-րդ դարի իրականությունը, երբ Հայաստանը միասնական չէր, միացյալ չէր և խորթ չէր պարսկական աշխարհին[359]:*

Այս հոդվածում Գարսոյանը խոսում է 4-րդ դարում հայոց թագավորության ընդամենը «ինքնավարության», սակայն ոչ անկախության մասին, այդ թագավորության կազմից մեծ կտորներ կտրելով հարավում և արևմուտքում: Այստեղ արժեն քննել ենք այն խնդիրը, թե թուրքական և ամերիկյան «հայագիտությունը» ինչ մեծ նշանակություն է տալիս Հայաստան եզրի և բուն հասկացության խեղաթյուրմանը: Գարսոյանը, իր ճաստլիկ հոդվածով, շտապել էր իր լուման ներդնելու այդ գործում: Պատահական չէ, որ այս հոդվածը շատ էր դուր եկել տխրահռչակ Զիյա Բունիաթովին և նրա աշակերտներին:

---

358 Տե՛ս Н. Г. Гарсоян. Армения в IV веке (к вопросу уточнения терминов "Армения" и "верность"). - *Լրաբեր հասարակական գիտությունների* 1971, No. 3, էջ 55-62:

359 Նույն տեղում, էջ 55-56:

Ցարիդա Մամեդովան, օրինակ, ընդարձակորեն մեջբերել է Գարսոյանի այն կեղծիքը, թե Արշակունիների Հայոց թագավորությունը իբր ամենաչնչին անկախությունից զուրկ է եղել[360]*: Հենվելով Գարսոյանի և նրա թիմակիցների վրա (թեև ուղղակիորեն ոչ մի աղբյուր չհղելով), նույն թեզը կրկնել են նորահայտ Մոնիկա Բլանչարդը և Ռոբին Դարլինգ Յանգը՝ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» իրենց կատարած խիստ թերի անգլերեն թարգմանության Առաջաբանում, ուր 1-ից մինչև 4-րդ դարերի Հայաստանի պետականությունը թուրքաբար ժխտվում է ու հայտարարվում, թե այդ ժամանակահատվածում հայերը վայելել են ընդամենը «սահմանափակ ինքնավարություն»՝* limited autonomy[361] *(ըստ երևույթին, պիտի չնորհակալ լինենք մեծ տերությունների և Ադրբեջանի կողմից Արցախին առաջարկվող «լայն ինքնավարության»* (wide autonomy) *համար, քանզի 300 հազար քառ. կմ տարածք ու 120 հազարանոց բանակ ունեցող Արշակունյաց Հայաստանը, «պարզվում է», ավելի ցածր կարգավիճակ է ունեցել): Միայն ապշել կարելի է, թե ինչ աստիճան կամազուրկ, գիտականորեն ու քաղաքականապես անպատրաստ են եղել Հայաստանցի այն հեղինակները, որոնք երաշխավորել են Գարսոյանի խայտառակ հոդվածի տպագրությունը Հայաստանում:*

Գարսոյանն իր բոլոր աշխատություններում սիրում է չեչտել հայ մշակույթի և քաղաքակրթության իբր լիակատար

---

360 Տե՛ս, օրինակ, Ф. Дж. Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании (*III* в. до н. э. - *VIII* в. нашеи эры). Баку, 1986, под редакцией З. М. Буниятова, сс. 122-123, 125: Մամեդովայի գրքի քննադատությունը, որ շատ առումներով կողմնակիորեն վերաբերում է հենց Գարսոյանի արտահայտած տեսակետներին, գրել է **Բաբկեն Հարությունյանը**, «Когда отсутствует научная добросовестность» - *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1987, No. 7, էջ 33-56:

361 Տե՛ս **Monica J. Blanchard & Robin Darling Young**, transl., *Eznik of Kolb, On God, Eastern Christian Texts in Translation*, No. 2 (The Catholic University of America, Peeters, 1998), p. 4. Այս թարգմանության առթիվ շուտով հանդես կգանք առանձին գրախոսությամբ:

ածանցյալությունը իրանական և, փոքր-ինչ պակաս չափով, բյուզանդական ազդեցություններից: Այս մտայնությունը Գարսոյանի մոտ ընդունել է անհեթեթ ձևեր ու չափեր: Ըստ Գարսոյանի, հին «Հայաստանի խորը իրանացումը բավարար չափով չի ճանաչված»[362]: Օրինակ՝ ըստ նրա, հայոց նախարարական կարգը Իրանի պարթևական հասարակության ճշգրիտ վերարտադրությունն էր: Սակայն, զարմանալի է, որ հեղինակը միաժամանակ ընդունում է, որ պարսկական գրականության մեջ «իրանական հասարակության այդ վաղ փուլի մասին ամբողջ հիշողությունը գրեթե լիովին ջնջված է»[363]: Զարմանալի է, այդ ինչպե՞ս Գարսոյանը պարզեց, որ հայկական հասարակությունը վաղ իրանականի հայելային ածանցյալ կրկնությունն է, եթե իրանական «նախատիպի» մասին տեղեկություններ չկան: Այս առումով, Սյունիի հասցեին վերն արված դիտողությունն առ այն, որ անհնար էր հայերի գալը Արևմուտքից մ.թ.ա. 6-րդ դարում ու, մյուս կողմից, ընդամենը մի քանի հարյուրամյակում իրանական հասարակարգի բոլոր գծերի փոխառումը, առաջին հերթին վերաբերում է Սյունիի ուսուցիչ Գարսոյանի մտքի հակասություններին: Նկատենք, որ Գարսոյանը միայնակ չէ Հայաստանը գրեթե լիովին իրանացած հռչակելու իր նկրտումներում: Այդ կեղծ գաղափարի մյուս հայտնի ջատագովն է Նինա Գարսոյանի մյուս սան՝ վերոհիշյալ Ջեյմս Ռասսելը: Սա Փավստոսի «Հայոց պատմությունն» անվանում է «Փավստոսի հայկական Բուզանդարան՝ մի էպոս, որը գրել են քրիստոնյաները, որոնց ամբողջ աշխարհայացքը դեռևս պարթևական էր» ("...the Armenian Buzandaran of Pawstos: an epic composed by Christians whose imaginative universe was still Parthian.")[364]: Հայերի ամբողջ աշխարհայացքը պարթևականացնելով՝ Ռասսելն ասել կուզի, թե Փավստոսի ժամանակներում հայերն իսկի կարգին հայ էլ

---

362 Տե՛ս *The Epic Histories (Buzandaran Patmutiwnk)*, *op. cit.*, p. 51.

363 Նույն տեղում:

364 Տե՛ս **J. R. Russel**, "A Parthian Bhagavad Gita and its Echoes," *op. cit.*, p. 18.

չէին՝ քրիստոնյա պարթևներ էին: Հայկական ողջ մշակույթը և նույնիսկ հայերին իրանիզացված հայտարարելը քաղաքական ենթատեքստ ունի: Հիշենք՝ ադրբեջանցի «հայագետները» Ղարաբաղի հայերին փորձում էին հռչակել քրիստոնյա ադրբեջանցիներ, իսկ թուրքերը քրդերին անվանում են լեռնային թուրքեր: Լրացուցիչ մեկնաբանություններն ավելորդ ենք համարում:

Թե ինչ աստիճան անկախ էր հայկական քաղաքակրթությունը իրանականից, ու նաև՝ առավել ամուր, կուռ ու ներդաշնակ էր հայկական մշակույթը իրանականի համեմատ, ցուցադրենք արաբական ռազմակալմանն այդ երկու «աշխարհների» տված որակապես խիստ տարբեր պատասխաններով: 7–9-րդ դարերում, հայտնվելով արաբական տիրապետության տակ, իրանական քաղաքակրթության համակարգն ամբողջությամբ փուլ եկավ ու հոգևոր փոխակերպություն ապրեց, ներառյալ՝ ժողովրդի արագընթաց իսլամացումն ու իրանական գրականության ու գիտությունների մեջ արաբերեն լեզվի միքանիդարյա տիրապետումը: Սրան հակառակ՝ նույն ժամանակահատվածում հայկական քաղաքակրթությունը դյուրությամբ դիմագրավեց արաբական ազդեցություններին և անեղծ ու անվթար պահեց ինչպես իր ավանդական հասարակական ու հոգևոր-մշակութային համակարգերը, այնպես էլ ռազմաքաղաքական կենտրոնացված հաստատությունը՝ հայոց սպարապետությունը: Այս և այսպիսի որոշիչ պատմական զուգադրությունների շարունակական անտեսումն է, որ հանգեցրել է հայկական միջավայրի վրա իրանական աշխարհի ազդեցության անհիմն ու խիստ թերի մեկնաբանությունների:

Իրանիզացված Հայաստանի և իրանացած հայերի մասին աբսուրդի հեղինակներից մեկը իրավամբ Գարսոյանն է, որին Հայաստանի Գիտությունների Ակադեմիան 1986 թ.՝ պատմագիտության մեջ ունեցած «մեծ ձեռքբերումների» դիմաց շնորհել է Անանիա Շիրակացու անվան մրցանակ: Սակայն շարունակենք:

Մանոթագրելով Փավստոսի նկարագրած հայկական հաղթանակները և հայկական զորքերի մարտավարությունը՝ Գարսոյանը հանգում է արտառոց և չափից դուրս արհեստական եզրակացություններին: Այսպես՝ Փավստոսը հաղորդում է, որ պարսից Շապուհ Բ թագավորը, Հայաստանում իր կրած մի խոշոր պարտությունից հետո՝ վերադառնալով Իրան, հիացական գնահատական է տվել հայ ռազմիկների անձնվերությանը, պատերազմավարժությանն ու մարտական բարձր ոգուն.

Զարմացել եմ ես, ասում էր նա, իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվը այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ, իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հոռոմների լեգեոնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում, ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ: Եվ այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ Արյաց զորքերին ամբողջովին ոչնչացրին:

Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած -- Հայաստան գնդի[365] *միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ: Երբ իրենց ախոյաններին գլորում էին, միշտ ասում էին. «Արշակի համար», իսկ նա նրանց մեջ չէր, բայց նրանք իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ՝ ամեն մի ախոյանի, որին սպանում էին, նրան էին նվիրում: Կամ [Հայոց սպարապետ Մամիկոնյան] Մուշեղի այն մոլեգնած գունդը. ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և դրոշակներն այնպես էին գնդի մեջ, կարծես*

---

365 Մալխասյանի թարգմանության մեջ՝ Հայկական գնդի, որ, ինչպես ստորև կխոսենք՝ սխալ թարգմանություն է:

հրդեհի բոց է անցնում եղեգների միջով: Այսքան ժամանակ է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, գտնվում է Անդմըշն բերդում, Խուժաստան երկրում, բայց նրանք իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատերազմին գլուխ կանգնած և իրենք նրա առաջ նրան են ծառայում: Այո, -- ասում էր նա, -- երանի՛ նրան, որ Հայոց գնդի տերն է, այնպիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի[366]*:*

Հայոց բանակին Շապուհ Բ-ի տված այս գնահատականը Ինա Գարսոյանը քմծիծաղով անվանում է մեկ անգամ «մտացածին մենախոսություն», մյուս անգամ՝ «անհավանական մենախոսություն» (imaginary soliloquy և improbable soliloquy)[367]*: Գարսոյանը սա այնքան վստահ է ասում, որ թվում է, թե ինքն այնտեղ էր և անձամբ պարսից թագավոր Շապուհի հետ խոսել-ճշտել է իրականությունը: Սակայն Շապուհի այս խոսքերում անհավանական բան չկա՝ անկախ այն բանից, թե բառացի՞ է դրանք վերարտադրել Փավստոսը թե՝ փոքր-ինչ համապատասխանեցրել է իր երկի ոճին: Հարցնենք տիկի՛ն Գարսոյանին՝ այդ ինչպե՞ս է, որ, Կովկասում թուրքական ուժերի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան, վերհիշելով 1918 թ. մայիսին Ղարաքիլիսայի համար մղված ճակատամարտը, կարող էր խոստովանել, որ.*

Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ: Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել[368]*:*

---

366 Փավստոս Բուզանդ. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 244-245:

367 *The Epic Histories (Buzandaran Patmutiwnk), op. cit.*, p. 310-311, note 4 and 12.

368 Տե՛ս **Ե. Ղ. Սարգսյան.** *Թուրքիան և նրա ցվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918):* Երևան, «Հայաստան», 1964, էջ 455. հմմտ. Турция в годы первой мировой войны. Москва, 1966, стр. 188. И. Х. Баграмян, Мои воспоминания. Изд. "Айастан",

Ապա ինչու՞ հայոց մարտունակության մասին ճիշտ նույն կարծիքն անհնար պետք է համարենք 4-րդ դարում: Ընդ որում, խիստ հատկանշական է, որ օտարազգի զորավարների՝ Շապուհի և Վեհիբ-փաշայի խոսքի դիպաշարը համընկնում է՝ այն բաղկացած է երկու մասից. նախ ընդգծվում է ճակատամարտի եզակիությունը, ապա տրվում է հակառակորդի գնահատականը: Կադրային զինվորականների համար առհասարակ սովորական բան է հակառակորդի զորքերին հրապարակայնորեն արժանի գնահատական տալը: Կարելի է վերհիշել տասնյակ նմանատիպ դեպքեր. համեմատենք, օրինակ, թե 1812 թ. Բորոդինոյի ճակատամարտի մասին հետագայում ինչ է գրել Նապոլեոն Բոնապարտը. «Իմ բոլոր ճակատամարտերից ամենաահավորն այն է, որ ես տվել եմ Մոսկվայի մատույցներում: Ֆրանսիացիները իրենց ցույց տվեցին արժանի հաղթանակ տանելու, իսկ ռուսները նվաճեցին անպարտելի լինելու իրավունքը»[369]: Ինչպես դժվար չէ նկատել, այս գնահատականի դիպաշարը, այսինքն՝ Նապոլեոն զորավարի միտքը նույնպես համընկնում է վերոհիշյալ երկու զորավարների մտքի թեւին, այն է՝ բոլոր երեքն էլ սկզբում առանձնացրել են իրենց վարած բազմաթիվ ճակատամարտերի մեջ ամենատպավորիչը, այնուհետև՝ արժանին են մատուցել հակառակորդի զորքերին:

Արշակունյաց ժամանակաշրջանում հայոց բանակն իր թվաքանակով զիջում էր միայն երկու տարածաշրջանային գերտերությունների՝ Հռոմի և Իրանի բանակներին, իսկ մարտական որոշակի խնդիրներ լուծելու գործում, հատկապես՝ իր հեծելազորի մանևրային կարողություններով ու հարվածային հզորությամբ, անգերազանցելի էր: Հայկական այրուձին մեծ հռչակ էր վայելում հին աշխարհում (այս փաստը Գարսոյանն ինքն էլ լավ գիտի)[370], այդ իսկ պատճառով էլ Հռոմ-Բյուզան-

---

Ереван, 1979, с. 88.

369 Տե՛ս Советская историческая энциклопедия (Москва, 1962), стр. 630.

370 Ինչպես խոստովանում է Գարսոյանը իր ծանոթագրություններից մեկում, հայկական այրուձին հռչակված էր երկրի սահմաններից

դիայի և Իրանի տիրակալները սիրաշահում էին և աշխատում տարբեր հնարքներով իրենց զինված ուժերի կազմի մեջ ընդգրկել հայկական ընտիր զորամիավորումները: Հայկական բանակի հրամկազմի ներկայացուցիչներից շատերը՝ շնորհիվ Հայաստանում իրենց ստացած ռազմական կրթության և փայլուն ունակությունների, բյուզանդական բանակում հաճախ էին ստանում բարձրագույն զինվորական կոչումներ և պաշտոններ, հետագայում՝ գրավելով նույնիսկ կայսերական գահը[371]*: Ինչ վերաբերում է Իրանում հայկական զորքի ունեցած վարկին, ապա այդ մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել Թեկուզ Եղիշեի հետևյալ հաղորդումից.*

> *...կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում [Պարսից թագավորի] Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը*[372]*:*

Սա՞ էլ է «մտացածին» հաղորդում: Կարելի է հիշել նաև Մուշկան Նյուսալավարտի բառերը՝ ուղղված պարսից զորքին Ավարայրի ճակատամարտի նախաշեմին. «Դուք ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը, և ամեն մեկի անվեհերու-

---

դուրս՝ "was renowned beyond its borders" (*The Epic Histories, op. cit.*, p. 573).

371 Բյուզանդական բանակում հայկական զորամասերի և հրամանատարների մասին համառոտաբար տե՛ս Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, հտ. Ա, էջ 39-40:

372 Տե՛ս Եղիշե. *Վարդանի և Հայոց պատերազմի մասին:* Թարգմ. և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևանի Համալսարանի հրատ., 1989, էջ 89:

թյունը. գուցե պարտուիթյուն կրելով՝ կենդանի-կենդանի զրկվեք այն մեծ կյանքից, որ ունեննալու եք: Հիշեցնք ձեր կանանց և որդիներին, հիշեցնք ձեր սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինիք...»[373]: Ասենք, Գարսոյանի համար սրանք անշուշտ մտացածին հաղորդումներ են. չէ՞ որ նրա գործընկերը Ռոբերթ Թոմսոնը ու. սրան ընդօրինակող Պիթըր Ֆաուլին Եղիշեի երկը հռչակել են անարժանահավատ աղբյուր, որը «ճշգրիտ կամ հավաստի քիչ տեղեկութիւններ ունի տալու հայոց քաղաքական կամ ռազմական պատմութեան հետազոտողներին»[374]:

Ինչևիցե՝ հայկական բանակին Շապուհի տված հիւացական գնահատականը պետք է համարել միանգամայն հավաստի: Այդ գնահատականը Փավստոսին կարող էր հայտնի դառնալ տարբեր ճանապարհներով, հավանական է՝ Մամիկոնյանների միջոցով (նույնպես և Մուշկան Նյուսալավուրտի դիմումը իր բանակին Եղիշեին կարող էր հայտնի դառնալ պարսիկ գերիների պատմածից կամ մեզ անհայտ այլ ուղիներով:)

Սակայն, Գարսոյանը կանգ չի առնում: Պարզվում է, Փավստոսը, կամ Փավստոսի աղբյուրը, ճակատամարտերը նկարագրել են՝ հիմքում ունենալով ոչ թե զորքերի և զորահրամանատարների իրական գործողութիւնները, այլ... զրադաշտական Իրանի արժեքներն ու ավանդութիները (!?)[375]: Ավելին՝ հենվելով Թոմսոնի վրա, Գարսոյանը գրում է, թե նույն ճակատամարտը նկարագրելիս, «Մովսես Խորենացին հիմք է ընդունել ոչ թե իրանական, այլ աստվածաշնչյան և հայրաբանական աշխարհընկալումը»[376]: Այսպիսով բոլոր խնդիրները լուծվում են. ոչ Բուզանդն է ճշմարիտ հեղինակ, ոչ էլ Խորենացին: Բոլորովին անհասկանալի և չինծու պատճառաբանութեամբ Գարսոյանը հրաժարվում է հավաստի համարել

---

373 Նույն տեղում, Գլուխ հինգերորդ, էջ 232-233:

374 Տե՛ս վերը, ծնթ. 296:

375 Տե՛ս *The Epic Histories, op. cit.*, pp. 310-312, notes 4, 5, 18.

376 Նույն տեղում, էջ 311, ծնթ. 4:

նաև Փավստոսի մի այլ մանրամասն հաղորդում՝ Մծբինի մոտ հայկական զորքի՝ բյուզանդական կայսերական բանակի դեմ տարած խոշոր հաղթանակի մասին[377]*:*

Կարճ ասած՝ Նինա Գարսոյանը Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» հավասարեցրել է հեքիաթասացության:

3.3.3. Գրքի աղբյուրագիտական հիմքի մի հատկանիշ

Ցուցադրելու համար Նինա Գարսոյանի «գիտական բարեխղճությունը», բերում ենք պատմաբան-բանասեր Գևորգ Տեր-Վարդանյանի «Բուզանդի տպագիրներն ու ձեռագրերը»՝ հրատարակության ընթացքի մեջ գտնվող աշխատությունից մի քաղվածք, որ շնորհակալությամբ ստացել ենք հեղինակից: Այսպես՝ Տեր-Վարդանյանը պարզել է, որ գոյություն ունի՝

> *Փավստոսի Պատմությունը պարունակող 46 ձեռագիր. 18ը ամբողջական, 3ը՝ թերի, 3ը՝ կորուսյալ. առանձին դիտելի խումբ են հատվածական ընդօրինակումները՝ 8 միավոր. կրկին առանձին, բայց այլ ավանդույթների կրող ու արտայայտիչ են ճառընտրային 9ը և հայսմավուրային 5ը (ընդամենը՝ 14):*
>
> *Գարսոյանի ընդարձակ Մատենագիտության առաջին՝ «Բնագրի ձեռագրեր, տպագիրներ և թարգմանություններ» բաժինն ունի միայն գույքահամարներով և թվականներով՝ ըստ հավաքածուների (Երուսաղեմ, Երևան, Վեննտիկ, Վիեննա) թվարկված 32 ձեռագրի մի անկատար և սխալաշատ ցանկ (էջ 601–2), որը թյուր պատկերացում է ստեղծում Փավստոսի ձեռագական ավանդույթի մասին: Անկասկած, թարգմանիչը պարտավոր չէր կատարելապես ուսումնասիրելու բնագրի ձեռագրերը, սակայն՝ կարող էր իրեն ազատ համարել նման ցանկ պատրաստելու պարտավորությունից, սակայն, քանի որ այն կա, ապա պետք է արձանագրենք, որ նրա սխալմունքները համարական պարզ ցանկի համար չափազանց շատ են: Կրկնություններից խուսափում ենք, պա-*

---

377 *The Epic Histories*, *op. cit.*, p. 290, n. 8.

կասների խնդիրը թողնում, ապա՝ մեր շարքի[378] կարգով առաջնորդվելով ու խմբավորելով, նույն շարքի պայմանանիշերով թվարկում ենք Գարսոյանի առավել կարևոր սխալմունքները.

ա) 32 ձեռագրից 25ը համարվել են ամբողջական, 7ը՝ հատվածական (պահպանված ամբողջական օրինակներն իրականում 18ն են),

բ) ամբողջական են դարձված Ն, Շ, Ջ, Ռ (Երևանի 2748, 1862, 3965) հատվածական և Յ, Փ (Վենետիկի 1014, 512) ճառընտրային օրինակները,

գ) Ժ և Ի (Վենետիկի 721, Երևանի 3079) օրինակների դբչության 1700 և 1720–30-ական թվականները դարձվել է 1720 և 1681(Հ (Վենետիկի 2460) օրինակի 1783ը՝ 1743, Պ (ՄՄ 8813) օրինակի 1688ը՝ 1668, Լ (Վենետիկի 1188) ձեռագրի Մխիթ. մատենադարան մուտք գործելու 1750 թվականը՝ 1761,

դ) Թերի Ճ և Մ (Երևանի 6321 և 6554) ձեռագրերը դարձված են հատվածական,

ե) մոացածին (!) 673, 875 և 1706 համարներով են նշանակվել Ր, Յ և Փ՝ Վենետիկի Ա, Բ, Գ ճառընտիրները, որոնց ցուցակի համարները 201, 202 և 203 են, իսկ գույքահամարները՝ 17, 1014 և 512:

Ի վերջո, ինչպես արդեն ասել ենք, ձեռագրերը թվարկված են ըստ հավաքածուների, մինչդեռ որևէ գործի կամ ժողովածուի ձեռագրերը ներկայացնելու լավագույն եղանակը ժամանակագրական-բնութագրական հատկանիշներով առաջնորդվելն է. նախ՝ խիստ պայմանական, ավելին՝ բնագրական խնդիրների համար չորրորդական նշանակություն ունի այն հանգամանքը, որ Փավստոսի ա՛յսինչ ձեռագիրը գտնվում է Երևանում, ա՛յնինչը՝ Երուսաղեմում կամ մի այլ տեղ. վերջապէս, անհամաստ է ի սկզբանն իսկ մեկ կամ մի քանի գլուխ պարունակող ձեռագիրը ամբողջական օրինակների շարքում ներկայացնելը:

---

378 Ձեռագրերի թվարկում-ներկայացումն արված է հայերեն այբուբենի տառերով և այլ ենթապայմանանիշներով:

Պարզ է, որ Գարսոյանը ձեռագրերի այս ցանկը ներկայացրել է ստեղծելու համար «գիտաճևական» այն թյուր տպավորությունը, թե իր թարգմանության մեջ օգտագործվել են նաև Փավստոսի պատմության ձեռագիր տարբերակներն ու նրանց ընթերցումները, ուրեմն և թարգմանությունը բնագրական իմաստով իբր ավելի ճշգրիտ է՝ քան գրաբար բնագրի որևէ հրատարակություն:

3.3.4. Թարգմանչական մի քանի թերությունների մասին

Դրանք շատ են: Մի քանիսի թվարկումը, սակայն, լիակատար պատկերացում կտա Գարսոյանի հայագիտա-գրաբանագիտական պատրաստության մասին:

1. Փավստոսի հետևյալ արտահայտությունը՝ «[իբրև զկոյրս մոլորեցան՝ երկիրն լեզուին Թորգոմական աշխարհի»[379] *Գարսոյանը թարգմանել է այսպես]* «....the land [speaking] the language of the realm of Torgom...»[380]*: Այս թարգմանությունը վերածենք արդի հայերենի և համեմատենք այն Ստ. Մալխասյանցի թարգմանության հետ.*

Ստ. Մալխասյանց.

> *հայ լեզվով խոսող Թորգոմական աշխարհը [կույրերի նման մոլորվեց].*[381]

Ն. Գարսոյան.

> *Թորգոմի աշխարհի լեզվով խոսող երկիրը [կույրերի նման մոլորվեց]:*

Գարսոյանի թարգմանության մեջ ստացվել է մի խայտաբղետ անհեթեթություն՝ Հայաստան երկրում խոսում էին

---

379 **Փավստոս Բիւզանդ.** *Պատմութիւն հայոց.* Թիֆլիս, 1912, Դպրութիւն Գ, Գլուխ ԺԳ, էջ 50:

380 Տե՛ս *The Epic Histories (Buzandaran Patmutiwnk),op. cit.*, p. 84.

381 **Փավստոս Բուզանդ.** *Պատմություն հայոց:* Թարգմ., ներած. և թարգմանություններ Ստ. Մալխասյանցի, էջ 90:

Թորգոմի աշխարհի (որ նույն Հայաստանն է) լեզվով: Պետք է գրաբար իսկապես շատ վատ իմանաս, որպեսզի չհասկանաս, որ «երկիրն լեզուին Թորգոմական աշխարհի» արտահայտության մեջ երկիր *և* աշխարհ *բառերը գործածված են ոչ թե տարբեր, այլ նույն իմաստով՝ իբրև հոմանիշներ, այսպես կոչված պեսպիսուբյուններ: Հոմանիշներն այդպես գործածելը գրաբարում, իսկ Փավստոսի երկում՝ առանձնապես, տարածված երևույթ է ու տարրական կանոն: Այս կանոնին ծանոթ չլինելու պատճառով Գարսոյանը տարբեր տեղերում զանազան ծիծաղաշարժ սխալներ է արել: Օրինակ, նա գրում է, թե աշխարհ և երկիր եզրերը միշտ տարբեր նշանակություն ունեն. որպես «վառ» ապացույց բերելով Փավստոսի՝ ա. «աշխարհին Հայաստան երկրին» (Գ, 6), բ. «զերկիրն Հայոց աշխարհին» (Գ, 7) արտահայտությունները: Առաջին դեպքում Գարսոյանը թարգմանել է այսպես՝ «Հայաստան երկրի տերությունը»* (the realm of the land of Armenia), *երկրորդում՝ «Հայաստան տերության երկիրը»* (the land of the realm of Armenia) *և այլն*[382]*: Այնինչ երկու դեպքում էլ աշխարհն ու երկիրը գործածված են իբրև հոմանիշներ:*

2. Պարսիկների կողմից Տիրան թագավորի նենգ առևանգումից հետո ստեղծված կացությունը քննելու համար 350 թ. Հայաստանում հրավիրվեց աշխարհաժողով: Փավստոսը դրում է, թե ժողովականները՝

> *սկսեցին իրար հետ խոսել և ասում էին. «Այս ի՞նչ է մեր բածը, նստել սուգ ենք անում. թշնամիները սրանից կօգտվեն, շատ չանցած էլի մեր երկիրը կարշավեն...» (բնագրում՝ «թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշավեսցեն թշնամիքն»*[383]*:*

Վերջին նախադասության՝ «թշնամիք այսու գամագիւտ լինին»-ի պարզ իմաստը (այսինքն՝ կօգտվեն երկրում հաստատ-

---

382 Տե՛ս *The Epic Histories*, p. 510.

383 **Փավստոս Բուզանդ**. *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 110:

ված չփոթությունից) Գարսոյանը չի հասկացել և թարգմանել այն է՝ «թշնամիները այս բանը հաջողեցրեցին» ("The enemy has been successful in this and after a little time will attack again")[384]*: Անգլերեն ճշգրիտ թարգմանությունը պիտք է լիներ այսպես՝* The enemies would take advantage of this and soon invade our country.

3. Փավստոսի գունդ բառը Գարսոյանը թարգմանում է հիմնականում իբրև «զորամաս» (contingent)*, մի քանի դեպքում՝ իբրև «բազմություն», և մի դեպքում՝ իբրև գունդ՝ «թանձրուկ» իմաստով*[385]*: Փավստոսը, սակայն, շատ հաճախ գունդը գործածում է «բանակ» իմաստով, իսկ Գարսոյանը, թյուրիմացաբար կամ գիտակցաբար, խուսափում է այդ գործածությունը ճիշտ թարգմանելուց: Փոխարենը, սխալմամբ համարում է, թե «բանակ» իմաստն ավելի հաճախ արտահայտվել է զորք բառով: Ինչևիցե, աներկբայելի է, որ գունդ եզրով Փավստոսը երբեմն նկատի է ունեցել առանձին՝ խոշոր կամ փոքր զորամաս, իսկ որոշ դեպքերում էլ զուտ միայն* բանակ *(տե՛ս, օրինակ, Դ, 7, 8. Դ, 3, 4. Ե, 2, 4): Այս գործածումն ակնառու է հատկապես Ե գլխուց 5-րդ գլխում, որտեղ «մոլեկան գունդն Մուշեղեան» պարզ տարբերված է «Հայոց գնդերից», «Հայոց գնդից» ու «Հայաստան գնդից»: Վերջին երկու դեպքում էլ խոսքը հստակ վերաբերում է Հայոց միացյալ բանակի ամբողջությանը:*

Նկատենք շատ հետաքրքրական մի հանգամանք ևս: Փավստոսի՝ «Հայոց գունդ» ու «Հայաստան գունդ» անվանումների գործածություններից պարզ երևում է, որ 4-րդ դարում, գուցն նաև ավելի վաղ և ուշ շրջաններում, Հայոց միացյալ բանակն ունեցել է երկու հոմանիշային անվանում՝ «Հայոց գունդ» և «Հայաստան գունդ» (Համմ. Դ, 39. Ե, 4, 5): Մինչ-

---

384 Տե՛ս *The Epic Histories*, p. 98.

385 Տե՛ս *The Epic Histories*, pp. 68, 73-76, 96-98, 108, 116, 133, 148-151, 155, 158-159, 161, 163-164, 166, 170, 186-187, 189-191, 193-196, 204-205, 217, 219-220, 223-228, 529.

դեռ առաջին անունն ընդգծում էր բոլոր հայերի միասնականությունն ու համերաշխությունը, երկրորդը շեշտում էր նրանց ամրագույն կապվածությունը Հայաստան աշխարհին, երկրին և թագավորությանը: Ցավոք, Հայոց միացյալ բանակի այս երկու ջոկ անվանումների գոյությունը նախորդ թարգմանիչների համար աննկատ է մնացել ու, հետևաբար՝ չի մեկնաբանվել[386]*:*

4. Ըստ Բուզանդի հաղորդման, դավաճան հրամանատար Դատաբեն Բզնունուն ձերբակալելուց հետո՝ «ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, և քարկոծ առնէին զնա քարամբք իբրև զայր, որ աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ» (Գ, 8): Վերջին հատվածը Գարսոյանը թարգմանել է այսպես. «որը դավաճանել էր իր տիրոջ աշխարհին, զորամասին և բանակին» ["...who was a traitor to the realm, the contingent, and the army of his lord."][387]*: Դարձյալ զուգադրենք հայերեն և ռուսերեն թարգմանությունների հետ.*

Մալխասյան.

> *որ դավաճան է եղել իր աշխարհին և իր տիրոջ գնդին ու զորքերին*[388]*:*

Գևորգյան.

> и побили его камнями, как человека, изменившего своей родине, гунду и войскам своего государя[389].

---

386 Համմտ. **Փավստոս Բուզանդ.** *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968) և История Армении Фавстоса Бузанда. Перевод с древнеармянского и комментарии М. А. Геворгяна. Под редакцией С. Т. Еремяна. Вступительная статья Л. С. Хачикяна. Ереван, АН, 1953.

387 *The Epic Histories, op. cit.*, p. 76.

388 **Փավստոս Բուզանդ.** *Պատմություն հայոց:* Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 79:

389 История Армении ~Фавстоса Бузанда, с. 18.

Այս դեպքում Գևորգյանի թարգմանությունն առավել ճշգրիտ է: Կարևորն այն է, սակայն, որ Գարսոյանի թարգմանության մեջ վերացել է Դատաբենին մահապատժի ենթարկելու դլխավոր պատճառը՝ այն, որ վերջինս դավաճանել էր իր հայրենիքին, այլ ո՛չ սոսկ՝ «իր տիրոջ աշխարհին»: Թե ինչու՞ էր Գարսոյանին պետք՝ այս պարզ դրվագում հայրենիք հասկացությունը ջնջելը, թողնում ենք ընթերցողի դատողությանը:

Այսքանով բավարարվենք, թողնելով որ Արշակունյաց Հայաստանի պատմության խնդիրներով զբաղվող մասնագետներն առավել մանրամասնորեն անդրադառնան Գարսոյանի «մոնումենտալ» աշխատությանը: Կարծում ենք, սակայն, որ ասվածը բավարար է, որպեսզի ընթերցողն հստակ պատկերացում կազմի Գարսոյանի գիտական, դաղափարական և բարոյական կերպարի մասին:

Ավելացնենք, սակայն, որ հայկական միջնադարյան աղբյուրները հաջորդաբար «կեղծիքներ» հռչակելու ամերիկյան մարմաջը շարունակվում և ծավալվում է:

Այսպես՝ վերը հիշված Լևոն Ավդոյանը «քաջաբար» բացահայտել է ևս մեկ «խաբեություն»՝ հայտարարելով Հովհան Մամիկոնյանի 7-րդ դարում գրված «Տարոնի պատմությունը», ինչպես ինքն է հպարտությամբ ասում՝ «10-րդ դարի կեղծիք» և անվանելով հեղինակին կեղծ-Հովհան Մամիկոնյան:[390] *Մի հոդվածում փորձելով կիսաշշուկ հաստատել հայերի հնուց ի վեր Արցախում ապրելու փաստը (ըստ Ավդոյանի՝ հայերը ներկա են եղել Արցախում մ.թ. 370-ական թվականներից, ընդ որում՝ Արցախն անվանված է Կովկասյան Աղվանքի «մեկ մաս»), Ավդոյանն անում է մի չափազանց ուշագրավ հայտա-*

---

390 **Ps. Yovhannes Mamikonean.** *The History of Taron [Patmutiwn Taronoy]*:. Historical Investigation, Critical Translation and Historical and Textual Commentaries by Levon Avdoyan. [Columbia University Armenian Studies Program: Suren D. Fesjian Academic Publications; 6]. Atlanta, GA: Schoalrs Press, 1993.

բարուքթյուն. «այս իմ նկատողուքթյունները որոշակի ետնախորքում դնելու համար նշեմ անձնական վաստակս. վերջերս ես հրատարակել եմ մի գործ, որտեղ հաստատում եմ, որ մի շատ սիրված հայկական միջնադարյան աղբյուր 10-րդ դարի կեղծիք է. այս աշխատուքթյունն ինձ ընկերներ չի բերել և չի բերելու ուղղափառ կամ կեղծ-ուղղափառ հայկական շրջանակներում»[391]*: Մի կողմ թողնելով հայկական շրջանակներում մերժված լինելու սուտ հավակնուքթյունը (կեղծ-հայագետներից ոչ ոք այդպիսի արդարացի վերաբերմունքի տակավին չի արժանացել, ընդհակառակը՝ նրանք միայն մեծարվել են), անդրադառնանք Ավդոյանի մյուս ասածին: Պարզվում է՝ որպեսզի արևմտյան հայագիտական շրջանակներում ունենաս «օբյեկտիվ» գիտնականի համբավ, պետք է անպատճառ մի լավ աքացի տաս հայոց պատմուքթյանը, օրինակ՝ գոնե մեկ հայկական միջնադարյան սկզբնաղբյուր կեղծիք հռչակես: Ա՛յ, դրանից հետո նոր միայն կարելի է քաջնազարյան կերպով «ձայն բարձրացնել» ի պաշտպանուքթյուն Արցախի...*

4. Հարձակումներ հայերի ազգային բնավորության և արժանապատվության վրա

Սյունին, օրինակ, սիրում է ընդարձակ մեջբերումներ անել ռուս և եվրոպացի հենց այն մի քանի հայատյաց հեղինակներից, որոնք խիստ նախապաշարված ու բացասական գնահատականներ են տվել հայերի ազգային բնավորուքթյանը, այլազանորեն անվանարկելով նրանց (այդ վիրավորանքներն այստեղ վերարտադրելու ցանկուքթյուն չունենք)[392]*: Բնական է, որ Սյունին գլացել է մեջբերելու օտարերկրացիների՝ հայերի մասին արտահայտած բազմաթիվ դրական գնահատականները,*

---

391 **Levon Avdoyan**, "Nagorno Karabakh: An historical perspective," *International Journal on Group Rights* 3 1995, pp. 161-167.

392 Տե՛ս, հատկապես, **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, pp. 37-42, 101.

որոնց նա չէր կարող հանդիպած չլինել[393]: Ըստ երևույթին, Սյունին մտածում է հայերի մասին նույն հայատյաց կատեգորիաներով: Այսպես՝ փորձելով ևս մեկ անգամ ձախկել հայ ազատագրական շարժումները, նա պատմաբանին անհարիր ոճով մեղադրում է միջնադարում ապրող հայերին օտար տիրապետության տակ նրանց կրած բոլոր տառապանքների համար. «Վաճառական գործիչների մի խումբ Մադրասում գրում էր քաղաքական տրակտատներ, որոնք բարդում էին հայության դրության մեղքը նրանց սեփական մեղավոր անցյալից՝ օտար տիրակալների դեսպոտիզմի վրա» (The group of merchant activists in Madras wrote political tracts that shifted the blame for the Armenian condition from their own sinful past onto the despotism of foreign rulers)[394]:

Նույն միտքը Սյունին սերում է շեշտել այլ կերպ ևս, թե իբր «քաղաքական համերաշխությունը հայերի մեջ թույլ էր», «հայ ավատատերերը հաճախ դաշնակցում էին ոչ-հայ ուժերի հետ՝ իրենց հայրենակից հայերի դեմ [կռվելու համար]»[395]: Փաստորեն, միայն հայերին է վերապրում երևույթներ, որոնք բնորոշ էին միջնադարյան բոլոր հասարակություններին՝ այն էլ շատ ավելի մեծ չափերով (այդպիսի երևույթները բնորոշ են նույնիսկ բազմաթիվ արդի հասարակություններին): Այսպիսի ոչ-գիտական մտապատճեններին կապակցությամբ Հակոբ Մանանդյանն իրավացի բացատրություն է տվել տակավին 1902 թ., նույն հարցին ևս մեկ անգամ վերադարձել է 1940-ական թթ..

Թե որքան սովորական, բայց ծայրահեղ կարող են լինել ուրվականների նման բերնից բերան, գրքից գիրք, հոդվածից հոդված չրջող դոնքիշոթական ընհանրացումները՝ ցույց

---

393 Տե՛ս, օրինակ, **Christopher Walker**, *Visions of Ararat* (London, 1997); **Վալերի Բրյուսով**, *Հայաստանի և հայ կուլտուրայի մասին:* Խմբագրությամբ Գ. Ն. Հովնանի, Երևան, ԳԱ հրատ., 1967:

394 **Suny**, *Nation-making, Nation-breaking, op. cit.*, p. 6.

395 **Suny**, *Looking toward Ararat, op. cit.*, p. 8.

տանք մի քանի օրինակներով: Մեր նախկին պատմության վերաբերյալ համարյա ամեն մի գրքում և հոդվածում կարող եք կարդալ այսպիսի մի կարծիք, իբր թե Հայոց նախարարների անմիաբանությունն է Հայաստանի կործանման պատճառը: Այդ միամիտ կարծիքը հայտնողներից ոչ մեկը չէ մտածում, որ պետական միության տեսակետից վտանգավոր նախարարական (իսկ Եվրոպայում ֆեոդալական) կազմակերպությունը ոչ մի ազգության մեջ մոգական գավազանի շարժումով չէ փոխվել, այլ բարոյական, իրավական և տնտեսական որոշ զարգացման շրջանում և աչխարհագրական ու քաղաքական որոշ պայմաններում անխուսափելի անհրաժեշտություն է եղել: Հունաստանը՝ մեզանից ավելի քաղաքակրթված երկիրը, կործանվեց մասամբ էլ այն պատճառով, որ չկարողացավ լուծել ազգային-քաղաքական միության մեծ խնդիրը: Իսկ մենք դեռ շարունակ կրկնում ենք, եթե հայերը անմիաբան չլինեին, եթե նախարարներն ըմբռստ չլինեին *և այսպես անվերջ (ընդգծումը՝ Մանանդյանինը)*[396]*:*

...Ուշագրավ է, որ [14-րդ դարի իսպանացի ճանապարհորդ] Կլավիխոյին ժամանակակից հայերը իրենց թշվառ կացությունը և ազգային անկախության բարձումը վերագրել են հայ իշխաններին անմիաբանությանն ու նրանց ներքին պատակոումներին:

Այս ընդհանուր ու սովորական դարձած ժողովրդական կարծիքը ճիշտ չէ: Անմիաբանությունը և ներքին խռովությունները, որ ընդհանուր երևույթ էին ֆեոդալական կազմակերպություն ունեցող բոլոր երկրներում՝ համեմատաբար հազվագյուտ էին Զաքարյան Հայաստանի հայ իշխանություններում: Եղբայրասպան կռիվներն ու տիրանենգումներն ավելի մեծ չափերով տեղի էին ունենում, ընդհակառակը, թուրքական, մոնղոլական ու թուրքմենական իշխող դինաստիաների միջև, որոնք տիրել էին նրանց երկրին:

---

396 Տե՛ս **Հ. Մանանդյան**, *Երկեր*: Հտ. Դ. Երևան, ԳԱ, 1981, էջ 8–9 (սույն հոդվածը նախապես լույս է տեսել «Արարատ» պարբերականում, 1902, ԼԵ տարի, հմր. Բ, էջ 167–171):

Իսկ, իրապես, հիմնական պատճառը Հայաստանի քաղաքական ու ազգային ինքնուրույնության խորտակման, ինչպես և նրա տնտեսական ու կուլտուրական կյանքի հետադիմության, ո՛չ թե հայերի երկպառակություններն էին ու անմիաբանությունը, այլ Միջին Ասիայից եկող քոչվոր ու խաշնարած թուրք և թաթար ցեղերի տևական ու անհաղթահարելի արշավանքները, որոնք հիմնավորապես ավերածության մատնեցին և քարուքանդ արին առաջադեմ քաղաքակրթությունն ու կուլտուրան ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Արևմտյան Ասիայի: Արշավողների կատաղի առաջշարժումը, ինչպես հայտնի է, չկարողացան կասեցնել մինչև իսկ այնպիսի մեծ ու հզոր պետություններ, ինչպիսիք էին Խվարեզմը, Չինաստանը և Ռուսաստանը: Ուստի միանգամայն պարզ է, որ սելջուկյան, մոնղոլական ու լանկթամուրյան ռազմական տեսակետից խիստ կազմակերպված մոլեգին արշավանքները կործանիչ ու սոսկալի մի աղետ էին, որից փրկվել անկարող էր, իհարկե, և հայ ժողովուրդը[397]*:*

Միաժամանակ, պետք է ասենք, որ Սյունին և նրա հավատակիցները գրել են ոչ թե Մանանդյանի նշած ժողովրդական կարծիքի ազդեցության տակ, այլ ընդհակառակը՝ այդպիսի կարծիքն առավել տարածելու և հայերի մեջ իրենց ազգային կարողությունների նկատմամբ անվստահություն սերմանելու նպատակով: Նաև՝ անկախության ձեռքբերմանը և արցախյան փայլուն ռազմական հաղթանակներին զուգընթաց անհետացող թերարժեքության բարդույթին նոր չունչ հաղորդելու, այն հնարավոր չափով ամրապնդելու նպատակով:

5. Հայաստանի պատմական ժողովրդագրության կեղծում

Ա. Հայաստանում հայերը փոքրամասնություն են հայտարարվում արդեն 15-րդ դարից սկսած: Օրինակ, Ջորջ Բուռնությանը գրում է, թե իբր Արաքսի հովիտը (իմա՝ Արարատյան երկիրը) «կորցրեց իր հայկական դիմագիծը և ընդմիշտ

---

397 Հ. Մանանդյան, *Երկեր:* Հտ. Գ, Երևան, ԳԱ, 1977, էջ 418-419:

բնակեցվեց թյուրքական ցեղերով, իսկ Իսլամը դարձավ գերիշխող կրոն Լենք Թիմուրի արշավանքներից հետո, 14-րդ դարի վերջին-15-րդ դարի սկզբին»: Իր այս անհիմն հայտարարությունը Բուռնուտյանը փորձում է հիմնավորել, նշելով այս դարաշրջանի արևմտյան մի պատմաբանի՝ Լե Ստրեյնջի գրքի մի էջը[398]*:*

Արդյո՞ք Բուռնուտյանին այդքան դուր եկած եվրոպացի հեղինակի այդ մի էջը մեզ անհայտ մնացած ինչ-ինչ ծանրակշիռ ժողովրդագրական հաշվարկներ է պարունակում: Բացելով Լե Ստրեյնջի գիրքը՝ պարզեցինք, որ այնտեղ գրված է ընդամենը, թե Առանի, Շիրվանի, Վրաստանի և Հայաստանի «բնակչության մեծամասնությունը շարունակում էր մնալ քրիստոնյա մինչև մոտավորապես միջնադարի վերջը: Հետևապես՝ միայն մոնղոլական ներխուժմանը հաջորդած վերաբնակեցումներից ու հատկապես 14-րդ դարի վերջին Վրաստանում Թիմուրի մղած բազմաթիվ պատերազմներից հետո է, որ այս հողերը մշտապես բնակեցվեցին թյուրքերով և իսլամը դարձավ իշխող կրոն»: Ինչպես տեսնում ենք, Լե Ստրեյնջի այս որևէ պատմա-ժողովրդագրական ուսումնասիրությամբ չփաստարկված նախադասությունը խոսում է ավելի շուտ իշխող կրոնի, այսինքն՝ իշխանության, քան թե մահմեդականների մեծամասնություն կազմելու մասին: Ինչևիցե, միայն կանխամտածվածն ասելու մեծ ցանկություն ունենալու դեպքում էր կարելի Լե Ստրեյնջի առածգական և հպանցիկ նկատողությունն *օգտագործել որպես աղբյուր և հավաստի տեղեկություն:*

---

398 Տե՛ս **George A. Bournoutian**, *The Khanate of Erevan Under Qajar Rule, 1795-1828*. Costa Mesa, CA and New York: Mazda Publishers, 1992, p. 58, հղում է **G. Le Strange**, The Lands of the Eastern Caliphate. London, 1966, p. 177. սա վերատպություն է. առաջին անգամ գիրքը հրատարակվել է 1905 թ.): Տե՛ս նաև **George Bournoutian**, *Eastern Armenia in the Last Decades of Persian Rule: 1807-1828* (Malibu, CA: Undena Publications, 1982), p. 75.

Այս հայտարարության անմիջապես հաջորդող նախադասության մեջ Բուռնուֆյանը հակասում է ինքն իրեն՝ գրելով, թե «վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արաքսի հովտում հայերը մեծամասնություն էին պահպանել մինչև թուրք-պարսկական պատերազմները և շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթերը 16-րդ դարում և 17-րդ դարի սկզբին»: Դժվար է պատկերացնել, որ որևէ լուրջ գիտական աշխատության մեջ պատասխանատու հայտարարություն անող հեղինակը կարող է ընել տրամագծորեն իրար հակասող երկու միտք, սակայն, փաստ է, որ Բուռնուֆյանի մոտ դա լավ է ստացվել: Եթե բացառելու լինենք վրիպակի փաստը (իսկ մենք հակված ենք այն բացառելուն), ապա այս հայտարարությունները հեղինակին պետք են եղել օպորտունիստական ապահովագրության համար, ասել է թե՝ հեղինակը, մի կողմ դնելով գիտական անաչառությունը, փորձում է «լավ մարդ» երևալ և՛ հայերի, և՛ թուրքերի ու նրանց հետևում կանգնած ուժերի աչքին:

Սակայն ասենք, որ հայերն Արարատյան երկրում, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում, մեծամասնություն էին կազմում նաև 17 ու 18-րդ դարերում: Ինչպես 17-րդ դարի կեսերին գրում էր ֆրանսիացի հայտնի ճանապարհորդ ժան Բատիստ Տավերնիեն, որ Կարսով ու Արարատյան դաշտի միջով անցել էր Պարսկաստան՝ «...Թոխաթից մինչև Թավրիզ երկիրը բնակեցված է հայերով» և «չպետք է զարմանալ, եթե հիսուն հային ընկնում է մի մահմեդական»[399]: Արժանահավատ սկզբնաղբյուրի այս ավելի քան հստակ հաղորդումը բազմիցս է հիշատակվել պատմագիտական գրականության մեջ[400], սա-

---

399 [**Jean Baptiste Tavernier**], *Les six Vouages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes*, Paris, 1682, T. I, p. 32; Paris, 1713, T. 1, p. 79):

400 Տե՛ս **Մանվել Զուլալյան**. Էնվեր Կոճուկչու. Էրզրումը սելջուկներից մինչև Հանրապետությունը. Անկարա, 1992, 974 էջ (թուրք.). - *Պատմա-բանասիրական հանդես*, 1997, հմր. 1, էջ 266: **Լեո**, *Հայոց պատմություն*. Երրորդ հատոր, Գիրք առաջին, Երևան, 1969, էջ 266: **Աշոտ**

կան Բուրնությանը և ամերիկյան մյուս «հայագետներն» այն «չեն նկատել», որովհետև ընտրել են փաստերի խեղաթյուրման ճանապարհը: Հետաքրքիր է, որ Հայաստանում հայերի փոքրամասնություն լինելու մասին Բուռնությանի վերոհիշյալ կեղծիքը, առանց չնչին քննադատական վերաբերմունքի արժանանալու, քոչել է Ամերիկայում լույս տեսած այլ հրապարակումների մեջ[401]:

Բ. Վերջերս ԱՄՆ-ում լույս տեսած հայոց պատմության մի դասագրքում Կիլիկիայի հայոց պետականության մասին մի առանձին գլուխ է գրել նորահայտ ոմն Անի Ադամյան-Բուռնությանը, որ առաջին իսկ պարբերության մեջ սենսացիոն «հայտնագործություն» է արել: Պարզվում է, որ Կիլիկյան հայկական թագավորությունում «հավանաբար, հայերը նույնիսկ բնակչության մեծամասնությունն էլ չէին» ("Armenians probably did not even constitute a majority of the population")[402]: Բնական է, որ պատմական փաստերին հակասող այս անհեթեթ հայտարարությունը չի հենվում ո՛չ սկզբնաղբյուրների, ո՛չ էլ առանձին որևէ ուսումնասիրության վրա: Այսպես, Կիլիկիայի հայկական պետության հայտնի պատմաբան Գ. Միքայելյանի մոտավոր հաշվումների համաձայն՝ 13-րդ դարում Կիլիկիայի հայկական պետության տարածքը կազմում էր 40,000 քկմ, իսկ բնակչությունը՝ շուրջ 1,000000 մարդ: Ընդ

Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. Հտ. Բ, էջ 363, ծնթ. 3: Армянское Войско в *XVIII* веке. Документы. Подготовил к изд. А. Хачатрян. Ереван: Изд. АН Арм. ССР, 1968, с. 20. Պետք է ասել, որ Համո Խաչատրյանը թերևս առաջին հայ հեղինակներից էր, որ ճիշտ գնահատական էր տվել հայ ժողովրդի պատմական ժողովրդագրության և ռազմական պատմության հանդեպ արևմտյան հեղինակների ունեցած կանխակալ և կողմնակալ վերաբերմունքին ու տնձգություններին (տե՛ս Армянское Войско в *XVIII* веке, с. 11-16,20-22):

401 **Nora Dudwick**, "Armenia: the nation awakens," *op. cit.*, p. 262; Mark Malkasian, *'Gha-ra-bagh!': The Emergence of the National Movement in Armenia* (Wayne State University Press, 1996), pp. 11-12.

402 **Richard Hovannisian**, ed., *The Armenian People from Ancient to Modern times*, Vols. 1 (New York, St. Martin's Press, 1997), p. 273.

որում՝ «հայերը իշխում էին Կիլիկիայում ոչ միայն քաղաքական առումով. թվաքանակի առումով ևս նրանք առաջինն էին»:[403] Անի ԲուռնուԹյանի հայտարարուԹյան Թուրքամետ քաղաքական ենԹատեքստն ակնհայտ է. եԹե հայերը երբեք՝ նույնիսկ հայկական ԹագավորուԹյան օրոք, Կիլիկիայում մեծամասնուԹյուն չեն եղել, ապա հետագայում, մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, Կիլիկիայի տարածքի հանդեպ նրանց ներկայացրած իրավունքները անշուշտ «անհիմն» են եղել:

Գ. Խիստ նվազեցված են ներկայացվում ցեղասպանուԹյանն անմիջապես նախորդած ժամանակաշրջանում Հայաստանում ապրող հայերի Թիվը, ինչպես նաև 1915-1922 ԹԹ. ցեղասպանուԹյանը զոհ գնացած հայերի Թիվը: Այս մասին շատ է գրվել, ուստի բավարարվում ենք այդ քննադատուԹյան մի քանի նմուշ հղելով[404]:

---

403 Տե՛ս Г. Г. Микаелян, История Киликийского Армянского государства. Ереван, Изд. АН Арм.ССР, 1952, сс. 17-18. Գ. Միքայելյանի այս հաշվարկը տեղ է գտել նաև «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակում (հ. 3, Երևան, 1976, էջ 672-673):

404 **Vahakn N. Dadrian**, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics, op. cit.*, pp. 280-310: especially, pp. 284-289, 294-296. **Levon Marashlian**, *Politics and Demography: Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire (Cambridge, Mass.: Zorian Institute, 1991)*. Թուրքական պատմագրությունն ու նրա վճարովի կամակատարները կեղծում են նաև ավելի վաղ շրջանի (ու նաև՝ այլ երկրների) պատմական ժողովրդագրությունը, տե՛ս, օրինակ, **Լուսինե Սահակյան**, Բաբերդ գավառի տեղանուններն ու էթնիկ կազմը 16 դ. օսմանյան Թահրիր դավթարներում. *Իրաց-Նամե* 6 (1996)-1 (1997), համար 22-23, էջ 21-30: **Speros Vryonis, Jr.**, *A Critical Analysis of "Stanford Shaw, History of the Ottoman Empire and Modern Turkey. Volume I. Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire, 1280-1808, Cambridge University Press (Cambridge, London, New York, Melbourne, 1976)."* Offprint from *Balkan Studies* 24, 1 (1983), pp. 104-107, 115-117.

6. Հայկական քաղաքակրթության ու մշակույթի ներմուծման փորձեր

Հայկական մշակույթի նվաճումները յուրօրինակ վկաններն են հայ ժողովրդի քաղաքակրթության ու նրա խորքերում եղած վիթխարի ներուժի: Այդ իսկ պատճառով էլ հայկական մշակույթը ևս դարձել է հարձակման առարկա:

Թերևս, այս հարձակման հիմնական ուղղվածությունը լավագույնս ընդգծել է Նյու-Յորքի համալսարանի արվեստագիտության պրոֆեսոր ոմն Թոմաս Մաթյուսը, հայկական արվեստի մասին իր ակնարկում դալջելով հետևյալ անհիմն ու անմիտ խոսքը. «Հայկական արվեստի ազդեցությունը համաշխարհային արվեստի վրա փոքր է եղել» (The impact of Armenian art on the art of the world was small)[405]*: Նախ՝ Մաթյուսն իր կարծիքը որևէ կերպ հիմնավորել չի փորձում: Հետո. եթե նույնիսկ ընդունենք, թե իրոք այդպես է (թեև պարզ. չէ, թե Մաթյուսի համար արվեստի ու մշակույթի չափի միավորը ո՞րն է), այդուհանդերձ՝ անհասկանալի է մնում այս հայտարարության բուն նպատակը: Դե՛, եթե հայկական արվեստն այդ աստիճան աննշան երևույթ է, առհասարակ ի՞նչ իմաստ ունի նրա ուսումնասիրությունը: Իրողությունն այն է, որ թեև հայկական արվեստի հուշարձանների միայն մի փոքր մասն է մեզ հասել, մնացածը՝ այրվել, ոչնչացվել ու թալանվել է, սակայն բավական դժվար է չրջանցել հայկական արվեստի մեծ նվաճումները: Ուստի և փորձ է արվում թույլ չտալ, որպեսզի երբևէ համարժեք գնահատականներ տրվեն հայկական մշակույթին, ի սկզբանե այն որակելով իբրև «մի փոքր երևույթ»:*

Մշակույթի հայորդի մեծանուն գործիչներին ոչ-հայ հռչակելու մոլուցքը հայտնի է մեզ ազրբեջանական վայպատմաբանների ստեղծագործություններից: Նրանց համաձայն, օրինակ, հայ չէին Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին,

---

405 **Thomas F. Mathews and Roger S. Wieck**, eds., *Treasures in Heaven, op. cit., XV.*

Մովսես Դասխուրանցին (Կաղանկատվացին) և ուրիշներ: Բայց քչերին է հայտնի, որ հայկական մշակույթը թալանելու և հայազերծելու միտումն առկա է նաև Արևմուտքում: Այսպես՝ մինչդեռ արդի հայագիտությունը Դավիթ Անհաղթին համարում է 5-րդ դարի երկրորդ կեսի կամ 6-րդ դարի սկզբի հեղինակ, պրոֆ. Ռ. Թոմսոնի կարծիքով՝ այդ մեծ հայ փիլիսոփան հաստատ ապրել է 6-րդ դարի երկրորդ կեսին և... գուցե բոլորովին էլ հայ չի եղել[406]*: Ջեյմս Ռասսելի աշակերտ Սերջիո Լա-Պորտան, հայագիտության մեջ տակավին նոր թոթովել սկսող մի պատանի, իր մի գրախոսության մեջ մեծ ոգևորությամբ ցիտում է Թոմսոնի ինչպես այս անհիմն միտքը, այնպես էլ Խորենացու հասցեին արած անվանարկությունները*[407]*: Այս երևույթը պարզորոշ ցույց է տալիս, թե ինչպես են ԱՄՆ-ում «մարզում» հայագիտական երիտասարդ կադրերին՝ ի սկզբանե նրանց մղում են Թոմսոնյան «անգերազանցելի» ուսումնասիրությունների գիրկը, հետն էլ՝ անվստահություն ներարկում հայաստանյան հայագիտության նվաճումների հանդեպ:*

Հաջորդ գոհը 13-րդ դարի հայ մեծ մանրանկարիչ Թորոս Ռոսլինն է, որին, հիմք ընդունելով նրա Ռոսլին մականունը, փորձում են հռչակել այլազգի: Բարեբախտաբար՝ Ռոսլինին ապահայացնելու փորձերը մանրամասն կերպով մեկնաբանված են ու ջախջախիչ քննադատության ենթարկված Իրինա Դրամփյանի չափազանց կարևոր հոդվածում[408]*: Առաջինը Ռոսլինին խառնամուսնության պտուղ դարձնելու փորձ են ա-*

---

406 *Definitions and Divisions of Philosophy by David the Invincible Philosopher*. Transl. by Kendall B. and Thomson R. (Atlanta: Scholars Press, 1983).

407 Տե՛ս **Sergio La Porta**, "Christoph Burchard, ed., *Armenia and the Bible: Papers presented to the Interantional Symposium Held at Heidelberg, July 16-19, 1990*. University of Pennsylvania Armenian Texts and Studies 12. Atlanta: Scholars Press, 1993. Pp. X+251," *Journal of the Society for Armenian Studies* (Volume 7, 1994), pp. 151-155: at 153.

408 И. Р. Дрампян, "К проблемам изучения искусства Тороса Рослина," - *Պատմա-բանասիրական հանդես* 1997, համար 1 (145), էջ 227-240:

րել անգլիացի Դաուսեթն ու ափյուռքահայ արվեստագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը: Արևմտյան մյուս հետազոտողներն անմիջապես հետևել են նրանց: Ֆրանսուհի հետազոտող Նիկոլ Թյերրին Ռոսլինին վերագրել է գերմանական, ավստրիացի Բուշհաուզեն ամուսիններըՙ ֆրանսիական, իսկ ամերիկուհի Էվանսըՙ «արևմտյան» ծագում[409]*: Խեղճ Թորոս Ռոսլին... Զարմանալի է, որ Ռոսլին մականվան և ռուսերեն* рослый *(իմաՙ բարձրահասակ) բառի նմանությունը հիմք ընդունելով, նրան դեռևս ռուս չեն հռչակել. բացառված չէ նաև, որ այս զավեշտը նման «գյուտի» հիմք դառնա: Ռոսլինի ծագման «հարցերը լուծելուց» հետո, անցնում են նրա արվեստի վրա արևմտյան «խորագույն ազդեցությանը»* (profound influence) *վերաբերող ծանոթ երգին*[410]*: Ի. Դրամփյանի հոդվածը կարդացողը կապշի, թե ինչ անհեթեթության են հասնում հայ արվեստի ճաղկման այս «գիտական» փորձերը:*

Թոմսոնի «հեղաշրջիչ ուսումնասիրություններն» ուղեցույց են ծառայում նաև ավագՙ ստաժավոր «հայագետների» համար: Օրինակ, հին հայկական գիտության խոշորագույն նվաճումներից մեկըՙ «Աշխարհացույցը» մի շարք հայագետներ պատճառաբանված կերպով համարում են Մովսես Խորենացու գրչի արտադրություն (այս առթիվ նորերս լույս է տեսել պատմ. գիտ. դոկտոր Բաբկեն Հարությունյանի շրջադարձային նշանակություն ունեցող մենագրությունը[411]*): Վերը հիշատակված Ռոբերթ Հյուսնը, անգլերեն թարգմանելով «Աշխարհացույց»ը, նրա հեղինակի և ժամանակի մասին գրում է չթաքցված քմծիծաղով. «Ինչ վերաբերում է նախնական շարադրանքի ժամանակին, ապա, «Աշխարհացույց»ի 5-րդ դարում գրված լինելու օգտին ասվող միակ փաստարկն այն է, որ ավելի ուշ դարերում այն վերագրել են Մովսես Խորենացուն,*

---

409 Նույն տեղում, էջ 227-229:

410 **Thomas F. Mathews and Roger S. Wieck**, eds., *Treasures in Heaven, op. cit.*, p. 74.

411 **Բ. Հ. Հարությունյան.** *«Աշխարհացույց»-ը և չորս Հայքերի խնդիրը.* Երևան. ՀԲՀ հրատարակչություն, 1997:

որը ենթադրում էին, թե ապրել է 5-րդ դարում, բայց որն այժմ գիտենք՝ բարգավաճել է հավանաբար 8-րդ դարի վերջերին»[412] *(ընդգծումը Հյուսնինն է): Այս առթիվ Հյուսնն ընթերցողին անմիջապես հղում է կարդալու, ինչպես ինքն է ասում՝ «ամենավերջին քննարկումները», որոնք, իհարկե, Թումանովի և Թոմսոնի 1960–1970-ականներին գրված թերի ուսումնասիրություններն են*[413]*: Սրանով չբավարարվելով, Հյուսնն անցնում է հաջորդ գործողությանը՝ «Աշխարհացույց»ը ներկայացնել որպես ո՛չ թե հայկական, այլ... հելենական-բյուզանդական գիտության արդյունք.*

Մնաց գնահատենք «Աշխարհացույց»ի նշանակությունը: Երեմյանը բնութագրում է այն որպես «հայկական քարտեզագրության և աշխարհագրության անզուգական հուշարձան»[414]*, բավական փոքր մի պոռոտախոսություն, եթե նկատի ունենանք, թե որքան քիչ բան է մեզ հասել այս առարկաների մասին եղած հայկական դասական գրականությունից: Իրականությունը, սակայն, այն է, որ «Աշխարհացույց»ն իրենից ներկայացնում է հայ մտքի և մշակույթի վրա Հելենական ու, ավելի ստույգ՝ բյուզանդական ազդեցության մի հրաշալի օրինակ (գիտական ջանքի մի հազվագյուտ օրինակ Հայաստանում, որտեղ գիտությունները հրապուրում էին քիչ հետևորդների):*

---

412 "As for the date of the original text, the only claim that ASX has to being as old as the fifth century is that it was in later centuries attributed to MX who was *supposed* to have lived in the fifth century but who we now know flourished probably in the late eighth" - *The Geography of Ananias of Sirak (ASXARHACOYC). The Long and the Short Recensions*. Introduction, Translation and Commentary by Robert H. Hewsen (Dr. Ludwig Reichert Verlag, Wiesbaden, 1992), p. 33.

413 Նույն տեղում, էջ 33, ծնթ. 122:

414 Իրականում Երեմյանի բնութագրությունը փոքր-ինչ տարբեր է՝ ոչ թե հայկական, այլ «Հին Հայաստանի աշխարհագրության և քարտեզագրության անզուգական հուշարձան». – **U. S.** Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (Փորձ VII-րդ դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա). Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 7:

[It remains only to assess the significance of ASX. Eremyan refers to it as the 'peerless monument of Armenian cartography and geography,' a small enough boast when one considers how little has come down to us from classical Armenian literature dealing with these subjects. The truth of the matter is that the ASX represents an excellent example of the Hellenic -- specifically Byzantine -- influence in Armenian thought and culture (a rare example of scientific endeavor in Armenia where the sciences attracted few practitioners).][415]

Հայկական մշակույթի և հին ու նոր հայ գիտնականների հանդեպ Հյուսնի քամահրական վերաբերմունքն աչք է ծակում:

Այստեղ միայն մի բան կարելի է ասել. այո՛, ինչպես առաջադիմության միտված մյուս մշակույթները (ներառյալ նույն բյուզանդականը)՝ հայկական մշակույթը նույնպես մտածված և հոժարաբար կրել է համաշխարհային մշակույթի բազմաթիվ և բազմապիսի ազդեցություններ՝ յուրացնելով ու հայացնելով նրա կարևոր ձեռքբերումները: Սակայն Հյուսնը և Ընկ. այս բնականոն երևույթն անհիմն կերպով չափազանցնում են, խուսափելով արժանի գնահատական տալուց բուն հայ մտքին և նրա ինքնուրույնությանը, որ և գլխավորն է եղել «Աշխարհացույց»ի և մյուս մեծ աշխատությունների ստեղծման գործում: Պարոն Հյուսնի այս անհիմն գնահատականը և գիտության նկատմամբ հայերի անտարբերությանը վերաբերող նրա փուչ հայտարարությունը կարող են ունենալ երկու մեկնաբանություն. ա) նա անտեղյակ է միջնադարյան հայկական ծովածավալ եւ անընդգրկելի գիտական գրականության գոյությանը. բ) նրա կանխատրամադրված նպատակը կամ անբացատրելի ցանկությունը թե՛ այդ ժառանգությունը եւ թե՛ նրա հին ու նոր կրողներին նսեմացնելն է (ի դեպ, Հյուսնը ևս ծագումով հայ է):

---

415 *The Geography of Ananias of Sirak (ASXARHACOYC).*, *op. cit.*, p. 34.

Մեկ այլ հայտնի հեղինակ՝ Քլիվլենդի պետական համալսարանի լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր Ջոն Գրեպինը, իր մի հոդվածում անդրադառնալով «Աշխարհացոյց»ին, դարձյալ, ըստ ամերիկյան «հայագիտական» շրջանակների ավանդույթի, փորձում է նսեմացնելու հին Հայաստանի մշակույթը.

> *Հեղինակը [ըստ Գրեպինի՝ Անանիա Շիրակացին] պարզ ասում է, որ ինքը գրել է չորրորդ դարի մաթեմատիկոս Պապպուսի՝ այժմ կորսված, հունարեն «Աշխարհագրության» ազդեցության տակ: Թվում է, թե սա ճշմարտություն է (և ո՛չ ուշ արտագրողի լրացում), քանի որ Հայաստանից դուրս աշխատող ժամանակակից քիչ գիտնականներ են հավատ ընծայում, որ այսպիսի մի գործ կարող էր ինքնուրույն գրել այնպիսի մի գավառական, ինչպիսին էր, ենթադրաբար, յոթերորդ դարի որևէ հայը:*
>
> [The author does make clear that he was influenced by the now lost Greek *Geography* of the fourth-century mathematician Pappus. This would seem to be true (and not an addition by a later copyist), since few modern scholars, outside of Armenia, believe such a text could have been done independently by someone so presumably provincial as a seventh-century Armenian.][416]

Ահա այսպես՝ գրչի մի հարվածով յոթերորդ դարում ապրած բոլոր հայերը հայտարարված են հետամնաց գավառականներ: Հոգուն մեծ մեղք է վերցրել Գրեպինը, քանզի նշված ժամանակշրջանում Հայաստանի բարձր աստիճանի հասած զարգացածությունն անժխտելի և անուրանալի պատմական փաստ է, որի ապացույցներից է թեկուզ նույն «Աշխարհացոյց»ը (թեև, ինչպես ասացինք, ըստ Բ. Հարությունյանի ամենավերջին համոզիչ ուսումնասիրության՝ «Աշխարհացոյց»ը

---

416 **John A. C. Greppin**, "Comments on Early Armenian Knowledge of Botany as Revealed in the Geography of Ananias of Shirak," *Journal of the American Oriental Society*, Vol. 115, No 4/October-December 1995, pp. 679-684: at 679.

Մովսես Խորենացու գրչի արդասիքն է, այսինքն՝ հինգերորդ դարի արտադրանք): Հին աշխարհի ամենաառաջադեմ ժողովուրդներից մեկի, նրա ստեղծած մշակույթի ու նաև արդի Հայաստանյան հայագիտության նկատմամբ ամերիկացի այս «կարկառուն հայագետի» քամահրական ու վերամբարձ, եթե չասենք՝ հայատյաց, վարմունքը ծնվել ու սնվել է ամենևին ո՛չ-գիտական աղբյուրներից: Այս վերաբերմունքը յուրաքանչյուր ազնիվ և չնախապաշարված գիտնականի մեջ կարող է առաջացնել միայն վրդովմունք:

Գրեպինի նույնպիսի կանխորոշված կեցվածքին հանդիպում ենք մի այլ առիթով ևս: 1997 թ. մայիսին Ֆրանսիայում անցկացվելիք՝ անտիկ բժշկագիտության հարցերին նվիրված գիտաժողովի մասին զանազան թերթերի հղած իր ֆաքս-տեղեկագրության մեջ, որը ստացել և հրապարակել էր նաև երևանյան «Ազգը», Գրեպինը, մասնավորապես, գրել է, թե իբր՝ «հայերը ոչ մի լուրջ բժշկագիտական տրակտատ չեն գրել մինչև 12-րդ դարը՝ արաբական բժշկագիտական զարթոնքից անմիջապես հետո»[417]: Ամեն ինչից առաջ զարմանում ես, թե լեզվաբանը ե՞րբ հասցրեց դառնալ միջնադարյան հայկական բժշկագիտական դրականության այնպիսի մասնագետ, որ իրեն այսպիսի անվերապահ եզրակացություններ անելու իրավունք վերապահի:

Հին Հայաստանում բժշկագիտությունը շատ բարձր մակարդակ է ունեցել: Այսպես, Հայաստանում հիվանդանոցների գոյությունը վկայված է դեռևս 260 թ., իսկ 354 թ. կայացած Աշտիշատի հայտնի եկեղեցական ժողովի որոշմամբ Հայաստանում հիմնվեց բորոտանոցների, հիվանդանոցների և հաշմանդամների ու կույրերի համար ապաստանների մի ամբողջ ցանց, որը շարունակեց գոյատևել ևս մի քանի հարյուրամյակ: Ի գի-

---

417 «Անտիկ հունական բժշկագիտության ներթափանցումը արևելյան երկրներ», «Ազգ», 5 մարտի 1997 թ., էջ 6:

տուֆյուն Գրեպինի՝ Եվրոպայում առաջին բորոտանոցները բացվել են դրանից երեք հարյուր տարի հետո միայն[418]:

Գրերի գյուտից անմիջապես հետո հայերը թարգմանեցին և կիրառեցին անտիկ աշխարհի լավագույն բժշկարանները, որոնք որոշ դեպքերում մեզ են հասել միայն հայկական թարգմանությամբ[419]: Իսկ պարոն լեզվաբանը կամ ընդհանրապես որևէ մեկը գիտի՞, թե դեռ ինչ և ինչպիսի բժշկագիտական ինքնուրույն ու թարգմանական երկեր, բժշկական գիտելիքների ու փորձի դեռևս չբացահայտված ու չպարզաբանված ինչպիսի՞ շերտեր կան բոլորովին չուսումնասիրված հայերեն ձեռագիր բժշկարանների մեջ:

Երկրորդ՝ Գրեպինի վերոհիշյալ հայտարարությունը պատմական իրականությանը չի համապատասխանում: Օրինակ, մեզ է հասել Գագիկ Ա Բագրատունի թագավորի օրոք, այսինքն 990-1020 թթ. միջև գրված մի ինքնօրինակ դեղագիտարան, որ հետագայում խմբագրվել է Կիլիկիայում և կոչվել «Գագիկ-Հեթումյան բժշկարան»[420]:

Եվ երրորդ՝ այս հայտարարության ոճն ու ննթահմատությին քամահրական երանգը նախապաշարմունքի և կանխատրամադրվածության հետևանք են. անգամ եթե հայերն իրոք բժշկագիտական տրակտատ գրած լինեին միայն 12-րդ դարում (եվրոպական շատ ժողովուրդներից ավելի վաղ), ապա դա դարձյալ պետք էր նվաճում համարել, և ոչ թե ժխտական ոճով («հայերը ոչ մի լուրջ բժշկագիտական տրակտատ չեն գրել մինչև 12-րդ դարը») հայերի պատմությունն ու արժանա-

---

418 «*Հայ ժողովրդի պատմություն*», հ. 2, Երևան, ԳԱ հրատ., 1984, էջ 552-558:

419 Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении, т. 1, Ереван, 1946:

420 Տե՛ս **Ս. Ա. Վարդանյան**, «Գագիկ-Հեթումյան բժշկարանը» և նրա խմբագրական տարբերակները. - *Պատմա-բանասիրական հանդես* 1985, համար 2 (109), էջ 145-160. հմմտ. **Stella A. Vardanian**, *Histoire de la Medecine en Armenie: De l'Antiquite a nos jours* (Paris: Union Medicale Armenienne de France, 1998):

պատվությունը նսեմացնելու այս ցած փորձն անել: Մեկ այլ օրինակ. մինչդեռ Հայաստանում բժշկագիտության զարգացման նպատակով մահվան դատապարտված հանցագործներին ենթարկում էին կենդանի հատումների (որը զգալի չափով նպաստեց անատոմիայի և ֆիզիոլոգիայի զարգացմանը), Եվրոպայում այդ գիտությունները պարզապես գոյություն չունեին: Ըստ ամերիկացի Օտտո Լ. Բերթմանի՝ այդ ժամանակաշրջանի եվրոպական համալսարաններում ժամերով վիճաբանում էին, թե ձին քանի ատամ ունի, փոխանակ բացելու ձիու բերանը և հաշվելու նրա ատամները[421]:

Հայկական մշակույթի դեմ կազմակերպված գրոհն անշուշտ պետք է տարածվեր նաև հին և միջնադարյան Հայաստանի կրթական համակարգի վրա: Վերն արդեն խոսել ենք Ռ. Սյունիի համապատասխան կեղծիքների մասին: Սակայն Սյունին միայնակ չէ: Պիդըը Քաուին, օրինակ, չի ուզում ընդունել, որ հայերը միջնադարում ունեցել են բարձրագույն կրթության օջախներ՝ միջնադարյան համալսարաններ: Հայաստանցի գիտնական Գ. Մուրադյանի մի ուշագրավ աշխատության մասին իր խիստ վերամբարձ ոճով գրված գրախոսության մեջ (որտեղ նա, ի դեպ, դարձյալ ժխտում է հայկական աղբյուրի ինքնուրույնությունը), Քաուին դնում է հայկական համալսարանները չակերտների մեջ և դրանք բնորոշում իբրև «վանական ակադեմիաներ» (Armenian "universities" or monastic academies)[422]: Մեկ այլ առիթով նա ավելի է պարզել իր «միտքը».

Երբեմն ասում են, թե ժամանակակից (այսինքն՝ միջնադարյան) եվրոպական համալսարանների մոդելը համապատաս-

---

421 «*Հայ ժողովրդի պատմություն*», հ. 3, Երևան, ԳԱ հրատ., 1976, էջ 882:

422 Տե՛ս Քաուիի գրախոսությունը Գոհար Մուրադյանի «Գիրք պիտոյից» (Երևան. ԳԱ հրատ., 1993) աշխատության մասին՝ *Le Muséon* 108, 1995, pp. 200-205: at 200. Գոհար Մուրադյանի պատասխանը Քաուիին հանձնված է տպագրության լույս է տեսնելու *Revue des Etudes Armeniens* 1999 թ. համարում :

Իսան անալոգիա է հայկական այդ ակադեմիաների համար, սակայն ավելի ճշգրիտ զուգահեռը, վստահաբար՝ վանական դպրոցն է:

["It is sometimes suggested that the model of contemporary [i.e. medieval] European universities is an appropriate analogy to these Armenian academies, yet surely the monastic school offers a closer parallel."][423]

Պարզվում է, որ շուրջ հինգ տասնամյակ (առնվազն 1291 թվականից մինչև 1340-ական թթ.) գոյատևած Գլաձորի համալսարանը, որն ունեցել է ներքին կանոնադրություն, ուսումնագիտական աստիճանավորում, ավարտաճառերի պաշտպանություն, ուսումնառության 7-8 տարվա տևողություն և տվել է շուրջ 350 շրջանավարտ[424]*, ըստ Քաուխի՝ ընդամենը «վանական դպրոց» է և «միջնադարյան համալսարան» կոչվելու իրավունք չունի: Իսկ ահա նույն ժամանակների եվրոպական միջնադարյան նմանատիպ կրթօջախները «համալսարան» կոչվելու իրավունք ունեն, թեև նրանք նույնպես առաջացել և սկզբնապես գոյատևել են վանական միջավայրում, նրանցում դասավանդվել են նույն առարկաները, և, ըստ Բրիտանիկա հանրագիտարանի՝ «ուսումնառության ամենակարևոր մասը բարձրագույն գիտելիքի՝ աստվածաբանության ուսումնասիրությունն էր»*[425]*:*

---

423 **R. Hovannisian**, ed., *The Armenian People from Ancient to Modern times*, Vols. 1-2, (New York, St. Martin's Press, 1997), p. 307.

424 Լ. Խաչիկյան, Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները. *Երևանի պետհամալսարանի Գիտական աշխատություններ*, XXIII, 1946: Լ. Խաչերյան, Գլաձորի համլսարան. -- «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3 (Երևան, 1977), էջ 91:

425 "The crown of studies was the pursuit of the highest knowledge, theology" - *The New Encyclopædia Britannica in 30 Volumes. Macropædia.* (Chicago: William Benton, Publisher, 1984). Volume 12, p. 163.

7. Մի լրացում

1997 թ. ամերիկյան «Հայագիտությունը» կատարեց հայոց պատմության իր մեկնություններն ամրապնդելու և տարածելու չափազանց նշանակալից մի նոր քայլ: Երկու հատորով հրատարակվեց իր նախադեպը չունեցող կոլեկտիվ մի աշխատություն՝ «Հայ ժողովուրդը հին ժամանակներից մինչև մեր օրերը» (*The Armenian People from Ancient to Modern times.* Vols. 1-2. Edited by Richard Hovannisian. New York, St. Martin's Press, 1997, 890 pp.)*: Ռիչարդ Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս տեսած այս աշխատությունը նախատեսված է ինչպես ԱՄՆ համալսարանների հայագիտական ամբիոններում և հայկական դպրոցներում դասավանդվելու, այնպես էլ լայն հասարակության (նախ և առաջ՝ սփյուռքահայության) համար: Հեղինակների թվում են՝ մեզ ծանոթ Ռ. Թոմսոնը, Ջ. Ռասսելը, Ջ. Բուռնությանը, Ռ. Սյունին (որ գրել է երկու գլուխ), Ն. Գարսոյանը (որ գրել է միանգամից վեց գլուխ): Այս հատորներում հարճակումը հայոց պատմության վրա կազմակերպված է բազմաթիվ ուղղություններով: Համառոտ բերենք մի քանի օրինակ (ստորև բոլոր ընդգծումներն իմն են՝ Ա. Ա.).*

1) Հայկական լեռնաշխարհը ներառվել է Անատոլիայի մեջ: Օրինակ՝ Ջեյմս Ռասսելը գրում է հին շրջանի մասին՝ «հայերը...գաղթեցին արևելյան Անատոլիա» (Vol. 1, p. 22: "the Armenians... migrated to eastern Anatolia")*: Նինա Գարսոյանը, դարձյալ խոսելով հին շրջանի մասին, իր գրած գլխի ամենաառաջին բառերով հաստակեցնում է այս դրույթը. «Անատոլիայում ու, մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում տիրող քաղաքական իրավիճակը...»* (Vol. 1, p. 37: "The political situation prevailing in Anatolia and particularly on the Armenian highlands...")*:*

2) Հայերը բազմիցս ու միանշանակ կերպով հայտարարվում են եկվոր ժողովուրդ, որոնք բնակություն են հաստատել ուրիշների հողերի վրա (Ռասսել). «Հայերը փոխ առան անունը

մեծ հեթիթ ազգի, որի հողերի վրա նրանք անցան հարավարևելյան Եվրոպայից դեպի արևելք իրենց գաղթերի ժամանակ» (Vol. 1, p. 22: "the Armenians adopted the name of the great Hittite nation over whose lands they passed in their eastward migrations from southeastern Europe."): *Եվ դարձյալ՝ «Եթե հայերն ապրած լինեին Անատոլիայում այնքան երկար, որքան Խուրացի-Ուրարտացիները, ապա նրանք* հավանաբար *կունենային այդ մրգերի համար բնիկ, հնդեվրոպական բառեր: Ավելի* հավանական է, *որ նրանք բնակվել են և սովորել են այդ մրգերի անուններըը ավելի հին նստակյաց բնակչությունից, որը մշակում էր դրանք»* (Vol. 1, p. 23: "Had the Armenians been living in Anatolia as long as the Hurro-Urartians, probably they would have had native, Indo-European words for these fruits. More likely, they settled and learned the names of these fruites from the older, settled population who cultivated them"): *Ուրարտերենը հայտարարվում է «Հայկական լեռնաշխարհի բնիկ լեզու»* (Vol. 1, p. 26: "The indigenous languages of the Armenian plateau, such as Urartian, probably survived well into the Hellenistic age..."): *Ինչպես դժվար չէ նկատել, այս եզրակացությունների համար Ռասսելի համար միակ կռվան են եղել որևէ կերպ չհիմնավորված իր իսկ ենթադրությունները:*

Հայերը կոչված են կոլոնիստներ *(Ռասսել). «...Անատոլիական քաղաքակրթությունները, և՛ հեթիթները, և՛ խուրացի-ուրարտացիները, որոնց սկզբում հանդիպեցին նախահայկական կոլոնիստները...»* (Vol. 1, p. 23: "the Anatolian civilizations, both Hittite and Hurro-Urartian, with which the proto-Armenian colonists first came into contact."): *Հայկական լեռնաշխարհում հայերին կոլոնիստ անվանելը մեծ բավականություն կպարգևի Թուրքերին, քանի որ բացի իր* վերաբնակիչ, գաղութաբնակ *նշանակությունից, այդ բառն ունի նաև բացասական հայտնի երանգներ: Ուրարտացիները բնիկ են հայտարարված, իսկ հայերը եկվոր էլ 24-ում* (Vol. 1, p. 24: "They [the Armenians] settled down, learning the words for

some local fruites and other everyday items from the native Hurro-Urartians"):

Բնականաբար, հայերի ծագումնաբանության այս մոդելում «մոռացության» է մատնվել մ.թ.ա. 16–11 դարերում գոյատևած Հայասայի թագավորությունը: Անվանացանկում Հայասան առհասարակ նշված չէ, իսկ Ռասսելն այն խմիչքայլոց հիշում է ոչ թե որպես հին հայկական պետական կազմավորում, մի փաստ, որը կարող է տակնուվրա անել հայերի եկվորության իր ստւտ թեզը, այլ որպես «շրջան Հյուսիսային Հայաստանում» (Vol. 1, p. 26: "the region Hayasa, in northern Armenia"):

3) Իհարկե, Թոմսոնը չի զլանում մի անգամ ևս Մովսես Խորենացուն և Եղիշեին վերաբերող իր կեղծիքները հաստատելուց, երկուսին էլ հանելով իրենց ապրած 5-րդ դարից (Vol. 1, pp. 209, 212-218):

4) Վերն արդեն խոսել ենք Անի Ադամյան-Բուռնությանի՝ Կիլիկյան Հայաստանում հայերի մեծամասնություն չկազմելու կեղծ թեզի մասին (տե՛ս էջ 211–212):

5) Հայաստանի պատմական ժողովրդագրության կեղծումը շարունակում է Ջորջ Բուռնությանը, գրելով թե Արևելյան Հայաստանում հայերը մեծամասնություն են կազմել առավելագույնը մինչև 17-րդ դար ու շահ Աբբասի իրականացրած բռնագաղթից հետո այլևս փոքրամասնություն են եղել և 19-րդ դարի դրությամբ կազմել բնակչության ընդամենը 20 տոկոսը (Vol. 2, p. 96): *Բուռնությանի ավելի վաղ արած նույնատիպ հայտարարությունների մասին վերն արդեն խոսել ենք, տե՛ս էջ 209–211:*

6) Ըստ Հրայր Դեքմեջյանի՝ հայկական առաջին տպագիր գիրքը լույս է տեսել... 1660 թ. Հոլանդիայում (Vol. 2, p. 432): *Իրականում, ինչպես գիտի յուրաքանչյուր դպրոցական՝ հայերեն առաջին գիրքը տպել է Հակոբ Մեղապարտը 1512 թ. Վենետիկում: Իսկ 1660 թ. հայերեն լեզվով լույս են տեսել մեզ հայտնի 46-րդ, 47-րդ և 48-րդ գրքերը, ընդ որում երկուսը՝*

Վենետիկում, մեկը՝ Ամստերդամում (չի բացառվում, որ այս վերջինը տպագրված լինի 1661 թ.[426]*:*

7) Ինչպես ասել ենք, այս երկհատորյակի բովանդակությանն իր մեծ «լուման» է բերել նաև Ռ. Սյունին (գրել է երկու գլուխ՝ Vol. 2, pp. 109-137, 347-387*): Ստորև մեջբերում ենք այդ հատվածներում հայ ժողովրդի մասին հայտնված մտքերից մի քանիսը: Գլուխներից մեկը, որ վերաբերում է 19-րդ դարի զարգացումներին, կոչվում է... «Ազգային գիտակցության ձևավորումը»* (Vol. 2, p. 116: "The Formation of National Awareness"). *այս վերնագրով իսկ Սյունին փորձում է ասել, թե մինչև 19-րդ դար հայերը դեռ չէին հասել ազգային ինքնագիտակցության մակարդակի, այլ՝ ընդամենը եղել են «դարեր շարունակ եկեղեցով շաղկապված կրոնական խարխուլ համայնք»* (p. 116: "...they would remain, as in centuries past, a loose religious community held together by their church"), *«բաժանված և տարաբնույթ ժողովուրդ»* (p. 120: "a divided and diverse people"), *«ամենից առաջ կրոնական համայնք, որի վրա իշխում էր եկեղեցին»* (p. 120: "a primarily religious community dominated by the church"): *Ըստ Սյունիի՝ «չկար մի հստակ տարածք, որտեղ ապրում էր հայերի մեծամասնությունը»* (p. 120: "the absence of a fixed territory where most Armenians lived"), *ասել կուզի՝ չկար Հայաստան երկիր: Թերևս այսքանով էլ բավարարվենք, քանի որ այս ու այսպիսի դրույթների քննադատությունը վերն արդեն մանրամասն շարադրել ենք:*

Այս երկհատորյակն արդեն իսկ դարձել է ԱՄՆ-ում հայագետ նոր կադրերի պատրաստման հիմնական դասագիրք: Դժվար է պատկերացնել, թե այսուհետև որևէ երիտասարդ գիտնական կհամարձակվի ԱՄՆ-ում պաշտպանության ներկայացնել դոկտորական մի թեզ, որտեղ նա, ասենք, կգրի, թե Խորենացին ու Եղիշեն հինգերորդ դարի հեղինակներ են ու ըստ

---

426 Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալեան. *Հայ գիրքը 1512–1800 թթ., Գշվ. աշխ.*, էջ 34–37:

այդմ էլ կօգտագործի նրանց երկերի սլարունակած պատմական անգնահատելի նյութը: Եթե նույնիսկ գտնվի մի այդպիսի խիզախ և սկզբունքային երիտասարդ, ապա նրան անմիջապես կորակեն «նեղմիտ ազգայնական», և թնզի պաշտպանությունը կտապալեն:

Սակայն ավելի վտանգավոր է այն, որ «ամենաբարձր մակարդակով» գրված այս դասագիրքը ԱՄՆ-ում դաստիարակելու է նաև ամերիկահայ աճող սերնդին՝ մի մեծ ու նոր վիհ բացելով հայաստանցիների և սփյուռքահայերի միջև: Այս նոր քայքայիչ գործողության պատասխանատվությունը պետք է հավասարապես բաժանեն և՛ այդ երկհատորյակի նշված հեղինակներն ու խմբագիրը, և՛ Հայաստանի Ազգային Ակադեմիան, որ օտարերկրյա կեղծարար հայագետների նկատմամբ իր կրավորական, երբեմն էլ՝ անգետ ու անհիմն մեծարումների դիրքորոշումով արդեն իսկ մեծ վնաս է հասցրել Հայաստանի և հայ ազգի շահերին:

8. Ամփոփում

Ամերիկյան «հայագիտության» քաղաքական միտումները

Ամերիկյան «հայագիտության» վերը քննված հիմնական թեզերի ամբողջությունը հստակ քաղաքական միտումներ է հետապնդում.

ա) քայքայել այն պատմաիրավական հիմքը, որը երբևէ կարող է հայ ժողովրդին թույլատրել վերստին տիրանալու պատմական Հայաստանի՝ իրենից ցեղասպանության եղանակով առգրավված բնիկ տարածքներին կամ թեկուզ դրանց մի մասին (ըստ այդմ՝ այժմ կտրուկ ակտիվացել է Արցախի պատմության կեղծարարությունը).

բ) թուլացնել սփյուռքահայերի, ապա և՝ հայաստանցիների, բարոյահոգեբանական և դաղափարական նվիրվածությունն ու կապվածությունը Հայաստանին, հայ մշակույթին, հայ ազգի ընդհանուր կենսական շահերին, այլ կերպ ասած՝

բթացնել և վերջնականապես կոտրել Հայությանն՝ իր պատմությանը, ներկային և ապագային տեր կանգնելու կարողությունը, մարտունակությունն ու դիմադրողականությունը:

Արդյո՞ք սրանով ամերիկյան վերը նշված «հայագետնեըի» միտումները չեն նույնանում թուրք-ադրբեջանական «հայագիտության» նպատակներին:

Հայագիտության կեղծված դաշտի վերահսկողությունն ԱՄՆ-ում

Հայագիտության դաշտի վերն ուրվագծված «օկուպացումը» այլևս ինքնին բավարար է հայագիտական ուսումնասիրություններն ԱՄՆ-ում (մասամբ՝ նաև Եվրոպայում) թերի՝ ճախ ու ծուռ հունի մեջ մղելու և շարունակ այնտեղ պահելու համար: Լիակատար վերահսկողությունն առավել ապահովելու համար կիրառվում են նաև օժանդակ միջոցներ ու լծակներ, այդ թվում.

1. Հայաստանյան հայագիտության նվաճումները գիտակցաբար անտեսվում են, հաճախ նույնիսկ ենթարկվելով անհիմն ու վարկաբեկիչ հարձակումների:

2. ԱՄՆ-ի հայագիտական գլխավոր ամբիոնները գրավել են նույն դպրոցի ներկայացուցիչները, որոնք հայագիտության ոլորտ մտնող նոր ուժերին պարտադրում են իրենց տեսակետները, նաև՝ ըստ իրենց հայեցողության տնօրինում են եղած պաշտոնների բաշխումը:

Այս առումով հատկանշական և միաժամանակ օրինաչափ է վերջերս տեղի ունեցած մի արտառոց նշանակում հայագիտական պաշտոնի: Սյունիի՝ 1995 թ. Չիկագոյի համալսարան տեղափոխվելուց հետո, Միչիգանի համալսարանի Ալեք Մանուկյանի անվան Հայոց նոր պատմության ամբիոնը մոտ երկու տարի թափուր էր մնացել, որ ինքնին տարօրինակ է: Այս թափուր պաշտոնի համար ուշացումով հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցել էին բազմաթիվ հայագետներ Եվրոպայից, Ամերիկայից և նույնիսկ Հայաստանից: Արդյունքում՝

1997 թ. գարնանն այդ պաշտոնին նշանակվել է մասնագիտությամբ... անտրոպոլոգ (ազգագրագետ-մարդաբան) մի երիտասարդ ամերիկուհի՝ Ստեֆանի Պլացը: Թե ինչպե՞ս է ոչ-պատմաբան Պլացն իր ուսանողներին Հայոց նոր պատմություն սովորեցնելու՝ անկանխատեսելի և անկռահելի է, քանզի նա իրեն նախորդած Սյունիից էլ պակաս գիտի Հայոց պատմության սկզբնաղբյուրներն ու գրականությունը: Դժվար թե այդ պաշտոնի համար բավարար լինի տիկին Պլացի վաստակած երկամյա աշխատանքային փորձը Հայաստանում, որտեղ նա հաջողությամբ վարել է գիտական փոխանակությունների հարցերով զբաղվող ամերիկյան կիսակառավարական մի գովելի հիմնարկության (IREX-ի) ղեկավարի պաշտոնը: Կարևորը պարզ միտումն է՝ ԱՄՆ-ում ամեն կերպ իսկական մասնագետներին հեռու պահել Հայագիտության, հատկապես՝ քաղաքական կշիռ ունեցող պատմագրության, գլխավոր պաշտոններից:

3. ԱՄՆ Հայագիտության ներսում քննադատական մթնոլորտն խոպան բացակայում է, որ հետևանք է ինչպես «Հայագետներից» յուրաքանչյուրի Հայոց պատմության և մատենագրության մի մեննաշնորհային բնագավառ-պատառ գրավելու և նրանում այլակարծությունը բացառելու ստեղծված իրողությամբ, այնպես էլ՝ այդ իրողությունից բխող ընդհանուր ծուլությամբ և իրենց հեղինակած աշխատությունները լրացուցիչ Հայագիտական գրականությամբ չստուգելու հանգամանքով: Հատկապես շահարկվում է գիտական հեղինակության գործոնը՝ «աշխարհահռչակ» գիտնականի անուն է փակցվել Ռ. Թոմսոնին, Ն. Գարսոյանին, Ռ. Սյունիին և մյուսներին: Նրանց այլևս չեն քննադատում, միայն գովաբանում են ու «զարգացնում» Հայոց պատմության նրանց «նորովի ընթերցումները»:

4. Նույն կարգի մասնագետները ղեկավարում են Հայագետ նոր կադրերի պատրաստումը Արևմուտքում, այստեղից բխող հեռագնա բոլոր հետևանքներով հանդերձ:

5. Նույն մարդիկ վերահսկում են նաև գիտական հրապարակման դաշտը. իրենց չրջանակին պատկանող հեղինակների

հրապարակած յուրաքանչյուր գործ, անգամ Սյունիի գրածի որակի, գրախոսում են ամենադրական կերպով, հաճախ՝ հովվերգական մոտիվներով: Մյուս կողմից, անցանկալի նյութերը, որ ստեղծագործում են այդ շրջանակից դուրս գործող մասնագետները, գրախոսվում են քամահրանքով և բացասաբար, իսկ իրենցից կախված լինելու դեպքում՝ չեն հրապարակվում. ամենավառ օրինակներից է 1986 թ. Երևանում անցկացված՝ Մովսես Խորենացու 1500-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի նախապես համաձայնեցված անգլերենով հրապարակման տապալումը: Այս նպատակով կիրառվում են նաև կանխարգելիչ նախահարձակ միջոցներ, ինչպես, օրինակ, այն, որ հայերի բնիկությունը Հայկական լեռնաշխարհում հաստատելու փորձ անողները նախապես հռչակվել են ոչ-գիտական՝ «ազգայնական» մոտիվներով առաջնորդվող մասնագետներ, դիլետանտներ, հայ «բունիաթովականներ» և այլն:

5. Վերջապես, ամենակարևորն այն է, որ, եթե ԱՄՆ-ում որևէ երիտասարդ գիտնական փորձի առաջադրել և պաշտպանել նշված կեղծ դրույթներին հակառակ տեսակետներ, նա անմիջապես զրկվելու է խոշոր համալսարաններում աշխատելու, ինչպես նաև՝ հայագիտության գծով ուսանելու հնարավորությունից, ընդամին արժանանալով «դիլետանտի» և «նեղճակատ ազգայնականի» պիտակին:

Ամփոփիչ մի դիտարկում ևս. մեր շարադրանքի գրեթե բոլոր հերոսները գրեթե առանց բացառության արևմտյան համալսարանական ամբիոնավար «պրոֆեսորներ» են, որոնք որպես կանոն նաև հայկական հին ու նոր գրական մշակույթը պահպանող, խնամող և ուսումնասիրող կենտրոններից հեռու են «տեղադրված». հին կամ նոր հայերենի նրանց իմացությունը բավական մակերեսային է՝ որևէ մեկը հայերենի որևէ տարբերակով բանավոր կամ գրավոր վարժ արտահայտվել չի կարողանում. վկա՝ արտասահմանում կայացող «Հայագիտական» բոլոր գիտաժողովների աշխատանքային լեզուն կարող է լինել ցանկացած մի բան, բայց ո՛չ երբե՛ք՝ հայերենը, իսկ Հայաստանում կայացող ժողովներին մեր հերոսներից որևէ մեկը հա-

յերեն զեկուցելու փորձ դեռեւս չի արել: Նրանցից որևէ մեկը տասնյակ հազարավոր հայերեն ձեռագրերի հարյուրավոր տպագիր ցուցակների, առավել ևս՝ բուն ձեռագրերի ուսումնասիրմամբ որևէ աշխատություն չի հեղինակել եւ չի էլ կարող[427]: Նրանց գիտական արտադրանքն էլ շատ մեծ չափով Հայաստանում կամ սփյուռքում ստեղծված՝ հայագիտական հայերե՛ն գրականության արդյունքների անգլերենացումն է, սակայն՝ մի կարևոր նորարարությամբ. լեզվափոխումից հետո, հերթը գալիս է մեր «կարկառուն հայագետների» «բուն աշխատանքի»՝ ամերիկյան սոցիալական գիտությունների օրվա ճաշակին համապատասխանող մի ինչ-որ ինքնանպատակ մոդային բան ասելուն: Այս ամենի ընդհանուր արդյունքն է՝ հայկական քաղաքակրթության ու մշակույթի և նրանց հին ու նոր կրողների (ներառյալ՝ իրենց բանաքաղությունների աղբյուրների հեղինակների) նսեմացնելը, «գավառական» որակելը և այդ ամենին իրենց «վերևներից» նայելը:

Շա՛տ գեղեցիկ ու բարոյական է:

Մի վերջին պարզաբանում. մեզ ամենևին չպետք է չփոթեցնի այն հանգամանքը, որ արծարծված կեղծարարներից շատերն ծագումով հայ են. ավելին՝ այս երևույթը չպետք է վերագրենք մեր չունեցած-չեղած ինչ-որ ազգային հատկանիշի: Պարզապես՝ օտար ափերում ծնված-սնված-ապրող այդ մարդկանց ուծացումն ավարտվել է (ընդ որում՝ հայերենի նրանց իմացության չափն այլևս դեր չունի): Սակայն, պետք է արձանագրենք, որ հայոց պատմության խեղաթյուրման ծրագրավորված գործողություններն առավել արդյունավետորեն իրականացնում են հենց ա՛յդ անձինք: Իսկ սա արդեն ունի իր հանրահայտ՝ դարավոր ճշմարտություն-մեկնությունը. ցան-

---

427 Այս իմաստով միակ բացառությունը թերևս Պիդըր Ջաուին է (հայերեն աննկաշկանդ խոսել և զեկուցել էլ է կարողանում), որ, սակայն, ունենալով Դանիելի մարգարեության հայերեն բնագրի իր հրատարակության բնագրագիտական «որակը» (հմմտ. *Պատմա-բանասիրական հանդես*, 1993, հմր. 1-2 (137-138), էջ 199-206), երևի այսուհետև իրեն այսպիսի փորձություններից հեռու է պահելու:

*կացած ժամանակ, ցանկացած իրականության և գաղափարախոսության մեջ նորադարձ հավատափոխները (*neophytos *կամ* new converts*) միշտ ավելի հետևողական, անձնվեր ու անողոք են լինում, որովհետև նրանք պարտավոր են միշտ շրջապատին ապացուցելու, որ իրենք այդ շրջապատի մյուս անհատներից պակաս ուղղափառ չեն. այսինքն՝ սրանք են, որ միշտ հարկադրված են «պապից ավելի կաթոլիկ» լինելու: Սա նաև այն դեպքերից է, երբ Հայաստանի և հայ ազգի շահերի դեմ ձեռնարկվող քայքայիչ գործողություններում սփյուռքի ուծացած ներկայացուցիչներն օգտագործվում են իբրև օտար ուժերի կամակատար կատարածուներ: Ջմոռանանք նաև, որ այստեսակ «սփյուռքահայերը» հաջողությամբ մոլորեցնում են սփյուռքի հայրենասեր ուժերին ևս, մասնավորապես՝ նրանք փայլուն են իրականացրել բոլոր առումներով բավական բարդ մի գործողություն. ԱՄՆ-ում կեղծ-հայագիտական ամբիոններ են հիմնել և նրանցում հայավնաս աշխատանք կատարել... Հայկական համայնքից հայթայթած խոշոր գումարներով, հայության իսկ տրամադրած դրամական միջոցներով: Մինչդեռ այդ գումարների մեկ տասներորդն էլ բավական կլիներ Հայաստանյան հայագիտությունը ներկա ծանր պայմաններից դուրս բերելու համար: Մի թարմ օրինակ. 1998 թ. սկզբին ԱՄՆ-ի Թաֆթսի համալսարանում իր անունով Հայոց պատմության ամբիոն բացելու համար սփյուռքահայ էթել Ջառաքյան-Ջաֆարյան Դաֆեթը նույն համալսարանին հատկացրել է 1 միլիոն 250 հազար դոլար[428]: Համեմատության համար նշենք, որ նույն 1998 թ. 126 աշխատակից ունեցող Երևանի Մաշտոցյան Մատենադարանին Հայաստանի բյուջեից հատկացվել է 30 միլիոն 200 հազար դրամ (60400 դոլար), որի մեջ աշխատավարձի ֆոնդը կազմել է ընդամենը 988020 դրամը (1976 դոլար):*

---

428 **Alin K. Gregorian**, "New Tufts University Armenian Studies Professor Predicts Rosy Future," *Azg/Mirror-Spectator On-Line* October 28, 1998.

Ամերիկյան «հայագիտության» մեթոդաբանության գլխավոր սկզբունքը և հիմնական խոչընդոտը

Ամերիկյան «հայագետների» մեթոդաբանության մեջ կիրառվող գլխավոր սկզբունքն արդի հայագիտության նվաճումների անտեսումն է: Այսպես, գրելով Մովսես Խորենացու կամ Եղիշեի երկերի մասին, որպես կանոն բացարձակ լռության են մատնում վերջիններիս հաղորդումների հավաստիությունը հաստատող բազմաթիվ փաստերը, ինչպես նաև ընդարձակ վիճաբանությունները: Նույն մոտեցմամբ էլ քննում են պատմագիտական շատ այլ խնդիրներ. մի կողմից, հենվում են միայն իրենց իսկ «դպրոցի» վերջին տասնամյակներում հրատարակած թերի և կողմնակալ նյութերի վրա, կամ՝ ընտրովի եղանակով, օգտագործում են իրենց եզրակացություններին համահունչ 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբին գրված հայագիտական գրականության մի մասը[429]*: Մյուս կողմից՝ գիտակցված ձևով չնկատելու են տալիս արդի հայաստանյան հայագիտության ծավալուն գրականությունը կամ՝ այն օգտագործում են կրկին իրենց միտումին համապատասխան՝ խիստ ընտրովի եղանակով:*

---

429 Մի լրացուցիչ հետաքրքրական օրինակ: Իր «*Studies in Christian Caucasian History*» վերոհիշյալ երկում Կ. Թումանովը գովում է Ադոնցին՝ Խորենացուն 5-րդ դարի հեղինակ չընդունելու համար (էջ 108): Սակայն քննադատում է այն բանի համար, որ Ադոնցը հին հայերի զարգացածության մակարդակն իրավամբ ավելի բարձր էր համարում, քան հին իբերացիներ-նախավրացիներինը (էջ 90, ծնթ. 127): Միևնույն ժամանակ, Թումանովն ընդունում է Հայասան իբրև նախահայկական պետական կազմավորում (նրան հաջորդած Գարսոյանն ու Ռասսելն այս փաստն էլ ժխտեցին), սակայն... միայն այն նպատակով, որպեսզի քննադատի Ադոնցին՝ հայերի և իրանցիների սոցիալական զարգացածության մակարդակը հավասար համարելու համար և ասի, թե՝ «ուրարտացիների և այլ նախակովկասցիների սոցիոլոգիական մակարդակն անհրաժեշտաբար եղել է ավելի զարգացած, քան նախահայերինը» (The sociological level of these [the Urartians and other proto-Caucasians] must of necessity have been more advanced than that of the proto-Armenians, p. 70, note 76):

Արևմտյան «հայագետների» հիմնական խոչընդոտը մնում է հայաստանյան հայագիտությունը *(որ, ի դեպ, հաճախ է արժանանում նրանց հարձակումներին կամ արհամարհա-քամահրական արտահայտություններին)։ Ուստի մայրհայագիտության չեզոքացումը, լիակատար մեկուսացումը և Արևմուտքի գիտական աշխարհից դուրսմղումը նրանց առաջնահերթ խնդիրն է։ Այս խնդրի վերջնական լուծումը հնարավոր կդարձնի մի կողմից՝ թաքցնելու իրենց դպրոցի հարաբերականորեն թույլ հայագիտական պատրաստվածությունը (երբեմն էլ՝ բացահայտ տգիտությունը), մյուս կողմից՝ այն լիակատար ազատություն կշնորհի -- լուրջ հակազդեցությանը հանդիպելու մտավախությունից ազատ -- շարունակելու ոչգիտական շրջանակներից ստացված պատվերի հաջող կատարումը։ Հենց ա՛յս, և ո՛չ թե նոր հետազոտություններին զարկ տալու դիտավորությամբ են հաջորդաբար հրատարակվում հակագիտական առաջաբաններով ու ծանոթագրություններով օժտված՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Անանիա Շիրակացու, հայ մյուս դասական հեղինակների անգլերեն թարգմանությունները։ Ընդ որում, այդ թարգմանությունները խիստ թերի են, երբեմն էլ՝ աղճատված, հետևաբար՝ դրանց օգտագործումը պետք է լինի միշտ շատ զգուշավոր՝ միայն սկզբնաղբյուր-բնագրի հետ համեմատելով։ Թերևս, միայն այսպիսի քննական մոտեցում ցուցաբերելու դեպքում հնարավոր կլինի թոմսոնական-գարսոյանական թարգմանությունները ծառայեցնել հայագիտության իրական զարգացման ու նոր՝ առավել ճշգրիտ թարգմանություններ պատրաստելու համար։ Այլ հարց է, որ ԱՄՆ-ում աշխատող որոշ հայագետներ, ներառյալ վերոհիշյալ դեմքերից մի քանիսը, երբեմն գրում և հրատարակում են նաև զանազան մանր օգտակար ուսումնասիրություններ, անում են հետաքրքիր դիտողություններ։ Այդ կարգի ուսումնասիրությունները, սակայն, մատուցված են այնպես, որ որևէ կերպ չվտանգեն հայագիտության մեջ իրենց զավթած «իշխող բարձունքները»։*

